

ԱԳՈՒԼԵՑՈՑ ԲԱՐԲԱՌԸ

ԱԳՈՒԼԵՑՈՑ ԲԱՐԲԱՌԸ

(ԶՕԿԵՐԻ ԼԵԶՈՒՆ)

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՑՈՒԹԻՒՆ:

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆՑ:

ԾԱՆՈԹ Լ.

ԾՈՍԿԱԸ.

Скоропечатня О. Гербена, Больш. Никитская, Чернышевский пер., д. № 5,

1883.

Дозволено Цензурою: С.-Петербургъ, 15 Іюня 1882 года.

Գ Լ ՈՒ Խ Ի

ԱԳՈՒԼԻՍԸ, ՆՈՐԱ ԲՆԱԿԻԶՆԵՐԸ ԵՒ ԼԵԶՈՒՆ:

Ո՛վ որ փոքր 'ի շատէ տեղեակ է հայոց պատմութեանը, նա անշուշտ լսած է և գիտէ Վասպուրական նահանգի Գողթին գաւառը: Բայց ուրիշ պատմական նշանակութիւններից այդ գաւառը հին Հայաստանի համար նոյն նշանակութիւնը ունէր, ինչ նշանակութիւն որ ունէր միջնադարեան Պարսկիայի համար դեղեցիկ Պրովանսը: Ինչպէս և այս վերջինը Գողթինը գինու և երգերի աշխարհ էր, միայն այն զանազանութեամբ որ Պրովանսում հնչում էին սրութալուրների սիրոյ քնքուշ երգերը, իսկ Գողթինի լեռները հնչեցնում էին հայոց պիցապուրների քաջագործութիւնների երգերը: Ահա ինչ է ստում այդ մասին Խորենացին. «Յայտնեն զայս ճշմարտապէս և թուեղեացն երգք, զոր պահեցին իմն տխորթելով՝ որպէս լսեմ մարդիկ կողման գինուէտ գաւառին Գողթան»: Ա, 29:

Թէև հին Հայաստանի աշխարհագրութիւնը վերաբերում է այդ գաւառը Վասպուրական նահանգին (այդպէս էր գտնեա Խորենացու ժամանակը), բայց լինելով սահմանակից Սևնեայ նահանգին, մի քանի պատմագիրներ կրբեմն տեղաւորում են նորան այս վերջին նահանգի գաւառների շարքում (Ստեփաննոս Օրբէլեան, Թովմաս Արծրունի): Այդպիսի չփոթման պատճառ է, տալիս զխառնուրդապէս եկեղեցական վե-

Ճակնելի բաժանումը, որով Վոլթեր արդարեւ պատկանում էր Միւնիքին. ըստ Օրբէլեանին դեռ Վրիդոր Լուսաւորիչը ննթարկեց Վոլթերի առաջնորդներին Միւնեայ եպիսկոպոսնութի իշխանութեանը: Սասկած չը կայ ուրեմն, որ աշխարհական իշխանութիւնը թուանալուց կամ տեղ տեղ բոլորովին ոչնչանալուց յետոյ, եկեղեցական բաժանումները աւելի կամ մինչեւ անդամ գլխաւոր նշանակութիւն ստացան:

Վոլթերի պատմութեան մանրամասնութիւնները թողնելով, մենք կը նշանակենք այստեղ միայն նորա գլխաւոր կէտերը: Կոչալէս Ֆէօդալական երկրի դաւառ (Հին Հայաստանը—կրասիկական Յունաստանի և Հռոմի այդ անարժան ժամանակակիցը—տարաբաղբաբար աւելի նմանում էր միջնադարեան Ֆէօդալական—անկարգ տէրութիւններին), Վոլթեր պատկանում էր մի իշխանական ցեղի, որը ծագումն ունէր Միւնեայ ցեղից և ստացել էր այդ դաւառը իբրեւ ժառանգութիւն և ապա անկախացել: Վրիստոնէութիւնը տարածված էր՝այդ դաւառումը դեռ մինչև Վրիդոր Լուսաւորիչը Վարթուղեմէոս առաքեալի քարոզութեամբ. բայց ինչպէս և ամեն երկրում և ամեն ժամանակ այդ ուսումը այստեղ էլ մինչև ամբողջ երկրի համար պարտաւորեալ կրօն դառնալը դաւանվում էր ծածուկ: Լեւոնոս երկիրները միշտ յարմար ապաստարան են ներկայացնում զանազան աղանդների և հալածված համոզմունքների համար: «Եւ որպէս յետ քարոզութեան առաքելոյն—ասում է Կոնստանտին—ոչ անհետ եղև 'ի նոսա քրիստոնէութիւն, նոյնպէս և յետ քարոզութեան Լուսաւորչին՝ ոչ բարձաւ 'ի նոցանէ իսպառ աղանդն Հիթանոսութեան, նա մանաւանդ 'ի նուազիլ թագաւորութեան առ բազումն տարածեցաւ, վասն որոյ Աորիւն զայն կողմանս կոչէ Մեկարդ և անդարման տեղիք Վոլթան: Իսկ զայն մնացորդս բնաջինջ արար երանելին Մեարտայ, որ նախ զառաջինն սխառ քարոզել

գըրխատնէութիւն բազում աշխատութեամբ... յայն սակա Խորենացին Վ., 67. զՎողթն կոչէ 'ի մէջ գաւառաց Նախաշախէրպէան Մեարտպայ: Իսկ կորիւն կոչէ զՎողթն Առաջին Վասպակէր Մեարտպայ 1):» Պուցէ Հեթանոսութեան Հէնց այդ երկարատևութիւնն է պատճառ, որ Վողթնում դեռ Խորենացու ժամանակ և անշուշտ դեռ երկար ժամանակ նորանից յետոյ «ախորժանքով» երգվում էին Հեթանոսական Հայաստանի դիւցազնական երգերը: Վրխատնէութեան վերջնականապէս ամրանալը և, աւելացնենք, մարմնանալը մի կողմից, միւս կողմից յետագայ Պարսիկների և ուրիշ նվաճողների աւերիչ տիրապետութիւնը և ապահանիչ աղղեցութիւնը վերջ տվեցին այդ Հեթանոսական, ազգային—ժողովրդական երգերին և պատրաստեցին Հիմն պիմեան հայ աշուղների պարսկա—թրքական բանաստեղծութեան. զգվիլ՝ պտուղ օտար տիրապետութեան: Վողթնը ուրեմն բացառութիւն չը կազմէ Հայաստանի ընդհանուր վիճակից. բարբարոսների ազդեցութեան տակ մտար ապականվեցաւ իւր ամբողջի հետ և ոչ միայն հայկական ժողովրդական բանաստեղծութիւնը կերպարանափոխվեցաւ և թրքացաւ աշուղների երգերում այլ և ապականվեցաւ և աղաւաղվեցաւ ժողովրդական լեզուն մինչև այն աստիճան որ, ինչպէս Հայաստանի շատ ուրիշ տեղերում, այնպէս էլ մեր Վողթնում, յաճախ կը լսէք ժողովրդի խօսակցական լեզվում մի նախադասութեան մէջ Հինդ խօսքից միայն երկուսը կամ երեքը հայերէն:

Թէև Վողթնը ոչ մի պատմագիր չ'է նկարում այնպէս, ինչպէս օրինակ Փարպեցին Արարատը, բայց այնու ամենայնիւ պատմութիւնը թողի է մեզ երկու ածականների, որոնցով կարելի է փոքր 'ի շատէ հասկացողութիւն կազմել այդ գաւառի

1) Ինճիճեան. Ստորագրութիւն Հին Հայաստանից. 1622 էր. 215.

քնութեան մասին. Ստեփաննոս Օրբէլեանը կոչում է այդ գաւառը *Գեղեցիկ*¹⁾, իսկ Խորենացին *Գննէպ*: Ըռաջին ածականը ցոյց է տալիս երկրի գեղեցիկ դիրքը. Հայաստանը գաշտավայրեր շատ ունի, մինչդեռ նորա Վոդլթն գաւառը գլխաւորապէս լեռնոտ երկիր է և եթէ լեռնոտ Վրաստանը և Շվեյցարիան գեղեցիկ են անուանում, այդ ածականը անտեղի չէ տրված և Վոդլթին. բացի լեռնային տեսարաններից աւելացրէք այստեղ և այն շքեղ տեսարանը, որ բացվում է ձեր առաջ բարձրաւնդակի կամ տարի գլխից. ձեր առաջ բացված տարածութեան մէջ դուք տեսնում էք գիւղեր, որոնք կապված են իրար հետ այգիների կարծես անվերջանալի շղթայով. այդ այն այգիներն են, որոնք գեռ պատմական Վոդլթին տվել են *Գննէպ* ածականը: Այդ այգիներից ստացել է իւր անունը Վոդլթնի կէտերից մինը, որը այգիների առատութեան պատճառով կոչվել է *Մգուլ*²⁾ և պահել է իւր այդ անունը մինչև մեր օրերը: Թէ ինչ նշանակութիւն է ունեցել Ագուլիսը հին ժամանակներում, թէ ինչ դեր է խաղացել Վոդլթնի պատմական կեանքում, պատմութիւնը երկար ժամանակ ոչինչ չէ աւանդում մեզ: Բայց արդէն XVII դարու սկսբումը յիշվում է Ագուլիսը պատմութեան մէջ, և թէև յիշվում է իբրև գիւղաքաղաք³⁾ բայց հարուստ և ծաղկած գրութեան մէջ: Վեռ այդ բարբարոս ժամանակը, երբ կատաղի Շահաբասը աւերում է Հայոց քաղաքները և գիւղերը և նոցա բնակիչներին գերի տանում Վարսկաստան, Վաւրէժում մենք հանդիպում ենք Ագուլեցի վաճառականների. ահա ինչ է տաւում պատմութիւնը.

1) Գե. ԺԵ. Նկեալ (Մեսրոպաց) 'ի սիսական կողմն' հաճեցաւ բնակել 'ի գեղեցիկ գաւառն գողթան:

2) = այգի + լիք:

3) Յետ այսորեկ լուեալ շահաբասայ 'ի նախջուանայ' եկն 'ի գիւղաքաղաքն ագուլիս և Մելքիսեթ կթղի ընդմաս' Ձամչ. III, էր. 589.

«Այլին 'ի նմին ժամանակի 1) 'ի 'Գաւրէժ վաճառականք ումանք եկեալք 'ի գողթն գաւառէ, և սոցա լուեալ զքարոտութիւն Պօղոս վարդապետի, յորդորեցին զնա բաղում թախանձանօք՝ զալ ընդ ինքեանս 'ի 'Գողթն գաւառ, և առեալ տարան զնա անդ և նա առատ բանիւք և ուղիղ վարդապետութեամբ քարոզելով, և բարի վարուք իւրովք զամենեան 'ի բարին յորդորելով՝ եբարձ յաշխարհէ անտի զբազմապիսի անկարգութիւնս և զնոտի աւերդապաշտութիւնս: 'Ի շռոթ 2) և յաֆուս՝ Հաստատեալս զպրոցս մանկանց գործակցութեամբ Մովսիսի Վարդապետի և կարգեալս ուսուցիչ նոցա զբաժանայ ոմն Անդրէաս անուն 3):» Մի քանի տարուց յետոյ այդ երիտասարդ գործունեաց քաջանան շարժում է իւր դէմ Շահարասի բարկութիւնը, բանաւարկվում է և գանակոծվում նորան չեն կարողանում փրկել ոչ կաշառված պարսիկ իշխանները իրանց միջամտութեամբ և ոչ Ագուլիսի երեւելի անձինքները իրանց աղաչանքներով, անձնանուէր և հաստատամիտ քաջանան, չը կամենալով ուրանալ հաւատը և դորանով աղատվիլ մահից, նահատակվում է, Շահարասի զահիճները չարճարելով սպանում են նորան և մարմինը գցում գազաններին և թռչուններին կերակուր, Հայերը առնում են մարմինը և տանում թաղում Ագուլիսի Խոցաձոր անունոված եկեղեցում 4): Եւ յԽոցաձոր անունը մինչև այժմ էլ կրում է Ագուլիսի թաղերից մինը, որ Ագուլեցոց արտասանութեամբ կոչվում է Խձաձոր: — Նոյն դարու վերջին քառորդումը մենք տեսնում ենք մի Ագուլեցի մինչև Վլենտիկ հասած և այնտեղ

1) Այսինքն 1613 թուին:

2) Այդ պիտի կայ և այժմ էլ Ագուլիսից մօտ 50 վերստ հեռու, բայց ըզոտն մօտ է Վարդապետի բարառին:

3) Չամչ. III, էր. 589:

4) Չամչ. ibid.

գործում: Այդ Ազուլեցին Վ Լենտովում 1687 թւակ. թարգմանել և իւր ծախքով տպագրել է տպիւս մի զիւր, որ կրում է հետեւեալ վերնագիրը՝ «Պարզաբանութիւն Հոգեհոռագ սաղմոսացն Վաւթի մարգարէին թարգմանեցեալ ի նուառ Յովհաննիսէ Վարդապետէ Սոստանդինուպօլսեցւոյ... և տպագրեցեալ արդեամբք և գոյիւք Ազուլեցի խօծայ Պուշնազարի որդի խօծայ Նահապետին ի սեպհական տան իւրում ի թուականիս մերում ուճի ի Վ Լենտովի քաղաքի» Այդ գրքի վերջաբանումը ինքը Ազուլեցի «խօծան» աւերացնում է «Արդ որք վայելէք զսա առողջութեամբ ի շնորհս Տեառն, յիշեցէք ի սրբազան աղօթս ձեր զազուլեցի խօծայ Պուշնազարի որդի զխօծայ Նահապետն ընդ բնաւից ծնողաց և ազգականաց նորին հանգուցիկոց ի Վրխատոս, որ ազգեցութեամբ հոգւոյն սրբոց և յորդորմամբ բարեպաշտից ոմանց մերսնեաց եմուտ ի գովելի գործառնութիւնս այս և մեծաւ հոգաւարծութեամբ յատաջացոյց զթարգմանութիւն և զտպագրութիւն սորին, վատնելով զգոյս և զինչս բազումս ՚ի յոռոմն գեղեցիկ պատեալ, ՚ի շինոմն նորակերպ պարսանիս, ՚ի Գրոմն պարսական լեզուս և ՚ի յօրինոմն առնայն իրաց պարսկա—որաց, յայտնիկ նուազեցեղում ամի, յորում համայնք առեւտրութիւնք գոն խանգարեցեալք առ ՚ի թողուլ զյիշատակ իմն անջնջելի զինի ինքեան ՚ի խրախմանս հանուրց հայկազունեաց ուսումնայարդից և ճշմարտաւիրաց, և ՚ի ցնծութիւն ամենայն սիրելեաց և բարեկամաց իւրոց: Յիշեցէք ևս միով հայրմերիւ զազուլեցի մղտաի աստուածատրի որդի զպատաւորն իմ զԹօմայն, որ ամենայն ջանիւ անձանձիր աշխատեցաւ ՚ի տպագրատանս և օգնեաց սրբագրութեան սորին, և ձեռնատու եղև միշտ Յովհաննէս Վարդապետին (երես 839):» Այդ գրքի լեզուն «գրաբատ» է բայց շատ պարզ խառն է աշխարհաբառի հետ:

Յետոյ XVIII դարու առաջին քառորդումը Ազուլեար յիշ-

վում է 'Վաւիթ բէդի տպատմութեամբ բռնված տեղերի շարքում, իբրև արդէն մի բազմամարդ քաղաք, որ ունի մինչև անգամ իւր զօրքը և զօրադլուխները ¹⁾:

Ա՛նք պատեղ յառաջ կը բերենք այդ տպատմութեան պատմութենից մի հատված, որի մէջ փոքր 'ի շատէ մանրամասն տեղեկութիւններ ենք գտնում այն ժամանակակից Ագուլիսի գլուխն և նորա բնակիչների վերաբերեալ: Այդ հատվածը մենք յառաջ կը բերենք ամբողջապէս և ժամանակակից պատմագրի խօսքերով:

«Այլ նոյն ժամայն թողեալ գլուսին՝ Հեծան ²⁾, կապեցան և յարձակեցան 'ի վերայ բանակի Օսմանցոց: Իսկ նոքա իբրև զայն տեսին, զիտացին թէ՛ զօրքն 'Պարսից է, և ելին ընդ առաջ 'ի մարտ պատերազմի: Բայց իբրև զփորձ առին, զիտացին, թէ՛ այն է զօր 'Վաւիթ բէդին 'ի փախուստ դարձան: Եւ սորա զբազում ջոխ ձիոց և ջորեաց 'ի նոցանէ՛ առին, զայն ամենայն առ 'Վաւիթ առաքեցին, և ինքեանք 'ի 'Վէշ ³⁾ կոչեցեալ աւանն զիմեցին: Իսկ այլք աւանին 'ի հետուստ իբրև զգալ զօրացն տեսին, համարեցան, թէ՛ զօր այլազգեաց է այն, և փախուցեալ յԱֆո-լէ՛ մտին: Եւ անտի չուեալ Մխիթար

1) Յայնժամ Մեղրեցիքն գրեցին առ զօրագլուխն Ագուլեցոց, զի ընկալցին 'ի յորդովարեցոցն զեօթնաստուն անձինս Հոյոց զգերեցեալն 'ի նոցանէ, և ազգաբացն ինքեանց, թէ՛ ընկալն զնոսա: Պատմութիւն Դաւիթ Բէդին հրատ Արք. Գուլիթեանցի Էր. 37, § 58: 'Նոյն պատմութեան մէջ մի ուրիշ տեղ՝ և և եկին հասին առ նոսա յամենայն կողմանց՝ զօրք Թուրքացն, ընդ ինքեանս առեալք նաև զժօրսն Հայոց 'ի Գողթան գաւառէն, 'ի յԱգուլիս քաղաքէն, 'ի յորդովարայ... Էր. 45, § 7:

2) Դաւիթ բէդի զօրքերը, որոնք այդ ժամանակ արտաքսելով Օրդովարից Օսմանոց զօրքերը տօնում էին իրանց այդ յաղթութիւնը խնջոյքով:

3) Այդ գիւղը կայ մինչև այժմ էլ և շատ մօտ է (3 վերստ) Ագուլիին, որի հետ նա կապված է անընդհատ այգիներով: Իւր այդ Ագուլիսին մօտիկ լինելու պատճառով Դէշար այժմ կոչվում է Նոյնպէս 'Ներքին-Ագուլիս: Իսկ բուն Ագուլիսը վերին Ագուլիս: 'Նկատելու արժան է այն, որ պատմագիրը այդ գիւղը անուանում է այստեղ նորա Զօկ արտասանութեամբ՝ Դէշտ, 'ի տեղի ընդհանուր հայերէն Դաշտ:

սպարապետն, և Տէր Աւետիսն Հանդերձ զօրուն 'ի յԱգոստոս
հաւաքա՛ դիմեցին: Աւ իբրեւ եկին 'ի Տէժ Դոռան հաւաքն Հաթն
պահապանք դրան ընդ տեսանէն զտոսա՛ փախեան և սոցա
Համարձակ մտեալ 'ի քաղաքն, երթան 'ի վաճառատեղն առ 'ի
յոյզ և խնդիր առնել զՕամանցիս, և զտանին տնտի փախու-
ցեալ զՀարկահանն Օամանցոյ, և ինքեանք երթեալ բանակին
'ի վանս արքոյն Թովմայի առաւելոյն: Աւ մինչդեռ անդ էին սո-
քա՛ լուսն արտաքոյ աղմուկ շփոթի, և երկու ուսնք 'ի սոցա-
նէ ձի կայան, ելին արտաքս, և գիտացին զի ոմն 'ի Թուրքաց
յափշտակեալ զոմն՝ գերի վարէր, և պոլեցան զՀեռ նորա, և
նորա թողեալ զգերին՝ փախեցաւ:

«Այդ՝ սակաւ ինչ կացեալ անդ տեսին 'ի դիտանոցէն, զի
'Վաւթիթ Վեգն ևս գայր մոտանէր 'ի քաղաքն, և ելին ընդ ա-
ռաջ նորա: Աւ նա զգեցոյց իւրաքանչիւր զնուորացն զմի մի
պատմութեան, և դարձան վերտոին բանակեցան արտաքոյ քու-
ղաքին 'ի սուրբն Թովմայ: Իսկ այք քաղաքին ըստ ազգոս-
նեան իբրեանց ամենեւեան գայն, և զլեռն 'Վաւթիթ Վեգն հա-
քոսէին: Աւ Մեղք Մուսին (որ նա ինքն էր քաղաքապետն)
իբրեւ գայր յանդիման լինէր՝ 'Վաւթիթ իւրոցն հրաման տայր,
և ասէր 'ի զիշերիս յայսմիկ հասէք զզուխն Մուսեայ, զի
այր նենգաւոր է նա և խորդախ. բայց Մեղք Փարսադան
յառաջ մատուցեալ բարեխօս լինէր վասն նորա, և զվճիռ
մահուն դարձուցանէր: Աւ մնացեալ սոցա անդ 'ի միջոցի
տանն աւուրց, երիցս անպամ յարձակեցան զօրքն Օամանց-
ոց 'ի վերայ նոցա, և երիցս խորտակեցան 'ի քաջամարտիկ
զօրացն 'Վաւթի: Յետ այսորիկ և արքայն Պարսից 'ի թի-
կունս հասուցանէր 'Վաւթի գերիս Խանս, և Օամանցին վերա-
տին դիմէր, և դարձեալ խորտակիւր 'ի սոցանէ: Աւ այս
ամենայն յայն սակաւ պատահէր նոցա, զի իշխանս Ագոստոսոյ
Ժաշիպաղէս դաշնադրէր էին ընդ Օամանցոյ, և սոքա ոչ գիտէին:

«Ապա յիս երկուց աւուրց եկին հասին բազմութիւն զօրացն Օսմանցւոց» և լինն զգաշան Մարադու, և անդ բաժանեցան յերիս առաջս, Խանքն Պարսից 'ի մի կողմն, և զօրքն Հայոց 'ի մի կողմն, իսկ Տէր Աւետիսն հանդերձ զօրուն գիպեցաւ 'ի կողմն Նրսախայ: Երբ իբրեւ խմբեցան 'ի պատերազմն, խանքն Պարսից 'ի փախուստ դարձան յերեսաց Օսմանցւոցն, այլ զօրքն Հայոց պինդ կացին հարին սատակեցին զբազուան 'ի յՕսմանցւոց, և զայլսն 'ի փախուստ դարձուցին: Ապա դարձան զկնի խանիցն պնդեցան, հասին նոցա (մինչդեռ փախուսեաց երթային նոքա 'ի Թարվէզ), և զսմենայն զօրս նոցա 'ի յԱգուլիս դարձուցին. բայց Խանք փախեան, և սոքա գնացին աւար առին զտունս նոցա, և զտիկնայս նոցա հանդերձ ութուստասան աղանեօք, և չորս ներքինեօք գերի վարեցին 'ի Հալիճոր:

«Երբ յիս այսորիկ իբրեւ երկու աւուրք 'ի վերայ անցին, արքն Ագուլիսու, և Մելիք Մուսին զԹշնամութիւն իւրեանց և զդաւաճանութիւնս յայտ արարին, զի 'ի մէջ քաղաքին դուրոհ տուեալ 'ի վերայ զօրացն Վաւթի գիմեցին. մինչդեռ 'ի վանան էին նոքա սրբոյն Թովմայի արտաքոյ քաղաքին, և սիրտան 'ի քաղաքէ անտի հրացանս արձակել 'ի վերայ զօրացն: Եւ սոքա խնայեցին 'ի նոսա, վասն զոլոյն համազգի. և զի ոչ կամէին մտանել յարիւն պնքան քրիստոնէից, վասն զի 'ի Կաթի անդ էին Եֆրոս Կաթի Կաթի Կաթի Հայոց: Ուստի եւ արտաքս Մելիք Փարսադան, և սաէ ցարսն քաղաքին, արք եղբարք, հանդարտ լերուք, մի՛ ևս արձակեցէ հրացանս, Թոյլ տուք, զի ելցէ տէրն մեր արտաքս, և գնասցուք աստի, և ձեզ ոչինչ մեղեցուք. այլ նոքա առաւել ևս վատթար գորով հարին, և անդէն զմիջնորդն խաղաղութեան մինչդեռ զխաղաղութեան բանս բարբառէր՝ սպանին զնս՝ որ և զտէրն նոցա, այսինքն զՄելիք Մուսին 'ի մահուանն սուրեցոյց: Եւ ոք

ընդ Վաւթի էին, իբրեւ զայն տեւին, գիտացին զի այնուհետեւ վճարեալ էր չարութիւնն նոցա, քակեցին զմի կողմն պարապի վանացն, և անտի չուեցին գնացին, և ՚ի գիւղ մի Թուրքաց հասին. և անդէն զբազում ինչա Ագուլեցւոց դաին զձիս և զջորիս, և հազար երեք հարիւր ոչխարս սպանդանոցի, և զայն տմենացն, և զայլ բազում ինչա անտի տաին և գնացին ՚ի Մեղրի: Աւշեա երկուց տուրց, զօրականքն Վաւթի միւսանդամ ՚ի յԱգուլիս արշաւեցին, և զամենայն, որ ինչ էր արտաքոյ քաղաքին՝ տաին, և եկին մօտեցան ՚ի քաղաքն, և յերկուց կողմանց հուր արկին, զի թերեւս ելցեն արտաքս առ ՚ի մարտնչել ընդ նոսա. զի ոչ կարէին հանդուրժել չարեացն, և դաւաւոց, զոր նոքա արարին. և իբրեւ ոչ ելին արտաքս առ նոսա, տաին զաւարն, և գնացին ՚ի Մեղրի, և անտի դարձան ՚ի Հաւլիճոր և անդ օթեւանս կալան ¹⁾»

Արկին անդամ պատմութիւնը փոքր ՚ի շատէ մանրամասն հօրէն խօսում է Ագուլիսի մասին Ազատ խանի յարձակման առիթով, որ պատահում է նոյն դարու կիսում ²⁾: Մօսկնաւոր Սգուլիսին (1752 թ.) Ազատ խանը սուաջ ուղարկում է պատգամաւորներ խաղաղութեամբ խնդրել Ագուլեցիներից տալ իւր զօրքերին ցորենի, դարու, իւղի և այլն պաշար և հարիւր հազար դահեկան փող. բայց Ագուլեցիք դրդված լինելով իրանց Ասայի անունով գլխաւորից մերժում են խանի պահանջը և զինուորվում: Ազատ խանը երկու երեք անգամ կրկնում է իւր պահանջը խաղաղութեամբ, սպառնալով թէ՛ եթէ չը կատարեն իւր պահանջը, նա չ'է կարող զսպել իւր զօրքը կը մօնէ և կ'աւերէ քաղաքը: Սպանալով նոյն բացաւտական պատասխանը, խանը վերջապէս խողացնում է իւր

¹⁾ Պատմութիւն Ռաիթ Բէգին. Հրատ Եղգ. Գորամ. եր. 60—66, §§ 42—54:

²⁾ Չամչ. III, եր. 853:

կատաղած զօրքը քաղաքի վերայ և ուղղում է նորա վերայ իւր լեհականօթները տարի զլինից ¹⁾։ Խանի զօրքը մանուկ է քաղաքը։ Ազուլեցոյ գինւորված զունդը շփոթվում է և ջարդվում, բնակիչները մասամբ կոտորվում են, մասամբ ցրվում և գերի տանվում։ Ազատ խանի այդ սարսափելի յարձակումը և կոտորածը մինչև այժմ էլ լաւ յիշում են այդ կողմերում, այնպէս որ եթէ մէկը բարկացած ուղղում է ուշուց տալ Ազուլեցուն, անիծում է Ազատ խանին, որ այնպէս չը ջնջեց Ազուլիսը, որ ոչ մի Ազուլեցու հետք չը մնար աշխարհիս երեսին։

Ազատ խանի տված հարվածից յետոյ Ազուլիսի բնակիչներ թիւը և նորա հարստութիւնը պակասում է և ընկնում այն տափձան, որ Ազուլիսը, որը Պաւլիթ Բէղի օրերով, ինչպէս յիշում է այն ժամանակվայ պատմադիրը, ունէր մօտ 10) հազար բնակիչ, այժմ հաղել ունէ 4—5 հազար բնակիչ, այսինքն բոլոր Օսկ բարբառը խօսող հայերի կէտը։ Իսկ ինչ վերաբերում է բնակիչների հարստութեանը և բարօրութեանը, դժբա ժամանակով վերականգնում են այնպէս որ այժմեան Ազուլիսը հարստութեան կողմից նշանաւոր տեղ է բռնում Անդրկովկասի հայաբնակ քաղաքների և գիւղերի շարքում։ Այդ վերականգնելուն և այժմեան բաւականին ծաղկած դրութեանը անշուշտ օգնում է աշխատասիրութեան և վաճառականական ոգին, որը յատուկ է Ազուլեցիներին։ Վաճառականութիւնը հնուց զարգացած է երևում Ազուլեցոյ մէջ դեռ Շահաբասի օրերում այսինքն XVII դարու սկսբում մէկը հանդիպում ենք Պողթնեցի (Ազուլեցի) վաճառականների Պարսկաստանի քաղաքներում, վաճառականական նպատակներով նոքա այժմ էլ ցրված են Ասիայի և Եւրոպայի զանազան քաղաքներում։ Վաճառականութիւնը, որին Ա-

1) Ազուլիսը ձորամիջում է։

զուլիար պարտական է իւր հարստութիւնը, զանազան հե-
տեանքներ է ունեցել Ագուլեցիների համար, նա զարգացրել է
նոցա մէջ նենդ և խարդախ բնաւորութիւն: Այդ ոք 'ի հարկէ
յանդգնութիւն չի ունենալ պաշտպանել այդպիսի յատկու-
թիւններ, բայց ամեն մէկը մեզանից կը մեղմացնէ այդ վատ
յատկութիւնների դատապարտութիւնը, եթէ ուշադրու-
թիւն դարձնէ այն հանգամանքների վերայ, որոնք ծնել են և
զարգացրել այդ յատկութիւնները Ագուլեցիների մէջ: Այս-
ճառականութիւնը, խոստովանելու է, չ'է սիրում պարզամ-
տութիւն և միամտութիւն, ուրեմն լաւ փաճառականը պիտի
լինի աչքաբաց, ժիր և սրամիտ, փատ և անաջող հանգամանք-
ներում այդ յատկութիւնները փատ դռն և ողեղ կերպարանք
են ստանում. իսկ վատ և անաջող հանգամանքներում գտնու-
վել են միշտ Հայերը ուրեմն և Ագուլեցի թէ քաղաքական
թէ անտեսական կողմից: Պարսիկների մշտական հալածանք-
ները, աւերումները և հարստահարութիւնները պիտի ան-
շուշտ զարգացնէին նոցա մէջ ցանկութիւն՝ ձեռք բերել հարս-
տութիւն իբրև միջոց ինքնապաշտպանութեան, և որովհե-
տեւ նոցանից ամեն հնարքով խլում են նոցա վատասկածը,
ուրեմն նոքա էլ ներելի են համարում ամբն հնարքով կրկին
վատասիւլ և վատասկածը կրկին չը կորցնելու համար, նոքա
դատնում են իրանց անձնական շահերին և օգտին հետեւող,
նախանձոտ և իրար մատնող ուշադրութիւն դարձրէք, օրի-
նակի համար, 'Գաւիթ Բէգի պատմութեանից վերև բերած
հառվածի մէջ Ագուլեցոց վարմունքի վերայ, Ագուլեցիք և
նոցա քաղաքադուլիս Մելիք Մուսին դաւաճանում են 'Գա-
ւիթ Բէգին՝ նորա Ագուլիս եղած ժամանակը, յարձակվում
են նորա վերայ և սխտւմ են հրացաններ արձակել և սպա-
նում են 'Գաւթի աջակից Մելիք Փարստղանին, որ ուզում
է համոզել, որ խաղաղվեն Ագուլեցիք և որ ապատած էր փոքր

ինչ առաջ նոյն իսկ Մեղիք Մուսուէն մահչից, որին դատապարտել էր Վաւիթը իմանալով «զի այր նհնդաւոր է նա և խարդախ»։ Այդպիսի մի ապերախտ դործ և ցածութիւն Ազուլեցոյ կողմից, երբ ամբողջ Սիւնիքի Հայերը սաստիկ ողբորված ճիզն էին թափում ազատվել օտարների լծից, մեկնելու է նորանով, որ Ազուլեցիք վախենում էին Պարսիկների և Օսմանցիների ապաքայ վռէժից. բաց ինչպէս և իցէ՝ անձնական շահերը և սեփական օգուտը, թէ յեշեալ գէպքում և թէ սահասարակ, զլիաւոր նպատակ են կազմում Ազուլեցու համար և յառաջացնում են վատ յատկութիւններ նորա բնաւորութեան մէջ, օրինակ՝ սաստիկ հաւիանութիւն, և այլն։ Ամենահին ժամանակներից և զլիաւորապէս փաճառականութեամբ պարսպելով և այդ փաճառականութեան շնորհովը հարստանալով Ազուլեցիք ստացել են խաղաղ և փափկասէր բնաւորութիւն, նոցա մէջ դուք չ'էք տեսնիլ այն քաջատուութիւնը, որը յատուկ է նոցա հարեան Վարապաղցիներին և Նըւանու կողմերի Հայերին. նոցա անբողոք խաղաղափրութիւնը հասնում է մինչև կանացի վախկոտութեան։ Չը նայելով այդ բոլոր պակասութիւններին, Ազուլեցիք ժիր, դործունեաց և սրամիտ մարդիկ են և շահասիրութեան հետ միասին միաժամանակ զարգացած է նոցա մէջ սէր դէպի ուսում և լուսաւորութիւն։ Առեւտրական դործերի համար ճանապարհորդելով օտար երկիրներ և մեր օրերում զլիաւորապէս Ռուսաստանի և Ներսիսի քաղաքներ, նոքա ծանօթանում են Ներսիսական լուսաւորութեան դոճեա արտաքին կողմի և փայլի հետ, և ունենալով բնական սէր դէպի ուսում, մեծ հոգս են տանում նոր սերնդի կրթութեանը։ Ազուլիսի մէջ այժմ կայ տղայոց և օրիորդաց դպրոցներ, կայ մինչև անգամ ընթերցարան, որը ստանում է բացի հայ պարբերական հրատարակութիւններից՝ շատ Ռուս լրագիրներ և ամսագիրներ։

Ագուլիսի ուսումնարանում համարեա մին մինի ետեից տես-
չութիւն և ուսուցչութիւն են արել, այժմեան մեր յայտնի հե-
ղինականը՝ Բարխուդարեան, Պօռեան և Րաֆֆի. մի և նոյն
ժամանակ բազմաթիւ Ագուլեցի երիտասարդներ ուսանում
են Ռուսաց միջնակարգ և բարձրագոյն ուսումնարաններում:
Կան մի քանի հոգի և եւրոպական համալսարաններում:

Մինչև այժմ մեր խօսքը բուն Ագուլիսի վերայ էր. բայց Ա-
գուլիսի հետ, իբրև կենտրոնի հետ, սերտ կապված են բնա-
կիւնրի թէյտակութիւններով, թէ պարապմունքներով և որ
զխաւորն է՝ լեզուով շրջակայ շատ գիւղեր, օրինակ՝ Վաշո,
Հանդամէջ, Տանակերտ, Յոնայ, Լայն, որոնք գուցէ նոյն-
քան հին են ինչքան և ինքը Ագուլիսը. գոնեա դեռ Շահա-
բասի Պարսկաստան գերի տարած Հայերի թւում յիշվում
են Վաշտեցիք. նոյն Շահաբասի Ագուլիս եղած ժամանակը
յիշվում է «տիկին ոմն երեւել 'ի հայոց անտի ցղէջէ՝ կին
խօժոյ անձրեւի մեծի իշխանաւորի 1)» որը (այսինքն տի-
կինը) միջնորդում է, թէև անաջող, վերոյիշեալ Անդրէաս
քահանային Շահաբասի ձեռից ազատելու: Ինչ վերաբե-
րում է Վաշոն, նա, ինչպէս արդէն վերև յիշեցինք ունի մի
ուրիշ անուն էլ այն է՝ Ներքին—Ագուլիս, որը այդպէս կոչ-
ված է իւր բուն Ագուլիսին շատ մօտիկ լինելու պատճառով.
բայց այդ անունը զխաւորապէս պաշտօնական անուն է. Ա-
գուլիսի գաւառում նա աւելի յայտնի է Վաշո (տեղական՝
Վէշտ) անունով:

Քօֆէր խոկապէս միայն Ագուլիսի (Վերին և Ներքին)
բնակիչներն են կոչվում. բայց իրանց երկրից դուրս այդ անու-
նով կոչվում են նոյնպէս Ագուլիսի շրջակայ գիւղերի բնակիչ-
ները. եթէ, օրինակի համար, Տիխիսում կամ օտարութեան

1) Ձամէ III, հր. 590.

մէջ առհասարակ, մէկը Յդնեցուն ¹⁾ հարցնելու լինի թէ ի՞նչ տեղացի էս, նա կը պատասխանէ՝ Ագուլեցի եմ, և նորան կը կեքեն Օօկ անունը: Այդպիսի մի գիւղացու իրան Ագուլեցի անուանելը հիմնված է նորա վերայ, որ Ագուլեար, աւելի նշանաւոր լինելով քան թէ միւս գիւղերը, մինչև անգամ քաղաքի նշանակութիւն ունենալով աւելի յայտնի է ուրիշ տեղի Հայերին, որոնք այդպիսուն այնու ամենայնիւ Օօկ են անուանում, և չ'են սխալվում: Երբարև Օօկ հարկաւոր է անուանել ոչ միայն Ագուլեսի բնակիչներին այլ և շատ ուրիշ Ագուլեսից քիչ ու շատ հեռու գիւղերի բնակիչներին, որովհետև նոքա խօսում են մի այնպիսի լեզուով, որ մօտ է Ագուլեցոց լեզուին (զօկերէնին), և եթէ աւելի մօտիկ հետազոտելու և համեմատելու լինենք կը տեսնենք, որ այդ գիւղերի խօսած լեզուները կազմում են Օօկերէնի բարբառներ: Մեզ մօտ առհասարակ համոզմունք է կազմվել, որ իբրև թէ մէկ հայ գիւղի կամ քաղաքի խօսած հայերէն բարբառը նման չ'է իւր հարեան գիւղի կամ քաղաքի հայերէնին: Այդ ճշմարիտ է առհասարակ, ճշմարիտ է նոյնպէս և Ագուլեսի ու նորա՝ ասենք՝ զաւառում զանված գիւղերի վերաբերմամբ. բայց այնպէս չ'է որ այդ լեզուները ոչինչ կապ չ'ունենան իրար մէջ, նոցա արտաքին տարբերութիւնը, ճշմարիտ է, շատ անգամ նկատելի է լինում, բայց եթէ աւելի մօտ նայելու լինենք, մի գիւղի լեզուի մէջ մենք ցրված և երբեմն շատ խառակ պահված կը տեսնենք իւր հարեան աւելի մեծ նշանաւոր գիւղի լեզուի յատկութիւնները. այդ երկրորդական, երրորդական և այլն բարբառներ են, որոնք կազմում են արդէն յայտնի բարբառների բարբառներ. Յդնեցին, Ռամեցին ²⁾ և այլն չ'են

1) Եղնայ կամ Յանդայ ունի Ագուլեսից մօտ 15 վերստ հեռաւորութիւն:

2) Ռամիս—Եղնային մօտ մի գիւղ է:

ուզում խոստովանել թէ խօսում են զօկերէն, մինչդեռ նոցա լեզուն զօկերէնի բարբառն է. և Հէնց Ագուլեցին ինքը, համարելով իւր լեզուն լուսաւորեալ, քաղաքավարի ու գեղեցիկ յիշեալ և շատուրիշ գիւղերի լեզուները «մանդրած¹⁾» է անուանում²⁾։ Մենք կը տեսնենք յետոյ թէ ինչ աստիճան այդ «գիւղական» զօկերէնի մէջ մնացել են Ագուլիսի զօկերէնի հետքերը և յատկութիւնները։

Չօկերէնը ուրեմն չ'է սահմանափակվում Ագուլիսով՝ նա բռնում է բաւականին նշանաւոր տարածութիւն, որի մէջ դտնվում են հետեւեալ գիւղերը՝ Յընայ, Տանակերտ³⁾, Ռաւիա, Վաղարի և շատ ուրիշ գիւղեր, որոնք քանի հեռանում են Ագուլիսից այնքան շատ են աղաւաղում իրանց լեզուն։ Իւր բռնած տարածութեանը նայած զօկերէնը իրաւացի է ստացել իւր տեղը հայոց բարբառների շարքում։ Այժմ կըրբ լեզուագիտութիւնը իւր նպատակների համար հարկաւոր է համարում շատ ժամանակ գիմել լեզուի բարբառներին, բարբառների ուսումնասիրութիւնը և նոցա հետ աւելի մօտիկ ծանօթութիւնը ստանում է մեծ կարեւորութիւն և արժէք։

Զը նայելով որ զօկերէնը նշանաւոր տեղ է բռնում Հայոց բարբառների շարքում, այնուամենայնիւ մինչև այժմ, ինչպէս հարկն է, հետազօտված չ'է. միայն մի բաւականին նշանաւոր յօդված նուիրած է նորա հետազօտութեանը՝ Պետրեբուրգի

1) Այսինքն՝ կտորած։

2) Եւ այդ գիւղերումն էլ լուսաւորված և «աշխարհ տեսած» մարդիկ խօսում են Ագուլեցոց լեզուն՝ այսինքն Ագուլիսի Չօկերէնը, իսկ մնացեալները իրանց գիւղի լեզուն որ աւելի գունահիւ է համարվում, այնպէս որ շատ անգամ կը տեսնէր բնասմիւր, որի կէտը (ըստ մեծի մասին տղամարդիկը—վաճառականները) խօսում են Ագուլեցիքէն, իսկ մնացեալները իրանց գիւղի լեզուն։ Իսկ Ագուլեցու պատահած ժամանակը ամեն գիւղացի աշխատում է խօսել Ագուլեցիքէն։

3) Տեղացիք ասում են՝ Տնակարտ։ Յընայ յայտնի է և Զանաւար անունով (պաշտօնական)։

Համալսարանի պրոֆեսոր պ. Վ. Պատկանեանցը իւր «Из-слѣдованіе о діалектахъ Армянскаго языка» շարա-
դրութեան մէջ (С.-Петербургъ. 1869. երես 27 — 55):
Եւ այց տարաբարդաբար Ազուլեցոյ լեզուով զրգած յօդված-
ները, որ բերում է պ. պրոֆեսորը, լի են սխալներով, որոն-
ցից մի քանիսը գուցէ տպագրական սխալներ են, բայց մեծ
մասը ապացուցանում է, որ յօդվածների հեղինակները չեն
խնայել Ազուլեցոյ բարբառը և անթիւ սխալներով լցրել են
իրանց յօդվածները: Եւ սխալներով լի յօդվածների վերայ
ստիպված է հիմնել պ. պրոֆեսորը իւր Ազուլեցոյ բար-
բառի հետազոտութիւնը, որը, ինչպէս կարելի էր սպասել,
դուրս է գալիս կիսատ և սխալներից ոչ ազատ, ինքը պ. պրո-
ֆեսորը խոստովանում է, որ դժվար է մի քանի յօդվածնե-
րով միայն (եր. 37) և այն էլ հեռուից (եր. 63) դատել տա-
ռերի յատկութիւնների և նոցա ճիշդ նշանակութեան մա-
սին. այնու ամենայնիւ պատուելի պրոֆեսորը շատ կանոններ
և օրէնքներ դուրս է բերել բոլորովին ճիշդ և ուղիղ:

Մեր լեզուաբանական հետազոտութիւնը սկսելուց առաջ
մենք պիտի տանք պատասխան մի փոքրիկ հարցի, որ ան-
պատճառ կ'առաջարկէ ձեզ ամեն մէկը, երբ որ սկսէք նորան
ձեր լեզուաբանական դատողութիւնները յայտնել զօրերէն
մասին. այդ հարցն է՝ ի՞նչ տեղից է դուրս եկել այդ բարբառը
և նորա Գծի անունը:

Ճիշտ հայերէնը, ինչպէս և ամեն մէկ ուրիշ լեզու, ունե-
ցել է իւր բարբառները, որոնց կազմվելը բնական է ամեն մի
կենդանի լեզուի համար, որպէս և հայերէնի համար:

Ճայտատանը՝ լեռնոտ երկիր լինելով և միշտ ենթարկված
լինելով զանազան ազգերի արշաւանքների, ազդեցութեան և
լծի, շատ յարմարութիւններ է ներկայացնում իւր բնակիչ-
ների ընդհանուր լեզուին շատ ճիւղերի կամ բարբառների

բաժանվելուն. և այն Հին կլասիկական լեզուն որ ըստ սովորութեան ~~Գրաբար~~ ենք անուանում, որ երկար ժամանակ Հայոց քաղաքակրթութեան ընդհանուր լեզուն էր կազմում, ոչ այլ ինչ է, եթէ ոչ բազմաթիւ հայ բարբառներից մէկը, որը մօտ III դ. Վերնաստից յետոյ դառնում է պետական լեզու, որ իշխում է աւելութեան գործերի և կառավարութեան մէջ (ոստանիկ), և յետոյ, արուեստականութիւն ստանալով գիտնականների շնորհով՝ դառնում է զրականական լեզու, դառնում է ազգի լուսաւորութեան և քաղաքակրթութեան ընդհանուր գործիք և արտայայտիչ:

Իսկ միւս բարբառները շարունակում են ապրել ժողովրդի բերանում, ինչպէս ապրում էին մինչև այդ ժամանակը, այսինքն մինչև բարբառներից մէկի ավրապետութիւն ստանալը կառավարութեան գործերի և զրականութեան մէջ. իրանց այդ կեանքի մէջ նոքա, ինչպէս կենդանի բարբառներ, ենթարկվում են զանազան փոփոխութիւնների այնպէս, ինչպէս ամեն մի կենդանի լեզու. այդպէս ապրելով՝ այդ բարբառները հասնում են մինչև մեր ժամանակը, ենթարկվելով զանազան հանգամանքներից յառաջացած փոփոխութիւնների, անցնելով զարգացման զանազան աստիճաններ: Այդպէս պիտի ընդունենք և զօկերէնի ծագումը. թէև նա ոչինչ զրականական հետքեր չէ թողել իբրև ապացոյց իւր պատմական գոյութեան, այնուամենայնիւ նորա ներկայ գոյութիւնը ինքն ըստ ինքեան լաւ ապացոյց է նորա անցեալի. չենք կարող իսկ ենթադրել, թէ դա երեկվայ միւս օրվայ ստեղծված բարբառ է: Ճշմարիտ է՝ երբեմն կը լսէք այնպիսի հայեազք, թէ այդ բարբառը մի պայմանաւոր լեզու է, որ ստեղծել են այդ կողմի Հայերը իրանց հարեւան Խուլքերին և Պարսիկներին անհասկանալի լինելու համար. իբր թէ Խուլքերը և Պարսիկները զանազանութիւն պիտի դնեն ընդհանուր հայե-

րէնի և Յօկերի պայմանաւոր լեզուի մէջ. և թէ նոքա հասկանում են Ազուլեցոց խօսած հայերէնը, չէ թէ նոքա ուսել են հայերէն լեզուն, այլ լսելով են սովորել նորան. ուրեմն նոքա համար մի և նոյն է՝ խտրակ հայերէնը լսելով սովորեն թէ Յօկերի ստեղծած պայմանաւոր լեզուն. կան Խուրքեր, որոնք շատ լաւ խօսում և հասկանում են զօկերէն: Աւացի այդ՝ պայմանաւոր լեզուն չէ կարող փոխվել, զարգանալ. մինչդեռ զօկերէնը ունի իւր բարբառները, ունի բաւականին կանոնաւորութիւն իւր հնչիւնների և քերականութեան մէջ. մի թէ պայմանաւոր լեզուն հարկաւորութիւն ունի իւր քերականութիւնն էլ պայմանաւորելով: Պայմանաւոր լեզուն ստեղծում է միայն այնպիսի բառեր, որոնք հասկանալի են միայն պայմանաւորողներին իրանց, այն էլ ոչ թէ ստեղծում են նոր բառեր, այլ մի մտք արտայայտելու համար՝ առհասարակ ընդունված այդ մտքը արտայայտող բուն բառի փոխարէն գործ են ածում մի բոլորովին ուրիշ բառ, որ կամ բոլորովին ոչինչ կապ չ'ունի բուն բառի հետ, կամ թէ բուն բառի նշանակած առարկայի արտաքին յատկութիւններից մէկն է արտայայտում: Այդպիսի մի պայմանաւոր լեզու ճիշմարիտ որ կայ Յօկերի մէջ. բայց դա ոչինչ կապ չ'ունի զօկերէնի հետ, և Յօկերին այնքան է յայանի, ինչքան և ուրիշ Հայի կարող է յայանի լինի. նոյն խօսքերը կարելի է ուրիշ Հայ բարբառով և գրականական լեզուով թարգմանել, — ոչ մի Հայ չի հասկանալ մինչև նորան չը մեկնեն. օրինակ՝ հօկ մօրդը տիրիւ այ կարում (այս մարդը տերւ է կարում) — նշանակում է՝ այս մարդը հասկանում է, նօրը — մանէթ, ուրբի. և այլն:

Ահա պայմանաւոր լեզու, կամ աւելի ճիշդն ստած՝ պայմանաւոր խօսքեր. ի՞նչ նմանութիւն ունի այդպիսի մի լեզուի հետ զօկերէնը: Ոչ. Ազուլեցոց բարբառը պայմանաւոր

լեզու չ'է. նա, ինչպէս տասցինք, սերունդ է աւելի Հին բարբառի, որ ապրել է երկար ժամանակ իւր պատմական կեանքով, ենթարկվելով, ինչպէս կենդանի բարբառ, զանազան փոփոխութիւնների, մինչև որ հասել է մէջ իւր պիտեան կերպարանքով: Յովհաննէս Արմենացի (XIV դար) յիշում է 8 հայ բարբառներ՝ Արճայ, Տայ, Խոնայ (Սասուն), Զարարդ, Հայոց, Ալեքայի, Ալնի, Արցախայի, Արարատեան կամ Ուրարտի: Աթէ զօկերէնը տեղաւորելու ընենք այդ 8 բարբառների շրջանում, անշուշտ պիտի յատկացնենք Արմենի: «Այժմեան լեզու՝ Ագոնլեցոց—ասում է Խաճիճեանը—բազմօք տարբերեալ ոչ միայն ի դրաբառէն՝ այլ նաև յամենայն ազգաց աշխարհաբառ. լեզուին՝ թերևս է հայոցը՝ նախնի սիւնեցոց, զի Ագոնլիս ի Անիս անկանի 1)»: Աւ ճշմարիտ՝ այդպիսի մի մեկնութիւն տալ կարելի է միմիայն Հիմնվելով աշխարհագրութեան վերայ: Ազուլեցոց բարբառը մենք կարող ենք համարել միմիայն Արմենիքում զանվող բարբառներից մինը, բայց համարել նորան իբրև ժառանգ Հին Արմենիք բարբառի մենք չ'ենք կարող, որովհետև նոյն այդ Արմենիքում, որը այժմ յայտնի է Վարաբաղ անունով, այժմ էլ դոյութիւն ունի զօկերէնից աւելի յայտնի և աւելի տարածված բարբառ՝ Վարաբաղոց բարբառը, որը աւելի իրաւունք ունի Հին Արմենաց բարբառի ժառանգ համարվելու: Թէ ինչ կապ ունի այդ բարբառի հետ զօկերէնը, մենք կր տեսնենք այդ մեր հետազոտութեան ընթացքում: Աս բոլորովին պատահական եմ համարում այն զարմանալի նամուրթիւնը, որ ունի Ազուլեցոց բարբառը Օւլթիւնոց բարբառի հետ ձայնաւորների փոփոխումների մի քանի օրէնքների

1) Խաճիճեան. Հնախաութիւն Հայա. տանայց III, էր. 7. 5.—Տես նոյնպէս պր. Պատկանցի Исследования о составе Армянскаго языка. 1864, էր. XVI.

մէջ. օրինակ՝ հաց—զօկ. հօց, գէլթ. հօց, յոբ—զօկ. յոբ—գէլթ. յոբ. յետոյ՝ իրանց ակզումը մենք կը բերենք ուրիշ շատ օրինակներ: Mediae բաղաձայնների արտասանութիւնները բ=ն, գ=g հայլն Ազուլեցոյ բարբառը նմանութիւն է ներկայացնում Տփիսի բարբառի հետ:

Չօկ բարբառը երբէք զրականութիւն չ'է ունեցել, չ'ուներ և, ինչպէս երևում է, չի էլ ունենալու, որովհետև Չօկերը իրանց բարբառով ոչինչ չ'են գրում մինչև անգամ ոչ իրանց հաշիւները, ոչ իրանց նամակները. ինչքան որ ազեա և թերուս կամ բոլորովին անուս Չօկ լինի, եթէ մի խօսք անգամ գրելու հարկուորութիւն եղաւ, նա պիտի գրէ այդ անպատճառ զրականական լեզուով, թէև նա սխալներով լընում է, բայց այնու ամենայնիւ նա գրում է այդ լեզուով: Այդ յատկութիւնը թէև ֆնատար է բարբառի զարգացման, բայց շատ գովիչ է նորանով, որ ազգայն լեզուի ընդհանրութիւնը պահպանվում է զոնեա զրականութեան մէջ: Ինչքան որ աղաւաղում է, նայր իւր խօսած լեզուն, այնքան էլ խիստ է աշխատում պահել նորա խօսակութիւնը, երբ որ բանը գրելու է հասնում: Բայց այդ Չօկերը մի յատկութիւն էլ ունին. ուրիշ կողմերի նայի պատահած ժամանակը, նորա հետ խօսելիս, Չօկը փոխում է իւր բարբառը և խօսում է, գոնեա աշխատում է խօսել (եթէ լաւ չը գիտէ) ընդհանուր հայերէն, մինչդեռ ուրիշ կողմերի նայերը, օրինակ՝ Վարաբաղցին, Տփիսիսեցին և այլն, ում հետ որ պատահեն, իրանց բարբառով են խօսում: Չօկերի այդ գէտքում բացառութիւն կազմելը կարելի է մեկնել նորանով, որ զօկերէնը աւելի հնու է ընդհանուր հայերէնից, ուրեմն և ուրիշ կողմերի նայերի համար աւելի անհասկանալի քան թէ Վարաբաղցոյ, Արևանցոյ, Տփիսիսեցոյ և այլն բարբառները:

Արեմն՝ ինչպէս տեսնում ենք, Ազուլեցոյ բարբառը Չօկ-

ստանից ¹⁾ դուրս ոչինչ տարածութիւն և գործածութիւն չ'ունի, իսկ իրանց Ռօկերի մէջ ոչինչ գրականականութիւն չ'ունի և չ'է ունեցել: Այդ գրականութեան պակասութիւնն է, որ մենք այժմ չ'ենք կարող տեսնել և խմանալ, թէ ի՞նչ փոփոխութիւնների է ենթարկվել այդ բարբառը մինչև իւր այժմեան կերպարանքը ստանալը, ի՞նչ զարգացման աստիճաններ է անցկացել, ի՞նչ տեղ և ի՞նչ նշանակութիւն ունէր նա ընդհանուր Հայոց լեզուին վերաբերեալ: Միմիայն մի հատված հասել է մեզ, որ փոքր 'ի շատէ ծանօթացնում է մեզ XVIII դարու սկսելի զօկերէնի հետ. այդ հատվածը, որ ներկայացնում է մի խօսակցութիւն հիւրերի մէջ խնձոյքի ժամանակ, գտնում ենք Շ,րօդերի քերականութեան ²⁾ մէջ, ինչ տեղից և մենք ահա դուրս ենք գրում այստեղ այդ վերին աստիճանի հետաքրքրելի հատվածը, պահելով բնագրի ուղղագրութիւնը:

Ի. — Հերբար շօտ դով ըս տալիս, աղիկն ան այ օր դքի մոյն փութը քօշ պահիս, զարա հրամանքդ տուն տայրս ըխտիար ովելիս:

Ե. — Ուղուրդ այ նասում Բարադամն քու հրամանքդ միւսասիրի տայր ըս, չի՛ պարուններս քու տօվելդ ըս կանչած, օր զովդ անիք, օվրախ պահահ՝ շօտ քամի նարին աղիկ չի:

Տ. — Պարուն, դա՛ռ դիւք ըշխարքիս բանին խբէր չիք թղօթին աւրիք, դա՛ռ դիւք զովդ նիդիլ չիք թա՛ անչ այ. իս անղադար միծ միծ մարդու հիտ նստօծ զողվ ըմարած, օր դիւք անղադար լսօծ չիք. նղաւիք ունչ աղպարք:

Տ. — Այ ջօն փեսայ, քու տաղլ ասա,
«Աոնես կոսես» մոանիլ մա՛
Խայի լիզուն մոյն լիզու այ.
Ծովա մօռ խուսուղ ջուղեցին այ,

¹⁾ Այդպէս անուանենք Աբուլքսը այն բոլոր գիւղերով, որոնց լեզուները Աբուլքցոց բարբառի բարբառներ կարելի է անուանել:

²⁾ Schroeder. Thesaurus linguae Armenicae, 1711. Amsterdam. — Այդ հատվածը բերում է և պր. Պատկ. իւր Исследование о диалектахъ Армянскаго языка №9. кр. 54.

Որ նասիլ ըն «գուշն գորմանա»
 Լիզվի քանդուղ զափանցինա:
 Միր վերեաթի լիզուն պօրզա.
 Եման լիզու պօրզ խուսիլա.
 Քեօրդի Փարսի թն Փրանգի ա
 Հէնց նիդիս թն իւր լիզուն ա:

Մենք բերում ենք այստեղ այս հասկածը միայն ինչպէս հետաքրքրելի օրինակ հին զօկերէնի (XVIII դարու սկսի). աւելի մանրամասն կը քննենք նորան յետոյ: Աս կարծում եմ, որ հնութեան հետքեր կը գտնենք նոյնպէս, եթէ զիմեւ լինենք ալեւոր մարդկանց կամ կանանց լիզուն առհասարակ, առաւել պատու կանաց լիզուն: Զր զիտեմ ինչքան այդ ուղիւ է Ագուլիսի կանանց վերաբերեալ, բայց Յոնացի վերաբերեալ, ինչպէս երևում է, այդ արդարեւ այդպէս է, այնտեղ դուք կը լսէք, օրինակի համար՝ Նահում ըս (= ագ. նահամ ըս, ասում եմ) և Նահում ըս. այս վերջին ձևը գործ են ածում պատու մարդիկը, մինչդեռ մնացեալները առհասարակ և առաւել այն մարդիկը, որոնք միջապէս թէ անմիջապէս յարաբերութիւն են ունեցել Ագուլեցոյ զօկերէնով խօսողների հետ, գործ են ածում բոլոր այն ձևը, որ արդէն նման է «քաղաքի» լիզուն՝ Նահում ըս (= ագ. նահամ ըս). ուրիշ օրինակներ՝ Նաթեհի (= ագ. նատահիք—նատեհէք) և Նաթեհի. Գառն—ապ. և ցղն. Գառնը, պատու ցղնեց. Խոռնը, Լայլն: Այստեղ մարդ տկամաց յիշում է Յիցերոնի հետեւեալ խօսքերը. «Equidem cum audio socrum meam Laeliam—facilius enim mulieres incorruptam antiquitatem conservant, quod multorum sermonis expertes ea tenent semper, quae prima didicerant—, sed eam sic audio, ut Plautum mihi aut Naevium videar audivisse 1).»

1) Cicero. de Orat. III, 45.

Ինչ վերաբերում է Չօկ անունին, որով կոչում են առհասարակ Ազուլեցուն, դա մի զգալի մեկնելի անուն է։ Վրժվար է հաստատ ասել, բայց շատ հաւանական է, որ դա մի արհամարհական անուն լինի, որ հարեւանները տված են այդ ցեղին մի որ և իցէ պատճառով։ Պատկանեանցը կարծում է, թէ այդ անունը յառաջացել է հօկ, օկ գերանուն, որ ուրիշ բարբառներին բոլորովին անյայտ է, յաճախ զործ ածելուց՝ Ղնախնդրով, որը զործածական է եղել անցեալ դարում՝ «հօկ, օկ։ Այդ կարծիքը պ. պրոֆեսսորը հաստատում է և նորանով, որ վերև յիշած խօսակցութեան մէջ, որից բերված է վերևի հատվածը, խօսող անձինքներից մէկը անծանօթ լինելով զօկերէնի հետ ասում է՝ «Չուղեցեալն՝ Վափանցեալն՝ ու Հոռմրցեալն լաւ կու հասկանամ մա ձեր զօկ մօկ խաբար չեմ թէ ինչ այ ¹⁾»։ Այդ մեկնութեան հետ չէ կարելի չը համաձայնել. ուրիշ մեկնութիւններից դա ամենահաւանականն է, առաւել որ Հայերի մէջ բարբառի յատկութեամբ մականուն տալը սովորականից դուրս բան չէ. օրինակ՝ արեւելեան Հայերը արեւմտեան Հայերին (Պօլսեցիներին) անուանում են հոսանէր (նոցա հոս բառից)։

¹⁾ Schroeder. հր. 355.

Գ Լ ՈՒԽ ԻԻ.

ՏԱՌԵՐԸ, ՆՈՑԱ ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՓՈՓՈԽՈՒՄԸ.

Աղուէցոց բարբառը ոչ մի տառ չէ կորցրել Հայոց այբբէնարանից, այլ ընդհակառակը՝ աւելացրել է մի քանի հնչիւններ, որոնց արտասանութեանը ոչ մի տառ չէ համապատասխանում Մեսրոպեան այբբէնարանումը: Այդ հետեւալ հնչիւններն են՝ 1. ա: Այդ տառը, բացի իւր բուն հայկական արտասանութենից, ստացել է զօկերէնում, անշուշտ Պարսիկների և Խուրքերի ազդեցութեան տակ, այն հնչումը, որ յատուկ է պարսկերէն 1 կամ Ֆրանսերէն 2 օրինակ 1a յօդի մէջ: 2. ա: այդ երկձայնը որը արտասանվում է ինչպէս լատիներէն և, բացի այդ արտասանութենից զօկերէնում ունի և մի այնպիսի արտասանութիւն, որ համապատասխան է յունարէն 3 կամ Ֆրանսերէն և. այդպէս է արտասանվում միշտ և է-, որի հայկական արտասանութիւնն է յւ (Ուռւա. 10): 3. օ. կայ մի հնչիւն էլ, որ համապատասխան է լատիներէն և գերմաներէն օ: 4. Օօկերը գործ են ածում բառերի սկսբում մի այնպիսի հնչիւն, որ համապատասխանում է Գերման. j:

Այդ հնչիւնները, ինչպէս ասացինք, Հայոց այբբէնարանի ոչ մի տառը չէ արտայայտում, այնպէս որ մենք ստիպւած պիտի մի քանի պայմանաւոր նշաններ ստեղծենք այդ Հայոց

լիզուին օտար հնչեւները որոշելու համար: Առաջինը մենք
կը նշանակենք ա, երկրորդը—ս, երրորդը—օ, չորրորդը—յ:
Առանց այդ նշանների, գծվար կը լինի կարգալ զօկերէն պրած
բառը, իսկ ոչ—Օօկը կարող չ'է ճիշդ գաղափար կազմել զօ-
կերէնի արտասանութեան մասին. դա նման կը լինի պարս-
կերէն լեզուին, ուր բառը ուղիղ կարգալու համար առաջ
հարկաւոր է նորան իմանալ, որովհետեւ ձայնաւորները չ'են
զրկում' և նոր սովորողը չը գիտէ ինչպէս արտասանէ: Այդ-
պէս էլ զօկերէնը, առնենք, օրինակ, հետեւալ նախադասու-
թիւնը. «մոյն հըլաւուր մորդ մէշումը փայտայնել կտարած
և հօրցնը կապած, դրեծ եօնսին, ցանամ¹⁾»։» Օօկը 'ի հար-
կէ առաջ կը կարգայ ինչ տառերով որ զրկած են այդ բա-
ռերը, իսկ յետոյ, իմանալով որ դա իրայ բարբառով են գրել,
կը հասկանայ բառերը և կը կարգայ արդէն իւր արտասա-
նութեամբ. իսկ ոչ—Օօկը, առաւել այլազգ ուսումնականը,
պիտի կարգայ և արտասանէ, ինչպէս որ տեսնում է, ուրեմն
նա չի էլ իմանալ որ Օօկերը երբ և իցէ ա արտասանում
են ինչպէս ա, օ—ինչպէս օ և այլն. օրինակ՝ նա ի՞նչպէս իմա-
նայ թէ «հըլաւուր» և «կապած» բառերի մէջ ա զանա-
զան է կարգացվում՝ առաջինում ա, երկրորդում ա, կամ
թէ ի՞նչպէս իմանայ թէ նոյն «հըլաւուր» բառի մէջ կարգա-
լու է ս և ոչ ու, կամ «հօրցնը» բառի մէջ օ և ոչ օ:

Այս փոքրիկ բայց հարկաւոր նկատողութիւնը անելուց
յետոյ՝ գտնանք Հիմա տառերի արտասանութեանը և նո-
ցա փոփոխումներին:

¹⁾ Այս օրինակը մենք առնում ենք Պատկանեանցի Исследование о діалектах Арм. яз.
գրքից. եր. 27. սահմանը նոյն ուղղագրութիւնը:

Լ. ՉԵՅԵԱՒՈՐ ՏԱՌԵՐԸ:

§ 1. Խ: Այդ ձայնաւոր տառը բացի իւր բուն արտասանութենից ունի մի ուրիշ արտասանութիւն էլ, որը մենք որոշեցինք նշանակել Խ. Աս Խ—ի կակուղ արտասանութիւնն է, որ յառաջացել է, ինչպէս շատ ուրիշ երևոյթներ Հայոց կեանքի և լեզուի մէջ, Պարսիկների և Խուլքերի ազդեցութեան տակ, որոնց լեզուում այդ հնչիւնը մեծ գործածութիւն ունի: Անկարելի է որոշել մի անգամից, ինչպէս կանոն՝ թէ ի՞նչ տեղ կամ ի՞նչ դէպքում այդ ձայնաւորը հնչում է Խ. միայն մի դէպքում, ինձ թւում է, կարելի է մօտիկաբար մի այսպիսի կանոն հասնել՝ Խ երկու կամ շատ վանկ ունեցող բառերի մէջ չէ արտասանւում Խ եթէ նախընթաց վանկումը կան իստակ և թաւ ձայնաւորներ Խ, ռ(*), ր. իսկ ընդհակառակը արտասանւում է Խ եթէ նորանից առաջ վանկումը կան Խ, օ, Խ (կամ Խ—), Ե, Է, Ի. օրինակ՝ նաւամ (աւնում), կապամ (կապում), նստամ (ուտում), օրախ (ուրախ), Խ—խման (ղք մին), փԽ—ղամ (փողում) և այլն. բոլոր այս բառերի մէջ երկրորդ վանկի Խ արտասանւում է իստակ և առանց կակղանալու, երևի առաջին վանկերի ձայնաւորների ազդեցութեան տակ. իսկ հետեւեալ օրինակներում՝ քշարան (գիշերվան) խարվամ (խաբվում), բձրամ (բարձրում), իւրան (իրան), գիւլար (գայլերը), բանար (բուները), փերձամբ (փորձում եմ), բեռնամ (բեռնում), էխման (էք մին), էգամ (այգում), գիտամ (գետում), նիզամ (ուզում) և այլն, այս բոլոր օրինակներում Խ արտասանւում է Խ առաջին վանկերում դոնոված Խ, օ, Խ—, Ե, Է, Ի ձայնաւորների ազդեցութեան տակ:

Ծանօթ. 1. Իական բայի Սահմ. եղ. ներկայ ժամ. երրորդ գէմքը՝ առնենալով շատ թոյլ ինքնուրոյնութիւն, միշտ արտասանվում է իւր բայի հետ, եթէ նորանից անմիջապէս յետոյ է կանգնած, կամ թէ առհասարակ այն բառի հետ, որից յետոյ գալիս է այդ աւերեմն և ենթարկվում է վերոյիշեալ կանոնին. օրինակ՝ նիշամ այ՝ արտասանվում է ա՝ որովհետև նորանից առաջ կանգնած վանկում (ամ) ա արտասանվում է ա, իսկ այդ վերջինը այդպէս է արտասանվում իրանից առաջ գտնված վանկի չ—ի ազդեցութեամբ: Իական բայի ներկայ ժամ. 3. գէմքի (ա) այդ ինքնուրոյնութեան պակասութիւնը սեպհական հընդման, և, ինչպէս յետոյ կը տեսնենք, շիշտի պակասութիւնը կարելի է համեմատել յունարէնի նոյն բայի նոյն ժամանակի և նոյն գէմքի հետ՝ ἐστί, որը կամ կորցնում է կամ տալիս է իւր շիշտը առաջ կանգնած բառին, կապելով դորանով իւր արտասանութիւնը նախընթաց բառի արտասանութեան հետ: Համեմատ. Յունաց. քերականութեան մէջ encliticae.

Ծանօթ. 2. Յիշեալ կանոնից կարող են բացառութիւններ պատահել բայց նա ունի օրինակների այնպիսի մեծ քանակութիւն, որ նորան այնու ամենայնիւ կարելի է առաջարկել իբրև կանոն:

Վերև ասացինք թէ անկարելի է որոշել, ինչպէս կանոն, թէ ինչ տեղ է ա արտասանվում ա, մի և նոյն ժամանակը նկատեցինք՝ թէ ա արտասանվում է ա, ի միջի այլոց, այն ժամանակ, երբոր նորանից առաջ կանգնած վանկումը կայ ա. բայց ինչպէս իմանանք թէ այդ առաջին վանկի ա—ը արտասանվում է ա. արդեօք դորա համար էլ կանոն կայ:

Այս դէպքում էլ թէև ընդարձակ մի օրէնք հանել չենք կարողը բայց օրինակների մի բաւականին նշանաւոր քանակութիւն իրաւունք է տալիս մեզ այսպիսի մի եզրակացութիւն անել, որ համարեա ինչպէս կանոն կարելի է առաջարկել՝ եթէ երկու կամ աւելի վանկ ունեցող բառերի մէջ առաջին վանկի ա զրկված է գրականական հայերէնի կամ ուրիշ բարբառների է—ի փոխարէն, այդ ա—ը արտասանվում է ա. օրինակ՝ վարայ (վերայ), փայ (փեսայ), մա-

ռալ (մեռել), բարան (բերան), և ուրիշ շատ օրինակներ, որոնցից մի քանիսն էլ դեռ միջոց կ'ունենաք ներքև յեջելու:

Օսկերէնին յատուկ և նորա կանոնաւոր երեւոյթներից մէկն է այն, որ ա միավանկ բառերի մէջ փոխվում է օ (կրբեմն օ ¹⁾), բայց հէնց որ այդ միավանկ բառը դառնում է երկվանկ կամ աւելի, կրկին այդ օ—ի տեղ տեսնում ենք սկրբնական ա. օրինակ՝ մարդ—զօի. մերդ, բայց մարդիք. հարա—զօի. հօրս, բայց հարսի, հարանար. մահ—զօի. մհհ, բայց մահհից, և այլն: Այդ երեւոյթը ճիշդ է նկատել Պատկանեանցը ²⁾), բայց նորա զօկերէն լեզուով բերած յօդվածները սխալներով լինելով, միջոց չ'են տալիս նորան նկատելու, որ այդ օ կրկին վերադառնում է ա, հէնց որ բառը աւել վանկեր է ստանում. այնպէս որ նա հղում է՝ մորդ—մորդի—մորդաւ—մորդամ, քոր—քորի—քորար—քորարի և այլն, որ կրբեք Ազուլեցոց լեզվում չ'էք գտնիլ: Նկատելու արժան է, որ արեւմտեան հայերէնի հեռաւոր բարբառներից մինի մէջ, այն է Օւէյթունցոց բարբառում, մենք տեսնում ենք նոյն այդ երեւոյթը՝ ա—ի օ փոխվելը միավանկ բառերի մէջ, ինչպէս որ ցոյց են տալիս հետեւեալ օրինակները՝ հակ—զօի. հօկ—զէյթ. հօի, մկրատ.—զօի. մկրատ—զէյթ. մկրատ, հայ—զօի. հօց—զէյթ. հօց, ծառ—զօի. ծօռ—զէյթ. ծօռ, վարդ—զօի. վօրդ—զէյթ. վօրդ. և այլն:

Դասել. 3. Ը այստեղ ինչպէս և ուրիշ դէպքերում, թէ դօրու թեամբ իմացվում լինի թէ գրվում, վանկ չ'է կազմում, այսինքն ըստը ենթարկվում է նոյն կանոնին, ինչպէս միավանկ բառ չը նայելով այդ

¹⁾ Այդ օ յառաջանում է, ինչպէս ցոյց են տալիս բազմաթիւ օրինակներ, ա—ից օրինակ՝ բօրձ (բարձ) — բօրձի — բօրձից, փօր (փար) — փօրի—փօրար. ցղնեցոց Ժօ.Բ (Ժամ) — Ժամի — Ժամից, և այլն:

²⁾ Исследование о диалектах Арм. яз. № 40.

ը—ին. օրինակ՝ հօկ խօչ վկայ այ (այս խաչը վկայ է), քալարայ (քար-
վանարայ) և այլն:

Ծանօթ. 4. Այս երևոյթը ամենականոնաւոր երևոյթներից մէկն է
զօկերէնի մէջ. այնու ամենայնիւ, ինչպէս շատ ուրիշ հասաատ կանոն-
ներ, ունի բացառութիւններ. օրինակ՝ բարբ, վարբ, բառ, բաղ, կաղ,
հաղ (խաղ) և այլն:

Բացառութիւններից ամենանշաւորը բայի Վնդունելու-
թեան ած վերջաւորութիւնն է, ուր ա միավանկ բայերի մէջ,
փոխվում է ՚ի տեղի օ—է. օրինակ՝ նստած—նստե՛ծ, դրած—
դըրե՛ծ, դրած—դըրե՛ծ, խլած—խլե՛ծ, և այլն: Յղնեցոյ լեզուն
այս դէպքում մնում է հասաատ ընդհանուր կանոնին, փո-
խելով ա—օ (կամ օ). նստօ՛ծ, կըրօ՛ծ, տըրօ՛ծ, խըրօ և այլն: Աթէ
հաւատանք որ Շրօգիրը մեծ ճշգրութեամբ է հաղորդած
մեզ իւր հատվածի խօսքերի արտասանութիւնը, և եթէ
ճշմարիտ որ այդ Ագուլխի իրայ լեզուն է և ոչ գիւղերի,—
պիտի ենթադրենք թէ Ագուլեցոյ բարբառումը այդ միա-
վանկ բայերի Վնդունելութեան ած վերջաւորութեան ա—ի
է փոխվելը համեմատաբար նոր երևոյթ է, որովհետև յիշեալ
հատվածի մէջ մենք տեսնում ենք, որ Ագուլեցիք անցեալ
դարու սկսբում դեռ արտասանում են եղած՝ նստօ՛ծ, լսօ՛ծ:
Այժմեան ցղնեցիւրէնը պահել է ուրիմն Ագուլխի հին լե-
զուի հետքերը այնպէս, ինչպէս ամեն լեզուի մէջ բարբառ-
ները շատ ժամանակ պահում են ընդհանուր ազգային լե-
զուի զանազան յատկութիւնները, որոնք վաղուց կորած լե-
ներով խորթ են թւում այդ լեզուին. Ագուլեցուն այժմ
խորթ է թւում, երբ որ Յղնեցին՝ նորա հետ խօսելիս՝ ասում
է՝ նստօ՛ծ, լսօ՛ծ, և այլն:

Ծանօթ. 5. Այս դէպքում է (ի տեղի օ), որ յառաջանում է ա—ից,
իսկ ցղնեցիւրէնում օ (կամ օ) չեն դառնում կրկին սկսբական ա, երբ-
որ բայի այդ ձևի վերայ ուրիշ վանկեր են աւելանում. օրինակ գըրե՛ծ

(գրած) — գյրէծի — գյրեծաւ — գյրեծամ Լայլն, ցղն. կյրօծ — կյրօծի — կյրօծաւ — կյրօծում, Լայլն. Կնչպէս երևում է, առաջին կանոնը, այսինքն օ, վանկ աւելացած ժամանակը, « վերագառնալը միայն գոյականների համար է, իսկ ածականները և «ձ վերջացած Վնդուն. չեն ենթարկվում այդ կանոնին, այլ ընդհակառակը նոյա կանոնն է՝ պահել իրանց է և օ (ն) ձայնաւորները՝ գյրեծի (ի տեղի գյրածի), նստեծի (ի տեղի նստածի) ցղն. լսծծի (ի տեղի լսածի), շտարը (ի տեղի շատարը), բօծրից (ի տեղի բածրից) Լայլն. մինչդեռ գոյական՝ մօրդ — մարդի, հօրս — հարսի, Լայլն. կան մի քանի բացառութիւններ և գոյականներում օրինակ՝ ճրագ — ճրագի, բայց ճրագներ, գյրօկ — գյրակի բայց գյրօկներ:

Խօսելով « — ի փոփոխումների վերայ չ'է կարելի չըյիշել որ « փոխվում է նոյնպէս « (կամ ու), այն էլ այն տեղ ինչ տեղ մէկը սպասում ենք օ, այսինքն՝ էլի միավանկ բառերի մէջ. օրինակ՝ գալ — դո՛ւլ, բան — բո՛ւն, թանդ — թո՛ւնդ, նման — նմո՛ւն, նշան — նշո՛ւն, չանք — չո՛ւնք, խան — խո՛ւն, վանք — վո՛ւնք, Լայլն: Օրինակների բազմութիւնը ցոյց է տալիս, որ այս երևոյթը յատուկ է ընդհանրապէս այն բառերին, որոնք իրանց վերջումը « — ից յետոյ ունին ¹⁾»: « — ի « փոխվելը այս դէպքում, ինչպէս երևում է, օ — ի միջոցով է եղել, այսինքն՝ առաջ, ընդհանուր կանոնին համեմատ, « փոխվել է օ, իսկ յետոյ այդ օ փոխվել է « ²⁾»: Այդ երևում է նորանից որ, օրինակ, ջան բառը այժմ Ազուլեցիք արտասանում են ջո՛ւն, մինչդեռ Շրօյերի բերած հատվածում կարդում ենք ջն: Աթէ ենթադրենք էլ, թէ Շրօյերը սխալ է հաղորդել մեզ այդ բառի արտասանութիւնը, այնու ամենայնիւ ձգնեցոյ լեզուն ներկայացնում է մեզ հաստատ ապացոյց: Մենք տեսնք, թէ ինչ ճշգրութեամբ և հաստատ:

1) Երեւի նոյն այդ ն է ազդում օ — ի « փոխվելուն. համ. Աբա. Խ = ou = mou. y (կամ ու). նոյնը և Լատիներէնում. հին dicout = diemut.

2) Տես ներքեւ § 5 « (է) — ի « փոխվելը:

Թեամբ ցղնեցերէնը պահպանուամ է զօկերէն լեզուի այն ընդհանուր օրէնքը, որով ա միաժանկ բառերում փոխվում է օ. ներկայ դէպքումն էլ նա մնում է այդ կանոնին հաստատ, այնպէս որ վանք, Թանգ, չանք և այլն Ազուլեցիք ասում են վանք, Թանգ, չանք, իսկ Յղնեցիք՝ վճնք, Թճնգ, չճնք։ Այլ այս դէպքում ցղնեցերէնն էլ դիտէ արդէն ա—ի ա փոխվելը, օրինակ. ջուռն, նմուռն, նշուռն, դուլ, և այլն։ Չէյթունցոյ բարբառում, ինչպէս երևում է, նոյնպէս մնում է օ. օրինակ՝ տանձ—տճնձ և ոչ տունձ ինչպէս է ազուլեցոյ բարբառ։

Չանգ. 6. Այս անգամ վանկեր աւելացած ժամանակը սկսնական ա երբեմն վերագառնում է, երբեմն ոչ. օրինակ՝ վանք—վանքի—վանքար, բան—բանի—բանար, բայց՝ նշան—նշաններ (Թէ և նշանիլ), նման—նմաններ (Թէ և նմանիլ)։

Այլ երջապէս ա երբեմն, շեշտ չունենալով կամ կորցնելով շեշտը, կորչում է կամ փոխվում է կիսաձայն ը օրինակ՝ հարսանիք—զօի. հրոսանիք, հարսանիքի—զօի. հրոսանիքի ճանապարհ—զօի. ճննափա, և այլն։

§ 2. է։ Այս ձայնաւորն էլ է կնթարկված զանազան փոփոխումների։ Չօկերէնում՝ Բառի ախաւ մենք տեսնում ենք ա այնտեղ, ինչանդ զրախանական լեզուում և ուրիշ բարբառներում տեսնում ենք է. օրինակ՝ երկու—զօի. արկու, էկիլ—զօի. ակալ, երաղ—զօի. արաղ, երկաթ—զօի. արկաթ, և այլն։ Այլպիսի փոփոխում տեսնում ենք և ընդհանուր հայերէնում և ուրիշ բարբառներում՝ երաղ—արաղ, Արախ—Արաքս, եղբայր—աղպար կամ աղպեր, և այլն. համեմ. Ռուս. одинъ—единъ, много—много, և այլն։

է—ի տեղ տեսնում ենք ա յոգնակի Ուլգոսիանում, ուր՝ եթէ բառը միաժանկ է ¹⁾՝ ի տեղի էր վերջաւորու-

Թեան դնվում է աբ՝ սար—ար (սարիր), քար—ար, և այլն։ Բայց վանկ աւելացած ժամանակը վերադառնում է ե, այնպէս որ՝ սար—ար, սար—իր—ի, սար—իր—ից, և այլն։ Իսկ այն է որ հայերէնում յոգնակի եբ վերջաւորութիւնը յառաջացել է հին հայերէնի եաբ վերջաւորութիւնից կրճատվելով այնպէս, ինչպէս և ուրիշ դէպքերում, օրինակ՝ սիրեաց—սիրեց, մեռեալ—մեռել ¹⁾։ Այստեղ է հին հայերէնի կանոնը, որով եա մնում է հաստատ, եթէ այդ եա բառի վերջին վանկումն է գտնվում և այդ վանկից յետոյ բառը էլ վանկ չունի։ Իսկ հէնց որ վանկ է աւելանում, այդ եա կրճատվում է ե՝ սենեակ — սենեկի, սիրեաց — սիրեցի։ Այդպէս կարելի է մեկնել և զօկերէնում յիշեալ դէպքում՝ վանկ աւելացած ժամանակը՝ ե—ի վերադառնալը ա—ի տեղ. օրինակ, ասացինք՝ սարաբ բայց սար—եբ—ի, քարաբ, քար—եբ—ի։ Նոր հայերէնը ցոյց է տալիս մեզ որ հին եա, առանց սպասելու որ վանկ աւելանայ, փոխվում է ե ²⁾, ինչպէս ցոյց են տալիս վերե բերած օրինակները։ Իսկ զօկերէնը արդեօք այդ արդէն պատրաստ է է փոխում ա մի առանձին համակրութիւն ունենալով դէպի այդ ձայնաւորը, թէ հէնց այդ պատճառով հին եա երկձայնը կրճատելով՝ նախապատուելով պահում է ա հնչիւնը—վերջը մենք հին եա և նորանից յառաջացած նոր հայերէնի ե—ի տեղ տեսնում ենք ա ինչպէս յիշեալ դէպքում, նոյնպէս և շատ ուրիշ տեղերում։ օրինակ՝ իւրեանց—նոր հայ, իրենց—զօի, իւրաց (թէև գրականական լեզուումն էլ գործածական է իրանց)։ Անցեալ Անդու-

¹⁾ Այդպիսի կրճատման ենթարկվում է ազգանունների եանց վերջաւորութիւնը, որի տեղ ժողովրդական լեզուում դարձ է անվում ենց, օրինակ՝ Գալստենց, Մեղքենց, և այլն։

²⁾ Այդ փոփոխումը երեւի շատ հին ժամանակներից է սկսել որովհետեւ եբ վերջաւորութիւնը պս տահում է դեռ զրո բառի տիրապետութեան ժամանակ։

նկրութեան եւ վերջաւորութիւնը, որ այժմեան գրականական լեզուում դառել է եւ զօհ. երկու կամ աւելի վանկ ունեցող բայերի մէջ փոխվում է ալ (կամ ալ), օր. խսանհալ գլխահալ (կարացել), կռահալ (կռացել), և այլն. Նոյնպէս Հրամայական եղանակի եւ վերջաւորութիւնը դառնում է ա ելի երկու կամ աւելի վանկ ունեցող բայերի մէջ. օրինակ՝ պահեալ—զօհ. պահա, ողորմեալ—զօհ. ողորմա, լուսաւորեալ—զօհ. լուսաւորա. փակեալ—զօհ. փակա, և այլն: Իսկ Ֆանկ բայերի Մեղծանկրութիւնը և Հրամայականը փոխում են եւ—է, օրինակ՝ գրեալ—գրել, գրեալ—գրել, ջրեալ—ջրել. Հրամայականի այդ է հնչիւնը ինչպէս գրականական լեզուում, այնպէս և զօհերէնում՝ նշանակում ենք է տառով՝ դրէ, գլրէ, ջրէ, և այլն:—

Ե—ի ա փոխվելու երկոյթին պիտի աւելացնենք և այն՝ որ, ինչպէս ցոյց են տալիս բազմաթիւ օրինակներ, երկու կամ աւելի վանկ ունեցող բառերի մէջ, առաջին վանկում գտնվող է շատ ժամանակ փոխվում է ա, որը, ինչպէս արդէն վերև նկատել ենք (§ 1), արտասանվում է ա. օրինակ՝ վերայ—զօհ. վաւայ, փեսայ—փասայ, մեռել—մառայ, ձեռքից—ձաւքից, գիշերով—քշարաւ (այսինքն առաւօտեան), բերել եւ—բաւալում, հերոս—հարաւի, աւսաւ—աւահալ այ, դետին—գատին, բերան—բարան, քեռի—քառի, և այլն: Մայց այդ է—ից փոխված ա արտասանվում է երբեմն և ա. երազ—արազ, եկէք—ակիք, եղբայր—աղպար, բայց՝ երկու—արիւ և այլն:

Նշանակ. 1. Հարկաւոր է նկատել որ այս դէպքում, այսինքն՝ եթէ բառը երկու կամ աւելի վանկ ունի և առաջին վանկումը կայ է, ցոյցներէնը այդ է է՛ք փոխում ա (ա) այլ պահում է այդ ձայնաւորը. օրինակ՝ փեսայ—գառլ. փասայ—ցղն. փեսայ, քեռի—գա. քառի—ցղն. քեռի, կերել—գա. կարալ—ցղն. կերալ, և այլն. եթէ Հրոգերը սեալ է՛ք հաղորդում, ուրեմն մենք տեսնում ենք որ դեռ անցեալ դարու

սկսեալ ագուլեցիք գործ են ածում եղած փեսայ ¹⁾ և ոչ փնայ, այսինքն՝ այն ձևը, որ այժմ գործածական է ցղնեցոց լեզուում:

Ե—ի ամենազլիսաւոր և տարածված փոփոխումը՝ նորա է փոխվելն է, — մի երևոյթ, որ շատ մօտիկացնում է Ագուլեցոց բարբառը Տփիսիսեցոց բարբառին, որը Հայոց բարբառների մէջ յայտնի է իւր խորացնող ելթէ իրաւունք տրվի մեզ այդպէս անուանել է — ի յաճախ գործածվելը Ե — ի տեղ. Ե փոխվում է է համարեա բոլոր ձևանկ բառերում, ելթէ միայն այդ Ե յառաջացել է մի որ և իցէ կրճատումից կամ փոփոխումից, զոր օրինակ. մեծ — զօկ. միծ, ես — իս, ել (կամ եզն) իզնը, գետ — գիտ, վեր — վեր, բեր — բիր, կեր — կիր, գրել — գլրիլ, բայց՝ գրել — գրեալ — գլրիլ և ուրիշ շատ օրինակներ:

Ծանօթ. 2. Այս կանոնից բացառութիւն են կազմում ըստ մեծի մասին այն միավանկ բառերը, որոնք Ե — ից յետոյ ունին Ե, Մ, Ղ + մի որ և իցէ բաղաձայն. օրինակ՝ վերջ (և ոչ վիրջ), ձերք (և ոչ ձիրք), բերք (և ոչ բիրք), երգ, բեռնը, ճեղք, մեղք, Լայլն:

Ե — ի տեղ միշտ տեսնում ենք է բայի այն ձևերում, որոնք գրականական լեզուում և ուրիշ բարբառներում գործ են ածում Ե, օրինակ՝ Ստորագասական եղանակում՝ տեսնեմ, գրեմ, բերեմ, տանեմ — զօկ. տիսնեմ, գլրեմ, բիրեմ, տանեմ, տիսնես, գլրես, Լայլն. Անկրկոյթ եղ. տեսնել — զօկ. տիսնել, բերել — բիրել, Լայլն:

Եւ իստի պակասելը կամ թուլանալը նոյն հետևանքը ունի Ե — ի համար, ինչ որ Ե — ի համար տեսանք, այսինքն՝ սա էլ Ե — ի նման կամ կորչում է կամ փոխվում է կիսաձայն

1) Ցեռ վերև բերած Զրօգերի համովածը:

ը. օրինակ՝ երկիւայ—ըրից (առաջին է դառել է ը, իսկ երկրորդը կորել է), եւ—ըմ, երեկ—յըրէ (ցոնեց. ըրէ), ևայլն:

Իստի սկսբումը է, եթէ այս փոփոխումներից ոչ մինին չէ եւթարկվում, արտասանվում է է. եղած—ելած, ելած—ելած, եօթ—էխտ, եկայ—էկամ (ցոն.), երկու—երկու (ցոն.), ևայլն:

Իացառութիւն՝ երկինք, երկիր, երկիւղ, ևայլն: Նոյնպէս բառի վերջում ինչպէս ընդհանուր հայերէնում, այնպէս էլ զօրիւրէնում, է տեղ չունի. այդ է պատճառը որ դրեալ կրճատվում է դրէ, իսկ մեռեալ—մեռել:

§ 3. է: Այս տառը լինում է սկսբական և փոփոխումներից յառաջացած: Խոյնելով միւս դէպքերը, որոնք շատ քիչ են և աննշան մենք կը խօսենք միայն մէկ փոփոխման վերայ: Յայտնի է որ հայ բարբառներից շատերը ա լիութիւն են է (համ. ֆրանս. ai=e, նոր յունար. ai=e). օրինակ՝ հալր—հէր, մալր—մէր, ալդ—էդ, ևայլն: Այդ փոփոխումը կամաց կամաց մոնում է նոյնպէս զրականական և հասարակութեան լուսաւոր դասի խօսակցական լեզուի մէջ, օրինակ՝ փայտէ կամ փէտէ, երկաթէ, աղէն (բայց՝ աղայ), առարկէք, վրէն (առարկայք, վրայն), ևայլն: Ենձ թւում է թէ կը դայ ժամանակ, երբ հայկական լեզուի արեւելեան ճիւղն զրականական լեզուի մէջ ա—ի գործածելը է—ի փոխարէն կը համարվի հնամուլութիւն ¹⁾: — Այդ երևոյթը, ինչպէս տեսնում ենք, նոր լեզուի է յատուկ՝ նոր հայերէնին, նոր յունարէնին, ֆրանսերէնին, ևայլն. լատիններէնում էլ, օրինակ, I հոլովագասութեան արական հոլովը ae, որը ար-

1) Անշուշտ բանի դէպի հնութիւն դնանք այնքան պարզ պիտի տեսնենք e=ai, որովհետեւ e սկսբական ձայնաւոր չէ. սկսբական ձայնաւորներն են a, i, u. որոնցից կազմվել են a+i=e, a+u=o.

տասանվում է $\hat{e}$, յառաջացել է ai —ից, ուրիմն ai — $ae=\hat{e}$:
Բայց զօկերէնր այս դէպքում մի նշանաւոր բացառութիւն
է ներկայացնում: Ի՞նչեւ այդ բարբառը իւր քերականական
յատկութիւններով պատկանում է Հայոց լեզուի արեւելեան
ճիւղին, այնու ամենայնիւ Ֆօնետիկական այս երևոյթը զօ-
կերէնի մէջ՝ յատուկ է ընդհանրապէս արեւմտեան բարբառ-
ներին: Ուրիմն ինչ տեղ որ զրականական լեզուում և բար-
բառներում տեսնում ենք է յառաջացած ay —ից, այն տեղ
զօկերէնում մենք գտնում ենք ay , օրին. Հէր—ազուլ. Հայր,
մէր—մայր, էծ—այծ, տէր—տայր ¹⁾), և այլն:

Նշան. 1. Բացառութիւն և այն էլ բոլորովին հակառակ երե-
ւոյթ, ներկայացնում է ay —ից—ազ. էֆէ ²⁾). Նոյնպէս ձայն—զօկ. Ֆէր, որ
զանազանում է Ֆէր բառից նորանով որ երբէք չ'է դառնում Ֆէր, մինչ-
դեռ Ֆէր, համեմատ վերև յիշած կանոնին (է—ի մասին միավանկ բա-
ռիւրի մէջ), փոփոխվում է Ֆէր. Տէր բառը թէև Ուղղականում ազուլ
բարբառը պահում է ay —ից, բայց Սեռակ. փոխում է տէրուծ (տիրոջ).

Հին ay —ից յառաջացած զրականական և բարբառային
է զօկերէնր շատ ժամանակ փոխում է ay , օրինակ՝ էլ—ալ,
էս—աս, էր—ար ³⁾): Այստեղ ոչ թէ պատրաստ է է փոխ-
վել ay , այլ ay —ի մէջ յ կորել է և մնացել է միայն ay , ինչ-
պէս նոյն իսկ ընդհ. Հայերէնում ay —ից բառից կազմվել է ay -
դուլեցի (այ=ա): Յիշեցոց բարբառը լաւ ապացոյց է մեր

¹⁾ Տէր բառը յառաջացել է՝ տի+այր.

²⁾ Այս բառը նոյնպէս զարմանալի նմանութիւն է ներկայացնում Զէյթ. բարբ. Հետ
ուր ay —ից նոյնպէս փոխվել է էֆէ: Այդ բառից յառաջացած Աֆուլիս բառը—զօկ.
Ըֆուլիս, Ազուլեցի—Ըֆուլեցի:

³⁾ Բաղաձայն տառերը ես յարմար եմ համարում գրել այնպէս ինչպէս պահան-
ջում է զօկերէնի արտասանութիւնը, թէև շատ անգամ դա դուրս է գալիս հակառակ
հայկական ուղղագրութեան, ինչպէս՝ տէրուծ՝ ի տեղի տէրուջ (տիրոջ), ասո — ի
տեղի՝ ադ (էդ), և այլն.

խօսքին. նա ներկայացնում է մեզ « ոչ միայն այն տեղ ինչ տեղ Ազուլեցոց լեզուումն էլ է », այլ և այնտեղ ուր Ազուլեցոց լեզուն ներկայացնում է այ, այնպէս որ ցղնեցիւրէնը այ—ից յառաջացած գրականան և բարբառային է—ի տեղ միշտ ներկայացնում է «. օրինակ՝ էծ—ազ. այծ—ցղն. ած, տէր—ազ. տայր—ցղն. տար, մէր—ազ. մայր—ցղն. մար, հէր—ազ. հայր—ցղն. հար, էս—ազ. և ցղ. աս, էդ, էն—ազ. և ցղ. ատ, ան, ևայլն:

Դասօթ. 2. Այս կարգին պատկանում է և էական բայի (եմ) Սահ. եղ. ներք. ժամ. 3 դէմքը՝ է, որը զօկերէնում ինչպէս և ուրիշ շատ բարբառներում (Ղարաբաղց., Երևանց., ևայլն) փոխվում է «. (արտաս. «)»: Այդ ձևը՝ «. գրելը անկասկած աւելի ուղիղ է քան թէ «, որովհետեւ, ինչպէս յայտնի է, Հնդկա-Եւրոպական լեզուներից շատերում բայի 3 դէմքը վերջանում է լ, որը հայոց լեզվում²⁾ իսկ ինչ վերաբերում է յ—ի միավանկ բառերում արտասանելուն, դորա դէմ կարելի է բերել բացառութիւն՝, միանվակ բայերի վերջում չէ արտասանվում, զորօրինակ՝ կայ, տայ, գնայ, ևայլն:

§ 4. Ի. Ուրեմն, ինչպէս տեսանք, այ—ից յառաջացած է զօկերէնում «. այ և «. Այդ երևոյթը մենք նկատումք ենք և ի—ի վերաբերեալ, առաւել որ այդ ի երբեմն ոչ այլ ինչ է եթէ ոչ նոյն է—ի կիրպարանափոխումը. Ազուլեցիք ասում են՝ սայրամ ըմ—սիրում եմ, ուր ի—ազ. «. համեմատոր դոյական՝ սէր. ուրեմն՝ ի—այ—է: Ուրիշ օրինակներ՝ սիրուն—ազ. սարուն, միտք—մայտք, միս—մայս, սիրտ—սարտ, միլուք—մայլուք, միջին, մաջին, հիւրք—հրաք, հնկ—հանգ, մոնկ—մոակ, ևայլն:

Դասօթ. 1. Ազուլեցոց լեզուում «. այ և «, ինչպէս տեսանք, յառաջացած է երկու կերպով. մէկը մենք տեսնում ենք ուղղակի է—ի փոխա-

²⁾ է = յ բացի բայի 3 դէմքից համեմ. նոյնպէս pater—հայր, mater—մայր ևայլն:

րէն, ուրեմն ըստ մեծի մասին նման հին հայերէնին, միւսը է—ի փոխարէն. Հարկաւոր է նկատել, որ Յղնեցոց լեզուն պարզ կերպով որոշուած է Ագուլեցոց այդ երկու կերպ յառաջացած աւ և ա, առաջին դէպքում՝ այսինքն երբ որ ագուլ. աւ=է (այ), Յղնեց. լեզուում մենք տեսնում ենք ա (կամ օ). օրինակ՝ փէտ (փայտ)—ագ. փայտ—ցղ. փատ, մէր (մայր)—ագ. մայր—ցղն. մար, էծ (այծ)—ագ. ած—ցղն. ած. է—ից (այ) յառաջացած Ագուլեցոց ա խօ մնում է ու մնում ցղնեցերէնում էլ ա. էս (այս)—ագ. և ցղն. աս, էտ (այդ)—ագ. և ցղն. ատ, էն (այն)—ագ. և ցղ. ան, ևայլն: Երկրորդ դէպքում, այսինքն՝ երբ որ Ագուլեցոց ա կամ ա յառաջացել է է—ից, Յղնեցոց լեզուն, կարծես հետևելով նոր հայերէնի յատկութեանը, այդ (ագուլ.) ա (կամ ա) փոխում է է, այնպէս որ՝ ագուլ. մայտք (միտք)—ցղն. մէտք, ագուլ. քաշթ—ցղն. քէշթ, կոռայ (կոն) —ցղն. կոեմ, պղպնծ (պղնծ)—ցղն. պղէնծ, հրաբշ (հերիք)—ցղն. հրէբշ, մտակշ (մտիկ)—ցղն. մտէկշ, կնակշ (կնկ)—ցղն. կնէկշ, ևայլն: Բացառութիւն կազմում է բացաս. մասնիկը ֆ=ագ. ֆա և ցղն. ֆա. Երբեմն է—ից յառաջացած ագուլ. ա ցղնեցերէնում փոխվում է բացի է նոյնպէս էյ. օրինակ՝ մէս—ագ. մայս, ցղն. մէս և մէս. մէտ —ագ. մայտ —ցղն. մէտ, ևայլն:

Դասեմք. 2. ֆա (մի) բացասական մասնիկը, որը գործ է ածվում Հրամայական եղանակի համար (արգելական), դնվում է միշտ բայից յետոյ, և ինչպէս էական բայի ներկայ ժաման. երրորդ դէմքը (է—այ) արտասանվում է այնպէս որ կարծես մի բառ է կազմում բայի հետ և որովհետև Հրամայական եղանակը այդ դէպքում, այսինքն՝ արգելականում, պերջանում է է, ուրեմն ա՝ ֆա—ի մէջ՝ արտասանվում է ֆ համեմատ այն կանոնին, որով ա—է, է, է ունեցող վանկերից յետոյ արտասանվում է ֆ (§ 1). օրինակ՝ բիրի մա, նահի մա, ևայլն: Այս մասնիկի մասին կը խօսենք դեռ քերականութեան մէջ:

է—ի ուրիշ փոփոխումների մասին՝ ա (կամ օ), է (է), ու, ա, կարելի է դասել Հետևեալ օրինակներից. Կնծ—ագ. օնծ, էմ—օմ (էմ), էքմէն—էլմա՛ն, Կնչ—ո՛նչ, մէն—մո՛ն. ցղն. կը լինի. ինծ, իմ, էմա՛ն, ինչ, մուն:

է զօկերէնում միանալով —ի հետ տալիս է մի այնպիսի հնչեւն, որը չէ գտնվում գրականական լեզուում և ու-

րեմն չ'է արտայայտւում Հայոց պըրուբէնի ոչ մի տառով և ոչ մի երկձայնով. այդ հնչիւնը համապատասխանում է հայկական իւ, բայց արտասանւում է ինչպէս ֆրանսերէն u, մինչդեռ գրականական և ուրիշ բարբառների իւ արտասանւում է ինչպէս ուռսերէն io (ju):

Դասօժ. 3. Բացառութիւն կազմում են իւն վերջացած բառերը, որոնց մէջ իւ արտասանւում է ինչպէս գրականականում: Բացառութիւն է կազմում նոյնպէս փւ բառը, որը արտասանւում է զօկերէնում էլ այնպէս ինչպէս և գրականականում: Յղնեցերէնում պատահում է երբեմն իւն վերջաւորութիւնն էլ այնպէս արտասանել ինչպէս իւ ուրիշ դէպքերում, այսինքն — ֆր. u. օրինակ՝ Յար—իւն, ինչպէս գրառութեւ, արտասանում են ինչպէս գրականականում, բայց դորա նուազականը արտասանում են նոյնպէս և Ագուեցիք) Յաթիւն, Հաթիւն, Լայլն:

Այլ իրջապէս հարկաւոր է նկատել, որ զօկերէնը սիրում է գրականական կամ ուրիշ բարբառների իւ փոխել ի՝ թղութն, ըղկօթն¹⁾, ցղն. կյղթն (զողութիւն), փսօթն, Լն. Աւեւացնել հարկաւոր է միայն այն, որ այդ փոփոխումը (թիւն—թին) կապ ունի բառի շեշտի հետ՝ իւն վերջաւորութիւնը ունի շեշտը միշտ իւր վերայ, փոխվելով իւն կորցնում է և շեշտը: Ուրիշ դէպքերում էլ սակաւ չ'է իւ—ի ի փոխվելը. օրինակ՝ մըջն—աղուեց. մըջն (ցղն. մըջն), իւրեան—աղ. յիւան (և իւրան), իւրեանց—իւրաց (իւրաց), ցղն. իւրան, իւրաց, Լայլն: Յղնեցերէնը կարծես աւելի հակումն ունի դէպի իւ, այնպէս որ նա մինչև անգամ ի փոխում է իւ՝ լեզու—աղ. լեզու—ցղն. լեզու, կարմիր—աղ. կարմիր—ցղն. կարմիր, Լայլն. իւ—ի այդ անհաստատ արտասանութիւնը, այսինքն՝ տատանումը u և i մէջ մենք

¹⁾ Ըղկօթին—աղեկութիւն (լաւութիւն):

տեսնում ենք նոյն իսկ գրականական լեզուում և ուրիշ բարբառներում էլ — էւր, էրանց — էւրեանց, կէրակի — կէւրակի, մէրուք — մէւրուք, և այլն: Ամեմատ, լատ. maximus և maximus, optimus և optimus և այլն. է — է փոխվելը աւելի յատուկ է Արեւանցոց բարբառին՝ ձէն — ձին, արէն — արին:

§ 5. * (օ): Ամեն մի հայերէն կարգաւ խմացողի յայտնի է, որ այս ձայնաւորը արտասանվում է բառի սկսբում ինչպէս վօ, իսկ բոլոր միւս դեպքերում ինչպէս օ: Առաջին արտասանութիւնը անկասկած չ'է կարող լինիլ սկսբական արտասանութիւն՝ այբբէնորանք ներկայացնում է մեզ Հնչեւններ և ոչ վանկեր, իսկ վօ — վանկ է. բացի դորանից, եթէ դիմենք Հայոց բարբառներին, կը տեսնենք որ շատերը նոցանից նոյն իսկ բառի սկսբում * արտասանում են ինչպէս օ. այդ բարբառների թւումը մենք գտնում ենք և զօկերէնը. Վօկերը արտասանում են օր (որ), օխչար (ցղ.), օսկի (ցղ.), և այլն: Ինչից է յառաջացել օ(ո) — ի այդ արտասանութիւնը բառի սկսբում, որից ազատ չ'են այն բարբառներն էլ, որոնք սովորաբար արտասանում են այդ * ինչպէս օ բառի սկսբում: օրինակ նոյն զօկերէնը, որ արտասանում է օր 'ի տեղի *ր, արտասանում է *րթի 'ի տեղի օրթի: Այդ երևոյթը, այսինքն * — ի օ արտասանելը բառի սկսբում, որը փոքր 'ի շատէ ընդհանուր է երևում Հայոց լեզուի համար, ապացուցանում է որ հայերէնը և գլխաւորապէս այն բարբառը, որից յառաջացած է ընդհանուր գրականական լեզուն, չ'է սիրում արտասանել այդ ձայնաւորը բառի սկսբում մինակ, այլ արտասանում է Վ — ի օգնութեամբ, ուրեմն ճիշդ այնպէս, ինչպէս ուսերէնում՝ вострый 'ի տեղի острый, восемь 'ի տեղի осемь և այլն: Արեւի լեզուի հէնց այդ յատկութիւնն է, որ յառաջացրի է այդ ձայնաւորի վօ արտասանութիւնը

նոյն իսկ այբբէնարանին մէջ և ոչ թէ այդպէս անուանեց նորան Հայոց տառերի ստեղծող Մհարոպը, որը զրկ է այդ տառը այբբէնարանի նոյն տեղում, ուր գալիս է և յունարէն օ: Եթէ համեմատելու լինենք այդ երկու լեզուի այբուբէնի կարգաւորութիւնը, մենք կը տեսնենք, որ ինչ տեղ որ գալիս է Յունաց օ այնտեղ Հայոց այբուբէնում զրված է մի ուրիշ օ հնչիւն, որը գրվում է ինչպէս եւրոպական օ. բայց Հայոց այդ օ Մհարոպական տառ չ'է և ուրեմն յունարէնից առված չ'է թէև պատահամբ իւր տեղովը համապատասխանում է Յունական օ—ին. Հայոց օ XI դարում մտած տառ է. նորանով նշանակվում է — երկնայնից յառաջացած օ հնչիւնը՝ հաւր—հօր, մաւր—մօր, ևայլն, նոյնպէս եւրոպական բառերի օ:

Ծանօթ. 1. Որովհետև այժմ օ իւր արտասանութեամբ չ'է զանազանվում — ից բացի բառի սկզբից, ուր օ, ինչպէս ասացինք, արտասանվում է վօ, այն էլ ոչ ամեն տեղ (գրականակում միշտ), ուրեմն թող ընթերցողին խորթ չը թւի այդ տառի յաճախ պատահելը մեր զօկերէնի համար բերած օրինակների մէջ. 'ի հարկէ մենք կը գրենք օ այն տեղ, ուր ամեն հայերէն իմացող սովոր է տեսնել օ և արտասանել այնպէս ինչպէս հրամայում է լեզուի օրէնքը. բայց մենք կը գրենք օ 'ի տեղի օ 1) բառի սկզբում, եթէ օ հարկաւոր է արտասանել ինչպէս օ, 2) ամեն փոփոխութիւններից յառաջացած օ հնչիւնը մենք կը նշանակենք օ տառով. օրինակ՝ հօրք բառից յառաջացած հօրք մենք գրում ենք օ:

Ծանօթ. 2. Բացի իւր բուն արտասանութենից օ (օ) ունի զօկերէնում նոյնպէս մի ուրիշ արտասանութիւն, որը համապատասխանում է լատ. կամ գերմ. օ, որը մենք կը նշանակենք օ:

Ինչ վերաբերում է օ(օ)—ի փոփոխումներին, մենք արդէն գիտենք, որ միավանկ բառերում օ—ից յառաջացած օ կրրկին դառնում է օ, կրբ որ այդ մի և նոյն բառը երկու կամ աւելի վանկ է ստանում. օրինակ՝ մօրդ—սեռտի. մարդի, ևն:

Մյոլ կանոնին, կարծես արտաքին նմանութեան պատճառով, հետեւում են երբեմն այնպիսի միավանկ բառեր, որոնց մէջ օ «—ից չ'է փոխված այլ սկսբնական է. օրինակ՝ խօսք—խօսքից, ծով—ծաւի, ծաւից, և այլն: Մյոլ տեսակ օրինակների թւում կարելի է յիշել և այն միավանկ բառերը, որոնց սկսբնական օ հնչիւնը թէև զօկերէնում փոխվում է «, բայց այնուամենայնիւ վանկ աւելացած ժամանակը մենք այդ օ—ի տեղ տեսնում ենք «. օրինակ՝ հոտ—աղ. հոտ, բայց՝ հոտած, փոխ—աղ. փո—հ—բայց փահլի, ոտ—ոտ—բայց՝ «տնար, և այլն: Յղնեցերէնում այդ դէպքում մնում է օ, այսինքն վանկ աւելացած ժամանակը օ—ից յառաջացած « կրկին դառնում է օ, օրինակ՝ հոտ—ցղն. հոտ—բայց՝ հոտած, փոխ—փոխ—բայց փոխիլ. » (օ) — ի « փոխվելը տեսնում ենք և ուրիշ դէպքերում՝ գործել—աղ. գործիլ (ձեռագործութիւն), այսօր — ասար — ասարի — ասարաց, նոյնպէս անունների Վործիական հորովում «վ վերջաւորութեան տեղ զօկերէնում տեսնում ենք միշտ « (բացի միավանկ անուններից, որոնց համար մնում է «վ վերջաւորութիւնը). օրինակ՝ գինալ—աղ. գինա, մարդալ—մարդա, պատկերալ—պատկերա, և այլն, բայց՝ ջրով, թղթով, և այլն:

» (օ) բաւականին յաճախ փոխվում է նոյնպէս է՝ փորձել — փերձիլ, ջրի — ջերի ¹⁾, հողի — հեղի, ոչխար — էխար, ևն. բայց ցղնեցերէնը պահում է օ՝ Ծօրի, թխար, փերձիլ, և այլն:

» (օ) ամենից յաճախ փոխվում է « և այն էլ բաւականին կանոնաւոր կերպով, կանոնաւոր ենք ասում, որովհետեւ փոքր ի շատէ հաստատ կարելի է ասել, որ ճառակն էստեղէն Դէլ «(օ) փոխվում է « ²⁾, օրինակ՝ հոտ—հոտ, ոտ—ոտ,

1) Համ. Զէյթ. Փէթ:

2) Հայկաւոր է նկատել որ այստեղ կրկին տեսնում ենք նմանութիւն Ագուլեցոց և

օրին. Մարկոս—Մարկոս, Փիլիպպոս—Փիլիպոս, բայց այդ ոս—ի ոս գառնալը յատուկ է շատ ուրիշ հայ բարբառների. ուրեմն զրականական լեզուն պահում է յունական վերջաւորութիւնը (os), իսկ բարբառները—լատինականը (us ¹⁾):

Նշանօք. 3. Միավանկ բառերի մէջ ո (օ)—ի ոս գառնալն է, որ երբեմն միավանկ բառերի մէջ ո—ի օ փոխվելու տեղ, ինչպէս պահանջում է զօկերէնի յատկութիւնը, մենք տեսնում ենք Ագուլեցոյ լեզուում ոս. Այդ երևոյթը մենք մեկնել ենք իւր տեղում (տես § 1):

« (օ) —ի ոս փոխվելու ուրիշ օրինակներ՝ մօր—զօկերէն էլ՝ մօր, հօր—հօր, բայց եղբօր—աղպոս, հօրեղբօր—հէրբոս, քմին—ոսխման, Լայլն: Այս ձայնաւորն էլ ուրիշ բոլոր ձայնաւորների նման կրճատվում է ը:

§ 6. ոս բացի իւր բուն արտասանութենից զօկերէնում արտասանվում է նոյնպէս ֆրանսերէն ո—ի նման և այդ արտասանութիւնը մենք արդէն պայմանվիլ ենք նշանակել երկու կէտով (ոս): ոս—ի ոս փոխվելը մենք պարզ տեսնում ենք ոս վերջաւորութեան մէջ. բացի միավանկ բառերից, որոնց համար մնում է ոս վերջաւորութիւնը, բոլոր միւս դէպքերում մենք տեսնումք ենք ոս—ի տեղ ոս. տոս—ոս—տանա, քաղաքոս—քաղաքա, եկեղեցոս—եղեղեցա, Լայլն. (բայց՝ տնոս—տնոս, գլքոս—գլքոս, դրոս—դրոս, լսոս—լսոս, Լայլն):

Նշանօք. Ծղնեցերէնը ոս վերջաւորութեան մէջ ոս երբէք չէ փոխում, երբէք ոս—ի տեղ գործ չէ անում ոս, միավանկ լինի բառը թէ երկվանկ. գրքոս—ագ. գլքոս—ցղ. կլքոս, թանաքոս—ագ.

¹⁾ Հնագոյն լատիներէնը, ինչպէս ցոյց են տալիս հին արձանագրութիւնները, us վերջաւորութեան տեղ գործ է անում եղած os:

թնակամ—ցղ. թնակում, բերում եմ—ագ. բիրում ըմ—ցղն. պերում
ում, ևայլն:

Սկսել արդէն մենք միջոց ունեցանք նկատելու մի երեւոյթ, որի մէջ զօկերէնք կարծես մի տեսակ կամայականութիւն է ցոյց տալիս. այդ բարբառը, որը միավանկ բառերի մէջ « (օ) փոխում է », կարծես գիտութեամբ ընդհակառակն էլ է անում՝ միավանկ բառերի մէջ այնպէս, որ գրականական լեզուում և որիշ բարբառներում պէտքում ենք, որ, զօկերէնք այդ « փոխում է » (օ). « ր—զօկ. նօր, կոռ(ն)—կոռնը ծառ—ծռռ, ցաւա—ցօրտ, սառտ—սօտ, «ս—յօնա, «նք—յօնք ¹⁾, «դտ—զդտ, կոտ—կօտ, շոռ—շօռ, ևայլն: Այս օրինակների թւումն է նոյնպէս հոշա բառը, որը ցոյնեցրէնում զօկերէնի կանոնի համեմատ դառնում է հոշա, իսկ Ազդուեցոց լեզուում ենթարկվում է կրկնակի փոփոխման, այսինքն « փոխվում է օ, իսկ յետոյ այդ օ փոխվում է է (է)՝ կոշտ—կօշտ—կէշտ: «—ի օ փոխվելը միավանկ բառերում այնքան բազմաթիւ օրինակներ ունի, որ այստեղ էլ՝ այս հնչւնդի համար էլ՝ կրկին միավանկ բառերը մի որոշ փոքր 'ի շատէ հաստատ օրէնքի են ենթարկվում: Քաջառութիւններ 'ի հարկէ այստեղ էլ կան, բայց այստեղ էլ նոքա իրանց քանակութեամբ արգելք չ'են կարող լինել յիշեալ կանոնաւորութեանը. բերենք մի քանի օրինակներ այդ բազմառանգից. շոտ—զօկ. շոտ, դոռ—դաւք, դոլ—տաւր, դոռ—դոռ, բոլլ—բոլլ:

«—ի օ դառնալը չ'է սահմանափակվում միավանկ բառերով. այդ փոփոխումը յաճախ է պատահում զօկերէնում

¹⁾ Վանկ աւելացած ժամանակը օ փոխվում է «. յօնք—յանքի—յանքից—յանքաւ—յանքար, և այլն. համեմ. խցք—խաւքի—խաւքար, ծով—ծաւի—ծաւար, ոտ—զօկ, ոտ—տոնար, և այլն:

և ուրիշ դէպքերում՝ և ըստ երևոյթին՝ երկանի քառեցի առաջին ձանկո՞ւմ. օրինակ՝ առախ — օրախ, առադ — օրադ, առեղ — օտիղ, առեղ — օտիղ, և այլն: Հարկաւոր է յիշել նոյնպէս՝ առիշ — ցղն, օրիշ — ագ, մնում է առիշ, կռտեղ — ցղն, կթտեղ — ագ, կէտիղ. այս վերջին բառումը կրկին տեսնում ենք (ինչպէս վերև կռաբ բառի մէջ — ցղն, կոշտ — ագ, կէշտ) թէ ինչպէս առ օ — ի միջոցով փոխվում է է (է). նոյնպէս՝ առբաթ — ագ, էրբաթ — ցղն, օրփաթ:

«—ի փոփոխումներից նկատելու է նոյնպէս նորա է փոխվելը. օրինակ՝ աղել — ագ, իգել (—ցղն, փոխվում է այնպէս ինչպէս յաճախ փոխվում է առ երկվանի բառերի առաջին վանկում, այսինքն՝ օ. ուրեմն այս լուպէիս բերած օրինակների նման — օղել), հեռառ — ագ, հալպի (ցղն, հերվի), հեռառ — ագ, հառն (ցղ, հեռի): Այս օրինակների թւում հարկաւոր է յիշել և ագ. յնչ բառը, որը յառաջացել է առ բառից, այս բառում առաջ փոխվել է առ¹⁾ ինչպէս և մնացել է ցղնեցերէնում՝ յառնց, իսկ յետոյ ագուլեցերէնում այդ առ փոխվել է է՝ յնց. բայց նոյն իսկ այդ ագուլեցերէնում դործածական է նոյնպէս յառնց. ուրեմն այդ օրինակը համեմատելու է այս տեսակ օրինակների հետ՝ մըջն — մըջմ, թողուլթն — թղոթն, կամ նոյն իսկ ընդհան. հայերէն՝ էր և էր, մէրուք և մէրուք, Երեանց. քոյր, քեր, լոյս — լոս. համ. լատ. maximus և maximum.

Ինչպէս յայտնի է՝ առ հնչեւոր լսվում է ոչ միայն առ — ի մէջ այլ և այն ժամանակ, երբ գրվում է ոչ. այս վերջինը մի երկձայն է, որի մէջ նոր-հայերէնում և բարբառներում չ փոխվում է առ. Աստուծոյ — նոր-հայ. և զօկ. Աստուծառ, մարդոյ — մարդառ, եկեղեցւոյ — եկեղեցառ: Ուրիշ դէպքե-

1) առ — ի առ փոխվել տես § 1.

ըում էլ տեսնում ենք ոչ—ի տեղ ու օրինակ՝ Գայլ բառը զօկերէնը իւր սովորութեան համեմատ պիտի փոխէ Գայլ յետոյ յ փոխվում է ա՝ դառնում է Գայլ որը աւելի հայերէն գրելով կը յենի Գայլ նշանակելով զօկերէն արտասանութիւնը, կը ստանանք Գայլ մէկ—աղ. մայն—ցղն. ման, Էայլն:

Այս ձայնաւորն էլ է՝ ուրիշ ձայնաւորներէ նման՝ կրճատվում կիսաձայն է:

§ 7. Եւ Այս տառը ինչպէս ինքնուրոյն ձայնաւոր առհասարակ շատ քիչ է գործածվում հայերէնում. դա մի կիսաձայն է, որով արտայայտվում է լի ձայնաւորներէ կրճատումը և այնքան թոյլ է նա, որ ըստ մեծի մասին չ'է գրվում այլ զօրութեամբ է զգացվում: Մենք գիտենք արդէն որ բոլոր ձայնաւորները զօկերէնում կրճատվում են այս կիսաձայն է, օրինակ՝ աղէկանամ—ըղկանամ, երեխայ—ըրեայ կամ ըիայ (կարդա՛ր ըիս, ըիս), երեկ—յըրկէ, ինչտեղ—ըշտեղ, ողորմի—ըղորմի, ուրախանալ—ըրխանալ: Մենք ասացինք, թէ այս կիսաձայնը ըստ մեծի մասին զօրութեամբ է զգացվում՝ չ'է գրվում. բայց մեր բերած օրինակներում արտասանութեան ճշգրտութիւնը պահանջում է գրել այդ տառը ¹⁾: Ձայնաւորի կիսայն զատնալը կարելի է մեկնել շեշտի պատճառով կամ նորա անհետանալով. այդ պարզ ապացուցանում է աղէկ բառը (աղէկ). քանի որ բառի այդ ձևում ա—ի վերայ կայ շեշտ (աղէկ)՝ ա—ի լի արտասանութիւնը մնում է. իսկ երբ որ հարկը ստիպում է շեշտը փոխել, շեշտի հետ միասին կորչում է ա—ի լիութիւնը, և նա կրճատվում է Եւ և աղէկ բառից ստանում ենք ըղկանիլ. նոյնպէս՝ ակաւ բայց ըկաւի: Շեշտի ազդեցութիւնը, իմ կարծիքով, կարելի է տեսնել նոյնպէս և հետեւեալ օրինակում, ուր ընդհակառակն է

1) Բառի սկզբում գրական կան ըզվումն էլ գրվում է, օրինակ՝ ընկեր, ըստ, և այլն:

պատահում ընկոյզ—զօկ. անգո՞ւզ—շէշտի ազդեցութեան տակ ը դառել է ան:

§ 8. Եւրո զօկերէն—: Հայոց լեզուի շէշտի մասին խօսք բացված ժամանակը մենք սովորաբար կրկնում ենք միշտ՝ թէ Հայոց լեզուում շէշտը դնվում է բառի վերջին վանկի վերայ: Հայոց Հին՝ կլաստիկական լեզուի վերաբերեալ այդ ճշմարիտ է, որովհետեւ մենք այդպէս լսել ենք և սովորել ենք, բայց արդեօք մեր նախնիքը կենդանի խօսակցութեան մէջ պահում են եղած շէշտը այնտեղ ուր մենք աւանդաբար տեսնում ենք այժմ: Մենք կարող ենք ՚ի հարկէ հաւատարմ, որովհետեւ շէշտի վերջին վանկի վերայ լինելը մի անհաւատալի և տարօրինակ բան է: Բայց եթէ Հին կենդանի խօսակցական լեզուի շէշտադրութիւնը ստուգել չ'ենք կարող, գոնեա այժմեան խօսակցական լեզուում կարող ենք նկատել շէշտը: Եթէ դուք ուշադրութիւն դարձնէք շէշտի վերայ, երբ որ ձեզ հետ խօսում է մէկը այժմեան հայերէնով, դուք անպատճառ կը նկատէք որ շէշտը ամեն տեղ վերջին վանկի վերայ է՝ գաւիս, հէնց որ խօսողն ուշադրութիւնը դարձնէք այդ բանի վերայ նա իսկոյն կը կրկնէ նոյն բառը, դնելով շէշտը արդէն վերջին վանկի վերայ, և այդ հակաճառութիւնը ոչինչ խորթութիւն է՝ պատճառում, որովհետեւ մի շէշտը յատուկ է կենդանի խօսակցական լեզուին, միւսը— գրականական լեզուին: Իսկ եթէ այժմեան Հայոց բարբառներին դիմենք, նոցա մէջ կը գտնենք շէշտադրութեան բոլորովին այլ օրէնքներ. թողնելով ուրիշ բարբառները մենք կ'առնենք միայն զօկերէնը: Մի առանձին ուշադրութիւն է՝ հարկաւոր որ մարդ նկատէ զօկերէնում շէշտի վերաբերեալ մի հաստատ և որոշ կանոն՝ այս բարբառում **Եւրո** զօկերէն է Եւրո լեզուի պատճառ երկուքը լանկէ վերայ. օրինակ բերելը աւելորդ է, որովհետեւ ամեն մի բառ զօկերէնում այդ-

պէս է արտասանվում. հարկաւոր է աւելացնել միայն որ ը շէշտի վերաբերեալ շէշտի վանկ չէ կազմած, ուրիշ շէշտ չէ կարող աւելնալ, օրինակ՝ հարսանիք—զօի. հրսանիք, բայց Սեռական՝ հրսանիքի, եայլն:

Յիշեալ կանոնից Բացառութիւն են կազմում 1) Բիւն վերջացած բառերը, որոնց մէջ շէշտը գնվում է վերջին (Բիւն) վանկի վերայ. 2) անունները իրանց յոգնակի թւում (Եր վերջացած). անունների յոգնակում շէշտը լինում է Եր վերջաւորութեան վերայ. օրինակ՝ ընկոյզ—զօի. անգոճ, յոգ. անգոճներ, Սեռ. անգոճների, աւազակներ, Սեռ. աւազակների, եայլն. 3) մի քանի առանձին բառեր (անուններ), որոնք եղակի Ուղղականում երկուսից աւել վանկ ունին և որոնց շէշտը վերջին վանկի վերայ է լինում. աւազակ, աւանակ, տէրացոճ, թաքաւոր, վարժապետ եայլն. սոցա թւում յիշելու է նոյնպէս Վի և Իշ վերջացած անունները՝ դամբիլ, Մկրտիչ, ուսուցիչ եայլն: Հարկաւոր է նկատել որ, ինչպէս այս դէպքում, այնպէս և առհասարակ ուրիշ դէպքերում՝ ինչ տեղ որ լինի շէշտը Ուղղականում—Բայց ուրիշ հարցերի վերջաւորութիւնները շէշտ չեն, ինչ, զորօրինակ՝ վարժապետ—սեռ. վարժապետի, թաքաւոր—գործ. թաքաւորաւ: Մեր ասածը վերաբերում է այն անուններին, որոնց Սեռականը և ուրիշ հոլովները Ուղղականին համեմատած աւելորդ վանկ են ներկայացնում. օրինակ՝ աւազակ—3 վանկ ունի, իսկ Սեռականը՝ աւազակի—4 վանկ. աւազակներ—4 վանկ, իսկ Սեռ. աւազակների—5 վանկ: Իսկ եթէ Սեռականը և ուրիշ հոլովները միայն փոխում են Ուղղականի վերջաւորութիւնը, բայց վանկ չեն աւելացնում, որպիսիք են Ե և Բիւն վերջացած անունները, նոքա ի հարկէ կը պահեն շէշտը վերջաւորութեան վերայ, եթէ միայն Ուղղականում է վերջաւորութեան վերայ է. օրինակ դամբիլ—Սեռ. դամբ-

չու, բայց՝ զի՛նի — զի՛նու. հալիմութիւն — հալիմութեան, և այլն:

Եւսկան բայի Ներկայ ժամանակի 3 դէմքը եզակի՝ աչ (է), ինչպէս արդէն մի անգամ յիշած ենք, շեշտ չ'ունի (§ 1, ծանօթ. 1) և արտասանվում է իրանից առաջ կանգնած բառի հետ միասին, ինչպէս նորա մի վանկը, ենթարկվելով նորա շեշտին. համ. յուն. ἐστίν, (էնկլիտիկա): Նոյն յատկութիւնը ունին այդ բայի միւս դէմքերը եզակում և յոգնակում, որոնք մինչև անգամ կրճատում են իրանց ձայնաւորը՝ ըմ (եմ), ըս (ես), ըք (եմք), ըք (էք), ըն (են). այդ կրճատումը ինքն ըստ ինքեան ապացուցանում է շեշտի պակասութիւնը: Նոյն յատկութիւնը, այսինքն շեշտի պակասութիւնը և իւր առաջ կանգնած բառի հետ խառն արտասանվելը ունի այդ բայը և զրականական լեզուում. ոչ որ չի ասիլ՝ ես անո՛մ եմ, այլ կ'արտասանէ՝ ես անո՛մ եմ, այնպէս որ անո՛մ եմ դուրս կը գայ մի բառ. դորա վերայ է հիմնված այն, որ երբեմն այդ երկու բառը գրում են միասին՝ ես անո՛մեմ. նոյնպէս ոչ որ չի ասիլ ես եմ անո՛մ, այլ ես եմ անո՛մ: Եւ շեշտի պակասութիւնը երևում է զրականական լեզուում նոյն բայի Անցեալ Անկատար ժամանակում՝ դո — այնքեղ էիք. բայց նա ստանում է շեշտ, երբոր գործ է ածվում կալ¹⁾ բայի մտքով: Ո՛րա նման երևոյթ Ներկայացնում է մեզ յունարէն էական բայի Ներկայ ժամանակի երրորդ դէմքը եզակի, որը պահում է իւր շեշտը, երբ որ գոյութիւն կամ դորա նման մի հասկացողութիւն է ցոյց տալիս:

Ծանօթ. Ի նկատի ունենալով որ զօկերէն լեզուն բայի յիշեալ դէպքերից շեշտը դնում է միշտ վերջից սկսած երկրորդ վանկի վերայ,

1) Այդ բայի Աներևոյթ եղանակը (կալ) գործածական չ'է. գործ է ածվում Ներկայ կամ, կաս, կայ, և այլն և Անցեալ Անկ. կայի, կայիր, կար, և այլն:

մենք աւերորդ ենք համարում շեշտի նշանակելը. մենք կը նշանակենք միայն այնտեղ, ուր նա այդ բարբառի շեշտի ընդհանուր կանոնից բացառութիւն է կազմում. չենք նշանակելու նոյնպէս՝ 1) Եփ 1) զերջացած բառերի շեշտը, որովհետեւ նոքա ունին շեշտը միշտ վերջին (այսինքն այդ Եփ 1) վանկի վերայ, 2) յոգնակի եւ վերջաւորութիւնը, որովհետեւ նա էլ միշտ շեշտ ունի, 3) բացի Ուղղականից միւս հոլովները իրանց վերջաւորութեան վերայ շեշտ չունին. ուրեմն շեշտը լինում է միայն երկրորդ վանկի վերայ. ուրեմն նոյնպէս նշանակելու հարկաւորութիւն չը կայ. այլ բան է եթէ մնացեալ հոլովները Ուղղականի հետ համեմատած վանկ չեն աւելացնում (է և Եփ վերջացած անունները). ի հարկէ այն ժամանակ շեշտը կը մնայ այնտեղ, ինչտեղ էր Ուղղականում. ուրեմն այստեղ կը նշանակենք այն բառերը, որոնց Ուղղականի շեշտն էլ կը նշանակէինք. Եյս բոլոր ասածներիցս բացառութիւն կազմող շեշտերը պատահած ժամանակը կը նշանակենք բառերի վերայ:

II. ԲԱՆԱԶԱՅՆ ՏԱՌԵՐԸ:

Խօսելով զօկերէնի ձայնաւորների, նոցա արտասանութեան և փոփոխութեան վերայ մենք չ'ենք հանդիպում ոչինչ դժվարութիւնների ընդհանուր զրականական լեզուի հետ համեմատութեան մէջ. և չ'ենք էլ կարող հանդիպել, որովհետեւ զրականական լեզուի ձայնաւորները ունին իրանց հաստատ և որոշ արտասանութիւնը, որը չ'է փոխվում. նոքա ամեն տեղ ամեն հայերէն իմացողի բերանում արտասանվում են միատեսակ, և արտասանվում են այնպէս ինչպէս որ գրվում են: Ելլ է բաղաձայն տառերի բանը. մենք չ'ենք կարող զօկերէնի բաղաձայնները համեմատել զրականականի հետ, եթէ առաջուց դոնեա մի ընդհանուր հայեացք չը դրնք Հայոց լեզուի բաղաձայն տառերի վերայ:

1) Ուրիշ բան է, եթէ այդ վերջաւորութեան մէջ չ'առնում է չ (թիւն—թին), այն ժամանակը բառը ենթարկվում է շեշտադրութեան ընդհանուր կանոնին:

Հայոց լեզուն շատ յատկութիւններով որոնց մէջ և բաղաձայն տառերի արտասանութեամբ, կարելի է բաժանել երկու զլիաւոր մաս՝ արեւելեան և արեւմտեան: Այստեղ խօսքը 'ի հարկէ բոլոր բաղաձայնների վերայ չ'է, այլ միայն նոցա, որոնք իրանց արտասանութեան գործիքով մի և նոյն կարգին են պատկանում: Գոքա են՝ բ, պ, փ, գ, կ, ք, դ, տ, թ, ծ, ձ, ճ, ջ: Հայոց լեզուի արեւմտեան ճիւղում, ինչպէս յայտնի է, ք արտասանվում է ինչպէս պ, գ—կ, և այլն, և ընդհակառակը՝ պ արտասանվում է ք, կ—գ, և այլն: Աւրոպացի հայադէտները, ծանօթանալով հայերէնի հետ արեւմտեան Հայերի միջոցով, սովորում են նոցանից և նոցա ծուռ արտասանութիւնը ¹⁾: Այդ արտասանութիւնը ծուռ ենք անուանում նայելով այդ բանի վերայ Մեսրոպեան այբուբենի տեսակէտից: Մեսրոպը, յորինելով այդ տառերը, տվեց նոցա այն արտասանութիւնը, որը պահված է մինչև այժմ էլ Հայոց լեզուի արեւելեան ճիւղում: այդ արտասանութեան ճշգրտութիւնը և ուղղութիւնը երկար ապացոյցների կարօտ չ'է, և թէ 'ի նկատի ունենանք Յունաց տառերի կարգը, որը աչքի առաջ ունէր Մեսրոպը Հայոց տառերը կարգաւորելիս, բացի այդ համապատասխանութենից այդ բանը աւելի պարզ երևում է Յունաց բառերի հայկական տրանսկրիպցիայից, օրինակ՝ Βαβυλών—Բաբելոն, Φίλιππος—Փիլիպպոս, և այլն: Այդպիսի տրանսկրիպցիան աւելի արժէք ունի մեզ համար, որովհետև պատկանում է Մեսրոպին և առհասարակ մեր թարգմանիչներին և նոցա լաշակերաններին, այսինքն այնպիսի մարդ-

1) Օրինակ՝ Բօպպը, որը պահում է ամեն տեղ հին բուն հայկական արտասանութիւնը, այնու ամենայնիւ նկատում է թէ իբր այժմ հայերէնում ա (b) արտասանվում է ինչպէս գ (d), օրինակ՝ տամ (tam), արտատ. դամ (dam), I, 18; b, ծանօթ. 1: Անշուշտ նա 'ի նկատի ունի Տաճկաստանի հայոց արտասանութիւնը, մինչդեռ արեւելեան Հայերը արտասանում են մինչև այժմ էլ՝ տամ (tam):

կանց, որոնց քաջ յայտնի էր և Յունաց և Հայոց տառերի արտասանութիւնը: Մենք չենք կարող մեղադրել թէ ինչու Տաճկաստանի Հայերը *դուն* (tun), *սիրտ* (sirt) բառերը արտասանում են՝ *դուն* (dun), *սիրտ* (sird). Դա մի շինծու և արուեստական արտասանութիւն չէ: Բնթերցողին անշուշտ յայտնի կը լինի այն երևոյթը, որը գիտութեան մէջ անուանւում է Lautverschiebung (пересой звуков): Այդ երևոյթը, ինչպէս ցոյց է տալիս համեմատական լեզուագիտութիւնը, յատուկ է Հայոց լեզուին: Բանը այն է որ արեւմտեան Հայերը, փոխելով այդ բաղաձայնների բուն հայկական արտասանութիւնը, վերադառնում են կրկին սկզբնականին ¹⁾. օրինակ սանակը. dādāmi—յուն. δαδάμι — լատ. do—ռուս. даю—բուն Հայ. տամ—արեւմտ. Հայ. դամ (dam), տուն—դուն (dun—домъ), և այլն: Բայց այս երևոյթի վերայ այստեղ երկար խօսելու ոչ տեղն է և ոչ էլ հարկ կայ. մեզ միայն հարկաւոր է իմանալ, և մենք այդ պարզ տեսնում ենք, որ Տաճկաստանի (արեւմտեան) Հայոց արտասանութիւնը մի այնպիսի տարօրինակ երևոյթ չէ լեզուաբանութեան մէջ. նա, ճշմարիտ է, հակառակ է ընդհանուր հայկական ոգուն, բայց խօ չէ կարելի պահանջել որ մի և նոյն լեզուի բարբառները մի և նոյն ժամանակ և մի և նոյն աստիճան ենթարկվեն յիշեալ լեզուաբանական օրէնքին: Այնպէս ինչպէս արտասանում են ընդունելով Մեսրոպեան բ=բ, գ=չ, զ=ծ, և այլն. այսինքն՝ զրեն դուն 'ի տեղի դուն, քնն 'ի տեղի քնն, և այլն. դորա անյարմարութիւնը և, աւելացնենք, լեզուի միութեան համար վնասակար լինելը ամեն մարդու համար պարզ է. խորթ է թուում մեզ միայն այն

¹⁾ Բուպ. I, 183 b (Քր.).

որ արեւմտեան Հայերը օտար լեզուներից առված բառերը գրում են այնպէս, ինչպէս պահանջում է իրանց արաւասանութեան օրէնքը. նոքա գրում են՝ Նաթօլէօն, Պերլին, Ահսներ, Լայլն. դորանով նոքա ՚ի հարկէ մնում են իրանց բարբառի արտասանութեանը հաստատ, և դա լաւ է միակերպութեան համար, բայց դա մի և նոյն ժամանակը պարզ ցոյց է տալիս, թէ նոքա համոզված են որ Մեսրոպը տառերը յօրինելիս տվել է $p=k$, $q=k$, Լայլն նշանակութիւն:

Բոլորովին այլ կերպ է վարվում այս դէպքում արեւելեան Հայերէնը. նա լաւ գիտէ Մեսրոպեան տառերի յատկութիւնը և գրելու ժամանակ հետեւում է Հին Հայերէնի ուղղագրութեան: Բայց տարաբաղդաբար այստեղ էլ գրութիւնը և արտասանութիւնը միշտ չեն համատասխանում իրար: Հայոց լեզուի արեւելեան բարբառում, ճշմարիտ է, համարեա կրբէք ¹⁾ պ, կ, տ (p, k, t), Լայլն չեն արտասանվում բ, գ, դ, Լայլն (b, g, d), բայց այս վերջինները (p, q, r , Լայլն) արտասանվում են ինչպէս պ, կ, տ, Լայլն: Այդպէս է արեւելեան գրականական Հայերէնում ²⁾, այդպէս է և նորա բարբառներում: Բայց բարբառներում բանը աւելի կրկարանում է. այստեղ Գ, օրինակ՝ դաւնում է ոչ միայն ի

¹⁾ Դան մի քանի բացառութիւններ, օրինակ՝ կեանք= $geand$, երկիր= $jergir$, եկեղեցի= $jeggezi$, Լայլն:

²⁾ Յիշեալ արտասանութիւնը չէ աղաւաղվում օտար լեզուներից առված բառերի համար. օրինակ՝ Բերլին՝ k արտասանվի Berlin, մինչդեռ այդպէս գրած ժամանակը Տաճկաստանի Հայր կ'արտասանէ Perlin: Արեւմտեան Հայերի այդ գրութեան և արտասանութեան անհամապատասխանութիւնն (արեւելեան Հայի տեսակէտից) է պատճառ, որ եւրոպական baron բառը այժմ մենք արտասանում ենք պարոն ($paron$: Արեւմտեան Հայերը այդ բառը baron (b) արտասանելու համար անշուշտ պիտի գրէին և գրել են պարոն, որովհետեւ նոքա համոզված են որ Հայոց պ= ve րոպ. b . այդպէս էլ նոցա արտասանութեանը այժմ էլ այդ բառը արտասանվում է baron մինչդեռ արեւելեան Հայերը աւելելով այդ բառը իւր Տաճկաստանի Հայոց տրանսկրիպցիայով չեն հետեւել այնու ամենայնիւ նոքա արտասանութեանը այլ ոչ արտասանել են ինչպէս p և յառաջացել է պարոն ($paron$):

այլ և Գ. օրինակ՝ Գլուխ—կլուխ—Կլուխ, Գլխիճուր—Գլխի-
 Գլուխ, և այլն: Բայց Հայոց լեզուի արևելեան ճիւղին մէջ կայ
 մի բարբառ, որը հիանալի կերպով պահել է ¹⁾ յիշեալ բա-
 ղաձայնների հին՝ բուն հայկական (Մեսրոպական) արտա-
 սանութիւնը, — այդ Տփխիսեցոց բարբառն է: Բացի այդ
 բարբառից ուշադրութեան արժանի է այս խնդրի վերաբեր-
 մամբ նոյնպէս և Ադուլեցոց բարբառը. այստեղ, ինչպէս և
 Տփխիսի բարբառում, տեսնում ենք բ, պ, գ, կ, դ, տ, ճ, ջ,
 ծ, ձ իսկական ²⁾ արտասանութիւնը. միայն այն զանազա-
 նութիւնը կայ այդ երկու բարբառների մէջ որ Ադուլիսի
 բարբառը համեմատաբար աւելի շատ բացառութիւններ է
 ներկայացնում: Այստեղ դժվար է և մի առանձին հարկաւո-
 թիւն էլ չը կայ բերել բոլոր այն բառերը, որոնց մէջ յիշեալ
 տառերը փոխել են իրանց բուն արտասանութիւնը. դա ա-
 ւելի բառարանի նիւթ է. միայն խմանալ հարկաւոր է որ,
 ինչպէս մինչև այժմ, այնպէս էլ այսուհետև՝ զօկերէն բառե-
 րում պատահած բաղաձայնները նշանակելու ենք այնպէս,
 ինչպէս նոքա արտասանվում են այդ բարբառում և ոչ ինչ-
 պէս զրվում են զրականական լեզուում, այնպէս որ՝ եկե-
 ղեցի զօկ. մենք կը գրենք՝ եգեղեցի, գիփել—զօկ. գիփել, որ-
 քի—զօկ. որ՛ի, և այլն: Ուրեմն այսպիսի տրանսկրիպցիայից
 պարզ երևում է, որ զօկերէնում բ հարկաւոր է արտասանել
 b, գ—g, դ—d, կ—k, ճ—ğ, ջ—ğ, տ—t, ծ—z. ³⁾, ձ—z:
 Համեմատելով Տփխիսեցոց բարբառի հետ մենք գիտու-
 թեամբ ասացինք «Ադուլիսի բարբառը» և ոչ «զօկերէնը»,
 որովհետև «զօկերէնը» ասելով մենք ՚ի միջե այլոց հասկա-

1) Բացի մի քանի շնչին բացառութիւններից. օր. վուրթի (որդի), և այլն:

2) Իսկական անշուշտ մենք անուանում ենք այդ տառերին Մեսրոպից տված արտա-
 սանութիւնը:

3) ճ—ի և ձ—ի այդ տրանսկրիպցիան (ğ, z), մենք առնում ենք Բօպպից. I, 183, b, 2:

նում ենք և Յդնայի լեզուն, որի մասին հաստատ կարող ենք ասել, որ նա չունի Ագուլիսի լեզուի այդ յատկութիւնը, այսինքն՝ բաղաձայն տառերը արտասանուած է ինչպէս շատ ուրիշ բարբառներ և ինչպէս նոյն իսկ գրականական լեզուն. օրինակ՝ գինի—ազ, գինի—ցղն, կինի, զու—ազ, դոլ—ցղն, տոլ, և այլն:

Այս նկատողութիւններից յետոյ գիմենք մի քանի մանրամասնութիւնների:

Բաղաձայն տառերից մի քանիսը զօկերէնում ունին իրանց առանձին արտասանութիւնը և ննթարկվում են փոփոխումների:

§ 9. Գ. Բաղաձայնի արտասանութիւնը, ինչպէս յայտնի է կախված է այն ձայնաւորից, որի սկսբից գրված է այդ բաղաձայնը. նա հնչում է կակուղ կամ թաւ, նայած թէ ինչպիսի ձայնաւոր է հետևում. օրինակ՝ Կերակուր բառի մէջ առաջին է հնչում է ոչ այնպէս, ինչպէս երկրորդը. այս վերջինը — ի ազդեցութեամբ հնչում է թաւ, մինչդեռ առաջինը է—ի հետ գրված լինելով արտասանվում է կակուղ. նոյնպէս, օրինակ՝ Գլխագին բառի մէջ առաջին Գ արտասանվում է թաւ, իսկ երկրորդը կակուղ: Կնչ վերաբերում է Վօկ բարբառին, այդ օրէնքից կայ մի նշանաւոր բացառութիւն Գ—ի վերաբերեալ. Ագուլիսի բարբառը այդ բաղաձայնի համար ունի միմիայն մի արտասանութիւն՝ ինչ ձայնաւորի կամ բաղաձայնի հետ էլ որ գրված լինի Գ արտասանվում է այնպէս, ինչպէս որ գրականականում կամ օտար լեզուներում արտասանվում է նա է (e) կամ է (i) առաջ գրված ժամանակը (Գի). օրինակ՝ յիշեալ Գլխագին բառի մէջ Ագուլիցոյ բարբառում, ուր այդ բառը փոխվել է Գլխագին տառքին և երկրորդ Գ արտասանվում են միատեսակ, այսինքն առաջինն էլ է արտասանվում այնպէս ինչպէս երկրորդը (Գ). ուրիշ

օրինակներ՝ Թանգ—ադ, Թունգյ, Հինգյ—Հանգյ, Լայլն: Այդ արտասանութիւնից բացառութիւն կազմում են, ինչպէս և ուրիշ շատ դէպքերում, միայն այն բառերը, որոնք գրականական կամ եկեղեցական լեզուից են առված. այս դէպքում Հետաքրքրելն է հետեւեալ օրինակը. **Գրեւ բառը**, որ Ազուլեցիք իւր ամեն ձևերում և ամեն դէպքում արտասանում են այնպէս, ինչպէս վերև ասացինք (այսինքն **Գյրիլ**)—**Գրեւ** բառի մէջ արտասանվում է այնպէս, ինչպէս գրականականում. **Գրեւ** բառի մէջ **Գ**—ի այդ արտասանութիւնը կարելի է մեկնել նորանով, որ այդ բառը ազուլեցիկների համար «գլաբառ» բառերից, այսինքն գրականական լեզուից առված բառերից մէկն է. զօկերէնի մէջ այդ բառի տեղ աւելի գործածական է Թուրքերէնից առված **قوك** բառը. բայց կան **Գօկեր**, որոնք այդ բառն էլ իրանց լեզուի յատկութեան համեմատ արտասանում են **Գրեւ**, այնպէս որ առաջին արտասանութիւնը (**գրիւ**) կարելի է ասել, յատուկ է աւելի նոր և աւելի «լուսաւոր» սերնդին, իսկ երկրորդը (**գյրիւ**) — Հին սերնդին: Նոյնպէս **Գրաբառ** բառը մի քանիսը (նորերը) արտասանում են **Կրաբառ** (այդպիսի սարսափելի աղաւաղման հասած է նայոց արտասանութիւնը նոյն իսկ գրականական լեզուում), — միւսները աւելի զօկերէն **قوك**: Վրականական կամ եկեղեցական լեզուի ազդեցութեանն է վերաբերում նոյնպէս **Գ**—ի և **+** արտասանվելը, որը յատուկ է միայն այն բառերին, որոնց ոչ—ազուլեցիկէն լինելը անկնկրել է. օրինակ՝ **Գրեգոր**, որ գրականականում և մինչև անգամ Տփլիսի բարբառում արտասանվում է **Գրեգոր** — զօկերէնում¹⁾ արտասանվում է **Գյրիգոր**, կարգ—գրական. կարգ

¹⁾ Այստեղ մենք ասում ենք զօկերէն, որովհետեւ Գրեգոր ցղնեցիներում էլ արտասանվում է ինչպէս ազուլեցիկներում:

—գօլի. կարգ, թագաւոր—թաքաւոր, գործ—կործ: Բայց եթէ այդպիսի բառերը բացի իրանց բուն նշանակութենից, ստանում են ուրիշ նշանակութիւն էլ, այն ժամանակը նոքա այդ նշանակութեան հետ յառաջ են բերում **Գ**—ի Ագուլեցոյ արտասանութիւնը (**գ**), օրինակ՝ գործ—կործ (**дѣло**), բայց — գո՛ւրծ (**руководѣіе**), հոգի—հոգի (**душа**), բայց հէգի (= մարդ, օրինակ քանի հոգի—ագ. քանի հէգի). թագաւոր—թաքաւոր, բայց թըգըլը՞ւր նշանակում է հարսանիքի հանդիսի մասնակցող հիւրեր (հարսանիքի ժամանակ փեսան թագաւոր է անվանվում):

Ա երև արդէն նկատեցինք, որ **Ռ**օօի բարբառում Յդնեցոյ լեզուն բաղաձայնների վերաբերեալ մի նշանաւոր տարբերութիւն է ներկայացնում Ագուլեի լեզուից. այս վերջինը, ինչպէս ասացինք, բացի մի քանի փոքրիկ բացառութիւններից, պահել է **գ**, **բ**, **դ**, **Լ** այլն **Ս** եսրոպական արտասանութիւնը, մինչդեռ ցղնեցերէնումը, ընդհակառակը, յիշեալ տառերի այդ արտասանութիւնը, կարելի է ասած, բացառութիւն է կազմում. օրինակի համար **Գ** մի քանի դէպքերում միայն արտասանվում է ինչպէս **գ**==**ց**՝ **Գ**յրիքոր, գիժ, գօլիս (**գալիս**), **Լ**այն, բայց ըստ մեծի մասին նա փոխվել է արդէն **լ** և **+**. **գ**ինի—**ա**գ. **գ**ինի—ցղն. **կ**ինի, **գ**լուխ—**ա**գ. **գ**լո՞ւհ—ցղն. **կ**լուխ, **ճ**րագ—**ա**գ. **ճ**րօգ—ցղն. **ճ**րօք, սպաւոր—**ա**գ. սգըլը՞ւր—ցղն. սքըլը՞ւր, **Լ**այն:

Մօօի. **Ջ**օկերէն լեզուով բառեր բերած ժամանակը արտասանութեան ճշդութիւնը պահպանելու համար, մենք կը գրենք ոչ այնպէս, ինչպէս գրվում են գրականական լեզուում, այլ այնպէս, ինչպէս արտասանվում են զօկերէնում. և որովհետեւ Ագուլեցոյ լեզուում **Գ** ունի իւր որոշ և այդ բարբառին յատուկ արտասանութիւնը = **գ**, մենք այդ պատճառով աւելորդ ենք համարում այդ արտասանութիւնը նշանակել յիշեալ տրանսկրիպցիայով՝ բաւական է մի անգամից իմա-

նալ որ զօկերէնում գ արտասանվում է միշտ այնպէս, իբր թէ նորանից յետոյ դրված լինի ՚ կամ է ձայնաւորը, այսինքն՝ գյ:

§ 10. բ, պ, դ, տ, ձ, ծ, ջ, ճ ինչպէս վերև արդէն նկատել ենք Ագուլեցոց բարբառում պահել են իրանց խտտակ Մեսրոպական արտասանութիւնը, բացի մի քանի աննշան բացառութիւններից, որ և կը նշանակենք մենք պատահած ժամանակը իրանց արտասանութեան և ոչ ուղղադրութեան համեմատ տառերով: Բացառութիւնների թւում հարկաւոր է յիշել այն երևոյթը, որը յատուկ է և ուրիշ բարբառներին և նոյն իսկ գրականական լեզուին՝ *tenues* պ, տ, ծ, ճ, կ արտասանվում են ինչպիս *mediae* բ, դ, ձ, ջ, դ, երբոր դոցա առաջ անսկիզբապէս դրված է ն կամ ձ, օրինակ աճալ գրվում է, բայց արտասանվում է աճի, քանի—արտաս. քանի, ընդի—արտաս. ընդի, ընդիւ—արտ. ընդիւ, ագ. ընգանիւլ ցղն. գնիւլ և այլն: Այս նոր հայերէնի երևոյթին համապատասխան երևոյթ մենք գտնում ենք և նոր յունարէնում, ուր մենք տեսնում ենք նոյն բանը. օրինակ λυονται այժմեան Ֆոյները արտասանում են λυονθαι: Բացառութիւնների թւում հարկաւոր է յիշել նոյնպէս գնիւլ բառը, որի մէջ ո ինչպէս զօկերէնում նոյնպէս և գրականական լեզուում արտասանվում է ինչպէս դ. եթէ մեկնելու լինինք թէ սկզբի գ է ազդել ո—ի ո արտասանելուն, ապա ինչո՞ւ գնիւլ (զօկ. գիւ) բառի մէջ գ—ի այդ ազդեցութիւնը չ'է երևում ո—ի վերայ. գնիւլ երբէք չ'է արտասանվում ոչ գրականականում գնիւլ և ոչ զօկերէնում գնիւլ:

§ 11. ի: Այս բաղաձայնը զօկերէնում, ինչպէս և ուրիշ *tenues*, պահել է իւր բուն արտասանութիւնը, արտասանվելով միմիայն մի քանի տեղ ինչպէս գ և այն էլ հէնց այնտեղ, ինչ տեղ մենք տեսնում ենք և գրականական լեզուում և ուրիշ բարբառներում. այդ ի—ի գ արտասանելու դէպքերն են՝ 1) ինչպէս արդէն վերև տեսանք (§ 10) ն—ից յետոյ, 2) մի քա-

նի առանձին բառերում, օրինակ՝ երկինք—արտաս. երգինք,
երկիր—արտ. երգիր, երկիւղ—արտ. երգիւղ, և այլն: Այս երկ-
րորդ դեպքում է—ի Գ արտասանելը զուցէ մեկնելու է զրա-
կանական կամ եկեղեցական լեզուի ազդեցութեամբ, որովհետեւ
այդ բառերի մէջ կայ մի ուրիշ յատկութիւն էլ, որ Ազուլե-
ցոց լեզուն հակառակ է, այն է՝ այդ բառերի սկսքում է—ի
« չը փոխվելը, մինչդեռ եթէ զոքա բուն Ազուլեի լեզուի
բառեր լինէին մենք պիտի սպասէինք է—ի տեղ «, այսինքն
արկիր, արկինք, արկիւղ (ինչպէս երկու— անու, երազ—ա-
րազ, երկաթ—արկաթ, և այլն. § 2): է փոխել է իւր արտա-
սանութիւնը Գ նոյնպէս կապել (կարողանալ) բառում,—զօկ.
գարիլ, կրակ—ագուլեց. գլրօկ:

Նշան. 1. Բուն Գ և Ն—ից յետոյ է—ից յառաջացայ Գ զօկերէնը
պարզ որոշում է իրարից նորանով որ առաջինը ըստ իւր սովորութեան
արտասանվում է Գ, իսկ երկրորդը՝ է—ից յառաջացածը՝ արտասա-
նում է նոյնպէս Գ բայց այնպէս, ինչպէս պահանջում է ձայնաւորը,
որի առաջից դրված է նա, օրինակ՝ թանգ, չինգ—ագ. թունգ, չանգ,
և այլն. բայց ականջ—զօկ անգուճ և ոչ անգյուճ բայց ցղնեց. եր-
կուն էլ գործածական են անգուճ (աւելի նոր), անգյուճ (Չին,—պա-
ռաւ կանանց լեզուում). թանգ—ագ. թունգ բայց ցղն. թօնգ: Պրա-
կանական լեզուում այդ բառը երկու տեսակ է գրվում թանգ և թանկ,
—ագուլեցերէն թանգ կարծես յառաջացել է առաջին ուղղագրութե-
նից, իսկ ցղնեցերէն թանգ (Ն—ից յետոյ է արտ. գ=ց) երկրորդից:

Վիճակով է—ի արտասանութեան ուրիշ յատկութիւններին,
հարկաւոր է նկատել, որ այդ բաղաձայնը, որի արտասանու-
թեան թաւութիւնը կամ կակղութիւնը նոյնպէս կախված է
այն ձայնաւորից, որի առաջից դրված է նա, այդ բաղաձայնը,
ասում ենք, Ազուլեցոց բարբառում բացառութիւն է կազ-
մում այդ օրէնքից, երբոր դրված է լինում է—ի առաջից.
այդ դեպքում Ազուլեի բարբառը արտասանում է է այնպէս,

ինչպէս արտասանում է նոյն տառը բաղաձայնների կամ թաւ ձայնաւորների առաջից դրված ժամանակը, օրինակ՝ կէս, կէտ, Լայլն, Ագուլեցոց լեզուն չէ արտասանում այնպէս, ինչպէս մենք սովոր ենք արտասանել զրականական լեզուում կամ ըստ ենք ուրիշ բարբառներում, այլ արտասանում է ինչպէս նոյն տառը հետեւեալ օրինակներում՝ կակուղ, հակառակ, կնիկ, Լայլն. բայց չ—ի այդ յատկութիւնը չը կայ արդէն Յօդեցոց լեզուում, ուր կէս, կէտ, Լայլն արտասանվում է ինչպէս և զրականականում։ Յօդեցոց լեզուի վերայ խօսելով պիտի աւելացնենք նոյնպէս չ—ի արտասանութեան մի ուրիշ յատկութիւն էլ՝ մենք արդէն տեսանք, որ չ Յօդեցոց լեզուում շատ ժամանակ, համարեա միշտ, դնվում է Ագուլեցոց գ—ի տեղ. ցոնեցերէնում այդ չ որոշվում է ուրիշ չ—ից նոյն յատկութեամբ, ինչ յատկութեամբ որ Ագուլեցոց գ որոշվում է զրականական լեզուի կամ ուրիշ բարբառների գ—ից, այսինքն ինչպէս որ Ագուլեցոց գ=գյ, նոյնպէս ցոնեցերէնի նորան համապատասխան կ—կյ, օրինակ զրող—ազ. գլրող—ցոն. կլրող, կրակ—ազ. գլրակ—ցոն. կլրակ, Լայլն. բայց՝ գլրխ—ազ. գլլւհ—ցոն. կլլւխ և ոչ կլլուխ, Լայլն։

Ծանօթ. 2. Ուրեմն մի անգամից հարկաւոր է պայմանիւ՝ Ագուլեցոց գ (գյ) — ին համապատասխան Յօդեցոց չ արտասանել ինչպէս կյ առանց այս վերջին տրանսկրիպցիային դիմելու։ Բացառութիւնները մենք կը նշանակենք պատահած ժամանակը։

Իյ արտասանութիւնը՝ ի տեղի իստակ չ մենք պատահում ենք նոյնպէս Ագուլեցոց լեզուում այն ակ, իսկ ցոն. եկ՝ վերջաւորութեան մէջ, որ յառաջացել է զրականական իկ վերջաւորութենից չ—ի ազ. ա, ցոն. է փոխվելովը (§ 4). օրինակ՝ մտիկ — ազ. մտակյ — ցոն. մտէկյ, կնիկ — ազ. կնակյ — ցոն. կնէկյ։ Այլ զրականական իկ վերջաւորութիւնը չէ էլ փոխվում զօկերէնում ակ կամ եկ (ցոնեց.), այնու ամենայնիւ

արտասանվում է այդ բարբառում իկյ, օրինակ՝ մօտիկ—
զօկ. մօտիկյ, աղջիկ—զօկ. ախչիկյ, և այլն. իսկ զրականական
աֆ վերջաւորութեան չ զօկերէնում մնում է իւր իստակ ար-
տասանութեամբ, ինչպէս և ամեն չ—ով վերջացած բառե-
րում, եթէ միայն չ—ից առաջ նոքա չ'ունին ոչ ի և ոչ ի—ից
յառաջնոցած ա կամ է, ինչպէս վերոյիշեալ իկ=ակյ, էկյ.
օրինակ՝ պտուկ (ծայր) — զօկ. պտօկ, պսակ—զօկ. պսօկ,
պարկ—զօկ. պօրկ, տախտակ—զօկ. տախտակ, բարակ—ազ.
բարակ, բայց ցղն. պարակյ. երևի այս վերջին ցղն. օրինակում
ա սօգրիլ է չ—ի կյ արտասանվելուն, ինչպէս որ այդ կրկն-
վում է հեռեւեալ օրինակում. դանակ—ազ. դանակ—ցղն.
տանակյ:

§ 12. +: Եյս բաղաձայնը ինչպէս յայտնի է բաղկացած է
երկու հնչւենից, որ պարզ երևում է նորա եւրոպական
տրանսկրիպցիայից=kh (նշանակվում է նոյնպէս զ). բայց
զօկերէնում պատահում են այնպիսի դէպքեր, ուր այդ եր-
կու հնչւենիքից հազազ ի կոչում է և մնում է միայն կո-
կորդային ի, այնպէս որ զրականական կամ ուրիշ բարբառ-
ների +—ի տեղ զօկերէնում մենք տեսնում ենք չ. օրինակ՝
թանաք—զօկ. թանակ, մտքեր—զօկ. մտկար, աչք—ցղն.
օշկ, և այլն: Բացի դրանից մի քանի տեղ զրականական կամ
ուրիշ բարբառների +—ի տեղ զօկերէնում մենք տեսնում
ենք չ. օրինակ ո+ մին—ուխման ¹⁾, իք մին—էխման: Եյս
օրինակներից մենք պարզ տեսնում ենք որ Հայոց +—ի հետ
պատահում է նոյն բանը, ինչ որ պատահել է նորա համա-
պատասխան Յունաց չ—ի հետ. այս տառը այժմ արտա-
սանվում է չ մինչդեռ հին Յոյնիւր արտասանում են եղած
ինչպէս Հայոց +. նոյն ինքը Հայոց + իւր այբուբէնական

¹⁾ Ոք՝ ո—զօկ. ու միավանկ բառերում § 5. մին ի—զօկ. ա § 4:

տեղովը, իւր գրութեամբ և յունական բառերի տրանսկրիպ-
ցիայից պարզ ապացոյց է յունական +—ի այդ արտասա-
նութեանը:—Իսկ յիշեալ «+ ի» և «+ ի» օրինակներում +
ի—ի միջոցով ենթարկվում է մի երկրորդ փոփոխման և վեր-
ջապէս անհետանում է. այդ երկրորդ փոփոխումն է հ, այ-
սինքն՝ յիշեալ բառերը ներկայացնում են զօկերէնում փոփոխ-
ման հետեւեալ աստիճաններ՝

ոք մին—ուխման—ուհման—ուման

իք մին—էխման—էհման—էման:

Իսկ իր երեք ձևերն էլ գործածական են Ագուլեցոյ բար-
բառումը, իսկ ցղնեցերէնում գործածական է միայն վերջին
ձևը՝ ուման, էման:

Ա՛յ՝ երջապէս նկատելու է +—ի այն յատկութիւնը, որը
մենք նկատեցինք և ի—ի համար՝ + էլ ի—ի նման բառի վեր-
ջում կակղանում է, այսինքն արտասանվում է +j ¹⁾, եթէ
նորա առաջից դրված է ի կամ ի—ից յառաջացած զօկ. «
և է ձայնաւորները. օրինակ՝ միքյ (մէք), ակիքյ, ցղն. էկյիքյ
(եկէք) նահէքյ (գնացէք), հրաքյ, ցղն. հրէքյ (հերիք), ևն.
այս «—ի և է—ի հետ, որոնք ի—ից են փոխված, չ'է հարկա-
ւոր խառնել բուն « և է ձայնաւորները՝ սոցա և միւս ձայնաւոր-
ներից յետոյ + պահում է իւր բուն արտասանութիւնը. օրի-
նակ՝ ասացինք—զօկ. ահաք (=ասանք) և ոչ ահաքյ, տվեցինք
կամ տվեցիք—ադ. տվէք, որ յառաջացել է տվաք—ից, ու-
րեմն է փոխվել է ոչ թէ ի—ից այլ « —ից,—ցղն. տվաք,
նստանք—ցղն. նստաք—ադ. նստէք, դուք—ադ. դուք—ցղ.
տուք, վանք—ադ. վուք—ցղն. վօնք, և այլն: Յղնեցոյ լեզ-

¹⁾ Համանման երևոյթ մենք տեսնում ենք և գերմաներէնում, ուր բառի վերջում ch
և g արտասանվում են chj և gj. օրինակ՝ ich=ichj, և այլն:

վում բացի այդ դէպքերից + արտասանվում է քյ նոյնպէս այն բառերում, ուր նա փոխարինում է զրականական լեզուի Գ, ուրեմն ազոււ. Գյ, այնպէս որ՝ գտանիւ—ազ. գյդանիւ¹⁾—ցղն. քյթանալ²⁾, էգ—ազ. ագյ—ցղն. պքյ:

Դասօթ. 1. Սորանից կարող է լինել բացառութիւն ինչպէս որ կար է—ի համար. ինչպէս որ գլուխ—ազ. գլլուհ ցղնեցերէնում է՛ արտասանվում էլլուխ այլ մնում է՝ կլուխ, այնպէս էլ՝ ճրագ—ազոււ. ճրագյ ցղնեցերէնում փոխվում է ոչ ճրակյ և ոչ ճրօքյ այլ ճրօք: Այսպիսի բացառութիւններ գուցէ մեկնելու է ղարաբաղցոյ բարբառի ազդեցութեամբ:

Դասօթ. 2. Աերոյիշեալ օրէնքի մասին, թէ է կ + չ—ից (կամ է—ից յառաջացած ա—ից և է—ից) յետոյ արտասանվում են էյ և էյ, նկատելու է որ՝ հարկաւոր է՛ ար այդ բաղաձայնները դրված լինեն անմիջապէս է—ից (կամ նորանից յառաջացած ա—ից և է—ից) յետոյ, այլ նոցա միջում կարող են ընկնել ուրիշ բաղաձայններ առանց խանգարելու նոյն օրէնքը. օրինակ՝ ինքը—զօկ. ինքյը, թէ է կ + —ի մէջ ընկել է ն, օրէնք—զօկ. օրինքյ³⁾, երկինք—զօկ. երգինքյ⁴⁾, պիրկ (պինդ, ամուր)—ազ. պարկյ, ցղն. պերկյ⁵⁾, և այլն:

¹⁾ Ազուլեցոյ այս բառի մէջ որ—ի ք արտասանվելու մեկնելու չէ արդեօք գյ ազդեցութեամբ:

²⁾ Նկատելու արժան է այս բառի մէջ և այն որ ցղն. լեզուում, ազոււ. լեզուի հետ համեմատած՝ կատարվել է բաղաձայնների երկրորդ աստիճանի փոփոխում՝ Գ և ք փոխվել են է և որ (գրական) և ապա + և լն:

³⁾ Զօկ. օրինքյ նշանակում է սրբութիւն (հաղորդութիւն). իսկ իւր բուն նշանակութեամբ այդ բառը, ինչպէս գրականական խօսք, զօկերէնի համար էլ մնում է իւր գրականական արտասանութեամբ. այսինքն՝ օրէնք (համ. § 9):

⁴⁾ Այդ արտասանութիւնը աւելի յատուկ է Յղնեց. իսկ եթէ Ազուլիսի բնակիչները կամ առհասարակ զօկերը երբեմն արտասանում են երգինք՝ 'ի տեղի երգինքյ՝ այդ նոյն պէս գրականական կամ եկեղեցական լեզուի ազդեցութիւնն է (§ 11):

⁵⁾ Նկատելու արժան է որ այդ բառը (պիրկ) ցղն. լեզուում (պերկյ) շատ սակաւ է գործածվում. ըստ մեծի մասին գործ էածվում (պինդ պինդ), մինչդեռ ընդհանրապէս պինդ բառը (որ պիտի լինէր անկասկած ազ. լեզ. պանդ) Ազուլիսի լեզուում երբէք չէ գործածվում: Պան մի քանի ուրիշ այդպիսի բառեր էլ, որոնք այդ երկու իրար մօտ գիւղերից մէկի մէջ գործածական են իսկ միւսում ոչ միայն գործածական է՛ են այլ և օտարօրի անգամ: Այդ բառերի մասին մենք դեռ միջոց կ'ունենանք խօսելու:

§ 13. Խ: Վերև արդէն տեսանք, թէ ինչպէս այս տառը զօկերէնում երբեմն յառաջանում է +—ից (ոք մին—ուխման, իք մին—էլման), բայց մի և նոյն օրինակներից մենք տեսնում ենք, որ այդ +—ից յառաջացած Խ յետոյ փոխվում է հ (ուհման, էհման): Իսկ ոչ միայն այս դեպքում +—ից յառաջացած Խ, այլ և բուն Խ Ազուրիսի բարբառում շատ ժամանակ փոխվում է հ, ինչպէս ապացուցանում են մեզ բազմաթիւ օրինակներ. դուլիս—ադ. գլլլէհ (ցղն. կլլլի), ծախել—ծահլի (ցղն. ծախիլ), խաղող—հաղող, խաղ—հաղ, կոխել—կահլի (ցղն. կոխիլ), կոխել, կախ տալ—կօհ տօլ (ցղն. կօխտօլ), խրատ—հրօտ (ցղն. խրօտ), մոխիր—մահիր (ցղն. մոխիր), և այլն: Ինչպէս տեսնում ենք Չօկ բարբառի այս օրէնքից բացառութիւն է կազմում Յղնեցոց լեզուն, ուր Խ—ի հ փոխվելը տեսնում ենք միայն այն ժամանակ, երբ նոյն բառի մէջ կայ ղ ինչպէս՝ խաղող—ադ. և ցղն. հաղող, խաղ—ադ. և ցղն. հաղ, և այլն. Վարաբաղցոց լեզուում նոյնպէս հաղող, հաղ¹⁾: Նոյնպէս Արևանցոց բարբառում՝ հաւող: Հարկաւոր է նկատել որ ղ իւր արտասանութեամբ շատ ժամանակ խառնվում է Խ—ի հետ ինչպէս զրականական լեզուում նոյնպէս և շատ բարբառներում, որոնց մէջ է և զօկերէնը: Արդարև, եթէ բուն Խ Ազուրեցոց բարբառում ըստ մեծի մասին փոխվում է հ, զորա փոխարէն Չօկերի արտասանութեան մէջ շատ ժամանակ ըսում ենք Խ, ուր զրականական լեզուում եթէ չէ էլ արտասանվում գոնեա զրվում է ղ օրինակ՝ թուղթ—զօկ. թօխտ, աղջիկ — ախլիկ, աղքատ—ախքատ, եղբայր (աղբար)—ախպար, և այլն: Իսկ մենք տեսնում ենք երբեմն և հակառակը, այսինքն Խ արտասանվում է ղ օրինակ՝ խանձել—զօկ. ղանձիլ, և այլն, բայց դա շատ սակաւ է պատահում:

1) Պատկ. Исслѣд. о діал. Армян. яз. кр. 65:

§ 13. Խ: Վերև արդէն տեսանք, թէ ինչպէս այս տառը զօկերէնում երբեմն յառաջանում է +—ից (որ մին—ուխման, իբ մին—էլման), բայց մի և նոյն օրինակներից մենք տեսնում ենք, որ այդ +—ից յառաջացած Խ յետոյ փոխվում է հ (ուհման, էհման): Բայց ոչ միայն այս դէպքում +—ից յառաջացած Խ, այլ և բուն Խ Ազուխի բարբառում շատ ժամանակ փոխվում է հ, ինչպէս ապացուցանում են մեզ բազմաթիւ օրինակներ. գլուխ—ազ. գլլլէհ (ցղն. կլլլխ), ծախել—ծահլլ (ցղն. ծախլլ), խաղող—հաղող, խաղ—հաղ, կոխել—կահլլ (ցղն. կոխլլ), կոխել, կախ տալ—կօհ տօլ (ցղն. կօխտօլ), խրատ—հրօտ (ցղն. խրօտ), մոխիր—մահիր (ցղն. մոխիր), և այլն: Ինչպէս տեսնում ենք Չօկ բարբառի այս օրէնքից բացառութիւն է կազմում Յղնեցոյ լեզուն, ուր Խ—ի հ փոխվելը տեսնում ենք միայն այն ժամանակ, երբ նոյն բառի մէջ կայ ղ ինչպէս՝ խաղող—ազ. և ցղն. հաղող, խաղ—ազ. և ցղն. հաղ, և այլն. Վարաբաղցոյ լեզուում նոյնպէս հաղող, հաղ ¹⁾: Նոյնպէս Արեւանցոյ բարբառում՝ հաւող: Հարկաւոր է նկատել որ ղ իւր արտասանութեամբ շատ ժամանակ խառնվում է Խ—ի հետ ինչպէս զրականական լեզուում նոյնպէս և շատ բարբառներում, որոնց մէջ է և զօկերէնը: Արդարեւ, եթէ բուն Խ Ազուլեցոյ բարբառում ըստ մեծի մասին փոխվում է հ, զորա փոխարէն Չօկերի արտասանութեան մէջ շատ ժամանակ ըսում ենք Խ, ուր զրականական լեզուում եթէ չէ էլ արտասանվում գոնեա զրվում է ղ օրինակ՝ թուղթ—զօկ. թօխտ, աղջիկ — ախլիկ, աղքատ — ախքատ, եղբայր (աղբար) — ախպար, և այլն: Բայց մենք տեսնում ենք երբեմն և հակառակը, այսինքն Խ արտասանվում է ղ օրինակ՝ խանձել—զօկ. ղանձիր, և այլն, բայց դա շատ սակաւ է պատահում:

1) Պատկ. Ивсѣд. о діал. Армян. яз. Կր. 65:

Դասնի. Զօկերէն (Ագուլիսի) լեզուի այս յատկութիւնը, այն է՝
 է—ի հ փոխվելը բոլորովին հակառակ է այն երևոյթին, որ բաւականին տարածված է մի.քանի հայ բարբառներում. այս վերջիններում
 ընդհակառակը շատ ժամանակ հ դառնում է ի. օրինակ, Զաւոնայ բարբառում՝ խայ (հայ), խայ (հայ), խետ (հետ), շնախաւոր (շնորհաւոր¹),
 և այլն. Մշոյ բարբառում՝ խարցուց (հարցուց), խասաւի (հասաւ²),
 խանից (հանեց). Խոնայ բարբառում՝ խանեց, պախելիս, խասաւ, ևն.

§ 14. Հ. Այս տառը բացի իւր սեպհական դործածութիւնից և այն դէպքերից, ուր, ինչպէս վերև տեսանք, յառաջացած է լինում է—ից, զօկերէնում մէք շատ ժամանակ տեսնում ենք *—ից և ց—ից յառաջացած. ց—ի հ փոխվելը մինչև անգամ մի մշտական և հաստատ օրէնք է կազմում բայերի վերաբերմամբ, այսինքն ժամանակ կազմող ց (Անցեալ Անդունելութեան մէջ) զօկերէնում միշտ փոխվում է հ. օրինակ՝ մոռացել—զօկ. մոռահալ, նեղացել—զօկ. նղահալ, կարգացել—ազ. կղահալ—ցղն. կլթահալ, մտրկացել—ազ. մտրկահալ, և այլն: Անց վերաբերում է *—ի հ փոխվելուն, մէք տեսնում ենք այսպիսի օրինակներ՝ ա—հել—զօկ. ահիլ³), տեանել—ազ. տիհնիլ—ցղն. տեհնալ (կայ նոյնպէս—ազ. տիհնիլ—ցղն. տեհնալ): Այս օրինակների թւումը յիշելու է և Ագուլիցոց հօժ գերանունը, ուր հ անշուշտ փոխվել է *—ից, իսկ օ *—ից (ինչպէս միավանկ բառում), ուրեմն հօ (ի)=սա (ի):

1) Պատկ. ibid. էր. 82:

2) Պատկ. Иселъд. о діал. Арм. языка էր. 103—104:

3) Հայոց լեզուի իրանականութիւնը պաշտպանող լեզուագէտները ՚ի միջի այլոց առել բառի մէջ s մէկնում են s—ի տեղ դրված (Սանսկր. s=Նրան. z), այնպէս որ Սանսկր. ah=հայ. asel, որը փոխարկված է իբր թէ asel—ից բացց այդ ենթադրութիւնը թէ Հայոց asel բառի s յառաջացել է z—ից հերքում է պրօֆ. Պատկանեանը յառաջ բերելով զօկերէն լեզուի այս ձևը (ահիլ), որ Սանսկրիտի հ—ի տեղ տեսնում ենք նոյնպէս h: Паткановъ. О мѣстѣ, занимаемомъ Армянскимъ языкомъ въ кругу Индо-Европейскихъ. 1879 года, стр. 12—13.

Կանոն. եթէ գիմներ Երօգերի հաղորդած հատվածին մենք կը տեսնենք որ այն ժամանակվայ (18 դ.) Ագուլեցոց բարբառին ղեռ յայտնի է՝ «—ի հ փոխվելը, այնպէս որ մենք կարգում ենք՝ նասում, ասա, նասիլ՝ի տեղի այժմեան՝ նահամ, ահա, նահիլ: Կարելի է Երօգերը սխալ է հաղորդում մեզ, բայց կարելի է նոյնպէս որ ճշմարիտ այն ժամանակվայ Ագուլիսի լեզուն չը գիտէր ղեռ «—ի այդպիսի փոփոխումը. այս վերջին ենթադրութիւնը քիչ թէ շատ հաւանական կարող է թւի և այն պատճառով որ 1) միւս օրինակում՝ այսինքն՝ Կանոնը բառում զօկերէնում մինչև այժմ էլ հ—ի հետ միասին գործ է ածվում «, այսինքն Ագուլեցիք ասում են՝ տիհնիմ և տիսնիմ (նոյնպէս Յոնեցիք՝ տեհնում և տեսնում), մինչև անգամ «—ով աւելի գործածական է. 2) Յոնեցոց լեզուում այժմ գործ է ածվում, ճշմարիտ է, ահիլ՝ նահում, ևայլն, բայց մի և նոյն ժամանակը գործածական է և ասիլ՝ նասում, ևայլն և այս վերջին ձևը (այսինքն «—ով) առանց բացառութեան գործածական է այլևոր մարդկանց և պառաւկանանց ու Ագուլեցոց հետ երբեք յարաբերութիւն չունեցողների լեզուում—Այս վերջինների լեզուում (անուանենք այդ՝ հին ցղնեցերէն) մենք նկատում ենք նոյնպէս մի ուրիշ հնութիւն. մենք տեսնում ենք որ ն էլ է փոխվում հ Անցեալ Անգուլնեցիութեան մէջ. ուրեմն ի տեղի Ագուլեցոց և նորագոյն ցղնեցերէնի նրդահած, մոահած, գիրահած, ևայլն մենք լսում ենք ղեռ նրդացած, մոացած, գիրացած, ևն: —Երօգերի յիշեալ օրինակների մէջ կասկածելի է նոյնպէս Ագուլեցոց լեզուի վերաբերմամբ «հ վերջաւորութիւնը նասահ բայի մէջ:

Մ. Երջապէս հ—ի վերաբերեալ նկատելու արժան է նորա գործածութիւնը զօկերէնում ինչպէս հազադ՝ բառի սկսբում. օրինակ՝ ընկեր—զօկ. հինգիլ, ալեռ—հըլաւաւ, արբիլ (հարբիլ)—ադ. հարբիլ—ցղն. հարբիլ: Չայնաւորով սկսվող բառերի սկսբում երբեմն այդ հ—ի աւելանալը իբրև հազադ՝ յատուկ է ոչ միայն զօկերէնին, այլ և ուրիշ հայ բարբառներին, և դա շատ յաճախ պատահում է՝ Վարաբադցոց և Գուղեցոց բարբառներում. օրինակ՝ Վարաբ. հինչ, (ինչ), հու (ու), հիբ (երբ), ևայլն. մինչև անգամ այժմեան

գրականական լեզուում գործածական է դառած՝ հալսոր և առաւել հարբել:

§ 15. յ: Հայոց լեզուի այդ տառը, ինչպէս յայտնի է, իւր արտասանութեան համար որոշում է երեք զիրք՝ բառի սկսբում, միջում և վերջում. բառի վերջումը նա չ'է արտասանւում¹⁾, բառի միջում արտասանւում է ինչպէս եւրոպական յ, իսկ սկսբումը արտասանւում է ինչպէս հ (h): Բայց այս վերջին արտասանութիւնը համեմատաբար աւելի նոր երևոյթ հարկաւոր է համարել՝ այդ տառի աւելի հին, սկսբական արտասանութիւնը եղել է յ, որին նա նման է և իւր արտաքին կերպարանքով: Երգարեւ այդ տառի սկսբական յ արտասանութիւնը հաստատում է այդ տառի յատկութիւնը բառի միջում և վերջում. այդ հաստատում է նոյնպէս և յատուկ անունների արանսկրիպցիան՝ Յուլիանոս—Julianus ևայլն: Բայց եթէ Հայոց լեզուն (գրական) այժմ կորցրել է յ արտասանութիւնը բառի սկսբում²⁾, Ագուլեցոյ բարբառում ընդհակառակ շատ յաճախ լսում ենք յ բառի սկսբում, օրինակ՝ յիտք (կտք, յկտք), յունց (անց), յըրկէ (երեկ), յըմանիլ (իմանալ), ևայլն: Յոնեցոյ լեզուն այս դէպքում՝ երբեմն հետեւում է Ագուլեւի բարբառին և պահում է բառի սկսբին յ, օրինակ՝ յըմանալ, յօնս (ուս), յօնք (ունք, յոնք), ևայլն, երբեմն փոխում է յ, օրինակ՝ յիտք կամ կտք—ադ. յիտք—ցղն. յիտք, անց—ադ. յունց—ցղն. յունց, ևայլն: Աւրեմն Ագուլեւի լեզուն

¹⁾ Վան մի քանի միավանկ բառեր, որոնց վերջումը արտասանւում է՝ այն էլ ինչպէս եւրոպական յ, բայ, վայ, հայ, ևայլն:

²⁾ Միայն ե—ի վերայ մնացել է այդ յ: Ինչպէս յայտնի է ե բառի սկսբում երբեք չ'է արտասանւում է (e), այլ արտասանւում է միշտ յe. Զօկերենը ընդհակառակը բառի սկսբում երբեք յe չ'է գործ ածում, կամ արտասանւում է e (է) կամ փոխւում է ուրիշ ձայնաւորի (§ 2):

պահել է մեզ յ—ի զործածութեան հետքերը Հայոց լեզուի մէջ: Ապացոյց թէ այդ հնչիւնը (յ) մի առանձին՝ օտար բան է՛ է այլ նոյն յ է իւր սկսբնական արտասանութեամբ, մենք տեսնում ենք նորանում որ այդ տառը աւելանում է բառի վերայ՝ նորա սկսբից զանազան բարբառներում և արտասանվում է յ այնտեղ, ուր զօկերէնը (գլխաւորապէս ազուլեցիւրէնը) արտասանվում է յ. օրինակ հէնց նոյն բառը՝ յունց (անց) ցղնեցերէնում արդէն արտասանվում է յունց, առաջ — ծուղեց, յառէջ—զօկ, յառաջ, էգուց—ծուղ, յիգուց—ազ, յօգոց, ևայլն:

§ 16. Միւս բաղաձայնների մասին առանձին խօսելու հարկ չը կայ՝ նոքա կամ մնում են անփոփոխ կամ թէ ենթարկվում են շատ չնչին փոփոխումների: Մենք կը նշանակենք այստեղ միայն մի քանի առանձին դէպքեր: ՚ փոխվում է լ—Արգելական Հրամայականում օրինակ՝ մի գրիչ—զօկ, գլրիլ մն, մի խօսիչ—ազ, խուսիլ մն—ցղն, խօսիլ մն, ևն: Այդ երեւոյթը, այսինքն Հրամայականի այդ ձևում ՚—ի լ փոխվելը յատուկ է ոչ միայն զօկերէնին, այլ և շատ ուրիշ Հայ բարբառների արևելեան ծիւղի, այնպէս որ բաւականին յաճախ պատահում ենք դրականականում անգամ՝ մի գրիլ՝ի տեղի մի գրիչ, ևայլն: լ փոխվում է շ՝ աչք—ցղն, օշի, աչքի—աշիլի, առաջք—առաշի, ևայլն: ա փոխվում է ծ՝ այսպէս—ազ, ասմաս, պիտի, պէտք է—ազ, մնտիլ, մնտմալայ—ցղն, մէտիլ, մէտում այ: Յղնեցերէնի ձևը (մէտիլ, մէտում համ. Վարար, պէտիլ, պէտում այ) նոյնպէս ասմաս բառի մէջ ծ—ի ա—ից յառաջացած լինելը ապացույանում են այն ենթադրութեան անհաւանականութիւնը, իբր թէ մնտիլ=մարթիլ¹⁾: Համեմատ. Ռուսաց (с)МОТ-

1) Патг. Иссл. о діал. Арм. яз. Երես 41:

рѣть — լիհաց. — patrzeć. համ. նոյնպէս մարդ—յունար. — βροτός 'ի տեղե μροτός, իսկ այս վերջինը 'ի տեղե μροτός = mortuus ¹⁾). Յուն. μῦροι — հայ. քիւր. Յուն. ῥώμη — լատ. robur: յ երբեմն փոխվում է դ. արձակ—ադ. անգլի (просторный, ցղն. արգանկ), արձակել—ըրգակիլ. խուրձ—հօրպն—ցղն. խորպն:

§ 17. Խօսելով բաղաձայնների յատկութիւնների վերայ, չ'է կարելի առանց ուշադրութեան թողնել նոյնպէս երկու երեւոյթ բաղաձայն տառերի գործածութեան մէջ զօկերէնում՝ տառերի տեղափոխութիւնը և դ ու ք աւելանալը բառերի միջում արտասանութեան յարմարութեան համար:

1. Տառերի փոխադրութիւնը. օրինակ՝ պղտոր—պրտող, ականջ—անգուճ, ոչխար—ադ. էխչար—ցղն. օխչար, թուրք—ադ. քօրդ, ցղն. քօրթ, ձգել (զցել) — ադ. գլձիլ—ցղ. քլլիլ, և այլն: Այդ տեղափոխութիւնը յատուկ է ոչ միայն զօկերէնին այլ և ուրիշ բարբառներին, ուր մենք նոյնպէս յաճախ տեսնում ենք տառերի և վանկերի տեղափոխութիւնը. օրինակ՝ Վարաբ. ոխճար, անգուճ, մնան (նման), մըհար (համար), և այլն: Այդ երեւոյթը այնքան սովորական է Հայոց լեզուում (բարբառներում), որ մինչև անգամ նոյնը յաճախ տեսնում ենք և գրականական լեզուում. օրինակ՝ Գրեյ որ յառաջացել է յձէլ—ից, կարպետ—կապերտ, գդալ—գդալ, և այլն: Այդ երեւոյթը յատուկ է և ուրիշ լեզուների. օրինակ՝ ռուս. ладонь—длань, և այլն:

2. դ և ք աւելանալը Խառի Ջըն—էվֆօնիկական յարմարութիւնների համար մենք տեսնում ենք հետևեալ օրինակներում. ծանր—զօկ. ծունդր, ծունը—ծունդր, մանր—ադ. մանդր, այնոր (էնոր) — ադ. անդուր — ցղն. ընդուր այսոր

¹⁾ Bopp. Համեմատ. քերական. հատ. I. § 183 b. 1. հատ. II. § 498:

(էսոր) ադ.—աստուր—ցղն. ըստեւր, և այլն: Ինչպէս տեսնում ենք այս օրինակներէց՝ աւելացած է և Գ զնվումեն Ն և ջ, « և ջ մէջ և մի և նոյն ժամանակը նկատելու է որ Ն—ից յետոյ զնվում է Գ, իսկ «—ից յետոյ զնվում է Գ: Նկատելու է նոյնպէս որ այդ է և Գ զնվում են ոչ միայն այն ժամանակ, երբ Ն—ից կամ «—ից յետոյ գալիս է Գ, այլ մինչև անգամ այն ժամանակը եբր այդ է—ի և ջ—ի մէջ տեղում կայ մի ուրիշ ձայնաւոր, օրինակ՝ Էն—ո—ւր (Էն—դ—ո—ւր) —ադ. ան—դ—ու—ւր, ցղ. ընդեւր, էս—ո—ւր (էս—տ—որ) —ադ. աստուր կամ մինչև անգամ երբ ջ էլ չը կայ. օրինակ Էնդ—ոնք, էստոնք և այլն: Այս, հրեոյթը մենք տեսնում ենք նոյնպէս ուրիշ հայ բարբառներում, օրինակ՝ Ղարաբաղցոց ¹⁾, և ուրիշ լեզուներում. համեմատիր, օրինակ՝ Ռուսաց ռամկ. н—д—равъ, с—т—рамъ, с—т—ражение 'ի տեղի нравъ, срамъ, сражение, և այլն. Յուն. ἀντήρ Սեռակ. ἀν—δ—ρός Տրական. ἀν—δ—ρί, πόλις և π—τ—όλις (Նումբր), πόλεμος և π—τ—όλεμος (Նումբ), և այլն : Հարկաւոր է նկատել նոյնպէս է—ի մտնելը Տ և ջ մէջ բառի արտասանութեան յարմարութեան համար, օրինակ՝ համարել—շատ հայ բարբառներում. համ—բ—արել, —զօկ. հըմ—բ—արիլ. համ. Զուղ. ամ—բ—րել = ամբրացնել ²⁾:

Սորանով վերջացնում ենք զօկերէնի տառերի նոցա արտասանութեան և փոփոխումների հետազօտութիւնը և դիմում ենք նոյն բարբառի քերականութեան ձևերի հետազօտութեան:

¹⁾ Патк. Иссл. о діал. Арм. яз. Երես 69:

²⁾ Патк. ibid. Եր. 83:

Գ Լ ՈՒԽ III.

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ:

§ 18. Եթէ մի ընդհանուր հայեացք դրելու լինենք Հայոց արդի գրականական լեզուի վերայ, մենք կը տեսնենք որ այդ լեզուն չ'ունի քերականութիւն բառի այն նշանակութեամբ, ինչպէս մենք սովորաբար հասկանում ենք. մի և նոյն քերականական, օրինակ, վերջաւորութեան համար զանազան ձևեր, այդ ձևերի կամաւոր ընտրողութիւն և գործածութիւն՝ ահա այն յատկութիւնը, որ մի անորոշ և անհաստատ կերպարանք է տալիս նոր հայերէնի քերականութեանը: Հայոց քերականութեան այդ պակասութիւնը յուսահատեցնում է շատերին, որոնք զրաւված լինելով ուրիշ լեզուների քերականութեան կանոնաւորութեամբ և միաձուլութեամբ, մոռանում են որ նոյն այդ լեզուները իրանց գոյութեան սկսբում նոյն դրութեան մէջ են գտնվում եղած, ինչ դրութեան մէջ գտնվում է այժմեան Հայոց գրականական լեզուն. այդ լեզուն գտնվում է դեռ իւր մատաղ հասակի մէջ, չ'է ապրիւ դեռ այնքան և այնպիսի հանգամանքներում, որ կարողանայ արդէն ներկայացնել մեզ մի կանոնաւորված և մշակված քերականութիւն:

Գրականական լեզուի քերականութեանը նայած չ'է հարկաւոր կարծել որ նոյն դրութեան մէջ պիտի լինին և բար-

բառների քերականութիւնները, մինչդեռ գրականական լեզուի քերականութիւնը գրողների միջոցով ենթարկվում է բարբառների ազդեցութեանը, և կախված լինելով գրողի կամքից և ընտրողութենից, ենթարկվում է նոյնպէս և հին լեզուի քերականութեան ազդեցութեանը, — բարբառների քերականութիւնները ազատ են այդ բոլոր անյարմարութիւններից, և թէև չեն մշակված—ով է մինչև այժմ մտածել բարբառների քերականութեան վերայ — այնու ամենայնիւ ամեն մէկը առանձին՝ իւր սեպհական կեանքով ապրելով՝ յառաջ է բերում իւր բնաւորութեան յատուկ քերականութեան կանոններ և կանոնաւոր ու հաստատ քերականական երևոյթներ՝ ինչքան որ հաստատ և որոշ կարող է լինել կենդանի լեզուի և բարբառի քերականութիւնը։ Այդպէս է և զօիկերէնի քերականութիւնը, որի ձևերի հետ մենք այժմ կ'աշխատենք ծանօթացնել ընթերցողին։

I. Ա Ն Ո Ւ Ն ։

§ 19. **Ուղղական հոլով։** Այսպէս Ուղղական հոլովը առանձին վերջաւորութիւններ չ'ունի, որոնցով կարելի լինի վճռել, ինչպէս այդ տեսնում ենք ուրիշ լեզուներում, թէ բառը այս կամ այն տեսակ պիտի հոլովվի։ Ինչպէս յայտնի է, հայերէն մի բառ հոլովելու համար հարկաւոր է իմանալ առաջուց նորա Սեռականը, երբեմն և Գործիականը։ Միայն մի քանի դէպքերում Ուղղականը վճռում է բառի հոլովումը, ներկայացնելով իւր վերջին վանկով մի որոշ վերջաւորութիւն. այդ դէպքերն են Ուղղականի (Ն)իւն և ի վերջաւորութիւնները։ Անհ հայերէնում մի քանի ուրիշ դէպքեր էլ, բայց խօսքնիս ընդհանուր հայերէնի վերայ չը լինելով, կը բաւականանք այստեղ եզակի Ուղղականի այս երկու վերջաւորութիւններով։

որոնք զօկերէնի հօլովման համար նոյն նշանակութիւնը ունին, ինչ նշանակութիւն որ ունին գրականականի համար:

Օւանթ. Խէն — ի արտասանութեան, երբեմն Խէն փոխվելու և շեշտի մասին տես § 4, ծան. 3, § 8:

Յոգնակն Ուղղականը ունի մի քանի վերջաւորութիւններ. աբ, եր, +, ա+, ու+, անի+, աբի+, ան+ (էան+): Այս վերջաւորութիւններից պրօֆ. Պատկանեանը յիշում է միայն աբ (աբ), ընդունելով նորան իբրև ընդհանուր վերջաւորութիւն առհասարակ յոգնակի Ուղղականի ¹⁾, որի տեղ, նորա կարծիքով ²⁾, երբեմն գործ է ածվում նոյնպէս ներ, +, աբի+: Մենք այս բուպէիս կը տեսնենք որ այդ վերջաւորութիւններից ամեն մէկը ունի իւր գործածութեան տեղը և մշտական օրէնքը:

1. աբ: Յոգնակի Ուղղականում այս վերջաւորութիւնը ընդունում են բոլոր Դաւանի և բաղաձայնով վերջացող բառերը. օրինակ՝ բառ—յող. Ուղ. բառար ³⁾, սօր (սար)—սարար, քօր (քար)—քարար, և այլն: Այս օրէնքին չեն հետևում այն միավանկ բառերը, որոնք սկսվում են երկու բաղաձայն տառերով, մի և նոյն է՝ բնական լինին դոքա թէ ձայնաւորի կորչելուց յառաջացած. թօր (թուր)—ադ. թրեր, կուվ (կով)—կվեր, գրօկ—գրօկներ (կրակ), ճրօդ—ճրօգներ, և այլն: Նկատելու արժան է, որ ցղնեցերէնը որոշում է այն դէպքը, երբ բառի սկսքու մ երկու բաղաձայն պատահում են իրար՝ ձայնաւորի կորչելու պատճառով, այն դէպքից, երբ բառի սկսքում երկու բաղաձայնները բնական են: Յոգնեցոց լեզուն, ասում ենք, որոշում է այդ երկու դէպքերը իրարից, և որոշում է

1) Патк. Иссл. о діал. Арм. яз. кр. 42:

2) Ibid. кр. 43, ծանօթ. 3:

3) Այստեղ կրկին յիշում ենք, որ ինչպէզ շեշտը չենք նշանակած, այնտեղ շեշտը դնելու է զօկերէնի շեշտադրութեան օրէնքին համեմատ. § 8:

նորանով որ առաջին դէպքի համար, հակառակ Ազուլեցոց լեզուին, պահում է (կանոնաւորապէս) աբ վերջաւորութիւնը, օր. թօր (թուր)—ցղ. թրար, կով—ցղ. կվար, Լայլն, մինչդեռ երկրորդ դէպքի համար, ինչպէս և Ազուլիսի բարբառը, գործ է ածվում եր վերջաւորութիւնը, օրինակ՝ կրակներ—ցղն. կյրօկներ, ճրօքներ, Լայլն: Աբ վերջաւորութեան մասին, որ հաւասար է գրականական եր և որը չ'ենք պատահում ուրիշ զօկերէնին հարեան բարբառներում տես նոյնպէս § 2: Նկատելու արժան է այն, որ Ուղղական յոգն. կազմելու համար աբ վերջաւորութեան և բառի արմատի մէջ չ'է մտնում ն տառը, ինչպէս որ մտնում է եր վերջ. և արմատի մէջ (—ն—եր). Այս միայն մի բառ, որ ընդունում է ն՝ աբ—ի և արմատի մէջ (—ն—ար), այդ է՝ հօրա (հարս), որ կազմում է Ուղղական յոգնակի՝ հարս—ն—ար, բայց և այդ բառի համար էլ ոչ սակաւ գործածական է հարս—ար: Յիշելու է նոյնպէս աբ (ոտ) բառը, որի յոգն. ազուլ.—ատ—ն—ար. այս վերջին ձևը միակն է և մշտականը ցղնեցերէնի համար:

2. եր (—ն—եր): Այս վերջաւորութիւնը փոխարինելով հին + գործ է ածվում այժմեան գրականական լեզուում շատ քիչ բացառութեամբ իբրեւ միակ վերջաւորութիւն յոգնակի Ուղղականի. նոյնպէս և զօկերէնում տեսնում ենք նորան իբրեւ ամենայնաձախ գործածվող վերջաւորութիւն յոգն. Ուղղականի, միայն թէ զօկերէնում նորա գործածութիւնը այնքան ընդարձակ չ'է, ինչքան գրականականում: մինչդեռ այս վերջինում՝ մասամբ բնականաբար, մասամբ շինծու կերպով՝ եր, ինչպէս ասացինք, փոքրիկ բացառութեամբ համարեա միակ վերջաւորութիւն է կազմում, յոգնակի Ուղղականի համար զօկերէնում դորա գործածութիւնը սահմանափակվում է այն դէպքերով, ուր վերոյիշեալ միւս վերջաւորութիւնները տեղի չ'ունին: Աւրեմն որոշել թէ ինչ դէպքերում է գործածվում

Եր վերջաւորութիւնը կարելի է միայն այն ժամանակ, երբ յիշվին բոլոր այն դէպքերը, որոնց մէջ գործածական են միացեալ վերջաւորութիւնները: Մենք գիտենք արդէն մի դէպք, ուր եր չ'է գործածվում, այլ գործ է ածվում աբ. մի և նոյն տեղում մենք պարզ տեսնում ենք, երբ է ընդհակառակը աբ—ի տեղ գործ ածվում եր: Ինչ վերաբերում է ն տառին, որ մտնում է երբեմն բառի արմատի և եր վերջաւորութեան մէջ, զօհրէնում դա ոչինչ բացատրական դէպքեր չ'է ներկայացնում մեզ զրականականին և ուրիշ բարբառների համեմատած. այլ ընդհակառակը կարելի է մի օրէնք դուրս բերել, որ ընդհանուր է առաջինին և վերջիններին, այն է՝ եթէ միավանկ բառը իւր եզակի Ուղղականում սկսվում է կամ վերջանում է երկու բաղաձայն տառերով ¹⁾, այն ժամանակ արմատի և եր վերջաւորութեան մէջ մտնում է ն տառը, օրինակ՝ տրեխ—յոգն. տրեխներ—ադ. տրեհ—ն—եր, ցդն. տրեխ—ն—եր, զլուխ—յոգ. զլուխ—ն—եր, ագ. զլուհ—ն—եր, ցդն. կլուխ—ն—եր, և այլն, իսկ բաղմնավանկ բառերի յոգնակում այդ ն մշտական է. պատկեր—ն—եր, աշակերտ—ն—եր. ևն:

3. +: Յոգնակի Ուղղականի այս վերջաւորութիւնը գործ է ածվում այն բառերի համար, որոնց եզակի Ուղղականը վերջանում է ձայնաւոր տառով: Այդ օրէնքին ամենահաստատ կերպով հեւեւում են ի—ով վերջացած անունները. օրինակ՝ Ագուլեցի—ադ. ըզյըւսցի—յոգն. ըզյըւսցիք, ցդն. ըզյըւցի—յոգ. ըզյըւցիք, Թշնամի—Թշնամիք, տարի—տարիք (—իք վերջաւոր. արտաս. իք § 12):

¹⁾ Արովհտե երկու բաղաձայնների մէջ լսվում է կիսաձայն ը, ուրեմն այդ միասին դրած երկու բաղաձայնները կէս վանկի նշանակութիւն ունին (կէս կամ սո—ղ վանկ), այդ պատճառով այդպիսի անունները մէկ ու կէս վանկ ունեցող անուններ են անուանվում: Այսպէս. Քննական քերականութիւն արդէ հայերէն լեզուի. Անուն. 18 և ծանօթ:

4. աս, աս: Այս երկու վերջաւորութիւնները յառաջացել են (է)ան վերջաւորութիւնից: Իսկապէս այստեղ յոգնակու վերջաւորութիւնը + է, որը դնվում է գրականականում (է)ան վերջաւորութեան վերայ, որից յառաջանում է (է)ան: 'Նկատելու է մի երկույթ՝ զգէլէնում + — է աւաջ ն ձեւ կորում է 1), ուրեմն ստանում ենք աս, որը երբեմն փոխվում է աս. աս — ի մէջ, որ յառաջացել է, ասում ենք, ան+ — ից, աս — ի օ — ի միջոցով աս փոխվելու մասին տես § 1: Ուրեմն աս վերջաւորութիւնը կարող է յառաջացած լինել անմիջապէս և ան+ — ից. օրինակ՝ շատան+ — զօկ. շատաս+ — մերան+ — զօկ. միրո+ — և այլն: Ուրեմն զօկերէն այս վանիք պիտի պատահենք միշտ այնտեղ, ուր գրականականում տեսնում ենք (է)ան. և արդարեւ բոլոր ազգանունները զօկերէնում վերջանում են աս, աս, որ Համապատասխան է գրականական էան վերջաւորութեանը. օրինակ՝ Վարդանեանք — զօկ. Վարթանաք 2), Սարապետեանք — Սարապետաք, Խաչատրեանք — Խաչատրութք, Պողոսեանք — Պուղլութք, և այլն. նոյնպէս իւրեանք կամ իւրանք — զօկ. յիւաք (իւրաք), տրանք — զօկ. պուք, զրանք — դրութք, նրանք — նրութք, և այլն: Ինչ վերաբերում է այն Հարցին, թէ երբ է անունը վերջանում աս և երբ աս այդ կախված է նորանից, թէ ինչպէս է վերջանում այն յատուկ անունի եզակի Սեռականը, որից յառաջացել է աղբանունը. իսկ յատուկ անունի եզ. Սեռականը վերջանում է կամ աչ կամ օչ (կարգա. օ): Եթէ յատուկ անունի Սեռականը վերջանում է

1) Այդ մէք կը տեսնենք և բացերում և ուրիշ դէպքերում:

2) Ուրեմն Հայոց ազգանունների մասին վեճողներից էան վերջաւորութիւն պաշտպանողները մի ապացոյց աւել ունին. էանց վերջաւորութիւնը, այսինքն՝ նոր մտքով եզ. Ուղղ. Զօկերը բոլորովին չ'ունին. իսկ աչ և օչ որ պատահում ենք այդ բարձրագույն երբեք առանց գոյականի չ'են դարձ անվում (Քննարկաց տղան — Գնացարեանց տղան, և այլն), ուրեմն կազմում են միայն աս և աս Ուղղականի Սեռականը:

այ, այդպիսի անունից յառաջացած ազգանունը վերջանում է առ. եթէ յատուկ ան. Սեռ. վերջանում է ջ (օ) — այդ յատուկ անունից կազմված ազգանունը վերջանում է առ: Աւրին Հարկաւոր է իմանալ՝ երբ է յատուկ անունի Սեռականը վերջանում այ և երբ ջ (օ), դորա մասին կը խօսենք ներքե (§ 20): Օրինակներ՝

առաջին դէպքի Համար (այսինքն՝ երբ յատուկ անունի Սեռականը վերջանում է այ § 20, 4, ա):

յատուկ Վարդան — Սեռ.	Վարդան — այ — ազգ.	Վարդան — ար
անուն՝ Հայրապետ	— Հայրապետ — այ	— Հայրապետ — ար
Բաղդասար	— Բաղդասար — այ	— Բաղդասար — ար

երկրորդ դէպքի Համար (այսինքն՝ երբ յատուկ անունի Սեռականը վերջանում է ջ (օ) § 20, 4, ա):

Աղուի (Յակոր) — Աղւի — ջ	— Աղւի — ար
կամ Աղուի — ջ	— Աղուի — ար
Սարգիս — Սարգիւս — ջ	— Սարգիւս — ար
յղն. Սարգիս — Սարգիւս — ջ	— Սարգիւս — ար
Խաչատուր — Խաչատր — ջ	— Խաչատր — ար
Բայց Խաչատուր — այ	— Խաչատուր — ար
Պիտրուս — Պիտրուս — ջ	— Պիտրուս — ար
Բայց Պիտրուս — այ	— Պիտրուս — ար, ևն.

Նոյն բանը Հաստատում են և վերե յիշեալ դերանունները յիւր (կամ իւր) — Սեռական. յիւրան — յոգ. Ուղղ. յիւր — ար կամ իւր — ար (կամ իւր — ար

(Համեմատիր նոր Հայերէն իրայ)

նո (նա) — Սեռ. նրո (նրա) — յոգ. Ուղղ. նր — ար, ևն.

5. Ասի, անի, անի, անի: Այս վերջաւորութիւններից առկն մէկը բաղկացած է երկու մասից՝ ատի + ք, արի + ք, անի + ք, ան + ք, ան + ք, որոնցից յոգնակի թւի նշանը իսկապէս + է, իսկ միւս մասերը՝ ատի —, արի —, անի —, ան —,

հան—, այնպիսի վերջաւորութիւններ են, որոնք իրանք իրանց առանց +—ի օգնութեան ցոյց են տալիս առարկայի բազմութիւնը, բայց ոչ այն բազմութիւնը, որ մենք հասկանում ենք յոգնակի նշանակութեամբ, այլ հաւաքական մտքով: Թէև այդ վերջաւորութիւնները հաւաքական նշանակութիւն են տալիս առարկային, այնու ամենայնիւ մի քանիսը նոցանից, դոնեա զօկերէնում, երբեմն միակ վերջաւորութիւն են լինում մի քանի բառերի յոգնակի կազմելու համար: Վերենք այստեղ օրինակներ այդ վերջաւորութիւններից ամեն մէկի համար առանձին:

ա. ապէ+յ=զրակ. ապէ+, որի * փոխվել է զօկերէնում ա՝ ոսկերոտի կամ ոսկերոտիք — զօկ. ըսկրոատի կամ ըսկրոատիք կողք (զօկ. կուղք) բառի համար զօկերէնում կայ՝ կուղք — արև կրղբըր — ատի կամ կրղբրատիք, և այլն:

բ. աբէ+յ=զրական. որայ+—որէ+, ուր * փոխվել է զօկերէնում ա, իսկ աչ կամ է խոխվել է չ՝ մի երևոյթ, որ բաւականին սակաւ է պատահում զօկերէնում, և մինչև անգամ կարելի է տեսնել հակառակ է նորա ոգուն. բայց այնու ամենայնիւ կան օրինակներ: Այդ վերջաւորութիւնը կազմված է նոյնպէս արի+ք. օրինակներ՝ ջուր, զօի ջուր (ցղ. ճուր) — յոգ. ջըսրի և ջըսրիք, դիր կամ գիրք (ցղն. կիր, կիրք) — յոգ. զրսրի և զրսրիք, զրքսրի և զրքսրիք, կաօր (կոուր) — կտօրներ, կտրնարի և կտրնարիք, և այլն:

գ. աւէ+յ=զրակ. աւէ+. օրինակներ՝ կնիկ — ագ. կնակյ ցղն. կնէկյ — յոգ. կնանիք, տաւար — զօկ. տաւար — յոգն. տըւրոանիք, այգի — ագ. էգի, ցղն. էքի — յոգ. ըգլընանիք և ըգլընանի (ցղն. ըքլընանի և ըքլընանիք), տունիկ — ագ. տնգայ, ցղ. տնգէ ¹⁾ — յոգն. տնգընանի, տնգընանիք, և այլն: Վերջին եր-

1) ք — ի արտասանութեան մասին այս գէպըրում տես § 11, ծանօթ. 1:

կու օրինակների մէջ՝ ըգլընանիք, անգլընանիք, մենք պարզ նկատում ենք որ եղակի Ուղղականի վերջին ձայնաւորը (է՝ էդի, էքի, աչ կարդա ա, անգայ և ցղն, է՝ տնգէ) կրճատվում է ը, և արտասանութեան Հիշտութեան համար բառի արմատի և անի+ վերջաւորութեան մէջ աւելանում է ն՝ տնգը—ն—անիք, ըգլը—ն—անիք, և այլն:

դ. ան+, էան+. մի քանի միավանկ բառերի համար՝ դիր կամ գիրք—յոգ. ագ. գլրեանք, ցղն. կլրանք, ձի—ադ. ձիանք, ցղն. ծիանք, ձու—ադ. ձով—յոգն. ագ. ձվանք. ցղն. ծվանք:

Ինչպէս գրականական և ուրիշ բարբառներում, այնպէս էլ զօկերէնում այս վերջին երկու վերջաւորութիւնները առանց +—ի գործ չեն ածվում, մինչդեռ միւս վերջաւորութիւնները (ատիք, անիք, արիք) գործ են ածվում +—ով և առանց +—ի. բայց և սոցա համար նկատելու է որ գլխաւորապէս և աւելի յաճախ +—ով են գործ ածվում քան թէ առանց +—ի. անի, ան, էան համեմ. պարսկ. յոգնակի կազմող ۛ) —ի հետ: Այս բոլոր վերջաւորութիւնների մասին վերջապէս նկատելու է որ նոքա, մի քանի բառերի բացառութեամբ, միայն մի որոշ գոյն են տալիս բառին (օրինակ՝ հաւաքականութիւն) և չեն արգելում մի և նոյն բառերի համար աբ, էբ, + վերջաւորութիւնների գործածութիւնը, որոնք այնու ամենայնիւ միում են յոգն. Ուղղականի համար իրանց կանոնաւոր գործածութիւնը և մշտական տեղը ունեցող վերջաւորութիւններ: Բայց կան զօկերէնում մի քանի բառեր, որոնց յոգնակին կազմելու համար աբ, էբ, + հարկաւոր չեն դալիս. օրինակ՝ կնիկ, ադ. կնակի, ցղն. կնէկի—յոգ. կնանիք. ձի, ադ. ձի, ցղն. ձի—յոգ. ձիանք (ցղն. ծիանք):

§ 20. Աւետական հոգւէ Վերսե (§ 19) մենք տաայլնք թէ հայոց լեզուի մի բառ հոլովելու համար բառ մեծի մասին հարկաւոր է իմանալ տառջուց նորա Աւետանը, բայց այդ

3. Բացի յիշեալ երկու դէպքերից և յատուկ անուններից, ծնայեալ քուրջ անունները իրանց Ան-սան-ն-մ փերճան-մ են և (III): Այս հորովման հետեւում են ուրեմն բոլոր այն անունները, որոնք եզ. Ազղականում մի որոշ վերջաւորութիւն չ'ունին, իսկ յատուկ անունները իրանք իրանց արդէն որոշվում են. շտ (շատ) — Սեռ. շատի, կատու — կատուի (արտ. կատվի), և այլն:

Նշանօք. Ինչպէս այստեղ, այնպէս էլ միւս դէպքերի համար, նկատելու է որ ձայնաւորով (կամ ա որ—ա) վերջացած անունները՝ հասարակ թէ յատուկ՝ ընդունում են միւս հորովների վերջաւորութիւնները (բացի յոգ. Ազղ.) ոչ թէ աւելացնելով եզ. Ազղականի ձայնաւորի վերայ, այլ նորա փոխարէն. օրինակ՝ եկեղեց — ի, Սեռ. եկեղեց — ու, ըխօյ (արտ. ըխօ — երեխայ) — ըխ — ի, Ճընափա՝ Ճընրփ — ի. Խաչի՝ Խաչ — այ, և այլն: Բացառութիւն կազմում են գրականական յատկութիւն ունեցող բառերը, ինչպէս՝ վկայ (Ազղ. շատ ժամ. վկայ արտ. վկօ) — Սեռ. վկայի, ծառայ — ծառայի. Բացառութիւն կազմում են նշնայեալ քուրջ — փերճացած անունները՝ կատու — կատուի (կարգա՝ կատվի), Բաքու — Բաքուի (= Բաքվի), և այլն:

4. Յատուկ անունների Անուականը որոշելու համար հարկաւոր է՝ ի նկատի ունենալ նոցա այս երկու նշանակութիւնը ա) մարդու անուն և ի) տեղի անուն:

ա) Ճարդոս — անուն նշանակող յատուկ անունները վերջաւորւմ են իրանց եզ. Անուականումայ (արտ. ա), որը փոխվում է օյ (արտ. օ), եթէ բառի շեշտը ընկնում է այդ վանկի վերայ: Համա. ա չին հայերէնի յատ. անուն. Անուակ. համար: Աւրեմն թէ ո՞րը այս երկու վերջաւորութիւններից պիտի գործածվի յատուկ անունի Անուականի համար, այդ հարկած է շեշտից. եթէ Անուականում բառի շեշտը անցնում է բառի վերջին վանկի վերայ գործ է ածվում օյ(օ), եթէ ոչ՝ մնում է ա: Բայց ի՞նչպէս իմացվի թէ շեշտը Անուականում վերջին վանկի վերայ է

Թէ ոչ: Ինչ թուում է թէ դորա համար մի այսպիսի օրէնք
կարելի է դուրս բերել: Եթէ յատուկ անունն Ուղղականում
վերջին վանկում դանվում է այս ձայնաւորներէց մէկը՝ է կամ
« (բնական կամ «—ից յատաճացած), Սեռականում շեշտը
անցնում է վերջին վանկի վերայ, և ուրեմն վերջաւորութիւնը
լինում է չ, իսկ եթէ Ուղղականի վերջին վանկը պարունա-
կում է « կամ է (այսինքն հնչւն Ե) ձայնաւորներէց մէկը,
այն ժամանակ շեշտը չ'է անցնում վերջին վանկի վերայ, և ու-
րեմն Սեռականի վերջաւորութիւնը մնում է ա, օրինակներ՝

Սարգիս — Սեռ. Սարգիս — չ, (կամ Սարգիւս — չ).

Պիւղոս (Պողոս) — Պուղոս — չ.

Լ'կուփ (Յակոբ) — Ակուփ — չ.

Թումաս (Թումաս) — Թումաս — ա.

Քասպար (Քասպար) — Քասպար — ա.

Սուբէն — Ռուբէն — ա, և այլն:

Թէ ինչ աստիճան այդ վերջաւորութիւնները կախումն
ունին շեշտից, պարզ կրեւում է նորանից որ մի քանի անուններ,
որոնք իրանց Սեռականում ընդունում են չ, շեշտի յիշեալ
օրէնքը խանգարվելու պէս (այսինքն՝ երբոր Սեռականում չ'է
անցնում վերջին վանկի վերայ) չ' փոխում են ա, օրինակ՝

Պիտրոս (Պետրոս) — Պիտրոս — չ, բայց՝ Պիտրոս — ա

Լեւոն — Աւետիս — չ, բայց՝ Աւետիս — ա, և այլն:

Հանգ. 1. է վերջացած յատուկ անունները ընդունում են կանո-
նաւորապէս յատուկ անունների Սեռականի յիշեալ վերջաւորութիւն-
ները և ոչ « (ա. 1). և որովհետեւ այդպիսի անունները ընդունում են
Սեռականի և միւս հարմիրների վերջաւորութիւնները ոչ թէ աւելաց-
նելով է վերայ այլ նորա փոխարէն (ա. 3), ուրեմն շեշտը կը մնայ այդ
վերջաւորութիւնների վերայ, եթէ Ուղղականում է ունէր բառի շեշ-
տը իւր վերայ: Մենք արդէն գիտենք թէ ինչի համար է հարկաւոր
մեզ այս նկատողութիւնը շեշտի մասին. օրինակ՝

(**Օվի** (նուազակ. Յովհաննէս—Օվանէս—ղօկ. Օվանիս) Օվայ
 Խաչի (նուազակ. Խաչատուր անունի) Խաչայ
 Խայց Խայի (Խայի) — Խայ — Յ
 Լճի օրէնքին հետեւում են և Ուղղակ. ա վերջացած յատուկ անուն-
 ները՝ Մարքարայ — Մարքար — Յ
 Երեմեայ — Երեմե — Յ, և այլն:

Լճատեղ տեղն է նկատելու, որ գրականական լեզուում
 և ուրիշ բարբառներում գործածվող յատուկ անունների
 նուազական ի մասնիկը զօկերէնում կորցրել է ի պահելով
 միայն ի. օրինակ՝ Խաչիկ — զօկ. Խաչ (համեմ. ուրիշ բարբ.
 Խաչօ, Խէչօ), Օվիկ — զօկ. Օվի, Շուշանիկ — Շտշի, ևն.
 (համ. Ղարար. Ստեփ — զօկ. Ստեփ): Բայց ի (ի — ից կրու-
 ճատված) զօկերէնը, ուրիշ բարբառների և լեզուների նման,
 շատ ուրիշ միջոցներ ունի նուազական անուններ կազմե-
 լու համար:

Ծանօթ. 2. Որովհետեւ Յ վերջաւորութիւնը միեւնոյն՝ միայն կեր-
 պարանաւորութիւն է, այդ պատճառով մենք ուղղագրութեան հա-
 մար պահում ենք յ, թէև նա չէ արտասանվում ինչպէս և ա մէջ: Ե
 հնչիւնը մենք նշանակում ենք օ և ոչ ո՛, նորա « — ից փոխված լինելը
 ցոյց տալու համար (§ 5. ծան. 1):

Ծանօթ. 3. ա և Յ զանազանութիւնը ազգանուն կազմելու համար
 տես § 19, 4:

Յ. Տեղի անունները (երկրի, գիւղի, քաղաքի) զօկերէնում
 վերջանում են Սեւական հոլովում ա կամ ի: Թէ որ անունի
 համար որը այս վերջաւորութիւններից պիտի գործածվի,
 այդ դժվար է որոշել և կարծեմ հարկաւորութիւն էլ չը կայ,
 որովհետեւ ինչքան կարելի է նշմարել՝ մէ և նոյն անունի համար
 երկու վերջաւորումներն էլ գործածական են, միայն հարկա-
 ւոր է աւելացնել որ 1) ա գլխաւորապէս տիրում է Ագուլե-
 ցոյ լեզուում, իսկ ի — Յզնեցոյ. 2) և Ագուլեցոյ և Յզնեցոյ

լեզուում իսկ կամ աչ (կարգա ա) և ի վերջացած տեղերի ա-
նունների Առականը անպատճառ վերջանում է ա (Համեմ.
Հին Հայ. ոչ. Ուստիա — Ուստիոյ, Գաղղեա — Գաղղեոյ,
Լայլն) իսկ «բան վերջացածները ունին Առականը զխառ-
րապէս ի (ստան — ի). օրինակներ՝ Ասիա — Ասիու, Եւրո-
պա — Եւրոպու, Յաղնայ — Յղու, Ազա — Ազու ¹⁾, Ստոպի
Ստոպու, Հայաստան — Հայաստանի, Լայլն:

5. Ժամանակ ցոյց գիւղ անոնեքի Առականը վերջանում
է աւայ, որը արտասանվում է լայ, ուստի և գրվում է սովո-
րաբար լայ: Այդ տեսակ բառերը վերջանում են այդպէս ոչ
միայն զօկերէնում, այլ և ուրիշ բարբառներում նոյնպէս և
գրականական լեզուում. օրինակ՝ տարի — տարվայ, օր — օր-
վայ, Լայլն: Այսինքն այդ տեսակ անունների Առականին
տալիս է «ան ²⁾ վերջաւորութիւնը և ոչ աւայ (վայ), ինչ-
պէս է արևելեան Հայերէնում: Բայց և այս վերջինի բար-
բառներում մենք պատահում ենք «ան (վան) ՚ի տեղի աւայ
(վայ). օրինակ՝ մի օրվայ Համար, մի տարվայ Համար, բայց
նոյնպէս՝ մի օրվան Համար, մի տարվան Համար. ագ. ասար-
վան օրս, մոյն քշարվան մաջ (մի գիշերվայ մէջ). կան մինչև
անգամ օրինակներ, որոնց մէջ ուղղակի լսվում է ան վերջա-
ւորութիւնը առանց «(վ)՝ քշարան կէսը (գիշերվայ կէսը),
ասարան օրս, ասարան հոլջա, հօի գարունքվան կամ գարուն-
քան հստի, Լայլն: Ժամանակ ցոյց սովոլ բառերի Առա-
կանը իսկապէս «ան (վան) Համարելու է, որ կրճատվում է
(այն էլ ոչ ամեն ժամանակ) աւայ (վայ). այդ տեսակ կրճատ-

¹⁾ Յղնայից 15 վերստ հեռավորութիւն ունեցող մի գիւղ է. որի լեզուն այնուամենայ-
նիստ չի կորցնում իր անունների հետ. սաստիկ խառն է Թուրքերէնի հետ. այդ
գիւղի Հայերը գաղթական Հայեր են:

²⁾ Այսինքն. Բնական քերական. արդի Հայերէն լեզուի. 28:

ման օրինակ է և աղջիկ բառի Սեռականը՝ աղջկայ 'ի տեղի՝ աղջկան: Այդ (ս)ան և նորանից կրճատված (ս)այ վերջաւորութիւնները յիշեցնում են մեզ ածականների ան և ալ վերջաւորութիւնները (ան, ալ, եան, եալ)՝ երեկոյան, առաւօտեան, ժամանակեայ, այժմեան, ևայլն:

Նշանել. ժամանակ ցոյց տվող բառերի Սեռականը ան (վան) կամ աս (վայ) վերջաւոր. փոխարէն երբեմն ընդունում է իւր վերջաւորութիւնը վերև յիշած կանոնների համեմատ:

բ. Յոգնակի:

1. Ել — ի: Այն անունները, որոնց յոգնակի Ուղղականը վերջանում է ալ, ել (§ 19, 1, 2) կազմում են իրանց Սեռականը աւելացնելով Ուղղականի այդ վերջաւորութիւնների վերայ ի, որի սկզբից ալ փոխվում է արդէն ել (§ 2), այնպէս որ Ուղղական՝ սար—ար, բայց Սեռակ՝ սար—եր—ի, թղթար—թղթ—եր—ի, ևայլն. կարաս—ն—եր, Սեռ. կարաս—ն—եր—ի, ևն: Յոգնակի Ուղղականում +—ով վերջացած անունները կազմում են իրանց յոգնակի Սեռականը և միւս հոլովները այնպէս, իբր թէ նոքա վերջացած լինին Ուղղականում ել և ոչ +: Ուրեմն այն բառերը, որոնք եղակի Ուղղականում ձայնաւորով են վերջանում (§ 19, 3)—այդ տեսակ բառերը՝ յոգնակի Սեռականը և մնացեալ հոլովները կազմելու համար՝ ընդունում են ել վանկը, որի վերայ աւելացնում են հոլովի համեմատ վերջաւորութիւն. այսինքն Սեռականի համար՝ ի, գործխականի՝ աւ, ևայլն. և որովհետեւ այդ անունները վերջանում են ձայնաւորով, այդ պատճառով էլ բառի և ել—ի մէջ մանում է ն. օրինակ քեռի, ագ. քանի յոգ. Ուր. քանի—ք. բայց սեռ. քանի—ն—եր—ի, կատու—յոգ. ուղ. կատու—ք, բայց սեռ. կատու—ն—եր—ի, ևայլն:

Օրինակ. Բնակիչների անուն նշանակող բառերը, որոնք վերջանում են ազ. աչ (յղն. եցի) կամ չի և կազմում են իրանց յոգնակի Ուղղականը + ի միջոցով յոգնակի Սեռականը և մնացեալ հոլովները կազմելու չեն հետևում յիշեալ օրէնքին, այլ ընդունում են յոգ. Սեռ. աչ՝ աչ (յղն. եցի) վերջացածների համար, աչ՝ չի վերջացածների համար. օրինակ ըգլըլացի (յղն. ըգլըլեցի) — Սեռ. յոգն. ըգլըլաց — աչ (յղն. ըգլըլեցաց), Տընըկրտացի — Սեռ. յոգն. Տընըկրտաց — աչ, Ազըցի — Ազըցուց, Հաշտարխանցի — Հաշտարխանցուց, Վանըցի Վանըցուց կային: Յղնեցերէնում էջի (= ազ. աչի) վերջացածների համար էլ յաճախ գործ է անվում այս վերջին (ուց) վերջաւորութիւնը. օրինակ՝ Յղնեցի — Յղնեցաց և Յղնեցուց, կային:

2. (ա)չ, (ա)ց: Յոգնակի Ուղղականում ա +, ա + (§ 19, 4) վերջացող անունները կազմում են իրանց Սեռականը միայն + փոխելով չ, ուրեմն այդ անունների Սեռականը լինում է աչ, աչ՝ Իսողխասարաք — Սեռ. Իսողխասարաց, Խաչատրութ — Սեռ. Խաչատրուց, յիրաք — յիրաց, նրութ — նրուց, միրութ — միրուց, կային:

3. աչ: Այս տեսակ վերջանում է այն անունների յոգ. Սեռականը, որոնք կազմում են իրանց յոգնակի Ուղղականը աբի +, աբի +, անի +, ան +, էան + նոյնպէս և ի + լի (մարդիք = մարդիկ) վերջաւորութիւնների օգնութեամբ. սոցա + փոխվում է չ, որի առջև երևում է ա (աց). այդ ա — ին տեղի է տալիս ի (համեմ. բնակիչների անուն ցոյց տվող բառերի յոգն. Սեռ.), այնպէս որ ստանում ենք՝ աա — աչ, ար — աչ, ան — աչ, հան — աչ. օրինակ՝ ըսկըրտաիք — ըսկըրտաց, անարիք — անարաց, կնանիք — կնանաց, ձիանք — ձիանաց, գրեանք — գրեանաց, նոյնպէս մարդիք (ի տեղի մարդիկ) — մարդկաց, կային: Այս տեսակ վերջանում են և մի քանի ուրիշ բառեր, որոնք + ի առաջ ունին նոյնպէս յոգնակի նշանակող էր, աչ վերջաւորութիւնները. օրինակ՝ տղ — ար — ք, ըխ — ար — ք, Սեռակ. տղ — ար — աչ, ըխ — ար — աչ, կային:

§ 21. Տրական և Հայցական հ: Ինչպէս որ գրականականում և ուրիշ բարբառներում, այնպէս էլ զօկերէնում այս Հոլով-ներից առաջինը իւր վերջաւորութեամբ նման է Առականին, երկրորդը՝ շնչաւոր առարկաների համար — Առականին, իսկ անշունչ առարկաների համար — Ազղականին. այնպէս որ այս Հոլովների մասին առանձին խօսալու հարկաւորութիւն չը կայ. միայն յարուստ անուններէ վերաբերեալ հարկաւոր է նկատել զօկերէնի մի փոքրիկ զանազանութիւն գրականականից և ուրիշ բարբառներից. մինչդեռ այս վերջիններում յատուկ անունների Տրական և Հայցական Հոլովները ընդունում են իրանց վերջից ցուցական ն յօդը, զօկերէնը չ'է ընդունում այս Հոլովներում յիշեալ յօդը. օրինակ՝ գրակ. տվէք այս գիրքը Աարապետին — ադ. տվւհիք) աս գիրքը Աարապետայ. գրակ. ես տեսայ Յովհաննէսին — ադ. իս տահամ Օվանիսայ, և այլն:

Նշանք. 1. Այդ ն — ի վերաբերեալ նոյնը տեսնում ենք և ցուցական սա, դա, նա — զօկ. սո, դո, նո գերանուններում, որոնց Տրականը և յաճախ նոյնպէս Հայցականը գրակ. տորան, դորան, նորան — զօկ. միշտ՝ սրօ, դրօ, նրօ:

Նշանք. 2. Մենք ասացինք թէ՛ շնչաւոր առարկաների Հայցականը իւր վերջաւորութեամբ նման է Առականին (Համեմատ. Ռուս.). բայց հարկաւոր է աւելացնել՝ եթէ այդ շնչաւոր առարկան անորոշ է, այն ժամանակ դորա Հայցականը նմանում է Ազղականին և ոչ Առականին. օրինակ այլ է՝ մարդ վարձեցի, ընկեր ծարեցի, աւաղակ սպանեցի, այլ է՝ մարդուն վարձեցի, ընկերիս հեռացրի, աւաղակին սպանեցի, և այլն. նոյն տարբերութիւնը տեսնում ենք և զօկերէնում:

§ 22. Բացարտական հ: Չօկերէնում այս Հոլովի կազմվելու եղանակը կարելի է բաժանել երկու՝ 1) Առականում է, որ (§ 20, 1, 2) վերջացած անունները կազմում են իրանց Բացարտականը աւելացնելով ց Առականի այդ վերջաւորու-

թիւնների վերայ, օրինակ՝ կատու, Սեռ. կատու—ի (կարգա՝ կատվ—ի), Վացառական կատվ—ի—ց, մօրդ (մարդ), Սեռ. մարդու, բաց. մարդուց, անասուններ, սեռ. անասունների, բաց. անասունների—ց, և այլն: Սեռականում Նշան վերջացածները աւելացնում են Վացառականում ից՝ թեան—ից՝ փխութեան—ից, աղքատութեան—ից, և այլն. Յղնեցոց լիզուն այս դէպքում հետևում է ըստ մեծի մասին § 2 կանոնին, այնպէս որ՝ փխութենից, աղքատութենից, և այլն:—Այս դէպքում, ինչպէս տեսնում ենք, զօկերէնը բացառութիւն չէ կազմում գրականականից և ուրիշ շատ բարբառներից (արեւելեան). աւելի բացառական երեղթ է ներկայացնում մեզ հետևեալ երկրորդ դէպքը՝ 2) Սեռականում բոլոր միւս վերջաւորութիւնները (այ, ջի, ուայ, աջ, ուց) ստացող անունները կազմում են իրանց Վացառականը աւելացնելով Սեռականի վերայ՝ հանձն կամ հանձնց. օրինակ՝ Հայրապետայ հանի, կամ Հ. հանից, սրօ հանի կամ սրօ հանից, բզբւացաց հանի (կամ հանից), դոււց հանի, և այլն: Եւ թան է այդ հանի և ի՞նչ ծագում ունի: Հեշտ կարելի է նկատել, որ այդ բառ բաժանվում է երկու մաս, հան + ի կամ հան + ից, որոնց երկրորդ մասը ոչ այլ ինչ է, եթէ ոչ նոյն իսկ Վացառականի վերջաւորութիւնը.—ից—ի (հան + ից) վերաբերմամբ այդ պարզ է, ինչ վերաբերում է ի (հան + ի), կասկած չը կայ որ այդ ի համապատասխանում է Վացառականի է վերջաւորութեանը, որը բացի հին հայերէնից գործածական է այժմեան հայ բարբառներում էլ՝ զլիաւորապէս արեւմտեան, տեղանդ և արեւելեան: Այդ ենթադրութիւնը կարելի է հաստատել նորանով, որ երբեմն հան—ի—ի փոխարէն դործ է ածվում հան—այ, այսինքն՝ ի փոխվում է այ (§ 4). այդ փոփոխումը աւելի յատուկ է ցղնեցիներին: Նոյն այդ վերջաւորութիւնը անայ մենք տեսնում ենք և Վարաբաղցոց բարբառումը՝ րա-

խորց անայ, ինձանայ, մրգանայ, ևայլն ¹⁾: Ուրեմն այդ բառի երկրորդ մասը պարզ է և հասկանալի, իսկ առաջին վանկը (հան) մեկնելու համար հարկաւոր է նկատել որ սկսելի հ մի այնպիսի յաւելիւմ է ինչպէս և հինգիւր (ընկեր), հըսուսը (ալւոր), ևայլն բառերի մէջ, առաւել որ այդ հանի կամ հանից դործ է ածվում երբեմն առանց հ, միայն՝ ահի (կամ անայ), ահից, ուրեմն բաց առնելով այդ հ մնում է ահ, որ համեմատելու է այն ահ—ի հետ, որ տեսնում ենք փրանտունների մէջ և ոչ միայն զօկերէնում, այլ և դրականականում և ուրիշ բարբառներում՝ ինձ—ան—ից, քեզ—ան—ից, նոր—ան—ից (—նորա—ան—ից), մեզ—ան—ից, ձեզ—ան—ից, Գոց—ան—ից (—Գոցա—ան—ից), զօկ. անձ—ան—ից, դրօ—ան—ից, գլուց—ան—ից, ևայլն:

Դասել. 1. Այդ ահ վանկը (զօկ. հան, ան), մենք կը տեսնենք և Գործխականում. մի բանի բարբառներում այդ վանկի մէջ — երբեմն կրճատվում է. այնպէս որ՝ մեզանից—մեզնից, մեզ—ան—նով—մեզնով և մինակ միայն ահ իրիկում է Տ՝ մեզնով—մեզմով, որոնց—ան—ով—որոնցմով:

Դասել. 2. Զօկերէնում մնացել են Բացառականի է (աւելի յաճախ է) վերջաւորութեան հետքերը. օրինակ՝ ազ. աստեղ—ան (այստեղից), ցղն. բատեղ—ան, ուր ահ անշուշտ մի և նոյնն է ինչ որ գրականական է (§ 4): Այդ վերջաւորութիւնը համեմատաբար աւելի յաճախ է լսվում Յընայի բարբառում. մտքան, կլխան, ևայլն (մտքից, գլխից). համեմատ. Ղարաբաղցոց՝ մինան ընդալ այ, ընդեղան ետ այ տառնում, տաղան, տեղան, ծեռքան, ևայլն:

§ 23. Գործխական հ: Գործխական հոլովը զօկերէնում վերջանում է ա—, որը՝ եթէ շեշտի տակ է ընկնում՝ փոխվում է օ, այնպէս որ ա—օ: Ուրեմն այդ և § 1 հիման վերայ՝

¹⁾ Патк. Искафд. о диалект. Арм. яз. Ереван 68—69:

էլէ գործիական հոլովը միականի բառ է վերջանում է զի օրինակներս. ճանապարհաւ, օթախաւ, տեղաւ, գեղաւ, Լայլն, բայց՝ ճընրութով, թշնամով, ջլրծով, անծով (գործ է ածվում երբեմն և տանաւ), Լայլն: Վործիականի այդ վերջաւորութիւնը մենք տեսնում ենք և Վարաբաղցոյ բարբառում¹⁾: Այն բառերը, որոնք իրանց Բացառականը կազմելու համար ընդունում են ան կամ հան (հան) վանկը, նոյն բառերը գործիական հոլովը կազմելու համար էլ ընդունում են նոյն ան կամ հան վանկը: Ինչպէս Բացառականը կազմելիս, այնպէս էլ այստեղ այդ վանկը աւելացվում է Սեռականի վերջաւորութեան վերայ: Վնեղով ուրեմն այդ վանկի վերայ Վործիականի աւ վերջաւորութիւնը, մենք կը ստանանք՝ Հայրապետայ հանաւ (կամ՝ անաւ), դրուց անաւ, քչըլըցոցայ հանաւ (կամ՝ անաւ), Լայլն: Նկատելու արժան է այն որ այդ ան կամ հան վանկը հոլովի վերջաւորութեան հետ միասին առած (ան կամ հան—ի, հան—ից, հան—աւ, և ինչպէս կը տեսնենք՝ Ներդոյականում՝ հան—ամ. ցոն. հան—ոմ) մի ինքնուրոյն բառ է ներկայացնում մեզ. այդ երևում է նորանից 1) որ դա աւելանում է Սեռականի վերայ, այսինքն՝ իբրեւ գոյական պահանջում է որ իրանից կախված գոյականը Սեռական հոլովում դնվի, 2) այդ Սեռականը, ինչպէս և մեզ հետաքրքրող բառը, ունին ամեն մէկը իրանց շեշտը. այդ պարզ կարելի է տեսնել վերեւ բերած օրինակներից, նոյնպէս զարաբաղցերէնից՝ լանտոյց անայ: Վարելի է, իմ կարծիքով, ենթադրել թէ այդ մասնիկը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի բառ, որ՝ պահելով իւր գոյութիւնը, կորցրել է արդէն իւր ինքնուրոյն նշանակութիւնը և մնացել է ինչպէս հոլով կազմող մասնիկ:

1) Патк. Исслѣд. о діалект. Арм. яз. *Երես*. 68.

Չանօթ. Ան կամ հան վանկի միջոցով Գործխական կազմող բառերը, երբեմն կազմում են և առանց այդ վանկի էլ՝ Պուղուս—օփ, գրուց—օփ, տարաւ, շքթթմաւ, ևայլն:

§ 24. Ներգոյական հոլովք վերջաւորութիւնն է ամ, ուր ա շեշտի տակ ընկած ժամանակը փոխվում է ու՝ ում: Այդ ա—ի ու փոխվելու մասին տես § 5 ծան. 3, § 1, § 6: Ուրեմն այդ վերջաւորութեան վերայ շեշտ եղած ժամանակը և ապա ուրեմն՝ ելէ Ներգոյական հոլովը մտնանէ քաւ է՝ ի տեղի ամ՝ Ներգոյականը վերջանում է ում. օրինակ՝ օթախ—ամ, գեղ—ամ, չօլ—ամ, մարդ—ամ, ևայլն, բայ՝ թշնամում, գլխք — ում, տնում, ևայլն: Ներգոյականի մասին ասածս վերաբերում է միայն Ագուլեցոց լեզուին, յիշեցեւերը չանէ քաւութիւն ամ վերջաւորութեանը (§ 6, ծան.). նորանում գործածական է միշտ ում վերջաւորութիւնը: Ան կամ հան (ներգ.—ան—ամ, հան—ամ, ցղն, ան—ում, հան—ում) վանկի միջոցով կազմում են իրանց Ներգոյականը նոյն բառերը, որոնք այդ վանկի միջոցով կազմում են իրանց Վացստականը և Վործխականը:

Չանօթ. Ներգոյականը երբեմն գործ է ածվում առանց վերջաւորութեան, օրինակ՝ Ագլուլիս շատ մարդիք իօն (Ագուլիս կամ Ագուլիսում շատ մարդիկ կան): Այդ ուղղականաձև Ներգոյականը գործածական է քաղաքների և առհասարակ տեղի անունների համար: Նոյնը մենք տեսնում ենք գրականական լեզուում և ուրիշ բարբառներում:

§ 25. Վոլոր մեր ասածներէցը հետեւեալ մի աղիւսակ կարել է գուրս բերել վերջաւորութիւնների համար.

Եզր.	I.	II.	III.	IV.	V.
Ուղղ. ի		թիւն	առանց որոշ վերջ.	յատուկ անուն	ժաման. նշան. ան.
Սեն. ու		թեան	ի	այ (կամ չ) § 20, 4)	վայ կամ վան
Տրակ ու		թեան	ի	այ (կամ չ)	վայ կամ վան
Հայց. նման է Ուղ. կամ Սեն.		նմ. Ուղ. կամ Սեն.	նմ. Ուղ. կամ Սեն.	նման է Ուղղական.	կամ Սեռակ.
Բաց. ուց		թեան ից (ցղ. թեւից)	ից	Սեռական + ան ի (ց) կամ հանի (ց)	
Գործ աւ (կամ օվ. § 23)		թեան աւ (ց. թեւաւ)	աւ (կամ օվ. § 23)	Սեռական + անաւ	կամ հանաւ
Ներգ ամ (կամ ում § 24)		թեան ամ (ց. թեւում)	ամ (կամ ում § 24)	Սեռական + անամ	կամ հանամ:
Յոգ.					
Ուղղ. բ		(ն)եր կամ ար	բ (եթէ եղ. Ուղղ.	վերջ. ձայնաւոր.) և	(ն)եր կամ ար (եթէ
Սեն. (ն)եր — ի		(§ 19, 1)			— բաղաձ.)
Տրակ (ն)եր — ի		I.	I.	I.	I.
Հայց. նման է Ուղ. կամ Սեն.		ինչպէս	ինչպէս	ինչպէս	ինչպէս
Բաց. (ն)եր — ից					
Գործ (ն)եր — ան					
Ներգ (ն)եր — ամ ցղն. (ն)երում:					

Առանձին վերջաւորութիւններ յոգն. թւի համար.

Ուղղակ. ուր, ար.	ատիք, արիք, անիք, անք, եանք:
Սեռակ. ուց, աց.	աց, աց, աց, աց, աց (§ 20, ր. ծան.):
Տրակ. ուց, աց.	աց, աց, աց, աց, աց:
Հայցակ. նման է Ուղղականին կամ Սեռականին:	
Բացառ. Սեռական +	անի (յ) կամ հանի (յ):
Գործ. Սեռական +	անաւ կամ հանաւ:
Ներգոյ. Սեռական +	անամ (յղն. անում) կամ հանամ (յղ. ում):

Օ Ր Ի Ն Ա Վ Ն Ե Ր.

I.

Եղակի.

Յոգնակի.

Ուղղակ. քամ—ի	քամի—ք:
Սեռակ. քամ—ու	քամի—ներ—ի:
Տրակ. քամ—ու	քամի—ներ—ի:
Հայցակ. քամ—ի	քամի—ք:
Բացառ. քամ—ուց	քամի—ներ—ից:
Գործ. քամ—աւ	քամի—ներ—ան:
Ներգոյ. քամ—ամ (յղն. ում)	քամի—ներ—ամ (յղն. ում):

II.

Ուղղակ. թաքաւորութիւն (§ 9)	թաքաւորութիւն—ներ:
Սեռակ. թաքաւորութեան	թաքաւորութիւն—ներ—ի:
Տրակ. թաքաւորութեան	թաքաւորութիւն—ներ—ի
Հայցակ. թաքաւորութիւն	թաքաւորութիւն—ներ
Բացառ. թաքաւորութեանից (յղն. թիւնից)	թաքաւորութիւն—ներ—ից
Գործ. թաքաւորութեանաւ (յղն. թիւնաւ)	թաքաւորութիւն—ներ—ան:
Ներգոյ. թաքաւորութեանամ (յղն. թիւնում)	թաքաւորութիւն—ներ—ամ (յղ. ում):

III.

1.	Եղանակ.	Յոգնական.
Ուղղ.	ուրման (պատ, պարիսպ)	ուրման—ներ
Սեռ.	ուրման—ի ¹⁾	ուրման—ներ—ի
Տրակ.	ուրման—ի	ուրման—ներ—ի
Հայց.	ուրման	ուրման—ներ
Բայ.	ուրման—ից	ուրման—ներ—ից
Գործ.	ուրման—աւ	ուրման—ներ—աւ
Ներգ.	ուրման—ամ (յղն, ում)	ուրման—ներ—ամ (յղ. ում):
2.		
Ուղղ.	թօր (թուր)	թր—եր (յղն. թար)
Սեռ.	թր—ի	թր—եր—ի
Տրակ.	թր—ի	թր—եր—ի
Հայց.	թօր	թր—եր (յղն. թր—ար)
Բայ.	թր—ից	թր—եր—ից
Գործ.	թր—ով	թր—եր—աւ
Ներգ.	թր—ում	թր—եր—ամ (յղն. ում):
3.		
Ուղղ.	սօր (սար)	սար—ար
Սեռ.	սար—ի	սար—եր—ի
Տրակ.	սար—ի	սար—եր—ի
Հայց.	սօր	սար—ար
Բայ.	սար—ից	սար—եր—ից
Գործ.	սար—աւ	սար—եր—աւ
Ներգ.	սար—ամ (յղն. ում)	սար—եր—ամ (յղն. ում):
4.		
Ուղղ.	կատու	կատու—ք
Սեռ.	կատվ—ի	կատու—ներ—ի
Տրակ.	կատվ—ի	կատու—ներ—ի
Հայց.	կատու կամ կատվ—ի	կատուք կամ կատուների

¹⁾ Ուրման—քանի որ ու—ի վերայ չեղտ կայ) ու պարզ է լսվում: միւս հոլովներում չեղտը անզավոթվելով, օրինակ ուրմանի, ու արգէն կիսատ է հնչում: համարեա՝ քրճանի:

	Եզակի.	Յոգնակի.
Բայ.	կատվ—ից	կատու—ներ—ից
Գործ.	կատվ—աւ	կատու—ներ—աւ
Ներգ.	կատվ—ամ (ցղն. ում)	կատու—ներ—ամ (ցղն. ում):

1.

IV.

Ուղղ.	Բաղդասար	Բաղդասար—ներ
Սեռ.	Բաղդասար—այ	Բաղդասար—ներ—ի
Տրակ.	Բաղդասար—այ	Բաղդասար—ներ—ի
Հայց.	Բաղդասար կամ Բաղդասարայ	Բաղդասար—ներ կամ ներ—ի
Բայ.	Բաղդասարայ անի (յ) կամ Հանի (յ)	Բաղդասար—ներ—ից
Գործ.	Բաղդասարայ անաւ կամ Հանաւ	Բաղդասար—ներ—աւ
Ներգ.	Բաղդասարայ անամ կամ Հանամ	Բաղդասար—ներ—ամ (ցղն. ում):

2.

Ուղղ.	Խաչատուր	Խաչատուր—ներ
Սեռ.	Խաչատր—ցյ	Խաչատուր—ներ—ի
Տրակ.	Խաչատր—ցյ	Խաչատուր—ներ—ի
Հայց.	Խաչատուր կամ Խաչատր—ցյ	Խաչատուր—ներ կամ ներ—ի
Բայ.	Խաչատրոյ անի (յ) ¹⁾	Խաչատուր—ներ—ից
Գործ.	Խաչատրոյ անաւ	Խաչատուր—ներ—աւ
Ներգ.	Խաչատրոյ անամ	Խաչատուր—ներ—ամ:

V.

Ուղղ.	Հարսիմ	Հարսիմ—ներ
Սեռ.	Հըրսիմ—վայ	Հարսիմ—ներ—ի
Տրակ.	Հըրսիմ—վայ	Հարսիմ—ներ—ի
Հայց.	Հարսիմ	Հարսիմ—ներ

¹⁾ Հիշտութեան համար մենք պիտուհետեւ չենք կրկնում՝ Հանի (յ), Հանաւ և ոչ ցղն. ներգ. հղովի մեք (ում):

Եզակի.

Բաց. շքանշանայ անից ¹⁾
Գործ. շքանշանայ անաւ
Ներգ. շքանշանայ անամ

Յոգնակի.

շանշան—ներ—ից
շանշան—ներ—աւ
շանշան—ներ—ամ:

Նշանակ. Ժամանակ ցոյց տվող անունները հորովվում են նոյնպէս ընդհանուր կանոնին համեմատ, այսինքն՝ I (եթէ է է վերջանում, օրինակ Կարէ) և III համեմատ:

§ 26. Անանիէն օրէնագիտի մի քանի յոգնակի անուններին:

I.

1.

Աւղղ. Բաղդասար—աք ²⁾
Սեռ. Բաղդասար—աց
Տրակ. Բաղդասար—աց
Հայց. Բաղդասար—աց
Բաց. Բաղդասարաց անից
Գործ. Բաղդասարաց անաւ
Ներգ. Բաղդասարաց անամ

2.

Խաչատր—աք ³⁾
Խաչատր—ուց
Խաչատր—ուց
Խաչատր—ուց
Խաչատրուց անից
Խաչատրուց անաւ
Խաչատրուց անամ:

3.

Աւղղ. ըսկերատիք (=իք)
Սեռ. ըսկերատ—աց
Տրակ. ըսկերատ—աց
Հայց. ըսկերատ—իք
Բաց. ըսկերատաց անից
Գործ. ըսկերատաց անաւ
Ներգ. ըսկերատաց անամ

4.

ձիանք (ցղն. ձիանք)
ձիան—աց
ձիան—աց
ձիանք կամ ձիանաց
ձիանաց անից
ձիանաց անաւ
ձիանաց անամ, և այլն:

§ 27. Անի մի քանի բառեր, որոնք հորովվելիս չեն հետևում վերև յիշած օրէնքներին. դոքա համարեա մի և նոյն

1) Ամ կրճատված՝ շքանշանայ, — վանաւ, — վանամ:

2) = Բաղդասար—աք:

3) = Խաչատր—աք:

բառերն են, որոնք զրականական լեզուում և ուրիշ բարբառներում էլ անկանոն են հղովվում: Այդ բառերն են.

1. հայր.

Եղակի.

Յոգնակի.

Ուղղ.	հայր (ցղն. հայր. § 4, ծան. 1)	հայր—ար (ցղն. հայր—ար)
Սեռ.	հօր	—եր—ի, ևայլն.
Տրակ.	հօր	
Հայց.	հայր կամ հօր	
Բաց.	հօր—ից կամ հօր անից, (հանից)	
Գործ.	հօր—աւ կամ հօր անաւ.	
Ներգ.	հօր—ամ, հօր անամ:	

2. աղպար, ապար (եղբայր.)

Ուղղ.	աղպար (կարդա՝ ախպար)	աղպար—ներ
Սեռ.	աղպուր	աղպար—ներ—ի, ևայլն.
Տրակ.	աղպուր	
Հայց.	աղպար, աղպուր	
Բաց.	աղպուր անից	
Գործ.	աղպուր անաւ	
Ներգ.	աղպուր անամ:	

3. քոյր (հին ցղն. քուր).

Ուղղ.	քոյր (հին ցղն. քուր)	քոյրար (հին ցղ. քուրար) կամ քվիրներ
Սեռ.	քվիր (համ. Գարար. քվօր)	քոյր — երի կամ քվիր—ներ—ի ևայլն.
Տրակ.	քվիր	
Հայց.	քոյր, քվիր	
Բաց.	քվիր անից (քվիրից)	
Գործ.	քվիր անաւ (քվիրաւ)	
Ներգ.	քվիր անամ:	

4. կնակ, ցղն. կնէկ (կնիկ).

Ուղղ.	կնակ (ցղն. կնէկ)	կնան—իք
Սեռ.	կնկու (կարդա կնգու § 11, ծան. 1)	կնան—այ

Եզակի.		Յոգնակի.
Տրակ.	կնկու	կնտն—աց
Հայց.	կնակի, կնկու	կնանիք, կնանաց
Բաց.	կնկուց կամ կնկու անից	կնանաց անից
Գործ.	կնկով կամ կնկու անաւ	կնանիքով կամ կնանաց ա- նաւ
Ներգ.	կնկում կամ կնկու անամ	կնանաց անամ:
5. Կայք (ցղն. տար § 4. ծան. 1).		
Ուղղ.	տայր. (ցղն. տար)	տայր—ար (ցղն. տար—ար)
Սեռ.	տէրուճ	տայր—եր—ի, Լայլն.
Տրակ.	տէրուճ	
Հայց.	տայր (տար), տէրուճ	
Բաց.	տէրուճ անից	
Գործ.	տէրուճ անաւ (տայրաւ)	
Ներգ.	տէրուճ անամ (տայրամ):	

II. Դ Ե Ր Ը Ն Ո Ւ Ն:

§ 28. Գերանտւոնները զօհերէնում, ինչպէս ներքեւ կը տեսնենք, բացի մի քանի ֆօնետիկական առանձնութիւններից իրանց հոլովման մէջ մի այնպիսի առանձնութիւններ չ'են ներկայացնում համեմատած ուրիշ բարբառների և զրականականի հետ. և մի և նոյն ժամանակը մի քանի վերջաւորութիւնների հետ մենք արդէն ծանօթ ենք անտւոնների հոլովումից:

1. Ետական. իս, դո, (ցղն. տո), ինքը.
2. Արացական. ամ (ցղն. իմ), քու, իրան (յիրան), ցղն. իւրան, միր, ձիր, իրաց, (յիրաց), ցղ. իւրաց.
3. Յոգական. հօի, դօի, նօի. աս, ատ, ան. սօ, դօ, նօ.
4. Յարաբերական. ուր, ունչ (ցղ. ինչ). ուրն օր, ունչ օր (ցղ. ինչ օր).
5. Հարցական. ուվ, ունչ, ուր.
6. Անորոշ. մոյն, ցղն. մուն (մին):

1. Լռական դեր. ես, դու (ցղն. դու), էնքը:

Լռակի.

Յոգնակի.

Ուղղ.	իս	միքչ
Սեռ.	ամ, ցղն. իմ	միբ
Տրակ.	անձ, ցղն. ինձ	միզ
Հայց.	անձ, ցղն. ինձ	միզ
Բաց.	անձ անից, ինձ անից	միզանից
Գործ.	անձ անաւ, ինձ անաւ	միզանաւ
Ներգ.	անձ անամ, ինձ անում	միզանամ (ցղն. ում):
Ուղղ.	դու (ցղն. տու)	դուք, ցղն. տուք
Սեռ.	քու	ձիբ, ցղն. ձիբ
Տրակ.	քիզ	ձիզ—ձիզ
Հայց.	քիզ	ձիզ—ձիզ
Բաց.	քիզանից (կամ քիզ հանից, ցղ.)	ձիզանից, ցղ. ձիզանից
Գործ.	քիզանաւ (քիզ հանաւ, ցղն.)	ձիզանաւ, ցղն. ձիզանաւ (կամ հանաւ)
Ներգ.	քիզանամ, ցղն. քիզանում	ձիզանամ, ցղն. ձիզանում:
Ուղղ.	իմքը	
Սեռ.	իբր, յիբան, ցղ. իւր, իւրան յիբաց, ցղն. իւրաց,	
Տրակ.	յիբան, իւրան, ցղն. իւրան Լայլն, ինչպէս § 26, ծան. 1.	
Հայց.	Տրականի նման	
Բաց.	յիբանից, յիբան անից, իւրանից (իւրան հանից)	
Գործ.	յիբանաւ, ցղն. իւրանաւ, յիբան անաւ, իւրանհանաւ	
Ներգ.	յիբանամ, իւրանում:	

Նշանակ. 1. Այս դերանունների ցղնեցերէնի ձևերը, որոնց վերայ աւելացնենք թէ՛ Լ համեմատաբար սակաւ՝ ըստ այնու ամենայնիւ գործածական ձևեր՝ ինձանայ, քիզանայ, Լայլն, իրանց քիբականական և ֆօնետիկական յատկութիւններով ցոյց են տալիս թէ՛ ինչ աստիճան ցղնեցերէնը մօտենում է Ղարաբաղի բարբառին,¹⁾ թէ՛ ինչպիսի

1) Ղարաբաղ. բարբառի ձևերը տես Պատկ. Иссл. о диал. Арм. яз. кр. 68—69:

մի սահմանագիծ է կազմում Յղնայի լեզուն Ագուլիցոյց և Ղարաբաղ-
ցոյց բարբառի մէջ. ցղն. տոն, Ղարար. տոն, իսկ ցղն. ձիր չ—ի չ փոխ-
վելովը մօտենում է Ղարաբաղի բարբառին մինչդեռ ե—ի ն փոխվե-
լովը հետեւում է զօկերէնի ընդհանուր կանոնին (§ 2):

2. ցուցական դերան. հօկ, դօկ, նօկ. ոօ, դօ, նօ. առ, աար, ան.

Ախտելու արժան է որ հօկ, դօկ, նօկ դերանունները
գործածական են միմիայն զօկ բարբառի կենտրոնում, այս-
ինքն՝ Ագուլիսում և նորա շրջակայ գիւղերում: մինչդեռ
Յղնայում և ուրիշ Ագուլիսից փոքր 'ի շատ է հեռու գիւ-
ղերում ցուցական դերանունն այդ ձևը մենք բոլորովին չենք
պատահում: Այդ հանդամանքը աւելի հաւանական է կա-
ցուցանում այն ենթադրութիւնը, որ մենք յառաջ ենք բե-
րում մեր հետազոտութեան սկսբում զէ բառի առիթով. հօկ
դերանունի բացատրական՝ միմիայն Ագուլիսին յատուկ գոր-
ծածութիւնը (Հայց. հոլ. զօկ) յառաջացրել է զէ անունը.
այդ երևոյթը մենք արդէն համեմատել ենք հոսոս ¹⁾ բառի
հետ, որով կոչում են արեւելեան Հայերը արեւմտեան Հայե-
րին հոս բառի առանձնական գործածութեան պատճառով.
արեւելեան Հայ բարբառներից ոչ մինի մէջ չը կայ այդ բառը:
Հօկ բառի մէջ հ—ի «—ից փոխված լինելու մասին մենք ար-
դէն խօսել ենք վերեւ (§ 14). չ'է կարելի չը համեմատել այս-
տեղ այդ դերանունը յունարէն արական յօդի օ (հօ) և լատինե-
րէն hoc դերանունն հետ ²⁾: Ատաղներէնի հետ համեմատե-
լու է և այն ն հնչիւնը, որ ընդունում է այդ դերանունը իւր
վերջից հօ—կ, դօ—կ, նօ—կ: Այդ այն էնկլիտիկական ն է,
որը բացի լատիններէնից, ինչպէս իրաւացի նկատում է և

¹⁾ հոսոս յառաջացել է հոս բառի կրկնելուց:

²⁾ Hic, haec, hoc.

Իօպպը ¹⁾, մենք տեսնում ենք և Հին Հայերէնում՝ այսոր — իկ, այգոր — իկ, այնոր — իկ, այգոք — իկ, և այլն. այդ էլ — ի մէջ է միաւորիչ ձայնաւոր ²⁾ Համարելու է. Համեմատ. նոյնպէս Օսկերէնի iz—i—k, jon—k, jü—k, և Ումբրիէնի er—e—k (hic), esu—k, eizu—c (hunc ³⁾):

Եթէ Համեմատելու լինենք «օ, րօ, նօ և հօկ, դօկ, նօկ մենք կը տեսնենք որ վերջինները առաջինների կրկնումն են է—ի աւելումը և այն զանազանութեամբ որ սօ, դօ, նօ գործ են ածվում ինչպէս գոյական մինչդեռ հօ—կ, դօ—կ, նօ—կ գործ են ածվում ինչպէս ածական. գուցէ այդ դէպքում մենք պիտի տեսնենք ածական կազմող է—ի աղբիւրութիւնը: Սօ, րօ, նօ՝ գոյականի նշանակութեամբ գործ ածվելով՝ հորովվում են, մինչդեռ ածական հօկ, դօկ, նօկ չ'են հորովվում: Սօ, րօ, նօ — ի հորովման վերաբերեալ արդէն մի քանի նկատողութիւններ արել ենք վերև § 19, 4. § 20, բ. 2. § 21, ծան. 1: Եթէ նկատողութիւններից յետոյ աւելորդ է բերել այստեղ այդ դերանունների հորովումը, առաւել որ դոցա հորովման լիակատար օրինակներ են § 25, IV, 2 (եզակի) և § 26, 2 (յոգնակի):

Ինչ վերաբերում է առ, աք, ան դերանուններին՝ նոքա հորովվում են այսպէս՝

Նախնի.

Ուղղ. առ

Սեռ. ա—տ—նւր, ցղ. ըս—տ—նւր ⁴⁾ առ—տ—ուց, ցղ. ըստուց, ևն,

Տրակ. առ—տ—ուր, —ըստ—նւր ինչպէս § 26, 2:

Հայց. առ կամ առ—տ—ուր

Յոգնակի.

առ—տ—նւք, ցղ. ըստ—նւք

¹⁾ Bopp. II, § 372. 4.

²⁾ Ibid.

³⁾ Ibid.

⁴⁾ Նոյնպէս և միւս հորովներում՝ բացի եզակի Ուղղ., սկսել ա զոնեցեր. փոխվում է ը:

Եզակի.

Յոգնակի.

Բայ. աստուր անի(ց) կամ անայ

Գործ. աստուր անաւ

Ներգ. աստուրանամ:

Այս օրինակով հղովվում են և ապ, առ, այն տարբերութեամբ որ ապ դերանուան մէջ Սեռական և միւս հղովնութեամբ կրկու ա միմեանց հանդիպելով մէկը կորչում է՝ առ — ուր ՚ի տեղի առ — տ — ուր, և այլն, իսկ առ դերանուան մէջ այդ մէջ մանող ա՝ ն — ից յետոյ՝ արտասանվում է դ, ինչպէս և հարկն է սպասել § 10 համեմատ:

Նշան. 2. Աս, առ, ան դերանունների ա — ի մասին տես § 4. իսկ ա — ի մասին, որ մտնում է արմատի և վերջաւորութեան մէջ § 17, 2:

Նշան. 3. Նկատել հարկաւոր է որ այստեղ էլ, ինչպէս և ուրիշ շատ դէպքերում, ցղնեցերէնը՝ պատկանելով զօկերէնին մի և նոյն ժամանակը մօտենում է և Ղարաբաղցոյ բարբառին. ցղն. Սեռ. ըս — տ — ուր, ըտ — ուր, ըն — դ — ուր իրանց վերջաւորութեամբ յիշեցնում են ագուլ. աս — տ — ուր, ա — տ — ուր, ան — դ — ուր, իսկ սկսրի ա — ի ը կրճատելով յիշեցնում են Ղարաբաղց. ըս — տ — րայ, ըտ — րայ, ըն — դ — րայ:

Նշան. 4. Միւս դերանունները պահելով իրանց ֆօնետիկական յատկութիւնները, հղովման կողմից կամ գրականականից կամ զօկերէնի անունների հղովումից տարբերութիւն չեն ներկայացնում. ուրեմն և աւելորդ է նոցա հղովումը այստեղ յատաջ բերել:

III. Բ Ա Յ:

§ 29. Զօկերէնի քերականութեան այս մասը շատ հետաքրքիր երևոյթներ է մեզ ներկայացնում՝ թէ ֆօնետիկայի, թէ քերականական ձևերի կողմից: Ականք դուրս հետազոտութիւնը Էսկան բայից, որը յայտնի է, թէ ինչ աստի-

ճան մեծ դեր է խաղում հայոց բայի խոնարհման մէջ, պահաս չէ այդ դերը և զօկերէնում:

ա. հմ—զօկ. ըճ.

1. 'Ներկայ.

Ելակի,	Յոգնակի.
գրակ. հմ, զօկ, ըմ	գրակ. ենք=եմք, զօկ. ըք (= ըար. ընք)
ես	էք
է	են
այ	ըն
բացասական	չիմ
	չիս
	չի
	չիք
	չին.

3. Դ. այ, ինչպէս և առհասարակ այդ ժամանակի ամբողջ խոնարհումը, համարեա նոյնութեամբ տեսնում ենք և 'Ղարաբաղը, բարբառումը՝ միայն այն զանազանութեամբ, որ զօկերէնը՝ իւր ֆօնետիկայի ոգուն համեմատ՝ կորցնում է ն (=մ) +—ի առաջ (§ 19, 4), որով և մօտենում է հին հայերէնին, ուր՝ օրինակ՝ էա+ 'ի տեղի էի՛ս:

'Օւնի. Այդ բայի շէշտի և առհասարակ ինքնուրոյնութեան աստիճանի մասին տես § 8:

2. 'Նեցեալ անկապար.

Ելակի.	Յոգնակի.
գրակ. էի, զօկ. նեւ ըմ	գրակ. էինք (=էաք) զօկ. նեւ ըք (=ընք)
էիր	ենւ ըս
էք	ենւ այ
	էին
	ենւ ըն:

'Օւնի. Զօկերէնում այս ժամանակը առանձին առված այսպէս է խոնարհւում. իսկ ուրիշ բառերի հետ միասին նէւ կարող է և յետագասով՝ բանի մոքին համեմատ, այսինքն՝ ըմ նեւ, ըս նեւ, այ նեւ, են:

Այս ժամանակի զօկերէն ձեւը, որ ոչինչ նմանութիւն չունի գրականականի հետ, կազմված է, ինչպէս կրեւում է, եժ բայի Րնդունելութենից՝ ետ, որը զօկերէնում կրճատվել է եւ և նոյն բայի՝ Ներկայից, այնպէս որ ստացվում է եւ ըժ, ն—ի աւելմամբ եւ—ի սկսբից. այդ ն—ի մասին դեռ միջոց կ'ունենանք ներքեւ խօսելու: Թէեւ զօկերէն այդ բարդ ձեւը պիտի ուրեմն համապատասխանէր Հին գրականական Անցեալ Յարակատար՝ հալ հմ, հալ հա, կայլն և ոչ՝ էի, էիր, էր, կայլն, այնու ամենայնիւ զօկերէնը դործ է ածում այդ ձեւը միմիայն էի, էիր, կայլն, համար: Նկատելու արժան է, որ զօկ բարբառը կամ կորցրել է կամ խօկի բոլորովին չ'է ունեցել Անցեալ անկատար էի, էիր, կայլն ձեւը և փոխարինել է այդ ձեւը վերոյիշեալ բարդ ձեւով՝ նել ըմ, ըս, կայլն (=հալ հմ, հա, կայլն), մինչդեռ ուրիշ Բարբառները բոլորովին ընդհանրապէս են վարվել՝ կորցրել են Յարակատարի ձեւը (հալ հմ, հա, էն) և պահել են Անցեալ անկատարի ձեւը, էի, էիր, կայլն՝ թէեւ տեղ տեղ կերպարանափոխված, ինչպէս, օրինակ, Վարաբաղցի, իր, ար, ինք, իք, ին: Վարամանալին այն է որ զօկերէնի այդ ձեւը ոչինչ նման հետքեր չ'ունի մինչև անգամ Վարաբաղցոց բարբառում, որին նա շատ անգամ մօտենում է իւր Յղնայի բարբառի միջոցով. այդ Յղնայի լեզուն, որը կրբեմն աւելի մօտ է լինում Վարաբաղի բարբառին. քան թէ Ազուլիսի, այս դէպքում ոչինչ կապ չ'է ներկայացնում Վարաբաղի բարբառի հետ:

Ինչպէս որ գրականականը և ուրիշ բարբառները բացի Ներկայի (հմ) և Անցեալ անկատարի (էի) ձեւերից, այդ բայի խոնարհումից ուրիշ ձեւեր չ'են պահել, այնպէս էլ զօկերէնը բացի դոցա համապատասխան ըժ, և նել ըժ ձեւերից ուրիշ ձեւեր չ'ունի այդ բայից մնացած. այնպէս որ մնացեալ ժամա-

նախնիքը կաղմելու համար ինչպէս զօկերէնը, այնպէս և միւս բարբառները դործ են ածում վնէլ բայի ձևերը:

բ. լինել—զօկ. ագ. էլել ցղն. էլալ:

Այս բայը յառաջացել է էլ բայի կրկնելուց՝ ել—ել, որը զանազան բարբառներում զանազան կերպարանք է ստացել. դորանից են յառաջացել բլալ, բլիլ, բլնիլ, բնիլ, կղնիլ, կղա-նիլ, լինիլ, վերջապէս ագուլ էլել ցղն. էլալ: Որովհետեւ այս բայի խոնարհումը համարեա ոչինչով չ'է զանազանվում միւս՝ ոչ—էական բայերի խոնարհումից, ուրեմն մենք դեռ միջոց կ'ունենանք յառաջ բերել այդ բայի խոնարհումը, երբ արդէն արած կը լինենք հարկաւոր նկատողութիւնները առ-հասարակ բայերի մասին:

§ 30. Վերականութիւնը, ինչպէս յայտնի է, բաժանում է հին հայերէնի բայերը չորս լծորդութեան Անկրեղթ կղա-նակի ել ել ալ ու վերջաւորութիւնների համեմատ: Նոր հայերէնի գրականականը արդէն չ'է կարելի ենթարկել այդ բաժանման, որովհետեւ պակասում է ու վերջաւորութիւնը, իսկ բարբառներում պակասում են երբեմն այդ վերջաւորու-թիւններից մի քանիսը, զօկերէնում, օրինակ, Ագուլիս բարբառը պահել է միայն ել վերջաւորութիւնը, Յղնայինը բացի ել ունի և ալ վերջաւորութիւնը համարեա նոյն դէպքերում, ինչ աեղ որ մնացել է Վարաբաղի բարբառում ուրեմն այս դէպքում էլ ցղնեցիները մնում է հաստատ իւր դերին՝ մի տեսակ կապ ներկայացնելով զօկերէնի և Վարաբաղ բարբառի մէջ:

Այսպէս ուրեմն Անկրեղթ եղանակը զօկերէնում վերջա-նում է—Ագուլիս բարբառում ել տանիլ, ահիլ, օտիլ, մռա-նիլ, հռանիլ, և այլն.—Յղնայի բարբառում ել ալ տանիլ, ա-հիլ, օտիլ, մռանալ, հռանալ, և այլն:

Ծանօթ. 1. Եւ վերջաւորութեան մէջ ի մասին կրկենք այստեղ ինչ որ առաջ (§ 2) նկատել ենք՝ ինչ տեղ որ գրականականութեամբ վերջաւորութեան մէջ տեսնուած ենք է, այնտեղ զօկերէնը ներկայացնում է ի, այնպէս որ՝ ասել—զօկ. ահլն ասէ՛ս—զօկ. ահլն, ևայլն:

Ծանօթ. 2. Եւ վերջաւորութիւնը ցնէցեբէն—յատուկ է այն բայերին, որոնք և գրականականութեամբ վերջանում են եւ և այդ վերջաւորութեան առաջից ունին աւ սուֆֆիքսը, այսինքն աւալ: Այդ կարգի բայերին պատկանում է և Գեւորալբայր, ագուլ. տիսնիլ (նոյնպէս տիհնիլ) գրակ. տեսնել, որի լի ձևն է տես—աւ—ել. գրակ. աղալ, ագ. ըղանիլ, ցղն. ըղանալ:

Միավանկ բայերը, որոնք գրականականութեամբ և ուրիշ բարբառներում վերջանում են ալ օրինակ՝ տալ, լալ, գնալ, ևն. զօկերէնում վերջանում են օլ ինչպէս և Հարկաւոր է սպասել Համեմատ այդ բարբառի յայտնի օրէնքին (§ 1), որով միավանկ բառերում ա փոխվում է օ՝ տալ, լօլ, նօլ (կրճատված ՚ի տեղի՝ գնօլ). Գալ բայը զօկերէնում դառնել է Գոլ— ևն թարգմել է երկրորդ. աստիճանի փոփոխման, այսինքն՝ փոխվելով առաջ Գօլ յետոյ փոխվել է Գոլ (Համեմատ § 5 օրէնքին). առաջին ձևի Հետքերը մենք պատահում ենք, օրինակ, Յղն. Գօ ըս (գալիս ևս) Ռամիսի լեզ. կօս ըս:

Մենք եղբայր, ինչպէս յայտնի է, հորովվում է. հորովելու ժամանակ եւ վերջաւորութեան մէջ ի միւս հորովելութեամբ փոխվում է է, այդ եղբայր յատուկ է, ինչպէս յայտնի է, հին և նոր հայերէն գրականական լեզուին և ուրիշ բարբառներին. օրինակ՝ հին հայ. կրաւորակ. գրել նոր հայ. գրովել—Սեռակ. գրելոյ, գրվելու, ագ. գրվել—Սեռ. գրվելու:

§ 31. Բնորոշելը—Բնշը ունի երեք ժամանակ՝ Ներկայ, Մնացեալ և Ապագին: Ներկա, որ գրականականութեամբ և ուրիշ բարբառներում վերջանում է ուլ¹⁾՝ բերող, տանող, ծնող,

1) Այդ ուլ—ի մասին տես Патр. Изсл. о составѣ Арм. яз. § 90, 1:

Լայն, այդ ու փոխում է զօկերէնում միշտ ուղ (§ 5)՝ տա-
նուղ, բիրուղ (ցղն. պիրուղ), ծնուղ, Լայն:

Ընդունելութեան Անցեալ Ժամանակը Հին գրականակա-
նում վերջանում է եւս նոր Հայերէնի գրականականում այդ
ձեր մնացել է միայն ածականի մոքով իսկ իբրեւ բայի ձե
կրճատվել է եւս այլ է, օրինակ, անցեալ, մնացեալ, յիշեալ,
Լայն, այլ է՝ անցել (է), մնացել (է), յիշել (է), Լայն: Նոր
գրականականը և բարբառները ունին այդ ձեւի հետ միասին
և ուրիշ մի վերջաւորութիւն Անցեալ Ընդունելութեան
Համար, այն է՝ ած, որ հաւասարապէս դործածախան է թէ
ածականի թէ բայի նշանակութեամբ, օրինակ՝ անցած տա-
րին և տարին անցած է, վերև յիշածը և վերև յիշած ենք,
Լայն: Չօկ բարբառը նոյնպէս ունի այդ երկու վերջաւո-
րութիւնները. Հին եւս—ը նա բոլորովին կորցրել է ինչպէս
ածականի ձեւ (փոխարինել է ած վերջաւորութեամբ), իսկ
իբրեւ բայի ձեւ կերպարանափոխել է ե. (Յղնայի լեզ. երբեմն և
աւ) միավանկ բայերի համար, աւ—մէկից աւելի վանկ ունե-
ցող բայերի համար: Ինչպէս որ այդ եւս (նոր Հայ. ել) վեր-
ջաւորութիւնը զօկերէնում միավանկ բայերի համար փոխ-
վում է եւս իսկ մէկից աւելի վանկ ունեցողների համար աւ
այնպէս էլ միւս՝ ած վերջաւորութիւնը զօկերէնում միա-
վանկ բայերի համար փոխվում է եծ, իսկ մէկից աւելի վանկ
ունեցողների համար միւս է ած: Իսկ այդ եծ վերջաւորու-
թիւնը պիտի սահմանափակենք բուն Ագուլիսի լեզուով
(§ 1), որը այս գէպքում ընդգէմ է վարվում իր օրէնքին
(§ 1), որով միավանկ բառերում ա փոխվում է օ, մինչդեռ
Յղնայի լեզուն աւելի հետեւաբար է վարվում՝ այս գէպքում
էլ փոխելով ա—օ, ներկայացնելով մեզ ուրեմն միավանկ բա-
րերի համար օծ: Այդ օ, ինչպէս արդէն նկատել ենք (§ 1,

ծան. 5), վանկ աւելացած ժամանակը կրկին չ'է փոխվում ա, ինչպէս այդ լինում է ուրիշ դէպքերում:

Ենցեալ Բնդունելութիւնը ունի զօկերէնում մի Ֆօնետիկական յատկութիւն, որի մասին այստեղ կրկին յիշելը հարկաւոր ենք համարում. դրականական և ուրիշ բարբառներից, որ երևում է ել(եալ) և ած վերջ, սկսբից, փոխվում է զօկերէնում (§ 14)՝ մոռացել—զօկ. մռահալ, հիւանդաշած—զօկ. հիւանդահած, և այլն:

Ուրեմն Ենցեալ Բնդունելութեան վերջաւորութիւններն են՝

	հին հայ.	նոր հայ. գրակ.	զօկ.
1.	եալ	ել	միավանկ բայ. համ. ել (ցղ. երբեմն և ալ) մէկից աւել վանկ. ալ
2.	—	ած	միավանկ. ագ. էծ, ցղ. օծ մէկից աւել վանկ. ած
Օրինակներ՝			
1.	գրեալ, նստեալ գրել (եմ),	գիրել (ցղ. կիրել),	նստել,
	նստել (եմ)—ցղ. նստալ,	ահալ, տարալ	
2.	գրած, նստած գիրծ, նստծ,	ցղն. կիրծ,	նստծ, ահած, տարած:

Ծանօթ. Ինչպէս տեսնում ենք օրինակներից, Յղնայի լեզուն տատանվում է ել և ալ—ի մէջ միավանկ բայերի համար, մի կողմից՝ լսել, ճրել, տրել ¹⁾ (գրել), և այլն, միւս կողմից՝ նստալ, կարալ, թռալ ևն. Այդ տատանումը անշուշտ հետևանք է Ագուլիսի և Ղարաբաղի բարբառների ազդեցութեան:

Բնդունելութեան Ապառնի ժամանակը վերջանում է հին հայերէնում լաց, նորում՝ լո, առաջինը մնացել է Ագուլիսի լեզուում կերպարանափոխված լաց, օրինակ՝ գլրեւաց, սնեւաց, բհիւաց (ասելոց), մնալաց, և այլն. երկրորդը նոյնութեամբ

1) Արտաս. կաղուղ., իբր թէ լինէր՝ լյսել, ճյրել, տյրել:

Յղնայի լեզուում (ինչպէս և Վարս բաղնի)՝ կրիլու (գրելու), տրնիլու կամ տանիլու, ըհիլու, մնալու, ևայլն:

§ 32. Սահմանական եղանակ:

1. Ներկայ: Նոր հայերէնի արևելեան մասումը այս ժամանակը կազմվում է ուժ վերջաւորութեան միջոցով, որ զընվում է բայի արմատի վերայ: Այդ ուժ ոչ այլ ինչ է, եթէ ոչ Ներգոյական հոլով վերջաւորութիւնը, որը աւելանալով բայի արմատի վերայ՝ ցոյց է տալիս այդպիսով առարկայի գործողութեան կամ կրելութեան մէջ գտնվելը: Վորա Ներգոյական լինիլը սպացուցանվում է փոքր ՚ի շատէ և նորանով որ այն բայերը, որոնք չ'են ընդունում ուժ վերջաւորութիւնը, փոխարինում են նորան Անկրեցթ եղանակի այն ձևով, որը համապատասխանում է Ներգոյական հոլովին՝ միայն այն զանազանութեամբ, որ այդ Ներգոյական հոլովը ցոյց է տալիս առարկայի գործողութեան ժամանակ մէջ գտնվելը, այդ այն ձևն է, որ վերջանում է լի կամ աւելի ճիշդն տաած իս՝ գրելիս, տալիս, լալիս:

Աւրեմն այդ երկու կերպովը կազմվում է Սահմանական եղանակի Ներկայ ժամանակը. ուժ—ի միջոցով կազմում են Բոլոր բայերը Բոլոր ու վերջացած բայերից, որոնք կազմում են իրանց Ներկայ (լի) — ի միջոցով: Հետագայում համար առաջին ձևը անուանենք առաջին լծորդութիւն, երկրորդը — երկրորդ լծորդութիւն:

Այդ տեսակ է կազմվում, ասացինք, Ներկայ ժամանակը նոր հայերէնի ամբողջ արևելեան ճիւղումը, ուրեմն և զօկերէնումը, որը այդ ճիւղի բարբառներից մէկն է: Այդ ուժ, որ օգնում է Սահմանականի Ներկայ ժամանակը կազմելուն, ասացինք, Ներգոյականի վերջաւորութիւնն է, ուրեմն զօկերէնում նա անթարկվում է նոյն օրէնքներին, որոնց անթարկ-

վում է նա իբրև անունների 'Սերգոյական հորովի վերջաւորութիւն, այսինքն՝ Ազուլիսի լեզուում՝ շէշի պալի Գրանիշ Ժամանակը (ուրումն միավանկ բայերումը անպատճառ) Ժոմ է ում, իսկ շէշից դոմ—ն Ժաւով Գրանիշ է ամ (§ 24). Յնայի լեզուում՝ ում Ժաւը դէպքից համար էլ Ժոմ է անփոփոխ (ibid. և § 6, ծանօթ.):

Եստեղով 'Սերկայի մասին հարկաւոր է ուշադրութիւն դարձնել մի նշանաւոր՝ միայն զի Բարբառին յապտի երեղթի վերայ. այն Բայերը որոնք պիտի էն յայնաւոր տառով 'Սերկայ Ժամանակում իրանց պիտի ընդունուին ն. օրինակ՝ ն—ա համ ըմ, ն—օտամ ըմ, ն—իզամ ըմ (ցղն. նահում ըմ. նօտում ըմ, նօզում ըմ), և այլն: Եւ շտեղծ է յառաջացել այդ ն և ի՞նչ նշանակութիւն ունի: Ահա պրօֆ. Պատկանեանի կարծիքը դորա մասին, որի հետ մենք բոլորովին համաձայն ենք. «Թէև այժմ դժվար է մեկնել այդ տառի էութիւնը, այնուամենայնիւ այդ երեղթը չը պիտի խառնել այն ն հետ, որ մենք պատահում ենք Արեւանի բարբառի նշնիւ և Տփլիսի բարբառի նշնիւ (ընկնիւ), նշնիւ (ընկիւ) բառերի մէջ, որոնց մէջ այդ ն պատահական է (արտասանութեան յարմարութեան համար ¹⁾):» «Ի նախդիրը—ասում է մի ուրիշ տեղ պրօֆ. Պատկանեանը ²⁾—որը Տրական ում—ի հետ կազմել է 'Սերգոյական (Мѣстный) հորովը, նոր բարբառներում գործածութիւնից ընկել է: Նա անհետացել է, բայց ոչ բոլոր դէպքերում. Ազուլեցոց բարբառումը նա երևում է մի ուրիշ հին նախդրի ձևով, որը մենք պատահում ենք հնագոյն հեղինակների մօտ ('Վալիթ) և որը կապ ունի ուրիշ հնդկա—եւրոպական լեզուների in, en նախդիրների հետ:

1) Патк. Изсл. о діал. Арм. яз. № 46:

2) Ibid. № 20:

Ագոււլիցոց նոյն—куда ¹⁾ բառումը ն գրված է «—ի վերայ, իբր՝ յոյն—в какую сторону? в какомъ мѣстѣ? гдѣ? Համեմ. Թուղ. նոյնստայ:»

Այժմ բերենք մի քանի օրինակներ Ներկայի խոնարհման:

I. Ածորդութիւն (ում, ամ):

Գրախո.

Զգի.

կտրում եմ, ես, է, ենք,	Ագ. կտրումում, ըս, այ, ծղ. կտրումում, ըս, ևն.
էք, են.	ըք, ըք, ըն.
ասում եմ, ես, է, ենք,	նահումում, ըս, այ, նահումում, ըս, ևն.
էք, են.	ըք, ըք, ըն.
հեռանում եմ, ես, է, ենք, էք, են.	հեռանումում, ըս, այ, (խոնարհվ. II ըծորդ. աներ, եղ—ալ):
	ըք, ըք, ըն.

II. Ածորդութիւն (ալ—իս—օլիս—ելիս, տիս ներքեւ ծան.):

տալիս եմ, ես, է, ենք,	Ագ. տալիսում, ըս, այ, ծղ. տալիսում, ըս, ևն.
էք, են.	ըք, ըք, ըն.
գալիս եմ, ես, է, ենք,	գելիսում, ըս, այ, գօլիսում, ըս, ևն.
էք, են.	ըք, ըք, ըն.

Նշանով. ալ—իս—օլ—իս—ել—իս վերջաւորութիւնների մէջ լիորում է, որից յետոյ կորում է և հետեւալ է, այնպէս որ ընկնում է ամբողջ վիճակը. ուստի յառաջանում է ա—ս, օ—ս, ե—ս վերջաւորութիւնը. այնպէս որ Յղնայի լեզուն ներկայացնում է մեզ բացի յիշեալ ձևերից և հետեւալ ձևերը՝ տասում, գօսում, տանսում: Այս երեւոյթը (վերջաւորում) կատարեւապէս մեկնում է « Խոյեցոց բարբառի ներկայ ժամանակի մէջ՝ բերեսում, երթասում, կայն: Ուրեմն Խոյեցոց այդ «, որը անմեկնելի է համարվում ²⁾, շատ հեշտ տեսակ մեկնվում է շնորհիւ զօկ բարբառի: Թէև ալ—իս—օլ—իս—ել—իս վերջաւորում

¹⁾ Նշանակում է նոյնպէս гдѣ?

²⁾ Յեւ Պատկ. Насѣд. о діал. Армян. яз. Կր. 20 և 75:

Թիւների մէջ և (և) կորուստը յատուկ է միայն Յղնայի բարբառին, բայց և կորուստը ուրիշ գէպքերում յատուկ է և Ագուլիսի լեզուին. օրինակի համար՝ Անցեալ Աատարեալ ժամանակում զօկերէնը (ագ. և ցղ.) ներկայացնում է մեզ երկու ձև՝ ահալ ըմ, լսել ըմ, ևայլն և ահամ, լսեմ, ևայլն (տես ներքև. Անց. Աատ.):

2. Անցեալ անկապայ կազմվում է 'Ներկայի նման և խոնարհվում է էական բայի Անցեալ անկատարի միջոցով: 'Նկատելու է միայն որ այս գէպքում էական բայի այդ ժամանակի ձևը քիչ կերպարանափոխվում է, այսինքն՝ ըմ'նել, ըս'նել, այ'նել, ըք'նել, ըք'նել, ըն'նել և ոչ'նել ըմ, նել ըս, ևայլն, (29. 2 ծանօթ.):

I. Ածորդութիւն:

Գրական.

Զգլ.

կտրում էի, էիր, էր,	Ագ. կտրում ըմ'նել, ըս'նել, կտրում ըմ'նել, են.
էինք, էիք, էին.	նել, այ'նել, են.
ասում էի, էիր, էր,	նահամ ըմ'նել, են. նահամ ըմ'նել, են.
էինք, էիք, էին.	
հռանում էի, էիր, էր,	հռանամ ըմ'նել, են. (II Ածորդ.)
էինք, էիք, էին.	

II. Ածորդութիւն:

տալիս էի, էիր, էր,	տալիս ըմ'նել, ըս'նել, տալիս ըմ'նել, են.
էինք, էիք, էին.	ևայլն.
գալիս էի, էիր, էր,	գեղիս ըմ'նել, ըս'նել, գօղիս ըմ'նել, ևայլն.
էինք, էիք, էին.	ևայլն.

3. Անցեալ Հապարեալ (Perfect. historicum, Аористъ): Այդ ժամանակը զօկերէնում բոլորովին ինքնուրոյն կերպարանք ունի. նա չ'է ընդունում, ինչպէս գրականականում և ուրիշ

բարբառներում՝ ց—ի, ց—այ կամ ի, այ վերջաւորութիւնները, այլ կազմում է այնպէս, ինչպէս զրականականում և ուրիշ բարբառներում Անցեալ Յարակատարը, այսինքն՝ առնվում է բայի Անցեալ ընդոսնելու—նեան ա—աջին յեւը՝ ել կամ ալ (ոչ էժ կօժ աժ) և էական բայի՝ Նեքիայ ժամանակը ստացվում է ուրեմն՝ լսել ըմ, տարալ ըմ, ահալ ըմ, ևայլն—մի ձև, որ կրում է Անցեալ Յարակատարի կերպարանքը, բայց ունի մի—միայն Աստարեալի նշանակութիւն։ Այդ ձևի հետ միասին զօկերէնում գործ է ածվում և մի ուրիշ ձև, որը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի և նոյն ձևը միայն կրճատված՝ է—ի կորուսմամբ, —մի երևոյթ, որի մասին խօսացինք վերև (1 ծան.). այնպէս որ՝ լսել ըմ=լսե—մ, լսել ըս=լսե—ս, լսել ըք=լսե—ք, տարալ ըն=տարա—ն, ևայլն։ Նկատել հարկաւոր է որ եզակի Յօդ գէմքը չ'է կրճատվում, այլ մնում է միշտ—ել այ կամ—ալ այ՝ լսել այ, տարալ այ, ևայլն։ Այս է հէնց Աօրիստի այն ձևը, որի գոյութիւնը Ազուլեցոց բարբառում միայն ենթադրում է Պատկանեանը, իսկ այսպիսի ձևեր, ինչպէս ահալ այ, կանչալ այ, տանջալ ըմ՝ նանջալ ըմ, զնելով տանջած ըմ, նանջած ըմ, ևայլն հետ՝ նա համարում է Անցեալ Յարակատար (Perf. logicum), մինչդեռ զօկերէնում այդ երկու ձևերը բոլորովին տարբեր նշանակութիւն ունին, մէկը՝ տանջալ ըմ, նանջալ ըմ—Աօրիստ է (Անց. կատ.), միւսը՝ տանջած ըմ, նանջած ըմ—Անցեալ Յարակատար (Perf. log.): Ներթադրելով Աօրիստի գոյութիւնը զօկերէնում, Պատկանեանը փորձում է կազմել այդ ժամանակը. նա կազմում է՝

տահամ, Կահար, Կահա—

տահաք, տահաք, տահան։

Այդ ձևերը կազմելիս օգնել է անշուշտ բարբառների ա—նալօգիան և այդ յաջողվել է բացի եզակի երկրորդ և երրորդ

դէմքերից՝ Կահար, Կահաւ, որոնք բոլորովին օտար են զօկ բարբառին:

4. Անցեալ Յարակապար (Perf. logicum), Անցեալ Պերա-կապար (Plusquamperfectum): Պոքա կազմվում են զօկի-ւննում այնպէս, ինչպէս և ուրիշ բարբառներում, այսինքն՝ Անցեալ Անդոռնելը-Նեան և Էական բայի Ներկայի (Անցեալ Յարակ, Համար) և Անցեալ Անկապարի (Պերակատարի Հա-մար) միջոցով. միայն զօկերէնը զանազանում է զլականա-կանից և ուրիշ բարբառներից նորանով, որ այս ժամանակ-ները կազմելու Համար առնում է Անցեալ Անդոռնելը-Նեան Դայի երկրորդ, այսինքն՝ ած (կամ եծ) վերջացած յեր:

Անց. Ապարեալ:

Գրական.

Զօկ.

Էլ. կտրեցի, եցիր, եց. կտրել (ցղ. կտրալ) ըմ, կամ՝ կտրեմ, կտրես,	ըս, այ.	կտրել այ.
յգ. կտրեցինք, եցիք, կտրել (ցղ. կտրալ) ըք,	կտրեք, կտրեք,	
եցին.	ըք, ըն.	կտրեն ¹⁾ :
ասացի, ասացիր, ասաց. (ադ. և ցղ.) ահալ ըմ, կամ՝ ահամ, ահաս,	ըս, այ.	ահալ այ.
ասացինք, ասացիք, ա-	ահալ ըք, ըք, ըն.	ահաք, ահաք,
սացին.		ահան:
հեռացայ, ար, աւ.	հռահալ ըմ, ըս, այ.	կամ՝ հռահամ, հռահաս,
		հռահալ այ.
հեռացանք, աք, ան.	հռահալ ըք, ըք, ըն.	հռահաք, հռահաք,
		հռահան:

Անց. Յարակապար:

կտրել } եմ, ես, Էն.	ադ. կտրել }
կտրած }	ցղ. կտրած } ըմ, ըս, այ, ըք, ըք, ըն:

¹⁾ Տես վերև 3. Ցղնեցերէնը կը լինի 'ի հարկէ՝ կտրամ, կտրաս, կտրալ այ. կտրաք, կտրան:

ասել	{	եմ, ես, է, ենք, էք, են.	(ագ. և ցղ.)	ահած ըմ, ըս, այ,
ասած				
հեռացել	{	եմ, ես, է, ենք, էք, են.	(ագ. և ցղ.)	հռահած ըմ, ըս, այ,
հեռացած				

Անյ. Պէրսիապար:

կտրել	{	էի, էիր, էր, էինք, էիք, էին.	ագ. կտրեծ	{	ըմենլ, ըսենլ, այնել,
կտրած					
ասել	{	էի, էիր, էր, էինք, էիք, էին.	(ագ. և ցղ.)	ահած ըմենլ, ըսենլ,	
ասած					
հեռացել	{	էի, էիր, էր, էինք, էիք, էին.	(ագ. և ցղ.)	հռահած ըմենլ, ըսենլ,	
հեռացած					

5. Ապառնի: Այս ժամանակը ունի զօկերէնումի առանձին ինքնուրոյնութիւն. այդ քաղաքաւը չի գտնուի քաղաքի ինքնուրոյնութիւն. որի օգնութեամբ կազմվում է Ապառնին նոր հայերէնի ամբողջ արեւելեան ճիւղում՝ թէ գրականականումը, թէ բարբառներումը: Այդ ինքնուրոյնութիւնը Ապառնում համար չէ մօտեցնում զօկերէնը արեւմտեան հայ բարբառներին, որովհետեւ այս վերջինները գտնուի ուրիշ ժամանակների (Ներկայի և Անկատարի) համար ունին ինքնուրոյն զօկերէնը այդ մասնիկի գործածութեան նշոյլը անգամ չ'ունի ոչ մի գէպքում: Չ'ունենալով ինքնուրոյն զօկերէնը կազմում է իւր Ապառնին առանձին քաղաքի Անիւրիւնի Երանայի և խոնարհելով նորա հետ ետեւան քաղաքի Ներկան: Չայնաւորով սկսող բայերը այստեղ էլ, ինչպէս Ներկայում, ընդհանուր են իրանց սկսող վերեւ յիշած և տառը (նահել, նառել, ևայլն): Ուրեմն՝

Ապառնի:

Գրական.

Ձգի.

կը կտրեմ, ես, է, ենք, էք, են.	(ագ. և ցղ.)	կտրիլ ըմ, ըս, այ, ըք, ըն.
-------------------------------	-------------	---------------------------

կ'ասեմ, ես, է, ենք, էք, են. (ազ. և ցղ.) նահիլ ըմ, ըս, այ, ըք, ըն,
կը հեռանամ, աս, այ, անք, ևայլն. ազ. հոանիլ, ցղ. հոանալ ըմ, ըս,
այ, ևայլն.

Ծանօթ. Ձօկերէնի այս Ապառնուն նմանութիւն ունի գրականա-
կանի և ուրիշ բարբառների բացասական Ապառնին՝ Հեմ կտրիլ, Հեմ
ասիլ, Հեմ հեռանալ, Հեմ գ'սլ, ևայլն.

§ 33. Հրամայական եղանակ:

Այս հղանակի վերջաւորութիւնները մի տեսակ կապ ու-
նին Անցեալ Բնդունելութեան հետ.

1. Եթէ Անց. Բնդուն. վերջանում է—ել, Հրամայականը
վերջան. է.
2. Եթէ Անց. Բնդ. վերջան.—ալ, Հրամայ. վերջան. ա.
3. Եթէ անց. Բնդ. վերջան.—հ—ալ (գլ. ց—ել) Հրամ.
վերջան. հ—ի: Օրինակներ.

Անցեալ Բնդուն.		Հրամայական եղ.
1. Գլխ. գրեւ	ղծի գլր—ել (ցղ. կլրեւ)	գլր—է (ցղ. կլրէ).
գրեւ	գր —ել (ցղ. տլրեւ)	գր —է (ցղ. տլրէ).
նստեւ	նստ —ել	նստ —է
	(բայց ցղն. նստ—ալ	նստ—ա)
կտրեւ	կտր —ել	կտր —է
	(բայց ցղ. կտր—ալ	կտր—ա)
2. Գլխ. խաբեւ	ղծի խար — ալ	խար —ա
	(ցղն. խարի—ալ)	
արեւ	ար —ալ	ար —ա.
թակեւ	թակ —ալ	թակ—ա, ևայլն.
3. Գլխ. մոռացեւ	ղծի մռա — հ—ալ	մռա—հ—ի
հիւանդացեւ	հիւանդա — հալ	հիւանդա—հ—ի.
թուլացեւ	թլւս — հ—ալ	թլւս—հ—ի, ևայլն.

է և և վերջաւորութիւնները զանազան կերպարանափոխութիւններ են Հրամայական Հին և վերջաւորութեան:

Վրականականը և ուրիշ բարբառները ունին Հրամայականի Համար երկու վերջաւորութիւն՝ է և եր, որոնցից է յատուկ է միայն միավանկ բայերին, իսկ մնացեալների Համար գործ է ածվում եր. այդ եր գործ է ածվում և միավանկ բայերի Համար. օրինակ՝ գրէ և գրիր, ջրէ և ջրիր, ևայլն: Չօկերէն (Հ) — է վերջաւորութիւնը անշուշտ այդ երն է. որի վերջից ընկել է յ տառը. այդպիսի մի կորուստ յատուկ է ոչ միայն զօկերէնին այլ և ուրիշ բարբառներին. օրինակ՝ Վարաբաղը. քեցի (գնացիր = գնա), օղի (ուղիր), ևայլն: Վայց և զօկերէնում երբեմն վերադառնում է այդ յ միայն կերպարանափոխված լ (§ 16). օրինակ՝ մի կտրիր — զօկ. կտրիլ մն, մի մոռանար — ագ. մոռանիլ մն, ցղն. մոռանալ մն, ևայլն: Ինչպէս տեսնում ենք վերջին օրինակներից այս վերջաւորութիւնը էլ (=իր), Յընեցոց նոյնպէս և ալ (=ար) յատուկ է միայն Բացասական Հրամայականին (Նրգելականին), ինչպէս որ գրականականում և ուրիշ բարբառներում էլ եր յատուկ է Նրգելականին: Չայնաւորով սկզբոյ բայերը այստեղ էլ ընդունում են նա հի մն կամ նահիլ մն:

Չը նայած որ զօկերէնում բացասական Հրամայականի այդ ձեւը յիշեցնում է մեզ իր վերջաւորութեամբ Աներկոյթ եղանակը, ինչպէս և գրականականում և ուրիշ բարբառներում յաճախ պատահող էլ ի տեղի եր, այնու ամենայնիւ չմենք ը — ից փոխված ենք Համարում և ոչ թէ այդ ձեւը Աներկոյթի օգնութեամբ կազմված. թէ և Ռուսաց լեզուն տալիս է մեզ մի փոքրիկ նմանութիւն՝ не дѣлать = не дѣлай, не говорить = не говори, բայց ի՞նչ Հարկաւորութիւն կայ այդպիսի մի անալոգիայի, քանի Հին Հայերէնը տալիս է մեզ մի գրեթէ, մի հեռանար, ևայլն: Վրականականի մասին

կ'ասենք որ երբեմն պատահող այդ էլ ասլի տեղի՝ էր, աք մի տեղի և անպէտք զաւառականութիւն է:

Արգելական մասնիկը զօկերէնում բացի իւր ընդհանուր ֆ ձևից մենք պատահում ենք մա ձևով (§ 4): Այդ մասնիկը ունի այն յատկութիւնը որ Դեմոստէնէ Բայից յետոյ (§ 4, ծան. 2) և յոգնակի 2-դ Դեմոստէնէ Բայից իւր վերջաւորութիւնը ընդհանրութեամբ այդ վերջաւորութիւնը (+) իւր վերայ:

Եզրի.	Յոգնակի.
կապի մա (կամ մի)	կապի մաք (կամ միք ¹⁾).
կամ կապիլ մա	կամ կապիլ մաք.
նաչի մա	նաչի մաք.
նաչիլ մա	նաչիլ մաք.
հոանի մա	հոանի մաք.
հոանիլ մա	հոանիլ մաք:

Այդ երկուքը յատուկ է և ուրիշ բարբառներին. համեմ. Արաբադ. ասիլ մի, պերիլ մէք և այլն:

Դիտել. Այն բայերը, որոնք գրականականում և ուրիշ բարբառներում կազմում են իրանց հրամայականը առանց յիշեալ վերջաւորութիւնների, նոյն տեսակ էլ կազմում են զօկերէնում, պահելով միայն զօկերէնի ֆօնետիկայի օրէնքները. օրինակ՝ տար — զօկ. տօր (§ 1), գնա — նօ (ibid), տուր — տօ (ibid). Ընկեւ է զ վերջաւորութիւնը, եկ — ագ. իկ (§ 2) — ցըն. էկ, և այլն:

§ 34. Ստորագասական եղանակ:

Ինչպէս նոր հայերէնի գրականականում և ուրիշ բարբառներում, այնպէս էլ զօկերէնում այս եղանակը խոնարհութեամբ է ինչպէս հին հայերէնի Սահմանականը. միայն զօկերէնը՝ իւր ֆօնետիկայի ոգուն համեմատ (§ 2), բայի վերջաւորութեան

¹⁾ Միք՝ + արտաս ֆj § 12:

մէջ է փոխուում է (Համեմ. Տփիւ. բարբ.) օրինակ՝ կտրեմ—
զօկ. կտրիմ, ասեմ—աՀիմ, Լայլն: 'Ի Հարկէ այդ եղանակի
թաճանախները կազմելը— վերայ աղբորմ է Անկերեայն եղանակը, զոր—
օրինակ՝ Հիւանդանալ— գրակ. և ուրիշ բարբ. Ստորագ.
Հիւանդանամ, իսկ ագրուլ. Հիւանդանիմ, որովհետեւ Անկերե-
ւոյթ եղանակն է Հիւանդանիլ, բայց ցղն. Հիւանդանամ, ո-
րովհետեւ Անկեր. եղ. Հիւանդանալ:

Ս տ ո Ր ա դ. ե դ.

Ներխայ:

Գրական.

Զօկ.

կտրեմ, Լս, է, ենք, էք, են

կտրիմ, իս, ի, իք, իք, ին.

ասեմ, Լս, է, ենք, էք, են

աՀիմ, իս, ի, իք, իք, ին.

Հիւանամ, աս, այ, անք, աք, ան: ագ. Հռանիմ (Անկեր. եղ. Հռանիլ), իս, Լն
ցղ. Հռանամ (ան. եղ. Հռանալ).

գամ, գաս, գայ, գանք, Լայլն.

գում, գուս, գոյ ¹⁾, գուք, գուք, գուն
(§ 1).

տամ, տաս, Լայլն.

տոմ, տոս, տոյ ¹⁾, տոք, տոք, տոն
(§ 1):

Անց. Անկարար:

կտրէի, էիր, էր, էինք, էիք, էին

կտրիմ նեւ, իս նեւ, ի նեւ իք նեւ
իք նեւ ին նեւ.

ասէի, էիր, էր, էինք, էիք, էին

աՀիմ նեւ, իս նեւ, ի նեւ իք նեւ
իք նեւ ին նեւ.

Հեռանայի, իր, ար, ինք, իք, ին: ագ. Հռանիմ նեւ, ցղն. Հռանամ նեւ,
Լայլն.

գայի, իր, ար, ինք, իք, ին

գում նեւ, գուս նեւ, ույ նեւ, ուք
նեւ Լայլն.

տայի, իր, ար, ինք, իք, ին

տոմ նեւ, տոս նեւ, տոյ նեւ, տոք նեւ, Լն:

¹⁾ Գոյ, տոյ—յ է արտաս. գնում ենք միայն ուղղագրութեան համար:

Եղանակ:

կը կտրէի, էի, էր, Լայլն	կտրիլ ըմ նեւ, ըս նեւ, այ նեւ, Ըք նեւ, Լայլն,
կ'ասէի, էի, էր, էինք, Լայլն	նահիլ ըմ նեւ, ըս նեւ, այ նեւ, Ըք նեւ, Լայլն,
կը հռանայի, իր, ար, Լայլն	ազ-հռանիլ ցղ- հռանալ ըմ նեւ, ըս նեւ, Լայլն,
կը գտայի, իր, ար, ինք, իք, ին	գոլ ըմ նեւ, ըս նեւ, այ նեւ, Ըք նեւ, Լայլն,
կը տայի, իր, ար, ինք, իք, ին	տօլ ըմ նեւ, ըս նեւ, այ նեւ, Ըք նեւ, Լայլն,

§ 35. **Դասեր.** 1. Մենք ներկայացրինք՝ ներգործականի խոնարհումը. նշելագես խոնարհվում է և կրաւորականը միայն ու (վ) աւելմամբ, որ դնվում է բայի արմատի և նորա վերջաւորութեան մէջ. օրինակ՝ ներգործ. կտր — ում բմ, կրաւորական՝ կտր — վ — ում բմ, ւայլն:

Դասեր. 2. Էլիւ (ցղ. էնալ) — ինել բայի խոնարհումը:

Ун кр к л н ј [Ѣ] к њ.

Գրական, Զգի,
 լինել ազ. էլիլ Սեռ. ըլելի կամ ըլելու.
 ցղն. էլնալ ընայի կամ ընայու.

የኢንፍጥናት ስርዓት ስለሆነ፡

Ներքոյ, եղող. ագ. էլուղ ցղ. էլուղ.
Անց. եղել, եղած — էլալ, էլած —
Այստեղ, լինելոյ, լինելու ագ. ըլելաց — ցղ. ըլնալու.

Ասհման ալ. Եղ.

‘လင်းစိုင်း’

լինում եմ, ես, է, ենք, են. ագ. նեւում լմ, ըս, այ, լք, լք, լն:
 քղ. ըննչիս կամ ըննս (§32) լմ, ըս, են:

Աղբյուր:

Հիսուս էի, էիր, էր, էինք, են. ագ. նեւամ ըմ նեւ, ըս նեւ, պո նեւ, են:
ԿՂ. Ըլնալիս կամ ըլնան ըմ նեւ, ըս նեւ.

Պատարեալ.

եղայ (էլայ, զէլ), ար, աւ, ան. էլալ ըմ, ըս, այ, ըք, ըք, ըն.
կամ էլամ, էլաս, էլալայ, էլաք, էլաք, էլան:

Յարկապար.

եղել եմ (էլել եմ), ես, է, ան.
կամ եղած եմ (ելած եմ), ես, է. էլած ըմ, ըս, այ, ըք, ըք, ըն:

Գլխապար.

եղել էի (էլել էի), էիր, ևայլն.
կամ եղած էի, էիր, ևայլն. էլած ըմ նել, ըս նել, այ նել, ևայլն:

Ապարանի.

ագ. նելիլ ըմ, ըս, այ, ըք, ըք, ըն.
կը լինեմ, ես, է, ենք, էք, են. ցղ. էլնալ ըմ, ըս, այ, ըք, ըք, ըն:

Հրամայական եղ.

Եղան.	Եղան.	Եղան.	Եղան.
լեր, եղիր	եղէք	էլի	էլիք (ագ. և ցղ.)
մի լինիր	մի լինէք	(ագ.) նելի մա	նելի մաք.
մի եղիր	մի եղէք	կամ նելիլ մա	կամ նելիլ մաք.
		(ցղ.) էլնա մա	էլնա մաք.
		կամ էլնալ մա	կամ էլնալ մաք:

Ստորագր. եղ.

Ներկայ.

լինեմ, ես, է, ենք, էք, են. ագ. ընամ, ամ, այ, ամ, ամ, ան¹⁾.
ցղ. ընեմ, ես, է, էք, էք, են:

Անկապ.

լինէի, էիր, էր, էինք, էիք, էին ագ. ընամ նել, ամ նել, այ նել, ան.
ցղ. ընեմ նել, ես նել, է նել, ան:

¹⁾ Այս ձևը մեկնելու է Լ կորուսմամբ:

Ապարանի.

կը լինէի, էիր, էր, էինք, ևայլն. ագ. նեւիլ ըմ նեւ, ըս նեւ, այ նեւ, ևն.
ցղ. էլնալ ըմ նեւ, ևն (Ան. եղ. էլ նալ):

IV. Մ Ա Վ Ր Ա Յ, Ն Ա Խ Դ Ի Ր, Հ Ա Ղ Վ Ա Պ:

§ 36. Տօկերէնի քերականութեան այս մասը Հետազոտութեան Համար մի առանձին նիւթ չ'է տալիս. եթէ կայ մի փոքր 'ի շատէ ուշադրութեան արժանի բան՝ այդ բառերի Ֆօնետիկական մի բանի առանձնութիւններն ևն, որ և պարզ կը տեսնենք Հետեւեալ օրինակներից:

1. Մ ա կ բ ա յ,

ԷՔ (ցղն. իփ), ԷՔո (ցղն. իփոր)—երբ, երբ որ: Այս տեղ տեսնում ենք չ—ի կորուստը, որը մի տարօրինակ բան չ'է թէ զօկերէնում, թէ ուրիշ բարբառներում. է—ի է փոփոխել Համաձայն է § 2 միավանկ բառերի վերաբերեալ ասածին: Յղն. է 'ի տեղի ագ. Է (իբ—իփ) գլ. II, II և § 9:

Դա, ցղն. Դն—քանի: Պրակ. է=ագ. ա=ցղն. է. § 4. Համեմ. սկրտ—ագ. սարտ—ցղն. սէրտ.

աւելաւ, ցղն. ինչքան կամ իշքան—ինչքան: Պրական. ինչ=ագ. ունչ (ցղն. ինչ) § 4. Համեմ. Դն—ագ. մոյն—ցղն. մոն: Ղ—ի Ղփոխվել § 16.

Խօր—ուր: Այստեղ ն=է (=չ. տես § 32. նօր—յուր—յո, Համ. Ղարաբ. յոր: Ու=օ § 6.

աւելաւ, ըլլաւ, ցղն. ինչտեղ, իշտեղ, ըշտեղ—ինչտեղ. § 4, 16.

հօլ Կեղ, աստեղ ցղն. ըստեղ—այստեղ § 28. ծան. 2, 3.

աստեղ, ցղն. ըտեղ—այդտեղ. Ատեղ 'ի տեղի ադտեղ § 28, 2.

անդեղ, ցղն. ընդեղ—այնտեղ. Կ փոփոխվ է Դ. § 10.

վեր—վեր. Կ=ի § 2.

վեր—վայր § 3, ծան. 1.

յանան, յապաւ, յեպով ցղն. յեաքան, յետաւ—յետոյ. յ մասին § 15. յատն — ան՝ ան պատեղ Նացատականի վերջաւորութիւն է երևում (§ 22, ծան. 2) Համեմ. յետ—ոյ. անաս, ցղն. ասպէս — այսպէս. Ամաս=աս+մաս, ուր ճ փոխվել է ու—ից ինչպէս հասիլ, ցղն. ճէտիլ—պէտիլ § 16. իսկ ա=է § 4.

ասպի, ցղն. ըստի — այստեսակ.

ասի ցղն. ըտի—այդտեսակ. Ատի=ատտի. § 28, 2.

անիւի, ցղն. ընդի—այնտեսակ. § 10.

աւրի. որտեսակ (ինչ տեսակ). Կի վերջաւորութիւնը այս բառերի մէջ Կեասի (կերպ՝ ինչ կերպ—какимъ образом) բառի կրճատումն է:

Նացատական ու մասնիկը (կրճատված չէ, տրանից արդէն չէ). զօի. ու (ո=ու § 5) ընդունում է ազու. բարբ. աւերլոյ Ն տառը՝ ունչ. գործ է ածվում բայից յետոյ:

2. Ն ա ի ղ ի ը: Ներականական այդ տերմինը իւր բուն նշանակութիւնը արդէն կորցրած է. նախդիրը զնվում է այժմեան լեզուում ըստ մեծի մասին ոչ բառից ստաջ (նախ), այլ բառից յետոյ. այդպէս է այժմեան գրականականում և ուրիշ բարբառներում. այդպէս է և զօկերէնում: Ահա նախդիրների և նոցա գործածութեան մի քանի օրինակներ.

հասի, ցղն. հէի. համ. Վարար. հետէ—համար.

աւայ կամ աւի, հաւայ կամ հաւի—համար, պատճառով. օրինակ՝ քիզ ուջի ըմ ակած—քիզ համար, քո պատճառով եմ եկել:

ճաջ, ցղն. Բէլ—մէջ. Զ—չ § 16. ա—է § 4.

Կօֆ, Կալկն — տակ, տակին. օրինակ՝ ուտի տօկ, բշխարքիս տակին:

յապից, ցղն. յեպից—յետքից, ետեից. օրինակ քարի յաւքից.
յեպ, ցղն. յեպ—յետ, ետ. օրինակ՝ անձանից յիտ—ինձանից յետ.
կէշա, ցղն. կօշտ, ծօփ—մօտ. և ազուէցերէնի ձևի մէջ (կէշտ)
արտասանվում է չը նայած է—ին ինչպէս ցղնեցերէն կօշա
բառի մէջ. կէշտ, ցղն. կօշտ=կուշտ, ուր ուրեմն ու=ազ.
է, ցղն. օ § 5.

վարայ, ցղն. վերայ. օրինակ՝ ձիւ վարայ.

ըրնից, առանց, ցղն. ըրտնից, առտնից: Այս նախդիրը դրն-
վում է միշտ բառի սկսբից. օրինակ՝ առանց խելքի: Նրդ-
նեցերէնի ձևը հիշտ է մեկնել. ա կրճատվելով բառը դառ-
նում է միավանկ. այդ միավանկ բառի մէջ միւս ա փոխ-
վում է առաջ. օ, յետոյ օ փոխվում է ա § 1.

Ռնչի, Ռնչի. օրինակ մինչև նրօ դոլը — մինչև նորա գալը:
Մինչի=մինչ+ի. օրինակ՝ մինչի ձիւ տուն=մինչև 'ի ձիւ
տուն.

Դէն=դէպի, որը բաղկացած է դէպ+ի. ա այստեղ փոխվել
է Է անշուշտ Դ—ի ազդեցութեան տակ:

Այս վերջին երկու օրինակներում տեսնում ենք պահված
հին և նախդիրը. ն նախդրի մասին որ=ի տես § 32: Ինչպէս
համեմատական հետք յիշելու է նոյնպէս ղ նախդիրը, որը զօկե-
րէնում, ինչպէս և ուրիշ բարբառներում, մնացել է միայն
համեմատական բառ մասնիկի հետ. մոյնը (ցղն. մունը) քան
զմիւսը: Այնքան սերտ կապված են այդ երկու բառերը որ
զուցէ աւելի ուղիղ կը լինէր գրել միասին՝ բանդ (մի քանի
բարբառներում նոյնպէս և զօկերէնում մինչև անգամ բանդ),
ինչպէս որ արդէն ընդունված է միասին գրել Ռնչի, Դէպ:

3. Շ ա ղ կ ա պ. և, ու, այդ ու—ից կրճատված ը. օրինակ-
ներ՝ թուն ու փրթունչ (թուն=թան), հայր ու որթի, թօր ու
թվանդ, սօր ու քօր, ևայլն. այս բոլոր օրինակներում կարելի
է 'ի տեղի ու դնել նորա կրճատումը ը. հայր ը որթի, սօր ը
քօր, ևայլն: Այս մի շաղկապ, որ մեկնութեան կարօտ է. այդ
շաղկապը բաղկացած է նոյն ը—ից, որի վերայ աւելանում է
նա (կամ նա, ինչպէս՝ վարայ, վերայ—վարան, վերան). օրի-
նակ իս ը նա դու (կամ իս ը նան դու), ձի ը նա(ն) ջերի,
ևայլն: Արդեօք այդ այն նա չ'է, որ զբականականումն էլ դըն-
վում է (միայն առջևից) և—ի հետ=նաև:

Գ Լ ՈՒԽ IV.

§ 37. 'Ի նկատի ունենալով մեր ժողոված բոլոր նիւթերը զօկ բարբառի Ֆօնետիկայի և քերականութեան վերաբերեալ, մենք յուսով ենք որ ընթերցողը կարող է մի որոշ գաղափար կազմել այդ բարբառի վերաբերեալ: Մենք արդէն մեր հետազօտութեան սկսբում տեսանք թէ ինչ կարծիք երբեմն կարելի է լսել զօկ բարբառի մասին՝ իբր թէ դա մի պայմանաւոր լեզու է, որ յօրինել են Ագուլիսի և Նուրա շըրջակայ Հայերը իրանց մէջ ապրող կամ իրանց շրջապատող օտարներին անհասկանալի լինելու համար: Այդպիսի մի ենթադրութիւն, այդպիսի մի մեկնութիւն մի ամբողջ բարբառի ծագման ստոր է լեզուաբանական քննադատութենից. բաւական է յետ նայել և մի հայեացք դնել մեր հաւաքած նիւթերի վերայ և ընթերցողը կը տեսնէ իւր առաջ ոչ թէ մի պայմանաւոր լեզու, այլ մի բարբառ, որ ունի Ֆօնետիկական և քերականական հաստատ օրէնքներ, որ ունի ինչպէս ինքնուրոյն բարբառ՝ լեզուաբանական առանձնութիւններ և կրկին ինչպէս բարբառ, այսինքն ինչպէս անդամ մի լեզուի ընտանիքի՝ ընդհանուր կէտեր նոյն ընտանիքի այլ անդամների, որ է այլ բարբառների, և ընդհանուր մայր—լեզուի հետ: Մի կողմ ուրեմն թողնելով վերոյիշեալ անհեթեթ կարծիքը զօկերէնի ծագման մասին, մենք այստեղ կը կրկնենք այն ենթադրութիւնը, որ յայտնել ենք մեր հետազօտութեան սկսբում՝ այդ բարբառի սկիսբը, ուրիշ աւելի յայտնի բարբառ-

ների նման, հնութեան մէջ որոնելու է: Երկար ժամանակ ապրելով իւր պատմական կեանքով, ենթարկվելով զանազան փոփոխութիւնների, անցնելով զարդացման զանազան աստիճաններ՝ նա հասել է մեզ իւր այժմեան կերպարանքով բռնելով մի որոշ տարածութիւն իւր գործածութեան: Բայց թէ ինչպէս էր կոչվում հին ժամանակներում այդ բարբառը՝ դորա մասին ոչինչ տեղեկութիւն չ'է հասել մեզ հնութենից. հին քերականները ոչինչ չ'են հաղորդում մեզ ոչ միայն այդ բարբառի անուան, այլ և նորա գոյութեան մասին. և զարմանալի էլ չ'է. մեր նախնիքների լեզուագիտութիւնը սահմանափակվում էր պետական—գրականական լեզուի քերականութեամբ, ճարտասանութեամբ և խրթին յունաստուն հրէտորական վարժութիւններով: Պօղոս էլ և այն պատճառով չ'է յիշվում այդ բարբառը որ նորա գործածութեան տարածութիւնը այնքան ընդարձակ չ'էր, ինչպէս որ այժմ էլ այնքան ընդարձակ չ'է, ինչքան ուրիշ մեզ աւելի յայտնի բարբառներին, և այնպէս նվաճող յաղթող սղղեցութիւն չ'է ունեցել, ինչպէս և այժմ, ուրիշ բարբառների վերայ: Յովհաննէս Երզնկացին (XIV դ.) միայն 8 հայ բարբառներ է անուանում¹⁾, որոնց թւում, ինչպէս կարելի էր սպասել, մենք չ'ենք տեսնում զօկերէնը. բայց նորա յիշած բարբառների մէջ մենք տեսնում ենք Սիւնիք անունով մի բարբառ, որը այժմեան բարբառների անուններով մեկնելու համար պր. Պատկանեանը պատրաստ է թէ բարբառ անուանել²⁾: Բայց ճշգրտութեան դէմ մենք մեղանշած կը լինենք, եթէ հին Սիւնիք բարբառը անպայման հաւասարենք այժմեան զօկերէնին: Հին Սիւնիաց նահանգի տարածութեան մէջ միտ-

1) Յեւ. Գլ. I:

2) Патм. Изст. о дѣл. Арм. яз. *Երես* XVI:

նում է այն երկիրը, որ այժմ կոչւում է Ղարաբաղ, մինչդեռ Ագուլիսը գտնւում է Պողթն գաւառում, որը՝ ըստ հին աշխարհագրութեան՝ պատկանում է Վասպուրական նահանգին։ Ուրեմն Նրզնկացու յիշած Սիւնիք բարբառում աւելի հաւանական է տեսնել այժմեան Ղարաբաղի բարբառը, որի զործածութեան տարածութիւնը և շրջանը աւելի ընդարձակ է քան թէ զօկ (Ագուլիսի) բարբառինը և հնումն էլ— մեծ հաւանականութեամբ կարող ենք ենթադրել— այդ ջըրջանը՝ եթէ աւելի ընդարձակ չ'էր, գոնեա նեղ էլ չ'էր այժմեան բռնած տարածութենից. ուրեմն այդպիսի մի լայնատարած երկրի բարբառը աւելի յայտնի և ծանօթ պիտի լինէր մեր գրամատիկոսներին քան թէ մի գաւառի լեզու։ Վիցուք թէ Պողթնը գտնվելով Վասպուրականի և Սիւնիքի սահմանի վերայ, կարող էր ժամանակով պատկանել Սիւնիքին թէ քաղաքականապէս և թէ առաւել իբրև եկեղեցական վիճակ, բայց չ'է կարելի խօ ենթադրել, թէ Նրզնկացին այդ համեմատաբար փոքրիկ գաւառի բարբառը պիտի յիշէր, զանց առնելով մի լայնատարած նահանգի լեզու և տարով այդ նահանգի անունը մի գաւառի բարբառի, առաւել որ այդ գաւառի անունը (Պողթն) այնքան յայտնի անուն էր հնումը, որ Նրզնկացին՝ եթէ միայն այդ գաւառի բարբառը ՚ի նկատի ունենար, անշուշտ այդ գաւառի անունով էլ հէնց կ'անուանէր։

Եթէ անպատճառ հարկ լինէր Ագուլիսի (Օօկ) բարբառը կապել Նրզնկացու յիշած Սիւնիք բարբառի հետ, աւելի հաւանական կը լինէր ընդունել զօկ բարբառը իբրև Սիւնիք կոչված բարբառի բարբառներից մէկը։ Բայց մեր ներկայացրած զօկ բարբառի ֆօնետիկական և քերականական նիւթերին նայած, չ'է կարելի՝ մեր կարծիքով՝ այդ բարբառին չը տալ բաւականին նշանաւոր ինքնուրոյնութիւն։

Սիւնիք էր անուանվում Հնումը Սիւնիքի ուրիշ բարբառ-
ների հետ միասին, թէ այլ կերպ՝ այդ մի և նոյն է, բանը
այն է որ այժմեան Ադուլիսի բարբառը նոյնքան մի ինքնու-
րոյն բարբառ է, ինչքան և Ղարաբաղոց բարբառը. այս
վերջներ բռնում է աւելի լայն շրջան, աւելի մեծ բազմու-
թիւն է խօսում այդ բարբառը, մինչդեռ Ադուլիցոյ (Ռօկ)
բարբառի շրջանը նեղ է և այդ բարբառը խօսող Հայերի
թիւը տասը հազարից աւել չ'է:

Այդպէս ուրեմն Ռօկ բարբառը ինքնուրոյն բարբառ հա-
մարկելու է, որի կենտրոնն է Ագուլիս. հեռանալով իւր այդ
կենտրոնից այդ բարբառը աստիճան առ աստիճան մօտե-
նում է իւր հարեան բարբառներին՝ մի կողմից՝ Նախիջևանի
(Վասպուրական), միւս կողմից՝ Ղարաբաղի (Սիւնիք), կորց-
նելով իւր առանձնական յատկութիւններից մի քանիսը կամ
կերպարանափոխելով նոցա և ընդունելով նորերը հարեան-
ներից, կամ ենթարկվելով նոցա առանձնութիւնների ազ-
դեցութեանը:

Ինթերցողը կը նկատէ, որ մենք մեր հետազօտութեան
մէջ մի առանձին ուշադրութիւն ենք դարձնում Յղնայի ղօ՛
Բարբառի վերայ. և այդ մենք անում ենք գիտութեամբ. այդ
Յղնայի բարբառը գեղեցկագոյն օրինակ է ներկայացնում մեզ
Ռօկ Բարբառի աստիճանաբար խոյնջելու և Ղարաբաղի Բարբա-
ռին ծագեցնելու: Հին աշխարհագրութիւնը, ինչպէս յայտնի
է, տեղաւորում է այդ գիւղը Վոդլթն գաւառի և Սիւնիք
նահանգի սահմանի վերայ: Այդպիսի սահմանակցական դիրք
բռնում է այդ գիւղը և լեզուաբանական կէտից նայած. Ռօկ
բարբառի տարածման պերիֆերիայի մէջ Յղնայի լեզուն Բու-
նոմ է այն կէտը, որն մէջ խառնվելով ապրում էն միասին Ագուլիսի
և Ղարաբաղի Բարբառների յարկու-նիւնները: Ամեն այն դէպ-
քերը, երբ մեր հետազօտած բարբառը Յղնայի լեզուի միջո-

ցով մօտենում է Վարաբաղի բարբառին, նոյնպէս և այն զէպքերը, երբ Յզնայի լեզուն թողնելով զօկերէնի ձևերը ընդունում է զարաբաղցիւրէններ—մենք աշխատել ենք նշանակել իրանց տեղումը. այստեղ կը կրկնենք միայն այն նշանաւոր ֆօնետիկական երևոյթը, որի մէջ ցզնեցիւրէնը, խիստ կերպով որոշվելով իւր մայր բարբառից (Ագուլիսի), անպայման՝ առանց բացառութեան՝ անցել է Վարաբաղի բարբառի կողմը. այդ երևոյթն է՝ mediae կորուստը և նոցա tenuēs մինչև անգամ aspiratae փոխվելը (տես Վ. II, II). օրինակ՝ ագուլ. գինի (gjni)=ցզն. կինի (kini)=ղարաբ. կինի, ագուլ. գլիւհ գլիւհ (gjlüh)=ցզն. կլուխ (cluch)=ղարաբ. կլուխ, ագ. ճրօֆյ=ցզ. ճրօֆ=ղարաբ. ճրօֆ, ևն. մինչդեռ Ագուլիսի բարբառի զլիսաւոր ֆօնետիկական առանձնութիւններէց մինն է, ինչպէս արդէն դիտենք, բաղաձայնների սկսբնական՝ իսկական արտասանութեան պահպանումը. իւր այդ յատկութեամբը այդ բարբառը նմանում է Տըփիսի բարբառին:

Բայց այն ազդեցութիւնը, որին ենթարկվում են կենտրոնից հեռու զօկ բարբառի լեզուները երբեմն հասած ենք տեսնում մինչև կենտրոնը. այնպէս որ բուն Ագուլիսի իրայ լեզուի մէջ մենք երբեմն տեսնում ենք այդ բարբառի բնաւորութեանը հակասող այսպիսի երևոյթներ՝ էգի (այգի¹⁾), ախպար (ի տեղի ախբար=եղբայր) և նորանից կրճատված՝ ապար (=ղարաբ. ապեր), ևայլն: Վուցէ այդ ազդեցութեանը վերադրելու է հետևեալ բառերի ձևերը և արտասանութիւնը՝ երկինք (jerginǵ), երկիր (jergir), երկար (jergar), որոնք ակներև հակառակում են ագուլեցոց բարբառի ոգուն, որի համեմատ պիտի լինէր արկինք (arkinǵ) կամ գո-

¹⁾ § 3, ծանօթ.

նեա էրկինք, արկիր (arkir), արկար (arkar), ինչպէս՝ արկու, ցըն. էրկու (երկու), արկաթ, և այլն, § 2:

Այստեղ խօսքնիս ինքն ըստ ինքեան դառնում է զօկերէնի կրած ազգեցութիւններին, որոնց մասին աւելորդ է՝ ենք համարում մի քանի խօսք ասել այստեղ:

Ազգեցութիւնների կնթարկվում են ոչ միայն մեծ և մանր բարբառներ, այլ և ամբողջ լեզուներ. բնականապէս ազգեցութիւններից ազատ է՝ էր կարող մնալ և զօկ բարբառը: Այդ ազգեցութիւնները երեք տեսակի բաժանելու է՝ 1) հայերէն Բարբառներէ ազգեցութիւն, որի մասին այս լուսէիս յիշեցինք, 2) էկեղեցական—գրականական լեզուի ազգեցութիւն, 3) Պարսկա—Թուրքական ազգեցութիւն: Առաջին ազգեցութիւնը մի անհրաժեշտ և անխուսափելի ազգեցութիւն է, որը յառաջանում է մշտական հազորդակցութենից հարեւանների հետ: Այդ ազգեցութիւնը, ուժեղ լինելով սահմաններումը, թուլանում է, մօտենալով դէպի կենտրոնը: Երկրորդ ազգեցութիւնն է այն, որ կատարվել է եկեղեցու և գրականութեան միջոցով. դա արտայայտվում է այն բառերում, որոնց եկեղեցական—գրականական լինելը ակներև է: Շօշափելի օրինակներ այդ ազգեցութեանը ներկայացնում են հետևեալ բառերը՝ Գեղ (եկեղեցական մտքով—Աստուած), Գեղ կամ Գեղեղեղ—(քահանայ), հոգի (духъ, душа), Բառաս, և այլն. (§ 9): Եկեղեցական ազգեցութիւնը այդ բառերի ձևերի և արտասանութեան մէջ երևում է նորանից, որ նոյն բառերը ոչ—եկեղեցական մտքով բոլորովին այլ տեսակ են արտասանվում, այսինքն՝ այնպէս, ինչպէս պահանջում է զօկ բարբառի ողին. օրինակ՝ նոյն Գեղ բառը, երբոր նշանակում է պարոն (хозяинъ, господинъ, владыцъ) ստանում է իւր սկսբնական արտասանութիւնը՝ Գայը (=տի+այր), օրինակ՝ տուն տայր, մէքի տայր, և այլն.

հոռի (հոգի) փոխաբերական մտքով նշանակում է հարց՝ փոխվում է զօկերէնի ոգուն համեմատ հեգէ, օրինակ՝ քանի հեգէ կոյ անդեղ (քանի հոգի կայ այնտեղ)։ արկու հեգի (երկու հոգի, այսինքն՝ երկու մարդ)։ եկեղեցական կամ զրականական Ռափա—ոյ և նորա բուն զօկերէն՝ Եւգլ—ոյ ձևի մասին տես § 9։ Նրբորդ ազդեցութիւնը Պարսկա—Թուրքական լեզւ, որը սաստիկ զօրեղ է, արտայայտվում է գլխաւորապէս ձայնաւորների կակղանալումը, այն է՝ ա=ան, օ=օ, ու=ուն. դորա օրինակները այստեղ բերելը աւելորդ է նոքա անթիւ են։ Այդ երևոյթի Թուրքա—Պարսկական ծագումը պարզ երևում է նորանից, որ ձայնաւորների այդպիսի փոփոխումը (կակղանալը) կատարվել է միայն հայոց այն գաւառների բարբառներում, որոնց տիրել են կամ իշխող ազդեցութիւն են ունեցել Թուրքերը և Պարսիկները. օրինակ Տփլիսը, որը համարեա կրէք չ'է ենթարկվել Թուրքերի և Պարսիկների ազդեցութեանը, չ'է ներկայացնում մեզ իւր բարբառի մէջ այդ երևոյթը։ Այդ ազդեցութեանը վերաբերելու է նոյնպէս բաղաձայների կակղանալը բառերի վերջում, օրինակ՝ կնակյ (կնիկ), հրաքյ (հերիք), և այլն։

Սաստիկ կերպով ազդել են այդ լեզուները նոյնպէս հայ բարբառների լեքսիկայի վերայ. Հայերը երկար ժամանակ ենթարկված լինելով այդ ազդերի լծին և նոցա նվաճող ազդեցութեանը՝ իրանց խօսակցական լեզուի մէջ մտցրել են այդ լեզուներից առված անթիւ բառեր, թողնելով իրանց լեզուի նոյնանշան բառերը. Վողթնը և նորա Ագուլիսը ոչ պատճառ և ոչ միջոց են ունեցել բացառութիւն կազմելու այդ տիւտը երևոյթի մէջ։

ԱԳՈՒԼԵՑՈՑ ԲԱՐԲԱՌԸ

(ԶՕԿԵՐԻ ԼԵԶՈՒՆ)

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆ:

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆՑ:

ՄԵՍԿ Ի.

ԺՈՂՈՎԱԾՈՒՑ:

Մ Ո Ս Կ Վ Ը .

Скоропечатня О. Гербека, больш. Никитская, Чернышевский пер., д. № 5.

1893.

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 19 Мая 1883 года.

ՅԵՌԵՂԵԲԵՆ

Այն գաղտնիարին, որը կարողացաւ կազմել ընթերցողը զօի բարբառի վերայ մեր Հետազօտութեան առաջին մասից, ամբողջութիւն և լիակատարութիւն տալու համար՝ մենք հարկաւոր ենք համարում յառաջ բերել այստեղ այդ բարբառով զրկած յօդվածներ, որոնք՝ իբրեւ կենդանի պատկեր այդ բարբառի՝ միջոց կը տան ընթերցողին իրան՝ անել իւր եզրակացութիւնները և նկատողութիւնները այդ բարբառի վերաբերեալ, կամ տեսնել թէ ինչ աստիճան մեր արած գիտողութիւնները հաստատվում են կենդանի օրինակներով: Այդ յօդվածների յառաջ բերելու կարևորութիւնը աւելանում է և այն պատճառով որ մեր աշխատութեան առաջին մասումը մենք միջոց չ'ունեցանք ծանօթանալ զօի բարբառի լեզուիկայի հետ, մինչդեռ այստեղ կը լրանայ այդ պակասը, մեր առաջ պարզ կերպով կը ներկայանայ բառերի ընտրողութիւնը և գործածութիւնը այդ բարբառում: մենք կը տեսնենք թէ ինչպէս Պողթնի բարբառը՝ ուրիշ հայ բարբառների նման՝ աղաւաղվել է պարսկերէնի և թուրքերէնի ազդեցութեան տակ, փոխ առնելով նոցանից և բառեր և

ոճեր իւր սեպհական բառերի և ոճերի տեղ: Մեր այստեղ բերած նիւթերի մէջ առանձին ուշադրութեան արժանի են Վ գլ. բերած խաղերը և երգերը, որոնք բուն տեղային են և ժողովրդական ¹⁾:

Ռօկ բարբառը, ինչպէս արդէն մէկ անգամ նկատել ենք, չ'ունի և չ'է ունեցել զրականութիւն. զրականութեան այդ պակասութիւնը և կենդանի բարբառի մշտական փոփոխումները զանազան ազդեցութիւնների տակ պատճառում են 'ի միջի այլոց և այն, որ մենք այժմ միջոց չ'ունինք զաղափար կազմելու ոչ միայն զօկերէնի (աւելի ընդհանրապէս ասելով՝ Վոդլիւնի լեզուի) ամենաՀին շրջանի մասին, այլ մինչև անգամ այդ բարբառի այն շրջանի մասին, երբ Ագուլիսը առաջին անգամ յիշվում է պատմութեան մէջ. այնպէս որ մեր առաջին մասումը արդէն յիշած Շրօդերի հատվածները փնտրում են ամենաՀին օրինակներ Ագուլեցոց բարբառի, որոնցից և կը սկսվի մեր այստեղ բերած յօդվածների շարքը:

¹⁾ Այդ խաղերը և երգերը՝ բացի 1 և 5՝ հաղորդել է ինձ արժանապ. Յոկովբ քահանայ Տէր-Անդրէասեանց (Դաշտեցի, որին և յայտնում եմ այստեղ իմ խորին շնորհակալութիւնը: Յայտնում եմ իմ շնորհակալութիւնը նոյնպէս և պարոն Յակովբ Անագլեանցին (Դաշտեցի)՝ նորա ինձ հաղորդած պայմանաւոր խօսքերի և առանձնների համար:

NB.

Օկ բարբառով գրվածի ընթերցանութեանը դիմելով՝
ընթերցողը չը պիտի մոռանայ թէ քանի առանցնա-
նիւններ, որոնք յատուկ են այդ բարբառին և որոնք անհրաժեշտ են
ընթերցանութեան ճշգրտութեան համար: Այդ պատճառով ըն-
թերցողի ուշադրութիւնը դարձնում ենք հետեւեալ զլխաւոր
կէտերի վերայ:

1) Բաղաձայն տառերը պահել են իրանց սկսբնական ար-
տասանութիւնը, այսինքն՝ բ=b, պ=p, գ=g, կ=k, ևն.
(Մասն I, գլ. II, § 10):

2) Կայ մի առանձին հնչիւն, որը համապատասխ. գերմ.
j, որ և նշանակումներ j (Մ. I, գլ. II, § 15):

3) Գ արտասանվում է միշտ ինչպէս գj (gj) Մ. I, § 9).
Իսկ ն—ից յետոյ Գ, որը յառաջացել է ն—ից արտասան-
վում է այնպէս, ինչպէս ընդհանուր հայերէն Գ (g) (Մ. I,
§ 11, ծան. 1):

4) Ի Ազուլեցոյց բարբառում համարեա բոլոր դէպքերում՝
ինչ ձայնաւորից առաջ կամ յետոյ որ դրված էլ լինի՝ արտա-
սանվում է կոշտ. միայն եթէ ն—ից առաջ կայ ն կամ ե կամ
այնպիսի մի ա (ցղ. է), որին նոյն բառի գրականական ձեւում
համապատասխանում է ն¹⁾, այն ժամանակ այդ ն արտա-
սանվում է կակուղ՝ էj (Մ. I, § 11):

1) Զորդինակ. կնիկ—ադ. կն—կj—ցղ. կնիկj, մտիկ—ադ. մտակj—ցղ. մտիկj:

5) ա, օ, ու կաղզացած ձայնաւորները մենք նշանակում ենք ա, օ, ու (Մ. I, գլ. II):

6) ա արտասանվում է ա եթէ նախընթաց վանկի մէջ կայ ա, օ, ու, իւ, ե, է, ի, ուրեմն բոլոր այդ դէպքերում ա—ի ա արտասանվելը ինքն ըստ ինքեան հասկանալի կը լինի և նշանակված չի լինիլ սովորական նշանով (ա). Արտասանութեան այս օրէնքին ենթարկվում են՝ Սահմ. եղ. Ներկայ ժամ. 3 դ. ա և բացառ. հա մասնիկը (հրամ. եղ. համար), որոնք նախընթաց բառի հետ սերտ կապված են լինում իբրեւ նորա վանկ (Մ. I, § 1. ծան. 1, § 4. ծան. 2). ա չ'է կաղզանում, չ'է արտասանվում ա, եթէ նախընթաց վանկումը կայ ա, օ(*), ու (Մ. I, § 1):

7) ի— արտասանվում է ոչ իբրեւ ընդհանուր հայերէնում՝ յս (=Ուսու. ու), այլ իբրեւ ֆրանս. ս (Մ. I, գլ. II, § 4). այդ պատճառով աւելորդ ենք համարում նշանակել այդ հնչեւնը երկու կէտով:

8) Բառի շէշը լինում է նախալէրջին լանկ վերայ (Մ. I, § 8):

9) Ինչ և յողն. եր վերջաւորութիւնները մնում են միշտ շէշի տակ (ibid):

I.

(Schröder. Thesaurus linguae Armenicae. Amstelodami 1711, Լր. 353, 354, 356.—
Паткановъ. Изслѣдованіе о dial. Арм. яз. 1869, Լր. 54).

Բ.—Հէրբար՝¹⁾ շտա Գօվլու տալիս, ալիկն ան այ օր զքի²⁾

I. Մշտ հատվածը մենք յառաջ ենք բերում այստեղ իբրև հե-
տաքրքրելի օրինակ անցեալ դարու սկսքի զօկերէնի: Ուղղագրու-
թիւնը պահում ենք այնպէս, ինչպէս է Շրօդերի մօտ: Խօսող ան-
ձինքներն են՝ Բ.—Բարդամ, Ա.—Առաքէլ, Տ.—Տիրատուր, Ղ.—
Ղուկաս (Տիրատուրի փեսան): Համեմատելով հետեւեալ յօդվածների
հետ, որոնք գրված են այժման զօկերէնով, ընթերցողը ինքը կա-
րող է դատել թէ ինչ աստիճան փոփոխութեան է ենթարկվել այդ
բարբառը այդ միջոցում: Այտրնեանը (Քննակ. քերակ. արդի հայ.
լեզուի 1866, եր. 207, ծան. 65) խօսելով Չորրորդ գաւառականի կամ
«Ռուսիոյ հայերէնի» վերայ, Շրօդերի այս հատվածի վերայ հիմ-
նվելով, մի քանի նկատողութիւններ է անում Ազուլէցոյ բարբառի
մասին: Նա այդ բարբառի անունը չէ տալիս, այլ անուանում է չոր-
րորդ գաւառականից «շատոնց բաժանուած և օտարացած երկրոր-
դական գաւառական մը» և «այլակերպ հայերէն» (տես ներքե
ծանօթ. 9 և 15):

1.) **Հէրբար**—Տօրեղբայր = հէր + (ախ)բար. հին ցղն. հօրիար. «հէր-
բար» բառի մէջ մենք տեսնում ենք վերադարձած ք—ի այն իստակ
հնչիւնը (=b), որը աղաւաղվել է «ախար» բառի մէջ:

2.) **Օ. Կե**—չ նախդիրը այժմ գործ չէ անվում. այժման ձևն է
Կե կամ Կեշ: չ նախդրի գործածութեան մասին տես Մ. I. § 36, 2.

մոյն փութքը քօշ պահէիս, զարա հրամանքըդ տուն տայլըս
ըխտիար օջնիս ³⁾:

Ա.—Ուղուրդ այ նասում ⁴⁾ Բարաղամն պարուն Տիրա-

3.) () Ընէս, Դօն, Երեւի, Զօն—այժմեան Զօկերը ասում են՝ Ընէս,
Դօն, Երեւի, Զօն: Եթէ հաւատանք էլ Շրօղերին թէ այդպէս են
արտասանում եղած այն ժամանակվայ Զօկերը, այնու ամենայնիւ
պիտի ենթադրենք այդ է—ի մի շատ թոյլ և հազիւ նկատելի
արտասանութիւն. ապացոյց՝ որ Զօն բառը հ—ով կրկնվելով, ար-
տասանվում է ոչ թէ հօն՝ ինչպէս պիտի սպասէինք ըստ հայոց
լեզուի սովորութեան, այլ միայն՝ հօն— «ծօվա մօն»:

4.) Ուղուրդ այ նասում—երկու բառն էլ ուղուրդ և նասում այժմ
ոչ Ագուլիսում և ոչ նորան անմիջապէս շրջապատող գիւղերում՝
Դաշտում, Տանակերտում, Լայլն, չեն գործածվում, այլ գործ են
ածվում դոցա տեղ՝ ուղուրդ, նահան. իսկ ուղուրդ (միայն մի քիչ
փոխված՝ ուղուրդ) և նասում այժմ էլ գործ են ածվում Յընայում,
ուր այնու ամենայնիւ նասում աւելի յատուկ է հին սերնդին (Մ.
I, եր. 23). աւելի տարածված է՝ նահում: Բայց թողնենք «—ի
հ փոխվելը, որը կամ կարող է ուշ կատարված լինի, կամ երկու
ձևն էլ միաժամանակ գործածական, ինչպէս, օրինակ, այժմ էլ
գործ է ածվում՝ տինիլ և տիննիլ (և այս վերջինից՝ «—ի կո-
րուսմամբ՝ տինիլ),— գլխաւոր բանը այստեղ ու վերջաւորու-
թիւնն է: Հարկաւոր է նկատել որ Ագուլիսի լեզուում ներգոյա-
կան և Սահմ. եղ. ներկայ ժամ. կազմողը ու վերջաւորութիւնն է
և ոչ ուհ, որը նոյն դերը կատարում է Յընայի լեզուում. իսկ եթէ
Ագուլեցոց լեզուում միավանկ բառերը վերջանում են ուհ, օրինակ՝
ջոռում, գլրում, նստում, Լայլն, այդ մեկնելու է զօկ բարբառի այն
մշտական յատկութեամբ, որով միավանկ բառերում « փոխվում է
« (օրինակ՝ շատ—շօտ, խաչ—խօչ Լայլն, Մ. I. § 1.), և յետոյ
այդ « օրովհետեւ հ—ի առաջ է գրված՝ նոյնպէս այդ բարբառի
ոգուն համեմատ, փոխվում է ու, ինչպէս, օրինակ՝ ժամ—ժում,
համ—հում, ծամ—ծում, Լայլն. համ. ու—ի ազդեցութիւնը նախ-
ընթաց «—ի վերայ (Մ. I. § 1. տես նոյնպէս § 24.): Ուրեմն
այդ ուհ—ի իբրև միավանկ բառերի ներգոյական հ. և Սահմ. եղ.

տուր քու հրամանքդ մոռանալի տայր ըս, զօլ⁵⁾ պարուն-
ներս քու տօմարդս կանչած օր զօվղ անիք, օվրախ պահա՛-
շօտ քամի նարիլն աղիկ չի:

Տ.—Պարուն՝ դառ դժւք ըշխարքիս բանին խբէր չիք՝
Թղթիւն արիք, դառ դժւք զօվղն նիդիլ չիք Թա անչ այ. իս

Ներկայ ժամ. կազմող վերջաւորութեան գոյութիւնը պիտեան
Ագուլեցոյ բարբառումը մեկնվում է փոփոխման հետեւեալ աստի-
ճաններով՝

գյր—աճ — գյր—օճ — գյր—աճ

նստ—աճ — նստ—օճ — նստ—աճ, և այլն:

Իսկ երկու կամ աւելի վանկ ունեցող բառերի համար Ագուլե-
ցոյ բարբառի համար մնում է միմիայն իսկական աճ վերջաւորու-
թիւնը, մինչդեռ Յղնեցոյ լեզուն ամեն դէպքի համար էլ գործ է
ածում աճ (իսկ աճ երբէք. Մ. I. § 24.). այնպէս որ՝ տանում—
ագ. տան—աճ, ցղ. տան—աճ, ուտում—ագ. նստ—աճ, ցղն. նստ—
աճ, և այլն: Այդպէս է և այստեղ յիշվող նախաճ բայը՝ ագ. նահ—
աճ, ցղն. նահ—աճ (կամ՝ նաս—աճ): Բայի այդ նախաճ բայից Յղ-
նայի լեզուի հետքերը այս Ագուլիսի բարբառով գրված հատվա-
ծում ներկայացնում են հետեւեալ լուծ (երեկի՝ լսծ) և նախաճ բա-
ռերը, որոնք ներկայացնում են Անցեալ Ընդ. ցղնեցերէն ձևը (Մ.
I. § 31.): Վասկածելի է թւում ինձ նոյնպէս և առ բառը, որը
այժմ հնչում է առ (ցղ. ինչ). կամ — այստեղ տառախալ է, կամ
մի գուցէ Հրօգերը շինած լինի այդ ձևը իրանից՝ անձ (ինձ) ձևի
անալոգիայով: Մի այդպիսի կասկած չէ՝ կարող արդեօք յարու-
ցանել ջն բառը, որի պիտեան ագուլ. ձևն է ջն, այդպէս է
մինչև անգամ և պիտեան ցղնեցերէնում, որը վծք (ագ. վունք—
վանք), թծնդ (ագ. թունգյ—թանգ.) և այլն հետ միասին ներկայա-
ցնում է այնու ամենայնիւ ջն և ոչ ջն. Բայց գուցէ այդ բառը
Հրօգերի ժամանակ դեռ ունէր փոփոխման միայն այդ աստիճանը,
որից յառաջացել է յետոյ՝ ջն, այսինքն՝ ջան—ջօն—ջուն (Մ. I.
§ 1.): Այդ բառը իւր ձևով մնում է այնու ամենայնիւ, իմ կարծի-
քով Յղնայի լեզուի նշոյլ Հրօգերի այս հատվածումը:

5.) Օլօ—(օ ?) այստեղ անշուշտ նշանակում է այս և ոչ Քօ,

անդադար միծ միծ մարդու հիտ զօվղ ըմարած՝ օր դուք անդադար լսօծ չիք. նղանիք ունչ ախպարք.

Տ.—Ը՞նչ ջօն փեսայ ⁶⁾ քո ⁷⁾ տաղդ ասա՞ ⁸⁾;

Աննես, կոսես ⁹⁾ մռանիլ մն.

որովհետև հիւրերի մէջ կային և ոչ—Զօկեր: Այժմ այդ ղօ՛ ձևը, բացի նորանից, յառաջացած Զօ՛ անունից, գործ չէ ածվում՝ գործ է ածվում դորա տեղ այժմ հօ՛. բայց այժմ էլ գեռ գործածական է ղ գերանունը, որը ոչ այլ ինչ է, եթէ ոչ « (=սա) գերանունը (Մ. I. § 28,2), ղ գործ է ածվում միայն շնչաւոր առարկայի համար, մինչդեռ « հաւասարապէս շնչաւոր և անշունչ առարկայի համար:

6.) Փեռայ—այդ բառի մասին տես Մ. I. § 1.

7.) Վր.—այդպէս է գրում Հրօդերը, չը նայելով որ վերև մենք երկու տեղ տեսնում ենք +ւ— «+ւ հրամանքը» «+ւ տօվնը»։ Մեր I մասում, երես 22, նոյն այդ տողումը գրված է +ւ, որը թէև ինքն ըստ ինքեան և ուղիղ է իբրև զօկերէն և համապատասխան վերև յիշած երկու անգամ պատահող +ւ ձևին, այնուամենայնիւ հարկաւոր է ուղղել իբրև սխալ բնագրի դէմ: Առհասարակ ուղղագրութեան վերաբերմամբ՝ բնագրին համեմատած՝ Հրօդերի այս հատվածը այստեղ աւելի ճիշդ է արտագրված քան թէ Մ. I, եր. 22—23.

8.) Ը.—տես վերև ծան. 4.

9.) Տ. (Տիրատուր) առաջարկում է իւր փեսայ Ղ. (Ղուկասին) որ հիւրերի առաջն ասէ լեզուի վերայ իւր հնարած երգը, առաջարկելով մի և նոյն ժամանակը որ Ղ. չը մոռանայ ասել այդ երգից և այն տեղը ուր ծաղրում է այն հայ բարբառը, որը գործ է ածում «կոնես, կոսես» (կ'օնես=կ'անես, կ'օսես=կ'ասես), ինչպէս որ ներքև մի քանի տողից, յետոյ ծաղրում է Զուղեցոյ բարբառը, օրինակ բերելով «գուլն գովմանա» (այսինքն՝ գայլը գալիս է): Բայց Այտընեանը (Քննակ. քերակ. արդի հայ. լեզուի. 1866. եր. 208, ծան. 65) այդ «կոնես, կոսես» ընդունում է իբրև զօկ լեզուի բառեր, մինչդեռ զօկ լեզուն իւր մասնիկի գոյութեան նշոյլը անգամ չ'ունի (Մ. I. § 32,5):

Ղ.—Խայի¹⁰⁾ լիզուն մոյն լիզու ա
 Օսովու մոռ խուսուղ Ջուղեցին ա¹¹⁾.)
 Որ նասիրեն գուլն գովմանա,
 Լիզվի քանդուղ Ղափանցին ա.
 Միր վիլեաթի լիզուն պօրղ ա.
 Լման¹²⁾ լիզու պօրղ խուսիլ ա.
 Վօրդի,¹³⁾ Փարսի թա՛ Փրանդի ա.
 Հէնց¹⁴⁾ նիդիս¹⁵⁾ թա՛ իւր լիզուն ա:

10.) Խայ — Խ այս բառի մէջ ես համարում եմ իբրեւ տառա-
 սխալ. եթէ ոչ՝ դա բոլորովին հակառակ է զօկ բարբառի ոգուն.
 այդ բարբառը, ընդհակառակ՝ Խ փոխում է հ, օրինակ խաղող—
 զօկ. հաղուղ, խաղ—հաղ. Լայյն: Յղնայի լիզուն թէեւ այս դէպ-
 քում՝ բացի մի քանի օրինակներից՝ համարեա չէ հետեւում Ագու-
 լիսի լիզուին, այնու ամենայնիւ ոչ մէկը ոչ միւսը հ չ'է փոխում Խ,
 ինչպէս ուրիշ շատ բարբառներ (Մշեցոյ, Գուղեցոյ, Խոյնցոյ,
 Լայյն). տես Մ. Ի. § 13.

11.) Ջուղեցի—համ. Մ. Ի. § 50. բ. ծանօթ.: Հարկաւոր է
 նկատել, որ Ագուլեցոյ բարբառում բնակիչների անունը վերջա-
 նում է ացի (=եցի), երբ շեշտը—ֆ—ի վերայ է, իսկ երբ շեշտը
 ընկնում է յ—ի վերայ, այն ժամանակ բնակիչների անունը վեր-
 ջանում է ցի, օրինակ՝ Ստըպացի, բայց Ստօպցի (Ստօպի—Յղնայի
 մօտ մի գիւղ է՝ թուրքաբնակ):

12.) Լման—արտասանվում է՝ այժմ գոնեա՝ այնպէս որ լսվում է
 համարեա երկու հ:

13.) Վօրդի—Զօկերը Թուրքին ասում են փօր (յղ. քօրթ).
 դա՛ իմ կարծիքով մի անուն է, որը գիտութեամբ աղաւաղված
 է՝ Թուրքերին իրանց անհասկանալի անելու համար (Մ. Ի. § 17, 1.).
 համ. ներքե II.

14.) Հէնց—կայ եղել Հրօդերի ժամանակվայ Ագուլեցոյ լիզուում
 այդ բառը, թէ՛ դա նոյնպէս խառնուրդ է, թող վճռէ ինքը ըն-
 թերցողը. գոնեա այժմ Ագուլեցիք այդ բառը բոլորովին գործ չ'են
 ածում. գործ են ածում դորա տեղ հա կամ հահ. Յղնայի լիզուում՝
 հանց, հինց:

15.) Նիդիս—Զօկ բարբառում չը կայ այժմ այդ բառը. գործ է

ածվում Գնդի» (գիգիլ—գիտել, գիտենալ): Այտընեանը (Քննակ. քերակ. եր. 208. ծան. 65) կրկնում է այդ ձևը տալով ն—ին այն նշանակութիւնը, որը ունի ն Նահամ (ասում), Նարամ (անում), Նիզամ (ուզում), և այլն, ձևերի մէջ: Ուրեմն այդ ենթադրութեան համեմատ դուրս է գալիս որ այդ բայի Աներեղթ եղանակն է իշել, որը իւր սկսրից ստացել է ն այն նշանակութեամբ, ինչ նշանակութեամբ ստացել են այդ տառը վերջիշեալ բայերը: Բայց այդ սխալ է, որովհետեւ Նիշի Սահմանական եղանակը չէ (Մ. I. § 32), այլ Ստորագասական եղանակն է, որը իւր սկսրից ն չէ ստանում, օրինակ՝ Սահմ. եղ. Ներկայ՝ Նահամ ըմ (ասում եմ), Ստորագասական եղ. Ներկայ՝ աշիմ (ասեմ), և այլն: Այտընեանը առհասարակ սաստիկ խառնում է զօկերէնի Ժամանակները. բացասական Ապառնի՝ Նիշիլ չի, հաւանիլ չի նա Սահմանական եղ. Ներկայ է կարծում (ibid):

II.

ՊԱՅՄԱՆԱՒՈՐ ԽՕՍՔԵՐ:

Տիրիւ այ կրտում (կամ՝ քաղամ)	} = հասկանում է, գլուխ է ընկ- նում:
Ծօռ այ վիր նկամ	
Ուրմանը (կամ՝ կտորը)	ծօկ այ = լսող մարդ կայ:
Պտորհանրտ բօց պահա	= աչքդ բաց պահիր:
Քղի փայտ դրիւ	= յոյս կապել, խօսքի կատար- մանը հաւատար:
Քչամանը մօտիկյ այ	= խօսք (գաղտնիք) պահող չ'է, համբերող չ'է:
Ծերտ ուհման այ	= վատ մարդ է:
Փիւր փիւր ածիւ	= փոքր փոքր ածել:
Ծեղ կրիւ	= հաց ուտել:
Քանի ըս վիր պատած	= քանիսով կս գնել:
Թօ	= թանգ:
Ծարաւ	= պակաս (գին):

II. Ս՚ներ դեռ Մ. I, գլ. I. առիթ ունեցանք մի քանի խօսք ասելու պայմանաւոր խօսքերի մասին. պայմանաւոր խօսքերը գործ են անում Զօկերը, մանաւանդ Զաքարթալու, Նուխու և այդ կողմերի վաճառականները իրանց միտքը իրանց շրջապատող պլապգիներին անհասկանալի անելու համար:

Խիւքը (կամ՝ Խեւքից) ծարաւ	= Խիւքը պահաս, յիմար:
Բարսվէր ¹⁾	} Կիսիա:
Գւհըվէր	
Պլադյ	= փող:
Գոնդ	= Թուման, 10 ռ:
Դօնը	= բուբլ:
Կօսիկ	= աբասի, 20 կոպ:
Օսայա	= շահի, 5 կոպ:
Պաշ	= ձի:
Սկիսուիքյ	= բրինձ:
Ըղվլսի (խօրագյ)	= պանիր:
Փաաջներ	= գինի:
Վրասոնք	= արաղ:
Տրական,	} = լաւ:
Տօն	
Կուկ	
Այբ, բէն, գիմ...	= 1, 2, 3, ...

1) Բարսվէր — բուն նշանակութիւնն է՝ երեսի վերայ պտուկած, ընկած (пшчкомъ):

III.

ԱՌԱՎՈՐՆԵՐ:

1. Եհպար ախպուր յօսկոթիներ նիզել այ, օրումը նիզել չի:
2. Եհպար ախպուր մայսը օտի ալ, ուսկուռը դին չի գձիլ:
3. Եղեկին Աստված տօլ չի:
4. Եղձը դաղձիցը փխօնիլ այ, դաղձը նօլ այ բունին ըռը-կին կնանչիլ:
5. Անումս Ելի ընայ, դուրձքըս բարի:
6. Եշխարքըս տանկաւ, սվեկաւ այ:
7. Եստված սօրը տխնիլ այ, ձիւնը տօլ:
8. Երիւնը ջրօվ ըն լվանիլ:
9. Բարեկամի հիտ կիր, խմէ, սօվդա մա նարիլ:
10. Գիծին աղունը կտրին այ ըղահված:
11. Գիծը ըմանչիլ չի, դիծին տայրն այ ըմանչիլ:
12. Գիծին տարան հրսանիք, ահալ այ աստեղ սնորուն այ քանդ միր տուն:

III. 1.) յօսկօթիներ—աղքատութիւն, թշվառութիւն:

2.) Գձ չի գձիլ կամ՝ փթաւիլ չի:

9.) Կէր—է արտաս. կակուղ (կյ):

12.) Տարան կամ՝ տարալ ըն:

12 և 15.) Դան ըռուր ուղղագրութիւնը շ նախդրի հետ միասին տես Մ. I. § 36.

13. Դարմանը քունը չի, դրմնանուցը հօ քունն այ:
14. Իշը ալ ան էն այ, ամա փալանը փահած այ:
15. Իշ ահին աղիկյ այ քանդ գէշ:
16. Իշը թկեկաւ ջերի չի գանունի:
17. Իշը յերան տօպրակին զոռօլ չի:
18. Իշին պուզտ չ'օնի, նահամ ըն հալա քուռակ այ:
19. Իշ վեր նկելը մոյն այր այ, վէր գոլը՝ արկու:
20. Բզաղուն մոյն իրիսն այ սև, չի տվաղուն՝ արկու:
21. Բլաչուն հունչ վաթան:
22. Թամում խօսկը էշին ըն նահիլ:
23. Թաքիլը մոյն այր այ, լէղիլը՝ արկու:
24. Խալխին վարայ շօն այ հաջիլ, միղ վարայ՝ կատու:
25. Խնքուտին ծօհը մահանայ այ:
26. Խունդը՝ խնդրտակին, խղօղո՞ւշը՝ բճրխտակին:
27. Խօջը թա՛ էմն այ՝ զօրութիւնը գիդամ ըմ:
28. Խօսկ շո՛ւտ վեր (վի) կօլը չի, խօսկ Ասծու տօլն այ:
29. Վաճճը գլօլիշ էլալ, նահալ խուփան գղիլ:
30. Վուզին դրեն խալըչին վարան, գլօլիշ էլալ ընգել գա-
տինը:
31. Համ գիւղ, համ չըստ:
32. Հայ—Հայր նահած, մահած վայ—վայր:
33. Հօլը տուն, կօտը տուն:

26.) Խոնք, խնդադա՛յ՝ այժմ ոչ հասկանալի են և ոչ գործա-
ծական: Այժմ լսվում է՝ Խոն (ժաբաղայ), տոնք (սանդ), տնդա՛յ
(սիւնի տակը): Խքօրն մի դե է, որ ծնօտ չ'ունի և որը շատ
անգամ գիշերը մարդու վերայ ընկնելով ծանրացնում է: Փոխար.
«հագուստի վերայ ուշ չը դարձնող կին»:

27.) Իճ—տես ներքև V, 11.

31. Չըստ—այժմ գործ չ'է ածվում, բայց գործածական է՝ չը-
ստադի, որ նշանակում է համարձակ—смѣлый, развязный, шустрый.

34. Ձիգ մարդին խիլքը դաբանամն այ նիլ:
35. Ղ'րօզը յիրան տօկը լուս չի նարիլ:
36. Մահ դարդ տօմքիզ, օր դարդըտ մօանհա:
37. Մայրը՝ հօց, ըրխան՝ լօց:
38. Մանակ ձկրքը ծօփ չի տօլ:
39. Մարդին փսփսօլը տօն այ քանդիլ:
40. Ս՝ծօթին՝ ըռըկօթին:
41. Ս՝իծ ակնին լուս չի նիլ:
42. Մոյն խիլքը ունչ իրի ամառնը, ձմեռնը:
43. Մոյն ձարքաւ արկու ծմբարուկ բռնվիլ չի:
44. Մոյն ձկրք օնիմ՝ մոյնին բրանին ըմ դրիլ:
45. Շուրը ահած այ՝ դո՛ւ էնձ պահա բխշըմաջի, իս քիզ
պահիմ մրդըմաջի:
46. Շօնը զօռաւ ուրս չի տանվիլ:
47. Շօնը հաջիլ այ, կրաւանը նօլ այ:
48. Շօնը նօր, տօնը նօր:
49. Շօնը շուն մայսը նօտիլ չի:
50. Շօտը՝ շատին:
51. Սւտըս ցաւի՝ աղիկյ այ, քանզ բարանըս:
52. Պօրտքը տալաւ, մեխկը լկաւ:
53. Ջրին լնզաթը դանան այ տանիլ:
54. Սիրը սափուրն այ նօտիլ:
55. Սէր այ ընդիլ փղատայլը, վիր այ կահալ տղատայլը:

36.) Մահ—տես վերեւ I, ծան. 14.

38.) Ձերու կայ և՛ ձեք:

40.) Րշուօն—խայտառակութիւն (այժմ անգործածական):

42.) Ինչ—անէ. ասվում է և՛ ըրի, արի:

48.) Նիլ—ուր. ն—ի մասին տես Մ. I, § 32, I.

54.) Սիր—սեր, կաթներես (այժմ անգործածական):

56. Տանամ տեղը նոքար այ, բիրամ տեղը՝ աղայ:
57. Տանի տէրին «օրհնեա տէր» չի նիլ:
58. Տանձին սնորհներ օրջնն այ նօտիլ:
59. Տուն հրքերի այ, դո՛ւս՝ ծելի:
60. Յօվը տվե՛ծ այ Աստված, դարմունը հիտը:
61. Յօվը ինսունն այ քաշիլ:
62. Փայտը վեր կալիս, դո՛ւղ շօնը յիրան բո՛ւնը դիզիլ այ:
63. Փրօվը ում այ տվե՛ծ Աստված, բշտե՛հը՝ ում:
64. Վաշալը օր դեղ դիզի, յիրան կտարին այ նարիլ:
65. Վացա՛հը ունչքան թո՛ւնդ ընայ, յիրան ըմանին այ
փնաս տօր:
66. Վափիր բանդին տաշտամը մոյն հօց չի՛նայ:
67. Վո՛ւնը քո՛ւն այ բիրիլ:
68. Վօրդը անօրէն այ, խօսկը օրինաւուր:
69. Վօրդի պրասկան էլիս աղեկյ այ, քան թէ (քանի)
սուրբի:

-
- 56.) Տանամ տեղը կամ՝ տնելիս, բիրամ տեղը կամ՝ բրելիս:
57.) Աստված են նոյնպէս, տուն տէրու՛ճ «օրհնեա տէր» չի նիլ:
59.) Հրքերի—հայերի, դո՛ւս—գուրս:
62.) Վեր կալիս կամ վերիլ:
64.) Աստված է նոյնպէս՝ քաշալը օր դարի յիրան կտարին այ
դեղ նարիլ:
-

IV.

ԱՆԷԾՔՆԵՐ:

1. Սըվըթաթահ էլիս:
2. Սըվըկնջիկ էլիս:
3. Այ դո՛ւ սև կապիս:
4. Ունչ կապիս կանանչ կարմիրըս:
5. Ասծո՛ւ բալն՛ն դո՛ւս:
6. Ասծո՛ւ զաղաբն՛ն դո՛ւս:
7. Խըզվըկուտուր կրօնիս (էլիս):
8. Անդար մնօս, շիվան, միրաթ մնօս:

IV. 1. 2. Սըվըթահ, սըվըկնջիկ էլիս կամ՝ Ֆեռ. ցղ. սըվըթաթաթ, սըվըկնջիկ էլիս, մնօս: Սըվըր—կրճատվ. աւա:—Առաջին անէծքը մօտ է իւր նշանակութեամբ երրորդ անէծքին, երկուսն էլ վերաբերում են աղջկերանց այն մտքով թէ՛ առանց մարդու մնաս:

4. Այս անէծքը տղամարդու է վերաբերում: Կանանչ կարմիր կապում է փեսան պսակվելու ժամանակ: Ուրեմն այս անէծքի միտքն է՝ «չարժանանաս հարսանիք անելու, պսակվելու»:

5. Աւա—զարդ, հոգս, ցաւ, համ: Խաթա—բալա:

7. Յղ. խըզվըկուտուր կորիս, էլիս: Խըզվըկուտուր = խըզվը + կուտուր. զօկ. Խիչ նշանակ. խակ: Ուրեմն անէծքի միտքն է՝ խակակտուր լինիս, այսինքն՝ խակ կտրվես, մեռնես. ուրեմն զեռահաս, տհաս մեռնես:

8. Յղն. Անդար մնօս. մնացեալը անփոփոխ: Անդար = ան + տայր (Մ. I. § 10):

9. Գօճորագօճ էլիս:
10. Բա՛ւրամ՝ այսաղ սիւն տօս:
11. Բըրնթաթահ, ըրընշաղաղ էլիս:
12. Գուրքըտ Աստված բնդի: Գուրքըտ բնդվի:
13. Խէ՛շկիս:
14. Խըվիս: Այ ի՛րվի դօ:
15. Գրուղը քիզ տանի:
16. Անարըտ քոանի. խաւար ապրիս:
17. Դրուց քօքը կտրվի:
18. Սայսը թափվի առի կնգու:

9. Հղն. գօճորագօճ էլնաս. այսինքն՝ գերեզմանից գերեզման տեղափոխեն քեզ, ուրեմն՝ մեռնելուց յետոյ էլ հանգստութիւն չը գտնես:

10. Բայսինքն՝ այնքան տկարանաս, փոքրանաս որ մինչև անգամ ասեղը կարողանայ սիւն (այսինքն՝ նեցուկ) լինել քեզ:

11. Հղ. ըրընթաթաի, ըրընշ. էլնաս. ըրըն—արիւն. Մ. Ի. § 7:

12. Հղ. տուրքըտ Աստված պնդի. տուրքըտ պնդվի—այսինքն՝ տանդ մէջ կենդանի մարդ չը մնայ՝—բոլորեքեանք կոտորվեն, այնպէս որ տանդ դռները փակվեն:

13. Հղն. խօշկիս: Ագ. խէշկիս—ցղն. խօշկիս. համ Մ. Ի. § 5: Խէշի (ի—կօշտ) ցղն. խօշկի նշանակում է չոր. ուրեմն անէծքի միտքն է՝ չորանաս:

14. Հղն. էրվիս, այ էրվի դօ—այրվէս, այ այրվի՛ դա: Այստեղ Ագուլ բարբառը հակառակում է իւր ոգուն (Մ. Ի. § § 3, 4.)՝ այ փոխում է ի (ibid. ծանօթ. 1.):

15. Գյօրուց ցղ. կյրուղ—դա Հայոց առասպելաբանութեան մէջ յայտնի Գրողն է: Դա անշուշտ Տիր աստվածն է, որը՝ ըստ աւանդութեան՝ Արամազդի զպիրն էր, նորա համար Գրուգրուիւն անողն էր:

16. Հղն. աշկարըտ քոանայ, խաւար ապրիս, Մ. Ի. § 16. ցղն. դործածական է նոյնպէս, թէև սակաւ՝ օր:

17. Քօք—արմատ:

18. Սայսը ցղն. մէսը կամ մէսը. Մ. Ի. § 4, ծանօթ: Արի Մ. Ի. § 36.

19. Մայսրտ կոյտ էլի:
20. Բակամ՝ քիղ նմուն էխտընը պահիս:
21. Պատմտար էլիս:

19. Լսվում է Նոյնպէս՝ արուուրտ կոյտ էլի: Յղն. մէյսրտ
(կամ՝ արուուրտ) կուտ էլնայ. ագ. կոյտ—ցղն. կոտ. համ. ագ. մշն—
ցղն. մնն (Մ. I. 6.):

20. Վիւ—ունի մի ուրիշ ձև էլ՝ քի:

21. Հղն. կյտմտար էլնատ: Պյտմտար—գիտատար—ուրիշ բար-
բառ. ջրատար:

V.

ԽԱՂԵՐ, ԵՐԳԵՐ:

1.

Տուտի¹⁾, տուտի՝ տուտ մանի.
Տուտին նա՛հալ պինջա՛րի.
Պինջա՛ր չ'էլալ՝ խուտ էլալ
Խուտին տակին ծէտ²⁾ էլալ
Քարաւ ըմտվալ՝ վէր չի գնալ³⁾:
Սուն հէր ծնիւմ՝ մեկեքի այ,
Լչ չը պէտըմ՝ հէրեքի այ:

V. 1. Այս և հետևեալ՝ երկրորդ՝ և երրորդ՝ խաղերը—երեխայական խաղեր են: Երեխայքը հաւաքվում են, նստոտում, ոտերնին մեկնում: Նոցանից մէկը սկսում է այս խաղերից մէկի խօսքերը ասել այնպէս որ ամեն մէկ խօսքը մեկնած ոտերից մէկի վերայ գայ, որը և ցոյց է տալիս՝ ասելու ժամանակ՝ մատով: Ում ոտի վերայ որ ընկնում է խաղի վերջին խօսքը (առաջին խաղում՝ հէրեքի այ, երկրորդում՝ քօչ, երրորդում՝ դօւս էլի), նա քաշում է իւր ոտը: Ասողը շարունակում է խաղը, կրկնելով նոյն խօսքերը կանգնած տեղից, այսինքն յետ քաշած ոտից յետոյ հետևեալ ոտից. և այդ կրկնվում է այնքան որ մնում է մէջտեղ տարածված մի ոտ: Կամ դորանով վերջացնում են կամ շարունակում են նոյնը կրկնել գետնի և մնացած ոտի վերայ: Ում ոտ որ մնում է, նա ենթարկվում է պատժի. օրինակ՝ պատժվողը տարածվում է գետնի

Բրինձ, բրինձ՝ հաղլա ¹⁾ բրինձ,
Ըղ արա, տամբոն ²⁾ արա,
Հրեշտակաց կարմունջ արա.
Ըղլունջ, բաղլունջ,
Օջիֆտայ, միֆտայ,
Ղ արա, քօյ:

վերայ, ընկերները մեկնում են իրանց ոտները նորա տակից և վերայից և այդպէս ճեղքում են պատժվողին, որը պիտի զօռ տայ այդ տեսակ ոտերից կազմած օղակից դուրս գայ:— Առաջին խաղը՝ Տուտի, տուտի, ևայլն, մենք յառաջ ենք բերում Յոնայի բարբառով. բայց այդ խաղի մէջ կան մի քանի բառեր, որոնք շատ կասկածելի են անում այդ խաղի տեղական լինելը և հաւանական՝ նորա մուտքը հարեաններից. այդ բառերն են՝ հէր, էլ, պէրէ: Այս բառերը ուղղակի ցոյց են տալիս Վարաբաղցոց բարբառը, դոցա զօկերէն ձևը կը լինի՝ հէր—ադ. հայր, ցղ. հայր. էլ—զօկ. ու (Մ. I. § 3). պէտքը—ադ. ֆաթմ, ցղ. Ֆաթմ (Մ. I. § 16.): Ես պատեղ յառաջ եմ բերում այս խաղը այնպէս, ինչպէս ես ինքս լսել եմ և խաղացել երեխայ ժամանակս: Արդեօք ճշմարիտ Վարաբաղի կողմերից է եկել այդ խաղը, թէ դա առհասարակ աղաւաղված մի բան է, դժվար է ինձ այժմ որոշել. ես կ'առաջարկեմ միայն համեմատել այդ խաղը ներքև բերած 4-դ երգի հետ, որը՝ ըստ երևոյթին՝ ոչ այլ ինչ է, եթէ ոչ բոժոժ մանող կնկայ երգ:

¹⁾ Տոբի—նշանակում է՝ ոտ. դա երեխայական լեզուի բառ է. ինչպէս, օրինակ՝ փափա (հաց), բիբի (ջուր), ևայլն: Երբ երեխան դուռ ոտի էլ սկսել կանգնել, բայց սկսելու վերայ է՝ ձեռիցը բռնում են և առում՝ տուտի (ա—արտաս. երկար): Տուտի—նուազական ձևն է—ոտիկ. զօկ. է—կրճատվ. իկ (Մ. I. § 20, 4. ծան. 1):

²⁾ Ծոբ—ծիտ. համ. հս—հս. ³⁾ Գաւ—ադ. ընդել—ընկաւ:

2. Տես 1 խաղը, ծանօթ:

1) Հոլա—օղակ:

2) Տաֆալ—շուրի տեսակներից մէկն է՝ մեծ և սևագոյն:

3.

Ախպարըն ահալ,
Տախտակը թահալ.
Ան հարասի,
Ան մարասի,
Ան կօտ օտի,
Ան ջո՛ւր խմի,
Ան դո՛ւս էլի:

4.

Դուգ, դուգ դուգ մանի.
Դուգըս նս՛հալ բինջարի.
Բինջար չի նե՛լ՝ խուտ այ նե՛լ,
Խուտին տակին զուշ այ նե՛լ,
Քարաւ ըմ տվիլ վէր չի ընգե՛լ,
Ճո՛ւճո՛ւ ըմ կանչալ դո՛ւրս չի ընգե՛լ.
Սոյն հայր ծնիմ մեղիք այ,
Ասկայ դանակ էլիկ¹⁾ այ,
Ալ չի մստիլ՝ հերիք²⁾ այ:

5.

Չըբհնըկի երգ:

— Բարեակուն¹⁾.

— Ասծո՛ւ բարին:

3. Տես 1 խաղը, ծանօթ:

4. Համեմատ. 1 խաղի հետ:

¹⁾ Լյնի — ճախարակի առանցք:

²⁾ Հերիք — ագ. հրաք:

5. Չըբհնէքի թաթախում երեկոյ երեկապը ժամից յետոյ՝

Օւնկը զօփի ²⁾։

Տէրը տվել էիտը ³⁾ որթի։

Ձիր հրամաննոց որթու անուամը ⁴⁾ ունչ այ։

(Ըյս կամ այն անուն)

Դրիք ինդրծառի վարայ

Ըմբրաւ ⁵⁾ արի։

Խորհուրդ մեծ և սքանչելի, ևն։

6.

Օօկ ըխարաց ջրըհնէկի երք։

Ձիր թարանը ¹⁾ վոռ ²⁾ վոռ տաճար, աւետիս,

զանգակներ ձեռքերնին առած՝ ընկնում են տներ «խորհուրդ մեզ»
(աղաւաղված՝ «մեծ») ասելու, և սկսում են այդ «խորհուրդ մեծը»
այս յառաջաբանով։

¹⁾ Բարեհալոն—բարի երեկոյ։

²⁾ Օւնիլ—այդ բառը ըստ երեցիթին շնչ բառն է՝ քիչ փոխ-
ված. իսկ շնչ չը գիտեմ թէ ինչպէս մեկնելու է։ Եթէ սկսքի շըն-
դունենք իբրև հնութեան հետք (նախգիր շ) և բաժանենք, այն
ժամանակ մնում է օնի, որը կարող ենք ընդունել իբրև օ (ափ)
բառի Սեռականը. բայց բանը այն է որ օ Սեռ. պիտի լինէր (ըստ
§ 1.) օնի. Չանազան՝ գուցէ անհիմն և վայրիվերոյ՝ ենթադրու-
թիւններ չանելու համար, ես առաջարկում եմ այդ երկու բառը
գրել միասին (այսինքն՝ զընգըզօփի), և այդ բառի միտքը մեկնել
նորա առաջին մասի նշանակութեամբ։

³⁾ Ինիլ—եօթը, էխտ—եօթ, էխտընը—եօթներ։

⁴⁾ Ընս—գործածական է և՛ անու. ն—ի չ փոխվելը այս դէպ-
քում յատուկ է և ուրիշ բարբառներին. Համեմ. նոյնպէս Ռուս.
Николай—Микодай, Никита—Микита, և այլն։

⁵⁾ Ըմբրաւ—արմաւ. Այս բառի զօկերէն ձեը (ամբրաւ), ինչպէս
տեսնում ենք, կազմվել է հետեւեալ կերպով՝ ք և չ տեղափոխվել
են (Մ. I. § 17, 1.) և նոցա մէջ մտել է ք (ibid. § 17, 2)։

6. Տես երգ 5, ծանօթ։

¹⁾ Թարան, ցղն. թօրան.—թոնիր։

Ձիւ հացարը կրմրիաշար, աւետիս,
 Ձիւ շամփուրը ասկայ միսթ, աւետիս.
 Միւ տվաճիք մոյն ջիւայ թօթ, աւետիս:
 Ձիւ սնդոնը ³⁾ փէնջ մնէշակ, աւետիս.
 Դուք մնտամ այ միւ խրտօկ տօք, աւետիս.
 Միւք տկած ըք մոյն էղաւ տօք, աւետիս:

7.

Ռօկ ըխարաց ծաղկազարթի երք:

Ճրկ, ճրկ ճրճանակ ¹⁾.
 Աղեցուն դուրքը բանաք,
 Ըսու ճրօզը վառիք,
 Ստաք մաջը լղանաք,
 Իշիք ծօռը զրդարիք,
 Այլ գո՛ւք տօկը մխրթարիք,

²⁾ Ա՛ռ, վառ. ³⁾ Սնդոն—թոնրի խողովակ:

7. ¹⁾ Ճճանակ—մի տեսակ խաղալիք է բաղկացած երեք փոքրիկ՝ իրար վերայ կապած՝ տախտակներից, որոնցից միջինը կոթաւոր է: Այդ կոթը շարժելիս՝ երկու կողմի տախտակները զարկում են միջին տախտակին և ձայն են հանում՝ ճրկ—ճրկ, որից և խաղալիքը ստացել է իւր անունը՝ ճրճանակ: Այդ խաղալիքը բանացնում են երեխայքը միմիայն ծաղկազարդ օրը և գլխաւորապէս եկեղեցու փարախին: Միևնոյն ժամանակը բանացնում են մի ուրիշ խաղալիք, որը կոչվում է փռառ («փռառ» բայից): Այդ փռառները ուղղահայեաց փայտ է, որը մի և նոյն ժամանակ և խաղալիքի կոթն է կալմում: այդ կոթի վերայ՝ հօրիզօնական ուղղութեամբ՝ տնկված է մի հաստ՝ կոկած փայտ, որի ծայրը նոյն այն տեղում, ինչ տեղ որ կոթը մտնում է դորա մէջ, փորված է և մէջին դրված մի ատամնաւոր փոքրիկ անիւ, որի միջով անց է կենում նոյն կոթը: Այդ կոթը՝ աջ ձեռով բռնած՝ փռացնում են (պտոյտ են տալիս), և այդ փռացնելուցը այդ խաղալիքը բաւականին ուժեղ ձայն է հանում:

Հաւին վառը չբանայ
Տանիք) գիտը լվանիք)։
Տանիմ տօմ չօբանին,
Զօբանը անձ մոյն դստնը տօյ։
Գաննը տանիմ Աստու 2) տօմ,
Ետոված անձ մոյն ախպար տօյ։
Եխպար, ախպար՝ ջուռն ախպար՝
Ջուռնըս քիզ դուրբոնն, ախպար։
Կապայ ըմկարալ՝ կօրճ այ ախալ,
Կէճակ ըմկարալ՝ խօչ այ ախալ։
Կապատ հանա լըվանիմ,
Ետիա թակաւ թակիմ,
Ղնջիի լէզվաւ պըտատիմ,
Թամքած ձիօվ թորցանիմ։

8.

Վրդըվարի երբ։

— Վրդըվարին նօր ըս ներ։
— Վարդին տակին քոնն ըմ ներ։
Ետնարըս ցօրտ ջրոմար,
Չարքարըս ալ խնումը 1)։

2) Ետու. Աստուած բառը ժողովրդական լեզուում զանազան կրճատումների է ենթարկվում. օրինակ, նոյն զօկ բարբառում՝ Աստված, Աստած, Ասսած, Ասված, Սեռ. հ. Աստուծոն, Ասծոն, Ասսոն։

8. 1) Ում չ'է յայտնի ձեռքերին խինայ քսելու սովորութիւնը. — Վարդապառի հետ իբրեւ աւանդական՝ դեռ հեթանոսութենից մնացած տօնի հետ՝ կապված են շատ աւանդութիւններ և սովորութիւններ։ Զօկերի այդ օրվայ սովորութիւններից մէկը գեղեցիկ տեսակ նկարում է մեզ հետեւեալ (9-դ) երգը։

9.

Խնդումի երբ:

Խնդում օնիմ՝ վարդաւ լի,

Օրորդիւն խնձուր լի.

Սախիմ թաքսնըս տանի,

Խնդումըս եաղին տանի:

(Խնդումըս լի արարաց յիս):

Խնդումըս եաղին տալալ այ...

Ղօր ըրահիք, ալ հարայ.

Խղվելուտուր էլի¹⁾ նօ,

Ուլ ամ Խնդումըս տարալ այ.

9. Օգերի այստեղ նկարված սովորութիւնը գուցէ այժմ վերանալու վերայ է, բայց դեռ շատ մօտ անցեալում ունէր իւր զօրութիւնը: Դեռ վարդապետը չը հասած՝ առաջուց մի ամանի մէջ ցորեն կամ գարի կանաչացրած պահում են: Երբ գալիս է վարդապետը, այդ օրը մի երեխայի հասակի չափ փայտ տնկում են այդ կանաչի մէջ և զարդարում են այդ փայտը խիարով, խնձորով և վարդով: Շատ անգամ այդ փայտը թեաւոր են շինում: Ճաշից յետոյ մի պառաւ կին առնում է այդ տանում դնում մի բացարձակ տեղ կամ հրապարակ և հսկում: Այդտեղ հաւաքվում են մարդիկ և կանայք նաղարով և զուռնայով, շրջապատում են, չորս կողմով եալլի տալիս, այդ ժամանակ պառաւը այդ ամանի մէջ տնկած և յիշեալ առարկաներով զարդարած փայտը վեր է առնում, երգելով պար ածում: յանկարծ տղամարդիկը վրայ են տալիս՝ ցրվում, պառաւը ողբում է և անիծում: Այդ կանաչի մէջ տնկած՝ խիարով, խնձորով, վարդով զարդարած փայտը կոչվում է «խնդում» . այդպէս կոչվում է և հանդէսը. ասում են «խնդում տօք, արիք»: Մեր այստեղ բերած երգում նկարված է այն ըոպէն, երբ պառաւը հսկում է, և նորա ողբը և անէծքը «խնդումը» ցրվելուց յետոյ:

¹⁾ Խղվելուտուր էլի նօ — տես վերև IV, 7:

Լստված քու ջանիդ քուր տոյ,
Բոլթերիտ էլունք չի տոյ.
Ուվ ամ խնդումըս տարած այ,
Տխնիմ օր այսաղ սինն տոյ ²⁾.
Դօ կնընչկուտուր էլի ³⁾,
Լըկու ակնաւ խվարի,
Պինդարու ⁴⁾ չունք պտօկ ⁵⁾ արի,
Բըասիի չունք չերք արի:

10.

Չօկ ըխարաց երք:

Աաքաւ, կաքաւ՝ կտօց արա,
Լըտարընի խնդօղ արա,
Օխղի քարին տիտիշ արա,
Մոյն թօս գինի կուլտուշ արա,
Թօղայ հարսին խիտիշ արա—
Շախկղի արա, կախկղի արա:

2) Լըսաւ յիւն Գոյ—տես IV, 10. 3) Դօ կնընչկուտուր էլի—
համեմ. վերև «խզվրկուտուր էլի»:

4) Պինդար—Ագուլիսի մօտ մի սար է: 5) Պաթէ—նշանակում է՝
ծայր, նոյնպէս և՛ վէրք, որ բուսնում է մարմնի վերայ:

10. Լըս երեխայական երգի մէջ ուշադրութիւն դարձնելու է
մի քանի բառերի վերայ, որոնք միայն երեխայական լեզուին են յատուկ.
այդ բառերն են՝ շիշ—գեղեցիկ, զարգարուն, փայլուն. Գոյ—
Գոյն—նստիր. «տիտիլ»—նստել, այնպէս որ ի տեղի «տիտիլ ա-
րա» ասվում է նոյնպէս «տիտա» (նստիր). խիտիշ արա—խտտիր, գրկիր.
«խիտիշ արիլ» կամ խիտիլ—խտտել, գրկել. «խիտիլ ձեկից հրամ.
եղ. խիտա Վոլտուշ արիլ նոյն է, ինչ որ «անուշ արիլ». գործ է
ածվում և միտին «անուշ կուլտուշ», նշանակում է՝ ախորժա-
կով խմել. «անուշ արիլ» նշանակում է նոյնպէս՝ ախորժակով
ուտել.—քաղաքավարութեան խօսքեր են:

11.

Գարմակ ¹⁾ ըխչկերաց հաղ:

— Կուկլիկի, կուկլիկի սնամայր.

Հըրմէ ²⁾:

— Միր հովը նօր այ, ձիր հովը նօր այ.

Միրը հէն վարդին տակին,

Ձիրը հէն քարին տակին:

— Բանի աման կօտ ըս տվեծ.

Լխար քունը, էխար էմը ³⁾:

— Բանի աման ջոկ ըս տվեծ.

Լխար քունը, էխար էմը:

— Բանի աման ձոկ ըս կէտած.

Լխար քունը, էխար էմը:

12.

Չօկ ըխչկերաց պօրը:

Խշշի, խշշի փարա, փարա.

Խա էլիմբօձր սարայ ¹⁾,

Դո՛ւ էլիս քօշ կտօրայ:

11. ¹⁾ Գարմակ — մանր, փոքրիկ. ²⁾ Հըրմէ — կրճատված է հրմէ ձևից. այս վերջին ձևը աւելի գործածական է. ցղն. հրմա. հրամէ և ցղն. հրամա արտաս. այնպէս որ լսվում է համարեա երկու է. ³⁾ է՛ճ նոյնպէս էն՛ ի տեղի ա՛ճ և ա՛ն (Վ. Ագուլիս) աւելի յատուկ է Գաշտի (Ն. Ագուլիսի) ընդունին.

12. Այս երգը երգում են զօկ աղջկերքը պարի ժամանակ՝ դափը ձեռներին առած, զոյգ զոյգ կանգնած, ծափ տալով, պտոյտ գալով և աջ ու ձախ թռչկոտելով:

¹⁾ Սարայ, կտօրայ — տես Մ. I. § 22, ծան. 2:

Եւ նա՛նայ ²⁾ տանից դո՛ւս իկի:
 Դո՛ւս ահալ բա՛րիկի, բա՛րիկի.
 Ինքը տիս, ախիկը տիս,
 Ըխչիուն ծամարը տիս,
 Օսմերին ծամքողը տիս,
 Ըտներուն ³⁾ բիմբակը տիս,
 Չըմըշկներուն զանգաքը տիս:

13.

Ճըհա՛ր ա կ ման ուղի երբ.

Ճըլվըղ, ճըլվըղ ճըհարակ.
 Իս հօստ մանիմ, դո՛ւ բարակ,
 Դո՛ւ դադիր մանիս, իս չարաք.
 Իս մեղը օտիմ, դո՛ւ կարակ.
 Իմ տօկըս յօրդան, դէշակ.
 Վրու տօկըտ փէնջ մեշակ:

14.

Տնօղ:

Եղաւ էլի, դանդաւ էլի.
 Հօրսըտ վիկօլ, զանդաւ էլի.
 Երկու շօհի, մոյն փարա.
 Իս կ... ձիւմ՝ դո՛ւ շարա,
 Հարսիտ վզանո՛ւց արա:

²⁾ 'Եւնայ—տատ:

³⁾ Ըտներուն, չըմըշկներուն—երբեմն՝ թէև սակաւ, գործ է ան-
 վումյոգն. Սեռակ. եր—ու 'ի տեղի եր—ի:

15.

Ք ա ա կ ի ն:

— Ք ա ա կ ի ն.

Ք ա ա կ ի ն տ վ ե լ զ մ ա կ ի ն,

Ե ս կ ի ն շ ա ր ա լ ճ կ ա տ ի ն,

Օ մ փ ը ց ա հ ա լ շ վ ա ք ի ն.

Դ թ ե մ փ ը հ գ թ ե ն գ թ ե ղ ն ը ս,

Պ ժ տ վ ա ղ ի ն ¹⁾ ձ ու ղ ն ը ս.

Դ թ ե հ մ ք ա ու ե հ ո վ ա ն չ կ ա—

Խ կ յ մ փ ը հ չ ն ք ու ա ա կ ի ն:

16.

Փ ա ա ա յ:

Փ ա ա ա յ, փ ա ա ա յ՝ փ ա տ ը ց ա ն ի մ,

Բ ծ ձ ը ճ ը ճ կ ա տ ի ն ն ա տ ը ց ա ն ի մ,

Ք ու լ զ ը ր ա ղ ա ձ թ ե ն ը տ ը ց ա ն ի մ,

Ս ղ յ ն թ ու ս ր ա ղ ¹⁾ լ կ ը ց ա ն ի մ,

Խ ի լ ք ը տ չ ա փ ի մ՝ ը ը խ ը ց ա ն ի մ,

Դ թ ե ս գ թ ե ք գ ու լ ք ը ք փ շ մ ը ն ց ա ն ի մ:

17.

Ը խ չ կ ու վ ա ը ր ա յ:

Ը խ չ կ յ ը մ ա ո ն ի թ խ չ ու մ ը,

Շ ա ր ա ր ը գ ը ի ք յ թ ա ղ ը ու մ ը,

15. ¹⁾ Պ ժ տ ը վ ա ղ յ— թ ա ղ վ ա թ ի ձ ո ղ ե թ ի ց մ է կ ն է:

16. ¹⁾ Ե ղ ա ղ— գ ա Գ ա շ ա թ (Ն ե թ թ ի ն— Ա գ ու լ խ թ ի) ա ր տ ա ս ա ն ու—
Յ իւ ն ն է, ու թ ի շ գ իւ ղ ե թ ու մ՝ ա ր ա ղ:

Մոյն թօս գինի տօք պաշտումը,
 Վշմրաւ արիք] թաղումը.
 Նօք, գո՛ւք՝ վայ տօք,
 Վշմրաւ վիկօք չայ տօք:
 Ախիկյը մսունի՝ ունչ իրիք].
 Բկըլտըխակէ՝ ճօշ իփիք],
 Բկըլքըչիւէ՝ հօց թիիք],
 Ղրիք] տխտակին լվանիք],
 Խում կտաւաւ պտանիք],
 Ախիկյը թաղիք] պրծանիք]:

18.

Պօկ մայրը յիւրան ըխին:

Ափին ¹⁾ տկալ այ՝ բեռնը դո՛ւ.
 Գիտըն տկալ այ՝ փոփօռը դո՛ւ.
 Բսկըջըվեծ շանդունը դո՛ւ:
 Տօնը քշեր՝ ճրօզը դո՛ւ.
 Օյգին ²⁾ մանակ՝ հինգիրը դո՛ւ.
 Ղալամաւ նախշված էյվունը դո՛ւ:
 Վա՛րդարը բա՛հված՝ բո՛ւլբո՛ւլը դո՛ւ.
 Ճառարը ծաղկած՝ ծաղիկյը դո՛ւ.
 Արտարը կանանչ՝ սո՛ւմբո՛ւլը դո՛ւ.
 Ղուրքը բնդե՛ծ՝ բլա՛նիքյը դո՛ւ.
 Օջաղը վառված՝ սո՛ւնդո՛ւնը դո՛ւ:

18. ¹⁾ Ափ—հայրիկ. տես ներքև VI, 1, ծան. 5:

²⁾ Օյն—մայրիկ. տես ներքև VI, 1, ծան. 5:

19.

Ախպուր երբ:

Գօլլըմ, գօլլըմ Գիլանայ,
Էմ ախպար նոյ Գիլանայ,
Դաստայ բիրի մարջանայ,
Շիլայ շիլայ թումբանայ,
Բպրըմէ խինջանայ:

20.

Վիեր երբ ախպուր վարայ:

Սթայի այ՝ մթերճանանչ,
Ս նանդոլ ¹⁾ քօրը կանանչ,
Բրայնակ ²⁾ ան քվիր՝
Ախպարը կարմիր կանանչ ³⁾:

21.

Սայրը գաւամ այ յիրան ըխչկուն:

Ախչիկյ օնիմ՝ վօրդ—խաթուն,
Բէժինքը՝ կարված քաթուն,
Բօւրդ բարիք բէժինքյ արի,
Օղա բարիք բեռնի տանի:

20. ¹⁾ Ս նանդ—Ագուլիսի մօտ մի գիւղ է՝ այժմ թուրքա-
բնակ: Դա Գողթնի Տին Աւանդի մնացորդն է: Հին Աւանդի
մասին տես Խնճիճեան «Ստորագրութիւն Տին Հայաստանեայց»
երես 216: Այժմ այդ գիւղում մնացել է մի կիսաւերակ եկեղեցի
և մի հանգստարան:

²⁾ Բրայնակ—երանի:

³⁾ Արմիր կանանչ—տես IV, 4.

Ո՛ւրիշ գեղիս, գո՛ւյ տանի.
Մանգամ տօլ ըմօր տանի:
Դանռ հայրը՝ հօ դանռ մայրը՝ չէ:

Ախիկի՛յ ճիւղ հոմանի.
Տօլ չիմ հրղօր թմանի.
Լխտը ձի, էխտը ջերի,
Լխտը բօլամայ հըլերի,—
Ուր շոտ բիրի, նօ տանի.
Ուր յանի գո՛ւյ—փշմանի:
Դանռ հայրը՝ հօ, դանռ մայրը՝ չէ:

22.

Աարմիր կպաւուր ¹⁾ Առաքէլ,
Գանխտուկ թգաւուր ²⁾ Առաքէլ.

Առաքէլ ակալ ձիոն վարան,
Ալ քիթարին կռնին վարան,
Տվիւ (փանտան) դիքին վարան.
Աարմիր կպաւուր Առաքէլ,
Գանխտուկ թգաւուր Առաքէլ:

Հայրը գո՛ւս ակալ՝ տօլ չիմ, տօլ չիմ.
Մայրը գո՛ւս ակալ՝ տօլ ըմ, տօլ ըմ.
Ախիկի՛յն ահալ՝ նօլ ըմ, նօլ ըմ.
Աարմիր կպաւուր Առաքէլ,
Գանխտուկ թգաւուր Առաքէլ:

22. ¹⁾ Արաւիկ կամ՝ Կապաւուր—Կապաւուր (Կապա).

²⁾ Թգաւուր—Այստեղ հարկաւոր ենք համարում ուղղել այն սխալը, որ մտել է մեր հետազ. I մասի § 9 մէջ. Բաւաւուր կոչւում է միմիայն փեսան՝ հարսանիքի ժամանակ, իսկ հարսանիքի հրաւիրված հիւրերը կոչւում են մականներ.

Առաքել բաճալ այ դուրքը,
Շուրը ընդել այ շումքը,
Գիվունն ընդել այ վունքը,
Աարմիր կպաւուր Առաքել,
Գանխտուկ թգաւուր Առաքել:

Ասար միր տուն խուն այ գելիս,
Լյոգինքը թխպե՛ծ՝ ձիւն այ գելիս,
Բիւշները մուն այ գելիս,
Աարմիր կպաւուր Առաքել,
Գանխտուկ թգաւուր Առաքել:

Փանսան ախալ էշին վարան,
Աանանշ կարմիր դոշին վարան ³⁾,
Օսն այ կարած քոշին վարան,
Աարմիր կպաւուր Առաքել,
Գանխտուկ թգաւուր Առաքել:

23.

Հրսանիք:

Աւել Պլոզ ¹⁾ դո՛ւ ծօփ տօ,
Ուլե՛ փէնջարը թօփ տօ,
Ուլե նաճալ հաւի,
Բաղդի նաճալ մաւի ²⁾,
Պլօզն իրփի խրաւփի:

³⁾ Տես IV, 4.

23. ¹⁾ Պլօզ—նշանակում է՝ աչքերը կապոյտ: Այստեղ գործ է ածված իրրե մականուն: Մականունով կոչելը Զօկերի մօտ բաւականին տարածված սովորութիւն է:

²⁾ Մէլ—մի տեսակ ապրշումի գործված:

Ահչի՛ Պլօզ՝ դո՛ւ ծօփ տօ,
Ուլի՛ փէնջարը թօփ տօ:

Ա՛յ տէր՝ տախտակը թակա,
Ուլի՛, Նաղդի փսակա,
Սոյն թօս գինի տօմլակա:
Ահչի՛ Պլօզ՝ դո՛ւ ծօփ տօ,
Ուլի՛ փէնջարը թօփ տօ:

Աճո՛ւճնէրը շարած այ,
Խո՛ւշտարիքը ճարած այ,
Աճո՛ւճին հօվը անած այ:
Ահչի՛ Պլօզ՝ դո՛ւ ծօփ տօ,
Ուլի՛ փէնջարը թօփ տօ:

Ա՛յ տէր՝ դէ մոյն շո՛ւտ արա,
Քիզ տօլ ըմ իցուն փարա,—
Տօր փսօկը կտարա:
Ահչի՛ Պլօզ՝ դո՛ւ ծօփ տօ,
Ուլի՛ փէնջարը թօփ տօ:

24.

Ք ա մ բ ա խ տ կ ն ա կ յ:

Սոյն ախպար ծնիմ—Օվանիս այ,
Արկու ծայծ ծնիմ—մոյն զաղիլ մայս այ,
Սոյն մօրդ ծնիմ—քանց շօն փիս այ,
Աման Աստված՝ մոյն ճօր արա,
Նա՛նդայ ջունըս աղատ արա:
Ը խ ջը կերքը կէտամ¹⁾ ըն նեղ,

24. ¹⁾ Ախպար—ցղն. կոտում—կուտում (կուտել), հաւաքում (հաւաքել):

Խանին հասի տանամ ըն նել,
Միւ հայրը միւ թականայ նել,
Մոյն հայ աղի փսականայ նել:
Ըման Եստված՝ մոյն ճօր արա,
Բանդայ ջունըս ազատ արա:

25.

Կշան վաճ ախի կյ:

Ըրդանքին մոյն զուշ այ նահալ՝ զուշի նմուն չի,
Ըսնեքին զանի զնջիլ՝ ¹⁾ քարին նստում չի.
Խուն այ տանհաճ, բանդ այ տանհաճ՝ Էնձ ալ հովան չի.
Խօրի փոխմ, խալայ փոխմ կանչիմ՝ գելիս չի.
Իկ, զուլում՝ իկ:
Լսիմ ական հանշտարխուն,
Բեռնըտ բանիմ դաստարխուն.
Լսիմ ական դու քաղաք ²⁾,
Բեռնըտ բանիմ՝ զան քողաթ:

Միւ փարահը սանլանդ արած,
Իխտը տարի Էնձ բանդ արած,
Մտանի տվեճ՝ նշանած,
Օկրս ճանապարհի պահած.
Իկ, զուլում՝ իկ:
Լսիմ ական հանշտարխուն,
Բեռնըտ բանիմ՝ դաստարխուն.

25. ¹⁾ Օշնիլ — շղթայ.

²⁾ Վաղա — Զօկերը քաղաք Տփլիսին են ասում (համ.
urbs=Roma).

Լսիմական դու քաղաք,
Բեռնրտ բանիմ զան քաղաթ:

26.

Ազատ-խանի Բզմւլաց¹⁾ չափմի շարիւր:

Ազատ-խունը բաճալ փոյլը,
Ղօշունն ակալ Ղսմրին²⁾ սոյլը.
Ուլ այ նեղիլ Բզմւլաց տայրը.
Նօտիլ ըք կլօլակը..... մայրը:

Ղօշունն ակալ Բզմւլաց վարան,
Խմեն գինիս, տառահըս կարան,
Բխչկերաց, կնանաց համման
Ուրը կտարան, ուրն ալ տարան:

Չիաւուրն ակալ Սէթից³⁾ սօրը,
Չրքնսրին սօր սօր թօրը.
Մռահալ այ ըրխան մօրը.
Նո՞ւր այ ընկաց միր ճօրը:

Այ տղոյ՝ տաճիք՝ ունչ հարաց այ.
Ազատ—խունը հէս ակալ այ.
Ղինդարու³⁾ սօրը միւլ զալաց այ.

26. Բայ երգը նկարում է մեզ Ազատ—խանի յարձակումը Ադուլիսի վերայ և նորա աւերումը. դորա մասին տես Մ. I, գլ. I, եր. 10—11:

¹⁾ Բզմւլաց — այ սեռակ. հոլ. ուղղական է՝ վերջաւորութեան Մ. I, § 25. պսպէս որ Բզմւլիւ = Բզմւլիւ:

²⁾ Ղսմր — Ադուլիսից գէպի Յղնայ կիսաճանապարհին գտնվող գիւղ է:

³⁾ Ադուլիսի շրջակայ սարերն են.

Այլ էմբրիոսաք, վայ էմբրալայ:
Եկալ այ Հուռին ³⁾ դրնհր,
Թովանդի զիկիլ ⁴⁾ արալ ծօհր,
Միր մաջընգիլ այ պահ—պօհր,
Ենդեղ յըմահաք միր մօհր:

Աարմունջը լըվիլ այ քանլօվ,
Գիտը նանրկվալ կարմիր ընծօվ,
Բխչկերքը տարան սուրճօվ,
Քչեն համման մոյն զամլնծօվ:

Միր գօռբագօռ փիս մէլքըր
Եռաջ տվիլ չի ասկիքըր,
Օր կտարան միր մարդիքըր,
Հանալ էխտը ըրթօվայ լիքըր:

Խունն Բգոլլաց հայփի այ ակալ,
Բռտաստունքը սրբիլ, ահալ՝
«Իմ ⁵⁾ չիս մոյնը տվիլ հալալ,
Այլցը քիզ հատի պահալ»

Օշիկիլ շուն պէս ստրկցահալ
Յետով տարան դօռալ արալ,
Միր սամբարը նօ այ դանալ,
Օր ական Բգոլլիս քանդալ:

⁴⁾ Օշիկիլ (այ) զարկեց:

⁵⁾ Իմ—էր, ինչու:

VI.

ԱՆԵԿԴՕՏՆԵՐ.

2.

Միջն օր միջն Լճըլացի՝ ձիւր էլած՝ գելիս այ Յադնայ, ձիւր քշում այ նելիս դոճղ կրմընջումը ¹⁾ կայնամ, տխնամ այ՝ աստեղ ըսկի միծ մարդիք՝ չի կօն՝ մանակ միջն քնա ըր- խաք ըն հըււքված հաղ նարամ: Լճըլացին ձիւրն վաւրան հպարտ—հպարտ նստեծ՝ ձաւքարը դրեծ չընըքտակին՝ ²⁾ հըցանամ այ թաւ

—Եւ տղարք՝ բան ձիւր ախտախկաները ³⁾ ըշտեղ ըն: Տղարքը ջղօք ըն տալիս թաւ՝

—Նա՛հաճ ըն էքին հա՛ւայ պերին տօն չընըքտակիտ ⁴⁾:

1. ¹⁾ Կրճընջ—ճը—Ուղղ. հ. կարմունջ (ցղ. կարմունջ)—կամուրջ: Յղնայում գիւղի համարեա մէջ տեղումը՝ գետի ափին կայ մի փոքրիկ հրապարակ: Գետը հէնց այդ տեղումը ունի իր վերայ մի գեղեցիկ սրբատաշ քարից շինած կամուրջ, այդ կամուրջի պատճառով հրապարակն էլ «կարմունջ» են ասում: Այդ հրապարակը գիւղի համար մեծ նշանակութիւն ունի. դա առևտրի, գիւղական ժողովների, ևն, տեղ է:

²⁾ Զոռաւ—ծնօտ:

³⁾ Եւտախկաներ (Եւս— աղ—) սպիտակ միրուք ունեցողներ, ալետր մարդիկ:

⁴⁾ Երեխաների տված պատասխանը այստեղ, ինչպէս և ներքև («օշկըտ ալ չին հանում»), մենք բերում ենք Յղնայի բարբառով՝

Բզըլացին մանդրվամ⁵⁾ այ. համա հրգծ⁵⁾ ինքն այ նիզամ
տնօղ տոյ Յընացաց, նահամ այ՝

— Եղնւրդ այ օր աստեղ «մաշկ» ըն կօարսում:

— Օշկրտ ալ չին հանում:

Բզըլացին մայտը այ նարամ՝ թա՛ աստեղ օր բրխաբը
աստի բազլաթ ըն, բա՛ս սրուց միծարը ունչպէս ըն նիլ—
բշում այ ձիւր, յունց կալիս նեկիս:

աւելի բնական լինելու համար. Ագուլեցիք առհասարակ ծաղրում են
Ծղնեցոյ լեզուն «մանդրած» (կոտրած) անուանելով. և ահա այս
անեկդօտի մէջ էլ Ագուլեցին ուզում է ծաղրել Ծղնեցոյ լեզուն ասե-
լով՝ «մաշկ ըն կօարսում», մի քիչ էլ ծուայնում է (պիտի լինէր «մաշկ
ըն կոտրում») իսկ իրանց լեզուով կը լինի «մաշկ ըն մանդրամ», որ
նշանակում է՝ «մէջք են կոտրում»:

⁵⁾ Մանդրել—կոտրել. հրգծ—այժմ. Այս երկու բառերի առիթով
ես հարկաւոր եմ համարում յառաջ բերել այստեղ մի քանի բառեր,
որոնք գործածական լինելով Ագուլիսի լեզուում, բոլորովին օտար են
Ծղնայի լեզուին, այդ բառերն են՝

առ.	ցլ.	գլ.
հօկ, դօկ, նօկ աս, ատ, ան այս, այդ, այն		
հրգծ, հրգծկըս մէկ		հիմիկ
մա, մահ	հինց, հանց	հէնց
պարկ	պէնդ	պինդ
մանդրիլ	կոտրիլ	կոտրել
ձգանիլ	պրամբիլ	պռակել
կըհօվ	ախպիւր	աղբիւր
նուր	ուրտի	ինչպէս (տես նոյնպէս Մ. I, § 12, ծան. 2, (5):

Եւս բառերից Ծղնեցոյ ա, ատ, ան, ախպիւր և աղբիւր գործածական
են նոյնպէս և Ագուլիսի լեզուում, բայց մնացեալները բոլորովին օտար
են նորան, և ընդհակառակը նոյն նշանակութիւն ունեցող Ագուլեցոյ
բառերը օտար են Ծղնայի լեզուին. Աւելացնենք այստեղ մի քանի
բառեր էլ, ագ. ջպիլ—ցղն. հալի (համ. երևանց. ալի)—մայրիկ. զօկ.
ափի (համ. երևանց. ափու)—հայրիկ. ագ. և ցղ. պտօյլի—պտիկ +

2.

Իրիք յսրոնն սկահած մարդիք՝ ձիու վարայ նստած՝
նեղիս ըն նել: Ճընդիի ռաստ ըն գելիս մոյն գեղըցո՛ւ. նի-
զամ ըն սրօ տնօզ տօն. նրուց մոյնը նահամ այ:

— Իս հաստադիլ ըմ օր դո՛ւ ջամուշ ըս:

— Ետ զարմանալի չի, — նահամ այ գեղացին — իս հաս-
